

Խ. ԱՔՈՎԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



«ՄԻՏՔ» ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐՇԱԿ ՋԱՄԱԼԵԱՆ

## ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԿՆԵԻՈՐ

Երեւան  
«Միտք» վերլուծական կենտրոն  
2011

ՀՏԳ- 94/99 : 327 : 32.001  
ԳՄԳ- 63.3. + 66.4 + 66  
Ջ 240

Աշխատութիւնը հրատարակութեան է երաշխաւորել  
Խ. Աբովեանի անուան հայկական պետական  
մանկավարժական համալսարանի  
պատմութեան եւ իրաւագիտութեան ֆակուլտետի խորհուրդը

Առաջաբանը եւ ծանօթագրութիւնները գրեց  
պատմական գիտութիւնների թեկնածու, դոցենտ  
Խաչատուր Ստեփանեանը

Ջամալեան Արշակ  
Ջ 240 Հայ-վրացական կնճիռը / Արշակ Ջամալեան; Առաջաբանը եւ  
ծանօթագր.՝ Խ. Ստեփանեանի; Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ,  
«Միտք» վերլուծական կենտրոն. - Եր.: 2011.- 244 էջ:

*Գրքում ներկայացուած են կուսակցական եւ պետական գործիչ, 1918-  
1920թթ. Վրաստանում Հայաստանի Հանրապետութեան դիվանագիտա-  
կան ներկայացուցիչ Արշակ Ջամալեանի յուշերը, տպաւորութիւնները եւ  
յետեւութիւնները 1917-1921 հայ-վրացական յարաբերութիւնների վերաբե-  
րեալ:*

*Գրքում յուշագրի կողմից ներկայացուող բազմաթիւ մեկնաբանութիւն-  
ներ արդիական են եւ ուսանելի:*

ՀՏԳ- 94/99 : 327 : 32.001  
ԳՄԳ- 63.3. + 66.4 + 66

ISBN 978-99941-2-522-7

© Ջամալեան Ա., 2011  
© «Միտք» վերլուծական կենտրոն, 2011

## ԱՈՒՋԱԲԱՆ

Խորհրդային Միության փլուզումից յետոյ Հայաստանի եւ Վրաստանի նորանկախ հանրապետութիւններում պատմագիտական, ինչու չէ, նաեւ հասարակական լայն քննարկման առարկա դարձան 1918-1921թթ. հայ-վրացական յարաբերութիւնները: Նախորդ դարասկզբին երկու դրացի ժողովուրդները վերականգնեցին իրենց պետական անկախութիւնը: Սակայն այդ անկախութիւնը երկար չտեւեց, որի պատճառներից մէկն էլ, անշուշտ, վտանգների դէմ միասնական չլինելն էր: Դեռ աւելին, անդրկովկասեան երկու քրիստոնեական պետութիւնները, պանթիւրքական արշաւի դէմ միասին գործելու փոխարեն, միմեանց նկատմամբ ոչ բարեացական քաղաքականութիւն որդեգրեցին:

1918-1921 թթ. հայ-վրացական քաղաքական յարաբերութիւնները հիմնականում պայմանաւորուած էին հետեւեալ գործօններով. հայ-վրացական սահմանային խնդիրը, Հայաստանի համար Վրաստանի ունեցած բացառիկ տարանցիկ դիրքը, արտաքին թշնամու դէմ միասնական ճակատ կազմելու խնդիրը, անդրկովկասեան համատեղ գոյքի բաժանման խնդիրը, Վրաստանում եւ յատկապէս մայրաքաղաք Թիֆլիսում բաւական մեծ թուով հայ բնակչութեան առկայութիւնը:

Նշուած ժամանակաշրջանում երկու նորանկախ պետութիւնների միջեւ տեղի ունեցած ամենացաւալի իրադարձութիւնն անշուշտ պատերազմն էր, որի հիմնական պատճառը սահմանային խնդիրն էր, չնայած որ վերոնշեալ միւս գործոնները եւս իրենց ազդեցութիւնն ունեցան:

1918թ. դեկտեմբերին տեղի ունեցաւ հայ-վրացական կարճատեւ պատերազմ: Այն տեւեց երեք շաբաթ միայն: 1918թ., երբ թուրքական բանակը գրաւեց Ղարաքիլիսան, պատրուակ բերելով թուրքերի առաջխաղացումը դէպի Թիֆլիս կանգնեցնելը, Վրաստանը զինակալեց Լօռին, որն անվիճելիորեն համարուում էր Հայաստանի Հանրապետութեան անքակտելի մասը: Հոկտեմբերին Մուղոսում կնքուած զինադադարից յետոյ թուրքական զորքերը հեռացան Անդրկովկասից, եւ այլեւս նրանց կողմից Թիֆլիսին որեւէ վտանգ չէր սպառնում, սակայն վրացական զորքերը չէին ցանկանում հեռանալ հայկական տարածքներից, աւելին՝ սկսուեց բռնութիւններ կիրառուել Լօռու հայ գիւղացիութեան հանդէպ: Եւ սա էլ եղաւ պատերազմի հիմնական առիթը:

Դեկտեմբերի վերջին անգլիացիների միջամտութեամբ ռազմական գործողութիւնները դադարեցուեցին: Սակայն խնդրի կարգաւորումն աւելի երկար տեւեց:

Պատերազմն անշուշտ Հայաստանի համար որոշ դրական ելք ապահովեց՝ վերականգնուեց հաղորդակցութիւնը Վրաստանի տարածքով, դադարեցուեցին Լօռու հայ գիւղացիութեան հանդէպ կրառուող բռնութիւնները, վերջապէս պատերազմի հետեւանքով էր, որ Լօռին վերջնականապէս մնաց Հայաստանի կազմում: Սակայն պատերազմից կարելի էր խուսափել, եթէ Վրաստանի կառավարութիւնը ցուցաբերեր համապատասխան խոհեմութիւն եւ չփորձեր հարեւանի ծանր կացութիւնից օգտուելով առաւել մեծապետական նպատակներ առաջ քաշել վերջինիս հաշուին:

Արդէն շուրջ քսան տարի է, ինչ Հայաստանը եւ Վրաստանը կրկին անկախ պետութիւններ են: Հայ-վրացական միջպետական յարաբերութիւններում, հակառակ ներկայացուող ցանկութիւններին, լարուածութիւնը պահպանուում է նախկին ձեւով: Քսան տարի թէ հայ եւ թէ վրաց հասարակութիւնները հնարաւորութիւն ունէին առանց գաղափարական պարտադրանքների ուսումնասիրելու իրենց նախորդ անկախութեան շրջանում ունեցած փոխյարաբերութիւնները եւ անհրաժէշտ դասեր քաղել: Սակայն, ցաւոք, դա տեղի չի ունեցել, գոնէ դասեր քաղելու առումով գործնականում անհրաժէշտ հետեւութիւններ չեն արուում: Այս առումով 1918-1921 թթ. հայ-վրացական յարաբերութիւնների պատմութեան ուսումնասիրումը արդիական է նաև այսօր՝ անկախութեան ձեռքբերումից քսան տարի անց:

20-րդ դարասկզբի միջպետական վեճը հայերը եւ վրացիները ժառանգել էին Ցարական Ռուսաստանից: Եւ փոխանակ այդ «ժառանգութիւնը» խաղաղ ձեւով լուծելու, կողմերը գնացին ծայրայեղ քայլերի: Նոյնիսկ պատերազմը եւ շրջափակումը չլուծեցին այն խնդիրը, որի համար էլ տեղի ունեցան այդ պատերազմն ու շրջափակումը: Պատերազմի միակ արդիւնքն այն եղաւ, որ հայկական կողմի տարած հաղթանակների պարտադրանքով վրացական կողմը վերացրեց Հայաստանի շրջափակումը: Իսկ հիմնական տարածքային խնդիրները չլուծուեցին, որովհետեւ յայտնուեցին միջնորդներ եւ «կանխեցին» հարցի լուծումը:

Այսօր թէ Հայաստանը եւ թէ Վրաստանը այլ օրինակներով իրենց մաշկի վրայ զգում են միջնորդների օգնութեամբ յարաբերութիւններ կարգաւորելու գործընթացի անօգտակարութիւնը: Անհրաժէշտ է չկրկնել թէ անցեալի եւ թէ ներկայի սխալները, այլապէս կորուստները երկուստէ կարող են անդառնալի լինել: Յատկանշական է այն հանգամանքը, որ 20-րդ դարասկզբի հայ եւ վրաց պետական գործիչները անկախութեան կորստից յետոյ տարագրութեան մէջ բազմիցս փորձեցին միաւորուել, պայմանաւորուեցին, որ անկախութեան վերականգնումից յետոյ բոլոր հարցերը կ'լուծուեն

բանակցութիւնների միջոցով, նրանք արդէն գիտակցել էին իրար չզիջելու քաղաքականութեան սխալականութիւնը:

Պատմութիւնից դասեր քաղելու կարիքն առավել քան երբեւէ անհրաժեշտ է այսօր: Անհնար է թշնամական կեցվածք որդեգրելով կարգաւորել փոխարարբերութիւնները: Պանթիւրքական գաղափարախօսութեան իրականացման գլխաւոր թիրախում յայտնուած հայերը և վրացիները դատապարտուած են միասին գործելու, նրանց քաղաքական սպասելիքները, ինչպես իրենց պատմութիւնն է, պէտք է սերտացուած լինեն:

Իսկ պատմութիւնից դասեր քաղելու համար անհրաժեշտ է համակողմանիօրէն ուսումնասիրել տուեալ ժամանակաշրջանի իրադարձութիւնները, ընդունել սխալները, արժէւորել ճիշտ քայլերը: Խնդիրն ուսումնասիրելիս չպէտք է տուրք տալ դիլետանտիզմին, սեփական հասարակութեանը այսրոպեական հաճոյանալու ցանկութեանը:

1918-1921 թթ. հայ-վրացական յարաբերութիւնների ուսումնասիրման համար առանձնապէս արժէքաւոր են Հայաստանի առաջին Հանրապետութեան պետական գործիչների աշխատութիւնները, հուշագրութիւնները, հրապարակուած յօդուածները: Այս տեսակէտից յիշատակութեան են արժանի *Սիմոն Վրացեանի (Հայաստանի Հանրապետութիւնը, Երեւան, «Հայաստան», 1993, 704 էջ), Ալեքսանդր Խատիսեանի (Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, «Համազգային», 1968, 487 էջ), Ռուբէն Տէր-Սիմասեանի (Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երեւան, «Արման», 1990, 366 էջ, Ախալքալակի պայքարը, «Դրօշակ», 1925թ., թիւ 1, էջ 12-19, Տաշիրի գաւառին բռնագրաւումը, «Դրօշակ», 1926թ., թիւ 3, էջ 67-71), Արտաշէս Աբեղեանի (Կովկասի ժողովուրդները, «Հայրենիք» ամսագիր, 1924, ապրիլ, էջ 120-130, մայիս, էջ 120-128, յունիս, էջ 101-109, հուլիս, էջ 120-127, օգոստոս, էջ 77-91, սեպտեմբեր, էջ 123-136, հոկտեմբեր, էջ 56-67, Վրաստանի անկախութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1926, սեպտեմբեր, էջ 73-83, հոկտեմբեր, 85-100, Մենք եւ մեր հարեւանները, «Հայրենիք» ամսագիր, 1928, դեկտեմբեր, էջ 117-128, 1929, յունուար, էջ 126-133, Անդրկովկասի փոքր ազգութիւնները, «Հայրենիք» ամսագիր, 1929, մարտ, էջ 91-101, ապրիլ, էջ 65-78, Հայաստան եւ արտաքին հարեւանները, «Հայրենիք» ամսագիր, 1929, դեկտեմբեր, էջ 111-126), Արշալոյս Աստուածատրեանի (Հայ-վրացական յարաբերութիւնների պատմութիւնից, «Հայրենիք» ամսագիր, 1940, մարտ, էջ 51-59, Հայ-վրացական պատերազմը, «Հայրենիք» ամսագիր, 1957, փետրուար, էջ 1-13, «Հայ-վրացական յարաբերութիւնները Ռուսաստանի տիրապետութեան շրջանում եւ անկախութեան օրերին», 1959, փետրուար, էջ 26-35, մարտ, էջ 47-60, ապրիլ, էջ 76-86, մայիս, էջ 65-80, յունիս, էջ 54-64), Աբրահամ Գյուլխանդանեանի*

*նի (Անդրկովկասի հանրապետութիւնները, «Հայրենիք» ամսագիր, 1967, մարտ, էջ 9-17, ապրիլ, էջ 71-80), Աւետիս Ախարոնեանի (Հայաստան, Վրաստան եւ Արեւմուտք, «Հայրենիք» ամսագիր, 1933, մարտ, էջ 89-101), Արշակ Ջամալեանի (Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք» ամսագիր, 1928, ապրիլ, էջ 75-102, մայիս, էջ 145-152, յունիս, էջ 123-128, յուլիս, էջ 113-119, օգոստոս, էջ 100-109, սեպտեմբեր, էջ 118-124, հոկտեմբեր, էջ 123-135, նոյեմբեր, էջ 113-122, 1929, փետրուար, էջ 86-97, մարտ, էջ 115-125, ապրիլ, էջ 135-157), Միքայէլ Վարանդեանի (Le conflit arme'no-georgien et la guerre du Caucase, Paris, 1919) եւ այլոց կարծիքներն ու զնահատականները:*

Հաշուի առնելով հայ-վրացական փոխարարբերութիւնների համակողմանի զնահատման, երկուստէք խոհեմ հետեւութիւններ կատարելու անհրաժեշտութիւնը, յանձն առանք 1918-1920թթ. Վրաստանում Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալեանի «Հայ-վրացական կնճիռը» աշխատութեան (հողուածաշար) վերահրատարակումը: Ա. Ջամալեանի խոստովանութեամբ աշխատութեան հրապարակման առիթ է հանդիսացել «Վրաստանի նախկին վարչապետ եւ վրաց սոցիալ-դեմոկրատիայի անուանի պարագլուխ Նոյ ժողովանիան իր մի աշխատութեամբ, որ կրում է «Մեր տարածայնութիւնները» վերնագիրը («Հայրենիք» ամսագիր, 1928, ապրիլ, էջ 75):

Օգտուելով իր տրամադրութեան տակ եղած բազմաթիւ եւ հարուստ փաստական նիւթերից՝ Ա. Ջամալեանը փորձել է հնարաւորինս համապարփակ եւ բազմակողմանիօրէն ներկայացնել այդ ժամանակաշրջանի հայ-վրացական յարաբերութիւնները: Նրա աշխատութեան մէջ մենք գտնում ենք հայ-վրացական ռազմական ընդհարման, Վրաստանում հայ փախստականների ծանր կացութեան, քաղաքացիութեան, Թիֆլիսում Հայոց Ազգային խորհրդի հանդէպ ունեցած թշնամական վերաբերմունքի, Վրաստանի հայերի իրաւունքների, Անդրկովկասի ընդհանուր գոյքի տնօրինման եւ այլ խնդիրների վերաբերեալ արժէքաւոր մեկնաբանութիւններ:

Կարծում ենք՝ Ա. Ջամալեանի աշխատութիւնը սկզբնաղբիւրային արժէք ներկայացնելուց զատ նաև ուսանելի դասեր է տալիս սերունդներին:

Աշխատութիւնը հրատարակելիս պահպանել ենք հեղինակի ուղղագրութիւնը, կատարել ենք միայն մասնակի սրբագրումներ: Աշխատութեան վերջում զետեղել ենք անհրաժեշտ ծանօթագրութիւններ:

*Խաչատուր Ստեփանեան*

## ՆԱԽԱԲԱՆ

Հին վերքերը հրահրելու եւ, ինչո՞ւ չասել, հին թշնամութիւնները վերարժարժելու մտադրութեամբ չէ, որ ես մօտենում եմ այս հարցին: Քաւ լիցի: Համոզուած կողմնակից եմ հայ-վրացական ամենասերտ բարեկամութեան: Խորապէս զգում եւ գիտակցում եմ, որ այդ բարեկամութիւնից է կախուած երկու ժողովուրդների բարեկեցութիւնը եւ նրանց քաղաքական կշիռը ոչ միայն Անդրկովկասում, այլեւ Մերձավոր Արեւելքում: Դրա համար էլ վերին աստիճանի ցանկալի կը գտնէի, որ անցեալում մեզ իրարից բաժանող, մեզ փոխադարձաբար ջլատող տարածայնութիւններն օր-առաջ անհետանային մեր յիշողութիւնից:

Եւ եթէ ես այնուամենայնիւ խօսք եմ բանում այդ տարածայնութիւնների մասին՝ պատճառն այն է, որ նրանք դեռ շարունակում են թունաւորել հայ-վրացական յարաբերութիւնները: Եիշտ է, նրանց մասին ներկայիս շատ չեն խօսում, իսկ Անդրկովկասում մինչեւ անգամ հաւաստիացնում են երկուստեք, թէ հայերի եւ վրացիների միջեւ կատարեալ համերաշխութիւն է տիրում, թէ նրանք այլեւս վեճեր չունեն իրար հետ եւ այլն, բայց առանց խորաքափանց միտք ունենալու էլ կարելի է տեսնել, որ այս հաւաստիացումները միայն օրուայ իշխանութեանը անհաճոյ խնդիրների վրայ աչք զոցել տալու բնոյթն ունին, որովհետեւ երկու ժողովուրդների շահերը շօշափող ամեն մի հարցի առթիւ, խուլ կամ բացայայտ, մեղմ կամ սուր ձեւով, հանդէս է գալիս հայ-վրացական կնճիռը:

Արհեստական անտեսումով վերքի մորմոքը չի վերանայ: Պէտք է բուժել վերքը եւ բուժել արմատապէս: Իսկ սրա համար ամենէն առաջ անհրաժեշտ է վերացնել այն պատճառները, որոնք ծնունդ եւ սնունդ են տալիս նրան:

Այս խնդրով զբաղուելու առիթ է տալիս ինձ Վրաստանի նախկին վարչապետ եւ վրաց սոցիալ-դեմոկրատիայի՝ անուանի պարագլուխ Նոյ ժորդանիան<sup>2</sup> իր մի աշխատութեամբ, որ կրում է «Մեր տարածայնութիւնները» վերնագիրը: Ժորդանիայի այս նոր գիրքը անմիջական կապ չունի մեզ զբաղեցնող հարցի հետ. այն ուղղուած է ռուս ընկերվարականների դէմ եւ նպատակ ունի պարզաբանել այն տեսակետները, որ պահպանում են վրաց սոցիալ դեմոկրատները ազգային եւ հակախորհրդային պայքարի խնդիրներում: Սակայն ինձ թւում է, որ այն մի շատ լաւ բանալիի դեր կարող է կատարել՝ հայ-վրացական կնճիռը ընկերվարական տեսակետով պարզելու եւ գնահատելու համար:

Աւելին կասեմ. եթէ ես իրաւասութիւն ունենայի, առանց տատառուելու ժորդանիային դատաւոր կը կարգէի հայ-վրացական վեճե-

րի մէջ, պայմանով, որ ան շիտակօրէն լուծեր այդ վեճերը համաձայն այն *սկզբունքների*<sup>3</sup>, որոնք առաջադրում են նրա գրքում իրեւ իմնք՝ ազգային կնճիռները հարթելու համար:

Սակայն, կասկածում եմ, թէ ժորդանիան համաձայնէր այսպիսի դատաւորի դեր ստանձնել: Կասկածում եմ ոչ միայն այն պատճառով, որ անցեալի փորձից գիտեմ, թէ նա, գործնական քաղաքականութեան մէջ, որքան քիչ կարեւորութիւն է տալիս սկզբունքներին, երբ նրանք չեն համապատասխանում Վրաստանի ազգայնական շահերին, այլեւ այն պատճառով, որ հենց այս գրքի մէջ էլ նա իր համակրելի սկզբունքների գործադրութեան համար այնպիսի *ուղիներ* է մատնանշում, որոնց մէջ ընկնելուց յետոյ նրանց առաւելագոյն շահաւետութիւնը Վրաստանի համար ապահովուած պիտի լինի...

Ահա այստեղ, խօսքի եւ գործի այս հակասութեան մէջ, ընդունելի սկզբունքները գործնական քաղաքականութեամբ անընդունելի դարձնելու մէջ պետք է որոնել հայ-վրացական տարածայնութիւնների եւ վեճերի բուն արմատը: Այստեղից են ծագում այն բոլոր խուլ եւ բացայայտ պայքարները, որ վերջին տասնամեակում մղել են իրար դէմ եւ շարունակում են մղել ժորդանիայի կուսակցութիւնը՝ վրաց սոցիալ դեմոկրատիան եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը:

Եւ որոշելու թէ այս պայքարների մէջ որի կողմն է իրաւունքը, ինչպէս ասացի, լաւագոյն միջոցն է ժորդանիայի քարոզած սկզբունքները չափանիշ դարձնել պատմական իրականութիւնը գնահատելու համար: Իրաւունքի ճշտումը հետաքրքրում է մեզ ոչ այնքան անցեալի պատասխանատուութիւնները վեր հանելու, որքան հայ-վրացական իրար հասկացողութեան հնարաւորութիւնները պարզելու տեսակէտից:

Այսօր ժորդանիան եւ իր ընկերները տարագրութեան մէջ են եւ չեն կարող վճռական դեր կատարել մեզ զբաղեցնող հարցերում: Բայց վաղը նորից նրանց ձեռքը պէտք է անցնի վրաց ժողովուրդի դեկավարութիւնը: Մենք այս մասին տարակոյս չունինք, ինչքան էլ վրաց բուլշեփկները հակառակը պնդելու լինեն: Վրաց ժողովուրդի մտայնութիւնը, ձգտումները, տրամադրութիւնները, ինչքան դրանք մեզ յայտնի են, այլ եզրակացութեան տեղիք չեն թողնում:

Սակայն, եթէ մեր համոզումը սխալ էլ դուրս գայ, խնդիրը ոչնչով չի փոխուի, որովհետեւ վրաց բուլշեփկները ազգային հարցերում քայլ առ քայլ հետեւում են ժորդանիայի գծած քաղաքականութեանը և, մասնավորապէս, հայ-վրացական յարաբերութիւնների խնդրում, բացի սնամէջ խօսքերից, այլ բանով չեն տարբերում իրենց վաղեմի ուսուցից: Այնպէս որ, ժորդանիան կը լինի Վրաստանի վարչապետը, թէ մի Սախարաձէ<sup>4</sup>, կամ մի Օրէխաշվիլի, դրութիւ-

նը էապես չի փոխուի: Ինչ ռեժիմ էլ իշխելու լինի Վրաստանում եւ ովքեր էլ լինեն այդ ռեժիմի ներկայացուցիչները – միեւնոյն է, հայ-վրացական յարաբերութիւնները չպետք է շտկուեն, մինչեւ հայ-վրացական գլխաւոր վեճերը երկու ժողովրդի արդար շահերի նկատառութեամբ չլուծուեն:

Մինեւ օրս մենք ոչ մի առիթից խոյս չենք տւել վրաց ժողովրդի ղեկավարներին մտերմական կամ պաշտօնական խօսակցութեամբ պարզելու, որ պատրաստ ենք ամենայն լրջութեամբ հաշուի առնելու Վրաստանի արդար եւ օրինաւոր շահերը՝ այն յուսով, որ նրանք էլ կը զգան հայ ժողովրդի վերաբերմամբ կատարուած անարդարութիւնները սրբագրելու անհրաժեշտութիւնը: Տարաբախտաբար ես այն տպաւորութիւնը չունեմ, թէ մեր հարեւանները գիտակցում են, որ անարդարութիւնը իր հեղինակի համար նուազ վտանգ չէ ներկայացնում, քան թէ զոհի համար: Մինչդեռ սպասելի էր, որ անցեալի դառն փորձերը բերէին նրանց այս գիտակցութեանը...

Ինչ արած, մենք նորից եւ նորից պետք է շարունակենք վրացիների հետ հասկացողութեան եզր գտնելու մեր աշխատանքը: Դա եթէ ներկայ պայմաններում գործնական այլ արդիւնք էլ չտայ՝ զոհն այն հետեւանքը կ'ունենայ, որ մեր հարեւանները մոլորութեան մէջ չեն ընկնի կարծելով, թէ Հ.Յ.Դաշնակցութիւնը կը դադարեցնի իր պայքարը յանուն հայ ժողովրդի ոտնահարուած իրաւունքի եւ արդարութեան...

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՅԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ

Հայաստանը եւ Վրաստանը, գտնուելով անմիջական հարեւանութեան մէջ կարելի է ասել իրենց պետական կազմաւորման առաջին օրերից՝ անշուշտ անցեալում ունեցել են իրար հետ բազմապիսի տարածայնութիւններ:

Պատահել են դէպքեր, երբ երկու երկրների սահմանամերձ նախարարութիւններն իրար դէմ ոտնձգութիւններ են կատարել, իրարից կալուածներ յափշտակել, եղել են շրջաններ, երբ Հայաստանը իր իշխանութեան տակ է առել ամբողջ Վրաստանը կամ, ընդհակառակը, վերջինս իր տիրապետութիւնը տարածել է մինչեւ Անի եւ մինչեւ Սեւանայ լիճը, երեւան են եկել արտաքին օրիէնտասիոնի թեթեւ տարբերութիւններ եւ այլն: Սակայն զարմանալի կերպով այդ տարածայնութիւններն ու վեճերը երբեք ազգային հակամարտութեան բնոյթ չեն ստացել հայ եւ վրացի ժողովուրդների համար: Անգամ այն դէպքերում, երբ այս հարեւաններից մէկը զօրեղանալով իրեն է ենթարկում միւսին, նրանց յարաբերութիւնները ընդհանուր առմամբ չեն աւրուում:

Երկուսի պատմութիւնն էլ անընդհատ պատերազմների մի շարան է ներկայացնում, սակայն նրանց տարեգրութեան մէջ հայ-վրացական պատերազմի յիշատակութիւն չկայ: Չգիտենք գոյութիւն ունի՞ն պատմութեան մէջ ուրիշ երկու ազգեր էլ, որոնք այսօրան մօտիկ հարեւանութեան մէջ հազարաւոր տարիներ ապրած լինելով հանդերձ, ոչ մի անգամ պատերազմած չլինին իրար դէմ:

Հայ-վրացական այս բացառիկ յարաբերութիւնը պետք է բացատրել նրանով, որ երկու ժողովուրդները՝ կապուած կրօնական եւ մշակոյթային միեւնոյն կապերով եւ շարունակ ենթակայ արտաքին ընդհանուր վտանգների՝ համերաշխութեան եւ գործակցութեան այնպիսի ժանրակէշի դրդապատճառներ ունէին, որոնց համեմատութեամբ նրանց ներքին վեճերը երկրորդական, երրորդական գծի վրայ պիտի ընկնէին: Դարեհների, Կիւրոսների արշաւանքներից սկսած մինչեւ հռովմէական եւ պարսկական տիրապետութիւնը, այստեղից մինչեւ արաբական եւ մոնղոլական արշաւանքները, պարսկա-օսմանեան պատերազմները եւ Շահ Աբասի տարագրութիւնը քանի քանի անգամ մենք տեսնում ենք այս երկու ժողովուրդներին կողք-կողքի պատերազմելիս, կամ, ընդհանուր ճակատագրի հարուածների տակ կքած, իրենց սեւ բաղդը ողբալիս...

Նման արհաւիրքների մէջ պայքարող կամ խոշտանգուող ժողովուրդների համար ի՞նչ արժէք կարող է ունենալ, որ մի վրացի նախարար մի հայ նախարարի կալուածքն է յափշտակել, կամ մի հայ

եկեղեցական անպատշաճ լեզու է բանեցրել Քաղկեդոնի ժողովի<sup>5</sup> դեմ:

Ռուսական տիրապետութիւնը Անդրկովկասում վերացրեց հայ եւ վրացի ժողովուրդներին դէպի համերաշխութիւն մղող արտաքին վտանգները, բայց դրա հետ միասին ոչնչացրեց նաեւ նրանց անախորժ շփումների առիթները: Սրանով բնականոն փոխյարաբերութիւնների մի նոր շրջան սկսուեց երկու ժողովուրդների համար, որ մի ամբողջ դարի ընթացքում որեւէ պատահարով կամ տարածայնութեամբ չխաթարուեց:

Վրաց ազգայնականներն այսօր շատ են խօսում այն մասին, որ ռուսական տիրապետութեան ժամանակ հայերի թիւը, ազատ ներգաղթի շնորհիվ, մեծացել է Վրաստանում:

Չենք ժխտում այս փաստը: Նոր տիրողների կամքով Վրաստանը Անդրկովկասի վարչական, առեւտրական եւ քաղաքակրթական կենտրոնը դառնալով՝ դէպի իրեն է քաշել բազմաթիւ ռուսների եւ օտարազգիների հետ նաեւ որոշ քանակութեամբ հայեր: Մենք գիտենք, որ Յայաստանը սրանից շատ է տուժել՝ զրկուելով աշխատող ձեռքերից եւ ուշիմ, շինարար տարրից: Բայց թէ դա Վրաստանի համար ինչ անպատեհութիւն է ունեցել, չգիտենք, քանի որ հայերը Վրաստանում երբեք ուրոյն ազգային կամ քաղաքական շահեր չհետապնդելով հանդերձ՝ մեծապէս զարկ են տւել այդ երկրի բարեշինութեանը: Մտածել միայն, թէ ինչ կը լինէր վրացիներին հրամցրուած այսօրուայ թիֆլիսի վիճակը, եթէ այնտեղ հայկական շինարար ձեռքի հետքը չլիներ...

Մասամբ սրանով պէտք է բացատրել, որ չնայած յիշեալ ազգայնականների մատնանշած ներգաղթին՝ մենք ռուսական տիրապետութեան այս շրջանում վրաց ժողովրդի կողմից որեւէ հակակրական վերաբերմունք, էլ չենք խօսում թշնամութեան մասին դէպի հայերը չենք նկատում, մասամբ էլ նրանով, որ այդ ժողովրդի մէջ դեռ շատ թարմ էր յիշողութիւնն այն օրերի, երբ վրաց արքաներն ամեն ջանք գործ էին դնում դէպի Վրաստան հրապուրելու Սիւնիքի, Արցախի եւ այլ վայրերի հայերին<sup>6</sup>, որպէսզի նրանց միջոցով պաշտպանեն իրենց երկրի արեւելեան եւ հարաւային սահմանները մահմեդական հորդանների ներխուժումից:

Եթէ մի դարի ընթացքում մի քանի տասնեակ հազար հայերի ներգաղթը Վրաստան պատճառ համարենք հայ-վրացական սառնութեան, ապա այս երկու ժողովուրդների անցեալ պատմութիւնը հայ-վրացական ընդհարումների մի շարան պէտք է ներկայացնէր: Քանի քանի անգամ լեռնականներից հալածուած վրացիք ապաստանել են մեր Գուգարաց լեռները<sup>7</sup>:

Քանի, քանի անգամ հայերը, որոնք, շնորհիւ իրենց երկրի աշխարհագրական դիրքի, հարաւից Յայաստանի եւ Վրաստանի դէմ ուղղուած հարուածների առաջին զոհը պիտի լինէին, պատսպարան են գտել Վրաստանում: Կարելի է ասել, միակ դէպքը, երբ Վրաստանը ամուր փակեց իր դռները աղիտահար հայ ժողովրդի առաջ, տեղի ունեցաւ 1918 թուի ամառը, երբ Նուխուայ եւ Չաքաթալայի կոտորածից<sup>8</sup> հրաշքով ազատուած 15,000 հայ ժողովուրդը, որ ապաւինել էր վրացական գթասրտութեանը, Նոյ Ռամիշվիլիի<sup>9</sup> հրամանով սուիճներով դուրս քշուեց իր ապաստարաններից, հալածուեց դէպի Ալազանի<sup>10</sup> միւս ափը եւ մատնուեց թաթարական վոհմակների սրածութեանը: Բայց սա արդէն այլ օրերի պատմութիւն է, որի մասին առանձին խօսք կը լինի: Այդ օրերին Վրաստանում իշխողները արքաներն ու նախարարները չէին, այլ ընկերվարականները...

\* \* \*

19-րդ դարի վերջերին եւ 20-րդ դարի սկզբներին հայ-վրացական յարաբերութիւնների մէջ ծայր է տալիս մի նոր երեւոյթ: Բագուլի նաւթարդիւնաբերութեան մէջ կամ Անդրկովկասի եւ Ռուսաստանի առեւտրական հրապարակներում հաստատուած հայ դրամատերները, իրենց ազատ դրամազուլիւր տեղաւորելու համար, գրոհ են տալիս դէպի վրաց ազնուականութեան կալուածները եւ քայլ առ քայլ իրենց տիրապետութիւնը հաստատում նրանց վրայ: Վրաց ազնուականութիւնը, անկարող տնտեսական մրցութեան հողի վրայ դիմագրաւել այս հայ ախոյեանին, իր դասակարգային պարտութեանը ազգային պարտութեան հանգամանք էր տալիս՝ ցեղակից զանգուածներից աջակցութիւն ստանալու յուսով: Յայերը խաղաղ գրաւման ճանապարհով նուաճում են Վրաստանը, հայերն իրենց տիրապետութեան տակ են առել նրա գլխաւոր քաղաքները, հայերի ձեռքն են անցել Վրաստանի հարստութեան աղբիւրները եւ այլ այսպիսի ճիչերով էր աշխատում նա, այդ ազնուականութիւնը, հակահայկական ազգային պայքարի ճակատ ստեղծելով վրաց ժողովրդի մէջ: Միւս կողմից հայկական բուրժուազիան, օգտագործելով այդ ճիչերը, աշխատում էր համոզել իր ցեղակիցներին, թէ ինքը, Վրաստանի հողերին եւ հարստութիւններին տիրանալով՝ մեծ ազգային գործ է կատարում:

Այս «ազգային» պայքարն առանձնապէս սուր ձեւով արտահատուում էր թիֆլիսի քաղաքային գործերում: Քաղաքազուլիւր հա՞յ պէտք է լինի, թէ վրացի. անդրկովկասեան համալսարանը կամ բարձր տեխնիքական վարժարանը հայկակա՞ն թաղում (Հաւլաբար)<sup>11</sup> պէտք է հիմնուի, թէ՛ վրացական թաղում (Սաբուրթալօ)<sup>12</sup>,

քաղաքային այս ինչ պաշտօնը հայի՞ պետք է տրուի, թե՛ վրացու: Ահա այսպիսի չնչին հարցերով էր սնունդ «ազգային» կոչուած այդ պայքարը:

Սակայն, չնայած նման հարցերի շուրջը յարուցուած աղմուկներին՝ հայ եւ վրացի ժողովրդական զանգուածները միանգամայն անտարբեր եւ նոյն իսկ բացասական դիրք ունէին նրանց հանդէպ: Սրա լավագոյն ապացոյցը կարող ենք համարել այն, որ այդ զանգուածների ձգտումներն ու տրամադրութիւնները մարմնացնող յեղափոխական կուսակցութիւնները, վրաց սոցիալ-դեմոկրատիան եւ Զ.Յ.Դաշնակցութիւնը, միշտ հեռու մնացին վերոյիշեալ պայքարից:

Վրաց սոցիալ-դեմոկրատիան, ըստ արժանւոյն գնահատելով վերջինիս դասակարգային եութիւնը, չէզոքացնում էր ցեղակից շովինիստների կողմից ժողովրդի մէջ ներարկուող թոյնը: Նա էլ թշնամի էր հայ բուրժուազիային, բայց այն կարծիքին էր, որ նրա դէմ դասակարգային կռիւ պէտք է մղել, եւ ոչ թէ ազգային: Ազգային մոմենտը այս վերաբերմունքի մէջ թուլանում էր եւ այն հանգամանքով, որ վրաց սոցիալ-դեմոկրատիան աւելի եւս ատելութեամբ էր լեցուած դէպի ցեղակից ազնւականութիւնը:

Գալով Զ.Յ.Դաշնակցութեանը՝ նա հայկական բուրժուազիայի վերոյիշեալ «նուաճումներին» միանգամայն բացասաբար էր վերաբերում: Նա ազգային տեսակէտից վնասակար էր համարում, որ այդ բուրժուազիան, փոխանակ իր դրամագլուխը հայրենի երկրում գործադրելու, հայրենի արդիւնագործութեանը զարկ տալու՝ օտար երկրներն էր շէնացնում: Նրա ջանքերով սունկի պէս գործարաններ էին հիմնուում Թիֆլիսում, օրինակելի տնտեսութիւններ էին ստեղծուում Վրաստանի խոպան դաշտերում, իսկ Զայաստանը մնում էր լքուած, հում նիւթ մատակարարողի թշուառ վիճակում: Օտար դրամատէրերը՝ մի Սիմեոն, մի Շուստով, հեռաւոր երկրներից տեսնում էին, որ Զայաստանում շահաւետ արդիւնագործութեան կարելիութիւններ կան, բայց ապագայնացող հայ դրամատէրերը այդ կարելիութիւնները չէին տեսնում:

Զայաստանը հում նիւթ մատակարարող գաղութի վիճակին մատնելուց յետոյ՝ հայ դրամատէրերը, որոնց այնքան հոյակապ ազգային ձգտումներ էին վերագրում, գոնէ հոգ տանէին հում նիւթի արտադրութիւնը մեր երկրում բարձրացնելու - այդ էլ չէղաւ: Մեր խաղողի եւ բամպակի մշակութիւնը երբեք նախնական վիճակից դուրս չէկաւ, իսկ ծխախոտի եւ շաքարեղէգի արտադրութեանը երբեք չձեռնարկուեցաւ, որովհետեւ... դրամագլուխ չկար: Դրամագլուխը պահուած էր, որ Թիֆլիսը արդիւնաբերական կենտրոն դառնայ եւ նրա փողոցները հոյակապ շէնքերով զարդարուեն:

Զայ բուրժուազիայի այս ակներեւ ազգավնաս գործունէութիւնը ցատումն էր պատճառում ամեն մի սրտցաւ հայի, իսկ անգին «Ձաւկավկազսկայա Ռէչ-ի» եւ «Սաքարթվելօ»ի<sup>13</sup> թեթեամիտ հրապարակագիրները թմբկահարում էին, թէ հայ բուրժուազիան ազգային գործ է կատարում... Վրաստանը շէնացնելով...

Այսպիսով, տեսնում ենք, որ հայ բուրժուազիայի եւ վրաց ազնուականութեան դասակարգային պայքարով ստեղծուած հարցերն էլ ազգային տարածայնութիւնների հիմք չէին կարող դառնալ հայ եւ վրացի ժողովուրդների համար: Չնայած այդ հարցերի շուրջը բարձրացած աղմուկին՝ նրանք, շնորհիւ իրենց առողջ բնագոյի, ընդհանուր առմամբ, պահպանում էին իրար հանդէպ այն բարի դրացիական վերաբերմունքը, որ պատմութիւնը թողել էր նրանց իբրեւ գեղեցիկ ականդ:

\* \* \*

Զայ-վրացական տարածայնութիւնը իր այսօրուայ վիճակում բոլորովին նոր երեւոյթ է եւ ընդամենը տասը տարուայ պատմութիւն ունի իր յետեւը: Անցնալով կերպով սկսում է նա 1917-ի Ռուսաստանի Մեծ Զեղափոխութեան առաջին շրջանում, իր գազաթնակէտին հասնում Զայաստանի եւ Վրաստանի անկախութեան օրերին եւ քօղարկուած կամ ակնյայտնի ձեւով շարունակուում մինչեւ այժմ:

Քաղաքական վերիվարումներով այնքան հարուստ այս տասնամեակում, երկու ժողովուրդների փոխյարաբերութիւնը կնճռոտող բազմաթիւ մանր ու խոշոր դէպքեր են եղել, որոնք անհրաժեշտօրէն պէտք է նիւթ դառնան այդ շրջանի պատմութեանը նուիրուած մի ուսումնասիրութեան համար: Բայց մենք մտադիր ենք ոչ թէ պատմութիւն գրել, այն քննել հայ-վրացական ներկայ տարածայնութիւնները եւ պարզել նրանց վերացման կարելիութիւնները: Ուստի վերոյիշեալ դէպքերին կարող ենք անդրադառնալ այն չափով միայն, ինչ չափով դա անհրաժեշտ է մեր առաջադրած հարցերը պարզաբանելու համար:

Այդ հարցերը, որոնք հայ-վրացական յարաբերութիւնների հանգոյցը կամ կնճիռն են կազմում, ամփոփուում են հետեւեալ չորս կէտերի մէջ.

1. Մեր հողային վէճերը:
2. Ազգային ինքնորոշումը իրաւախոհութեամբ կատարելու պահանջը:
3. Ազգային փոքրամասնութիւնների պաշտպանութիւնը:

4. Մեր պայքարը վրացական գերիշխանութեան (հեգեմոնիա) ձգտումների դեմ:

Մենք յաջորդաբար կը պարզենք այս հարցերի էությունը եւ ապա ցոյց կտանք նրանց լուծման գործնական ուղին:

Թէ մեր պարզաբանութեան եւ թէ գործնական առաջարկների համար մենք պէտք է ելնենք բացառապէս այն սկզբունքներից, որ ժամանակակից ընկերվարութիւնն է առաջադրում իբրեւ ուղեցոյց նման հարցերի կարգադրութեան: Բարեբաղդաբար վրաց ժողովրդի պատասխանատու ղեկավարներն էլ իրենց համար պարտադիր են նկատում այդ սկզբունքները, հետեւաբար եւ առարկութիւն չեն կարող ունենալ մեր ելակէտի դեմ:

Սա բաւականաչափ դիւրացնում է մեր գործը: Որովհետեւ երբ մի երեւոյթ հասկանալու եւ գնահատելու համար կան ընդհանուր նախադրեալներ՝ եզրակացութիւնները յաճախ իրենք իրենց են ձեւակերպւում:

## ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՎԵՃԸ

### *Ա. Մինչեւ 1917 թուի Փետրուարեան Յեղափոխութիւնը*

Անդրկովկասի երեք գլխաւոր ժողովուրդների՝ հայերի, վրացիների եւ թաթարների ազգագրական դասաւորումը կողմնացոյցի բաժանումներով դժուար է մի անգամից որոշել, որովհետեւ նրանք բոլորն էլ, աւել կամ պակաս չափով, տարածուած են հորիզոնի չորս ուղղութեամբ:

Սրա համար լաւագոյն միջոցն է Անդրկովկասը ուղիղ գծով կիսել արեւելեան եւ արեւմտեան մասերի: Այն ժամանակ կը տեսնենք, որ Արեւելեան Անդրկովկասի հիւսիս-արեւմտեան շրջանը բռնուած է թաթարներով, իսկ հարաւ-արեւմտեանը՝ հայերով: Նոյն ձեւով կը ստանանք, որ Արեւմտեան Անդրկովկասի հիւսիսային մասում գետեղուած են վրացիները, իսկ հարաւային մասում, որ շարունակութիւնն է կազմում Արեւելեան Անդրկովկասի հայկական հողերի՝ բնակւում են հայերը:

Սակայն, չնայած կողմնացոյցային բաժանման այս դժուարութիւններին, բաւական է մի հայեացք նետել Անդրկովկասի ազգագրական քարտէսի վրայ համոզուելու համար, որ վերոյիշեալ երեք ժողովուրդները խոշոր մեծամասնութեամբ դասաւորուած են ազգային հոծ զանգուածներով: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ Անդրկովկասի հիւսիսային մասը վրացական է, հիւսիս-արեւելեանը՝ թաթարական եւ հարաւայինը՝ հայկական:

Ցարական իշխանութիւնը, որ Ռուսաստանի հպատակ ժողովուրդների ազգային շարժումները խափանելու համար աւելի լաւ միջոց չգիտէր, քան «բաժանեա զի տիրեսցես»-ի քաղաքականութիւնը՝ Անդրկովկասի ներքին սահմանագծումները կատարում էր այն հաշուով, որ վարչական միութիւնները՝ նահանգ, գաւառ, գաւառակ, շատ տեղերում նոյն իսկ գիւղախումբ, խառը ազգաբնակչութիւն ունենան, որպէսզի ազգային հաւաքականութիւնները բաժան-բաժան լինին եւ նրանց ձգտումները իրար բաշխելով՝ չէզոքանան: Անդրկովկասի նուաճումից յետոյ այդ իշխանութիւնը մի քանի անգամ փոփոխութիւններ է կատարել վարչական սահմանների մէջ եւ գրեթէ միշտ սա է եղել նրան ղեկավարող տեսակէտը:

Այս քաղաքականութեան գլխաւոր զոհերը եղան հայերը, որովհետեւ նրանք, մի տեսակ կենտրոնական տեղ գրաւելով միւս երկու ժողովուրդների համեմատութեամբ՝ պէտք է միացուէին թէ մէկին եւ թէ միւսին՝ խառը վարչական շրջաններ կազմելու համար, մինչդեռ վրացիներն ու թաթարները, որ շատ փոքրիկ սահմանագծով էին



բաժանուած միմիանցից, եւ հազիւ մի երկու վայրում (Ձաքաթա-  
լա<sup>14</sup>, Սղնախ<sup>15</sup>, Հիւսիսային Բորչալու<sup>16</sup>) կարող էին իրար կցուել:

Իր անհետքեք ծրագիրն իրագործելիս, իշխանութիւնը ոչ ժողովր-  
դի կամքն էր հաշուի առնում, ոչ նրա մշակոյթի աստիճանը եւ ոչ  
տնտեսական պայմանները: Նա հայկական լեռնային գաւառները՝  
Չանգեզուր, Ղարաբաղ, Գանձակ, եւ Ղազախ՝ թաթարական դաշ-  
տային հողամասերով ընդարձակելուց յետոյ՝ կցեց զուտ թաթա-  
րաբնակ Գանձակ նահանգին, որի հիւսիսային սահմանները Կով-  
կասեան լեռնաշղթային էին հասնում, իսկ արեւելեան սահմանները  
Մուղանի անապատին: Սրանով նա մի կողմից հայկական շրջանը  
անջատեց մօտ երկու հարիւր յիսուն հազար առոյգ, բարձր մշակոյ-  
թի հասած հայերից եւ միւս կողմից խաթարեց Քուռի միջին հովիտը  
բռնող թաթար ժողովրդի ազգագրական միապաղաղութիւնը: Գան-  
ձակ նահանգն այլեւս զուտ թաթարական համարել չէր կարելի:

Նոյն ձեւով նա անջատեց Աղեքանդրապոլ գաւառից Ախալքա-  
լաքն ու Հայկական Բորչալուն, վերջինս ընդարձակեց հիւսիսի կող-  
մից վրացական եւ թաթարական հողերով եւ ամենը միասին կցեց  
Թիֆլիսի նահանգին: Այսպիսով հայկական շրջանը նորից կորցրեց  
մօտ հարիւր քսան հազար հայութիւն, իսկ Թիֆլիսի նահանգում էլ  
վրացական տարրի տոկոսը զգալի կերպով նուազեց:

Այս քաղաքականութեան արդիւնքը վերջին հաշուով եղաւ այն,  
որ Անդրկովկասի ինը նահանգներից հայերը միայն Երեւան նա-  
հանգում էին մեծամասնութիւն կազմում, իսկ Երեւան նահանգն էլ  
Անդրկովկասի 1825000 հայութեան միայն մի քառորդ մասն էր պա-  
րունակում իր մէջ...

Հայ ժողովուրդը յանձինս իր առաջաւոր, բանիմաց տարրերի,  
խորին վրդովմունքով էր լցուած դէպի բռնակալ իշխանութիւնը, որ  
անխնայօրէն յօշոտում էր նրա հայրենիքը եւ ցրում ազգային հաւա-  
քականութիւնը, բայց քաղաքական ռեակսիոնը այնքան զօրեղ էր  
Ռուսաստանում, որ նա իր վրդովմունքը այդ ժամանակ օրինական  
ճանապարհով իսկ արտայայտել չէր կարող:

\* \* \*

1905 թուի Ռուսաստանի Առաջին Յեղափոխութիւնը ազգային  
տենչերի արտայայտութեան մի նոր դարաշրջան բացաւ բոլոր այ-  
լացեղ ժողովուրդների համար: Ռուսահայերը եւս սկսեցին ազգա-  
յին ազատ կեանքի ծրագիրներ սնուցանել: Խօսում էին պետական  
իշխանութեան լայն ապակենտրոնացման, տեղական ինքնավարու-  
թեան եւ մինչեւ իսկ անրկովկասեան եւ համառուսաստանեան ֆե-  
տերասիոնի մասին:

Այս ծրագիրներից որ եւ է մէկի յաջողութեան անհրաժեշտ նա-  
խադրեալն էր հանդիսանում Անդրկովկասի վարչական սահմա-  
նագծումները համաձայն ազգերի իրական դասաւորման վերափո-  
խելը: Դրա համար էլ այս հարցն սկսեց արծարծուել հայկական  
շրջանակներում: Սակայն հայ-թաթարական ընդհարումները եւ վե-  
րահաս քաղաքական յետաշրջումը (ստոլիպինեան շրջան) հնարա-  
ւորութիւն չտուին այս հարցին ընթացք տալու:

1909 թուին հերթի դրուեց Անդրկովկասում գաւառային ինքնա-  
վարութիւն (գեմստվօ) հաստատելու խնդիրը: Սա հայերի համար  
մի նոր առիթ հանդիսացաւ վարչական սահմանների փոփոխու-  
թեան պահանջը առաջ մղելու: Պաշտօնապէս այս պահանջը պատ-  
ճառաբանում էր նրանով, որ իւրաքանչիւր գաւառի ազգագրական  
միապաղաղութիւնը, տնտեսական ամբողջականութիւնը եւ հաղոր-  
դակցութեան դիւրութիւնները անհրաժեշտ պայմաններ են, որպէս-  
զի ինքնավարութիւնը կարողանայ յաջողութեամբ կատարել իրեն  
յանձնուելիք մշակոյթային գործերը: Սակայն նրա բուն նպատակն  
այս չէր միայն, այլ եւ այն, որ վերանան ազգային հաւաքականու-  
թիւնը կազմալուծող անարդար կարգադրութիւնները, որոնց մասին  
խօսեցինք վերեւ:

Սկսուեց մի եռուն աշխատանք վարչական նոր սահմանագծ-  
ման ծրագիր մշակելու համար, որի մէջ ամենագնահատելի մաս-  
նակցութիւնը բերաւ մեր անմոռանալի ընկեր Աւետիք Շախաթու-  
նեանը թէ հրապարակագրութեամբ եւ թէ մի արժեքաւոր ուսումնա-  
սիրութեամբ, որ վարչական սահմանների վերափոխութեան հայ-  
կական ծրագրի հիմնաքարը դարձաւ<sup>17</sup>:

Ըստ այդ ծրագրի՝ Անդրկովկասը, բացի Կարսի եւ Բաթումի նա-  
հանգներից, որոնց մասին լրացուցիչ կարգադրութիւն պիտի լինէր,  
բաժանուում է երեք ազգային շրջանի՝ հայկական, վրացական եւ  
թաթարական: Առանց արհեստական տեղահանումների եւ տնտե-  
սական կեանքի ծանր վերիվարումների անկարելի էր այդ բաժա-  
նումը կատարել այնպէս, որ իւրաքանչիւր շրջան համապատաս-  
խան ազգի ամբողջութիւնը ընդգրկէր: Դրա համար էլ վերոյիշեալ  
ծրագիրը գոհանում էր նրանով, որ ամեն մի շրջանում մի ազգի մե-  
ծամասնութիւնը ապահովուի: Նրա համաձայն՝ գերիշխող ազգը  
հայկական շրջանում պիտի կազմէր ընդհանուր ազգաբնակչու-  
թեան 65%-ը, վրացականում՝ 64%-ը, իսկ թաթարականում, ուր այդ  
ժամանակ բոլոր մահմեդականները մի ցեղ էին հաշուում՝ 77%-ը:

Չարմանալի կերպով այս ծրագիրը արդար էր եւ անդրկովկա-  
սեան հողերը ազգային շրջանների մէջ բաժանելու խնդրում: Հայ-  
կական շրջանը պիտի ընդգրկէր Անդրկովկասի ընդհանուր ազգաբ-  
նակչութեան 29%-ը եւ նա ստանում էր նաեւ հողերի 29%: Վրացա-

կան շրջանի համար համապատասխան թուերն էին 28% (բնակիչ) եւ 33% (հող), իսկ թաթարական շրջանի համար՝ 43% (բնակիչ) եւ 38% (հող): Թաթարական շրջանի տարածութեան համեմատական նեղութիւնը իր արդարացումը գտնում է նրանում, որ այդ շրջանի հողերը շատ աւելի արգաւանդ եւ արդիւնաբեր են, քան Վրաստանի եւ Հայաստանի հողերը:

Ըստ ինքեան հասկանալի է, որ այս ծրագրով պէտք է հայկական շրջանին միանային թէ Գանձակ նահանգին կցուած հայկական լեռնագաւառները եւ թէ Ալեքսանդրապոլ գաւառից անջատուած եւ Թիֆլիս նահանգին միացուած Ախալքալաքը եւ Հայկական Բորչալուն:

Այս ծրագիրն ահագին աղմուկ հանեց վրացական եւ թաթարական մամուլի մէջ, որ այդ ժամանակ գրեթէ բացառապէս ազգայնական տարրերի ձեռքն էր գտնուում: Մասնաւորապէս, վրաց չովինիստների համար այն առիթ հանդիսացաւ «հայ-վրացական ազգային հակամարտութիւնը», որ, ինչպէս վերելում տեսանք, փաստօրէն հայկական բուրժուազիայի եւ վրաց ազնուականութեան դասակարգային հակամարտութիւնն էր, թունոտ հրապարակագրական նիւթ դարձնելու:

Յետագայ տարիների ընթացքին այս հողի վրայ կրքերն այնքան լարուեցին, որ երկու ժողովուրդների չափաւոր տարրեր, լուրջ ընդհարումների վտանգներ կռահելով՝ անհրաժեշտ նկատեցին միջոցներ ձեռք առնել՝ իրաւախօսութեան մի եզր գտնելու հայ-վրացական հողային վէճի համար: Այս գեղեցիկ մտքի իրագործման նախաձեռնութիւնը պատկանում է յայտնի հասարակական գործիչ Դիասամիձէին, որ ջերմ կողմնակից էր հայ-վրացական համերաշխութեան, թեւեւ, իբրեւ անկուսակցական՝ ազդեցութիւն չունէր վրաց քաղաքական շրջաններում: Նա իր մօտ հրաւիրեց երկու կողմերի մամուլի ներկայացուցիչներին եւ մի շարք հասարակական գործիչների (այդ ժամանակ քաղաքական կուսակցութեանց պատկանողները այս տիտղոսներով միայն կարող էին քով քովի գալ), որոնք բազմաթիվ խորհրդակցութիւնների մէջ հանգամանօրէն քննութեան առան խնդրոյ առարկայ հողային վէճերը:

Քննութեան հիմնական հարցն այն էր, թէ ինչ սկզբունքի հիման վրայ պէտք է զօնուեն Անդրկովկասի վարչական սահմանները: Վրաց ազգայնականները պահանջում էին, որ սահմանները որոշուեն համաձայն պատմական իրաւունքի: Նրանց ասելով, այն բոլոր հողերը, որ վրաց Իրակլի Բ. թագաւորը եւ ֆէոդալական իշխանները, 1783-1801 թուերին, յատուկ դաշնագրերով դրել են Ռուսաստանի հովանավորութեան տակ՝ պատկանում են վրացիներին եւ պէտք է մնային այն նահանգների սահմանում, (Թիֆլիս, Քութայիս) որոնք

վրացական են համարում: Գործնականապէս նրանք պահանջում էին, որ Բորչալու եւ Ախալքալաք գաւառները մնան Թիֆլիսի նահանգում:

Սրա դէմ հայերը միահամուռ կերպով պնդում էին, որ վարչական սահմանագծումը պէտք է կատարուի համաձայն անդրկովկասեան ժողովուրդների ազգագրական դասաւորման: Ժամանակակից դեմոկրատիան, ասում էին նրանք, այսօրինակ խնդիրների կարգադրութեան համար աւելի լաւ սկզբունք չէ ճանաչում, քան ազգագրական (էթնիկ) սկզբունքը: Արհամարհել այս սկզբունքը նշանակում է Անդրկովկասը ազգամիջեան շփումների, մաքառումների մի թատերաբեմ դարձնել:

Գալով վրաց ազգայնականների տեսակետին՝ սրա դէմ հայերը բերում էին հետեւեալ առարկութիւնները.

1. Եթէ պատմական իրաւունքը հիմք դարձնենք այս խնդրում, այն ժամանակ անհասկանալի է մնում, թէ մենք ինչու անպատճառ պէտք է ելակէտ ընդունենք 1783-1801 թուականների շրջանը եւ ոչ թէ աւելի հին թուականներ, երբ ամբողջ Վրաստանը գտնուում էր հայկական տիրապետութեան տակ, կամ երբ վրացական իշխանութիւնը տարածուում էր մինչեւ Սեւանայ լիճը.

2. Պատմականօրէն Անդրկովկասը պատկանում է հայերին եւ վրացիներին, որոնք հազարաւոր տարիների ընթացքում փաստօրէն տէր են եղել այդ երկրի՝ բոլոր միւս ժողովուրդներին իրենց իշխանութեան կամ անմիջական ազդեցութեան տակ պահելով: Արդ, եթէ մենք պատմական իրաւունքից ենք խօսում, ի՞նչ պէտք է անենք թաթարների եւ անդրկովկասեան միւս ժողովուրդների հետ, որոնք մեր պատմական իրաւունքները ոտնահարելով կամ անտեսելով են տեղ բռնել Անդրկովկասում:

3. Ընդունենք մի բոլոր, թէ պատմական իրաւունքի ճշտման համար հիմք են հանդիսանում միմիայն 1783-1801 թուականները, բայց այդ դէպքում էլ անհասկանալի է մնում, թէ վրացիք ինչ հիման վրայ կարող են պահանջել Կարս նահանգի որոշ շրջանները, Բաթումը, Ախալցխան եւ մասնաւորապէս Ախալքալաք գաւառը, որոնք յիշեալ թուականներին Վրաստանի մաս չէին կազմում:

4. Եթէ մի կողմ թողնելով այս սկզբունքային դիտողութիւնները կանգնենք զուտ պատմական իրաւունքի տեսակետի վրայ՝ դարձեալ չենք կարող ընդունել, թէ Հայկական Բորչալուն կամ Ախալքալաքը պատկանում են Վրաստանին:

Սրանցից առաջինը, որ Հայաստանի աշխարհագրութեան մէջ յայտնի է Տաշիր անունով, մեր հին Գուգարաց աշխարհի մի մասն էր կազմում:

Արշակունեաց թագավորութեան ժամանակ<sup>18</sup> համաձայն Մովսէս Խորենացու<sup>19</sup> եւ Փաւստոս Բիւզանդի<sup>20</sup> վկայութեան Յայաստանի եւ Վրաստանի սահմանը Քուռ գետն էր կազմում, իսկ Ստրաբոնը<sup>21</sup> այդ սահմանը տանում է մինչեւ Քուռ եւ Արագուայ<sup>22</sup> գետերի խառնարանը՝ Յայաստանի մէջ առնելով ոչ միայն Թիֆլիսը, այլ եւ Մցխեթը:

Այսպիսով մօտ հինգ դար (Ք.Ա. Ա-Ք.Յ. Ե) Տաշիրն անընդհատ Յայաստանի սահմաններում է եղել՝ կազմելով Գուգարաց բղէշ-խութեան կենտրոնավայրը: Նրա մայրաքաղաքը՝ Յուրտաւը<sup>23</sup>, գտնւում էր Քռի հովտում:

Արշակունեաց անկումից մինչեւ Բագրատունեաց առաջնաւր (Ե-Թ դարի վերջերը) Տաշիրը մեծ մասամբ կառավարւում է իր տեղական իշխաններով, բայց պատահում են եւ դէպքեր, երբ նա ընկնում է Վրաստանի տիրապետութեան տակ եւ նրա իշխանները նշանակւում են վրաց արքունիքից:

Բագրատունեաց թագավորութեան ժամանակ (Թ-ԺԱ)<sup>24</sup> Տաշիրը նորից անցնում է Յայաստանի կենտրոնական իշխանութեան ձեռքը: Բայց 972 թուին նա դառնում է հայկական անկախ թագավորութիւն Կիւրեկեան անունով<sup>25</sup>, որ Տաշիրում պահում է իր գոյութիւնը մօտ 200 տարի: Այդ ժամանակ նրա մայրաքաղաքն էր Շամշուլտե, դարձեալ Քռի հովտում, որ ասել է թէ Տաշիրի իշխանութիւնը ինչպէս առաջ, այնպէս եւ այդ ժամանակ տարածւում էր դաշտային Բորչալուի վրայ եւս:

ԺԲ-րդ դարու վերջերին Տաշիրն ընկնում է վրաց տիրապետութեան տակ եւ կառավարւում է ամիրսպասաւարներով կամ զինուորական հրամանատարներով, որոնք մեծ մասամբ հայ իշխանական տներից էին (Օրբելեաններ<sup>26</sup> եւ Արղութեաններ<sup>27</sup>): Սրանցից նշանաւոր էր Չաքարիա<sup>28</sup> սպասաւարը, որ փաստօրէն անթագ թագաւորի դեր էր խաղում ոչ միայն Տաշիրում, այլեւ կենտրոնական եւ հիւսիս-արեւելեան Յայաստանում:

Յաջորդ դարից սկսած վրացական տիրապետութիւնը փաստօրէն դադարում է Տաշիրում, որ մնացած Յայաստանի եւ Վրաստանի հետ նախ թաթարական, ապա պարսկական եւ վերջը լեռնականների աներաժութեանց մրցադաշտ է դառնում: Միայն ԺԸ դարու վերջին, վրաց Յերակլ Բ.-ի օրոք այս գաւառը կարճ ժամանակով միանում է Վրաստանին՝ նրա հետ Ռուսաստանի իշխանութեան տակ ընկնելու համար:

Այս համառօտ տարեգրութիւնը ի՞նչ է ցոյց տալիս. այն՝ որ Տաշիրը մօտ 2000 տարւայ պատմութեան ընթացքում այնքան կարճ միջոցներով է եղել Վրաստանի տիրապետութեան տակ, որ այդ տիր-

րապետութիւնը հազիւ թէ որեւէ պատմական իրաւունքի հիմք ծառայել կարողանայ:

Այս հիմքը ասելի եւս խախտւում է, երբ աչքի առաջ ենք ունենում վրացական ազդեցութիւնը Տաշիրում:

Անցէք այս գաւառի մի ծայրից միւսը, եւ բացի Ախթալայի վրացական վանքից, որ Չաքարիա սպասաւարի եղբայր Իւանէն շինել էր տուել ի պատիւ Թամար թագուհու<sup>29</sup>, որեւէ այլ վրացական յիշատակարան չէք գտնի: Մինչդեռ այնտեղ կը գտնէք բազմաթիւ հոյակապ հայկական վանքեր՝ Սանահինը<sup>30</sup>, Յաղպատը<sup>31</sup>, Քոբայրի վանքը<sup>32</sup>, Բարձրաքաշ Ս. Գրիգորի վանքը<sup>33</sup>, Օծուն (Ուզունլար) գիւղի պատմական եկեղեցին<sup>34</sup> եւ այլն, կը տեսնէք Չորագետի (Դեբեդ) պատմական կամուրջը հայկական արձանագրութիւններով, կը հանդիպէք Դսեղի գերեզմանատունը<sup>35</sup>. Մամիկոնեան իշխանների դամբարաններով եւ կը գտնէք տասնեակ հոյակապ խաչքարեր եւ հարիրաւոր արձանագրութիւններ, որոնց մէջ հազիւ 3-4-ը՝ վրացերեն:

Եթէ պատմութեան այս լուռ վկայարաններից անցնէք խօսուն վկայարանների, ապա ձեր առաջ կը բացուեն Յաղբատի եւ Սանահինի դարոցներն ու հսկայական գրադարանները, ձեր առաջ կը ցցուեն Վ. Մամիկոնեանը<sup>36</sup>, Դաւիթ Անհողինը<sup>37</sup>, Յովհան Օծնեցին<sup>38</sup>, Գրիգոր Մագիստրոսը<sup>39</sup>, եւ բազմաթիւ այլ դէմքեր, որոնք, Յայոց պատմութեան եւ գրականութեան զարդն են կազմում:

Այս յիշատակարաններն ու վկայութիւնները ցոյց են տալիս, որ Տաշիրը կամ Յայկական Բորչալուն ոչ միայն Յայոց երկիր է եղել հնում, այլեւ իբրեւ հայկական մշակոյթի մի ջահ՝ լուսաւորել է ամբողջ Յայաստանը:

Սակայն, պատմական իրաւունքի հիմնաքարը ժողովուրդն է, իհարկէ, այն ժողովուրդը, որ դարերով նստում է մի հողի վրայ եւ իր արինը քրտինքով կեանք տալիս նրան: Ովքե՞ր են եղել այս երկրի պատմական բնակիչները: Գոնէ վերջին 2000 տարուայ համար կարելի է վստահօրէն պատասխանել, որ հայերն են եղել: Յայերով բռնուած է եղել հին եւ միջին դարերում ոչ միայն Տաշիրը, այլ եւ Քռի աջ ափը, ինչպէս այդ վկայում են վրաց եւ օտարազգի հնագէտները (Բակրաձէ<sup>40</sup>, Բէրգենով, Բրոսէ<sup>41</sup> եւ ուրիշներ): Այդ պատճառով էլ Վրաստանի այդ մասը կոչւում էր «Սոմխէթ»:

Թաթարաց, պարսից եւ լեռնականների արշաւանքների ժամանակ Տաշիրի հայ ժողովուրդը գրեթէ բնաջնջւում է, բայց նրանց տեղը նորից բռնում են հայերը եւ նորից շէնացնում երկիրը: Այս բանին աջակցում է եւ վրաց Յերակլ Բ. թագաւորը, որ հայ ժողովրդի օգնութեանը կարիք ունէր՝ ազգաբնակչութիւնից նստացած իր երկիրը արտաքին թշնամիներից պաշտպանելու համար: Ամբողջ Տաշիրի

շրջանում ժԹ դարու սկզբին ընդամենը մի հատիկ զուտ վրացաբնակ եւ մի հատ էլ հայ-վրացաբնակ գիւղ կար:

Այսպիսով, տեսնում ենք, որ երկար ու ձիգ դարերի ընթացքին, վրացիք շատ կարճ միջոցներով են իշխանութիւն ունեցել Յայկական Բորչալուի մէջ, իսկ մշակոյթ եւ ազգաբնակութիւն գրեթէ բնաւ չեն ունեցել: Ուրեմն ինչո՞ւնն է կայանում նրանց պատմական իրաւունքը այդ գաւառի վրայ:

Անցնենք Ախալքալաքին:

Այս երկիրը, որ վրացիք Ջաւախեթիա են կոչում, համաձայն Մովսէս Խորենացու վկայութեան Գուգարաց Աշխարհի իններորդ գաւառն էր կազմում:

Ինչպէս վերեւ ասացինք, Արշակունեաց հարստութեան ժամանակ Յայաստան բաժանուած էր Վրաստանից Քուռ գետով. հետեւաբար մինչեւ Ե դարը Ջաւախքը Յայաստանի մաս էր կազմում: Արշակունեաց անկումից յետոյ նա երբեմն ենթարկւում էր Գուգարաց հայ իշխաններին, բայց մեծ մասամբ վրաց թագաւորներն էին նրան տիրում: Բագրատունեաց ժամանակ նա Յայաստանին է անցնում, իսկ ԺԱ դարում նորից ընկնում Վրաստանի իշխանութեան տակ: Այս ժամանակ է, որ վրաց Բագրատ Գ թագաւորը հիմնում է Ախալքալաքը (1014թ.), իսկ Բագրատ Դ թագաւորը՝ նրա բերդը (1015թ.): Սելջուկեան արշաւանքներից սկսած Ջաւախքը զանազան վրացի եւ օտարազգի իշխանների միջեւ ձեռքից ձեռք է անցնում:

Այսպէս տեսնում է մինչեւ ԺԳ դարի կէտերը, երբ նա Ախալքալաքի հետ միանալով՝ անկախ իշխանութիւն է կազմում, երկարատեւ պատերազմներ մղելով թէ Վրաստանի եւ թէ օսմանցիների դէմ: 1637թ. այս իշխանութիւնը անցնում է օսմանցիների ձեռքը եւ դառնում առանձին փաշայութիւն: Այս վիճակում մնում է Ախալքալաքը մինչեւ 1828 թիւը, երբ ռուսները տիրում են նրան:

Ինչպէս տեսնում էք, այստեղ տիրապետութեան տեսակետից դրութիւնը գրեթէ նույնն է, ինչ որ Յայկական Բորչալուում: Իրականօրէն վրացիք իշխում են այս գաւառի վրայ փոքրիկ ժամանակամիջոցներով եւ մեծ ընդմիջումներով:

Սակայն, եթէ այս տիրապետութիւնը քիչ բան է ասում պատմական իրաւունքի հիմնաւորման համար՝ Ջաւախքում ծաղկած վրացական մշակոյթը բաւական բան ասում է. բաւական առատութեամբ ցրուած են դրա մէջ այդ մշակոյթի հետքերը:

Քանի որ մշակոյթի մնացորդները կան, պէտք է ենթադրել, որ վրացի ժողովուրդ էլ է եղել այնտեղ: Սակայն մենք չգիտենք, թէ նա ի՞նչ համեմատութեան մէջ էր գտնուում հայ ժողովուրդի հետ, որ հին ժամանակներից ի վեր զգալի քանակ է ունեցել Ախալքալաքում:

Այսպէս, օրինակ, 1831թ. Ախալքալաք գաւառում բնիկ (ոչ գաղթական) ժողովուրդի համեմատական պատկերը հետեւեալն էր. հայ՝ 1816 ընտանիք, 5409 տղամարդ, վրացի՝ 179 ընտանիք 710 տղամարդ:

Սա ցոյց է տալիս, որ նախ քան ռուսների տիրապետութիւնը հայերը անհամեմատ աւելի են եղել Ախալքալաքում, քան՝ վրացիները:

Ռուս-տաճկական պատերազմից յետոյ Ախալքալաքի մահմեդականների մի մասը հեռանում է Ախալքալաքից: Նրանց տեղը բռնում են Տաճկաստանից գաղթած հայերը: Պե՞տք է նրանց դիտել Ախալքալաքի ժողովուրդ, թէ՛ ոչ: Վրացիք այս հարցին բացասական պատասխան են տալիս, սակայն ո՞ւր է նրանց հիմնաւորումը. Ախալքալաքը վրացիներից չէ խլուել, այլ՝ օսմանցիներից: Եկուորը վրացուն դուրս չէ քշել Ախալքալաքից, որովհետեւ, ինչպէս տեսանք վերեւի թուրքից, այնտեղ գրեթէ վրացի չկար:

Վերջապէս եկուորը չէ զաւթել վրացիների չէն գիւղերն ու աւանները, որովհետեւ նա իր առաջ բացի աւերակներից ուրիշ ոչինչ չէ գտել: Նա ստիպուած է եղել ամեն ինչ նորից սկսել:

Այս առարկութիւններին վրաց ազգայնականները չափազանց խղճուկ պատասխաններ էին տալիս: Սրանց արժէքը որոշելու համար բաւական է յիշատակել Ախալքալաքի պարագան: Նրանք ասում էին. ճիշտ է 1783-1801թթ. շրջանին այդ գաւառը Վրաստանին չէր պատկանում, բայց Եկատերինա Բ. կայսրուհին խոստացած է եղել վրաց Իրակլի Բ թագաւորին, որ եթէ ինքը Թիւրքիայից խլի Ախալքալաքը՝ պէտք է կցէ Վրաստանին...

Վրաց սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-ֆեդերալիստները, որոնց ականջին նման իմպերիալիստական բարբառանքները այդ ժամանակ դեռեւս շատ խորթ էին հնչում, ամբողջովին համաձայն էին մեր տեսակետին, այն է, որ վարչական բաժանումը պէտք է կատարուի համաձայն Անդրկովկասի ժողովուրդների ազգագրական դասաւորման: Նրանք ասում էին, որ Անդրկովկասը Ռուսաստանի անբաժան մասը կազմելով հանդերձ, պատկանում է այնտեղ ապրող բոլոր ժողովուրդներին, հետեւաբար եւ այդ ժողովուրդներից մէկի մասնակի եւ միակողմանի դաշնագրութիւնը Ռուսաստանի հետ, (խօսքը ռուս-վրացական վերոյիշեալ դաշնագրերի մասին է), չի կարող պարտադիր համարուել միւս ժողովուրդների համար:

Ախալքալաքի եւ Բորչալուի խնդրում, նրանք, ելնելով այս տեսակետներից, անվերապահօրէն ընդունում էին մեր պահանջների օրինաւորութիւնը: Որովհետեւ պարզ աչքով տեսնում էին քարտէսի վրայ, որ այդ գաւառները հայկական հողերի բնական շարունակութիւն են կազմում եւ կովկասեան տարեցոյցից էլ գիտէին, որ նրան-

ցից առաջինում 76446 հայի դիմաց միայն 6578 վրացի կայ, իսկ երկրորդում 63148 հայ եւ ընդամենը 7533 վրացի էին հաշւում<sup>42</sup>: Էլ չենք խօսում տնտեսական, կլիմայական, հաղորդակցական եւ այլ պայմանների մասին, որոնք բոլորն էլ յօգուտ հայերի պահանջի էին խօսում:

Վերոյիշեալ խորհրդակցութիւններից դուրս էլ, ամեն առթիւ, երբ շօշափուում էր Անդրկովկասի վարչական սահմանագծման խնդիրը, վրաց ընկերվարականները հետեւողականօրէն միշտ պաշտպանում էին նոյն այս տեսակէտները՝ հակառակ ցեղակից ազգայնականների յուսահատական ճիգերին:

Մինչդեռ հայերն ու վրացիներն այս վէճերի մէջ էին, իսկ իշխանութիւնը իր յանձնաժողովներով Անդրկովկասում մտցնելիք գաւառային ինքնավարութեան ձեւերն ու պայմաններն էին քննում, վրայ հասաւ համաշխարհային պատերազմը, եւ այս ամբողջ գործը մէկ-դի նետուեց:

Պատերազմի երրորդ տարին, երկրի պաշտպանութեան եւ մասնաւորապէս թիկունքի կազմակերպման գործում հասարակական օգնութիւնը ուժեղացնելու հարցը զբաղեցնում էր կառավարական շրջանները: Այս կապակցութեամբ նորից հրապարակ եկաւ Անդրկովկասում գաւառային ինքնաւարութիւն հաստատելու խնդիրը եւ, դրա հետ միասին, վարչական սահմանագծման հայկական պահանջը: Սակայն մինչեւ այս խնդիրը գործնական ընթացք կը ստանար, բռնկեց Ռուսաստանի Մեծ Յեղափոխութիւնը, որը բոլորովին նոր պայմաններ ստեղծեց հայ-վրացական հողային վէճերի համար:

### ***Բ. Փետրուարեան Յեղափոխութեան Օրերին***

Մի հուժկու հարուածով այս Յեղափոխութիւնը գետին տապալեց ցարիզմը եւ, դրա հետ միասին, չափազանց ընդարձակ հնարաւորութիւններ ստեղծեց լայնածաւալ կայսրութեան սահմաններում ապրող ժողովուրդների ինքնագործնութեան համար: Այլեւս խօսք չէր կարող լինել նախկին, աղճատուած գաւառային ինքնավարութեան մասին, որ «շնորհել էր» ցարական բռնակալութիւնը Ռուսաստանի ներքին նահանգներին եւ որը, աւելի եւս աղճատելով՝ մտադիր էր գործադրել Անդրկովկասում: Յեղափոխութեան ստեղծած ինքնավարութիւնները բոլորովին այլ ֆունկսիոններ պէտք է ունենային: Նրանք միայն ընդհանուր մշակոյթային նպատակներ հետապնդող եւ չնչին վարչական իրաւասութիւններ ունեցող հաստատութիւններ չպէտք է լինէին, այլ՝ տեղական իշխանութեան օրգան-

ները, որովհետեւ ինչ քաղաքական ձեւ էլ տալու լինէր Յեղափոխութիւնը Ռուսաստանին՝ կասկածից դուրս էր, որ երկրի իշխանութեան վարչական գործառնութիւնների մեծ մասը պէտք է անցնէր տեղական ինքնավարութիւններին:

Այս հանգամանքներում պարզ է, որ վարչական նոր սահմանագծումների խնդիրը նախկինից տարբեր երեւոյթ պէտք է ստանար: Անդրկովկասեան ժողովուրդները էլ չէին կարող գոհանալ ինչ որ գաւառների կամ նահանգների սահմանների շտկումով, այլ պէտք է բացայայտօրէն ազգային շրջաններ ստեղծելու մասին մտածէին, որպէսզի ամեն մի ժողովուրդ, իր սեփական հողի վրայ, իր առտնի գործերը կարգադրէ՝ առանց ազգային շփումների եւ թիրիմացութիւնների տեղիք տալու:

Հարցը այսպէս էլ դրւում էր Անդրկովկասի ժողովուրդների կողմից: Առաջնորդող խօսքը պէտք է առնէին քաղաքական կուսակցութիւնները: Ի՞նչ էր նրանց կարծիքը, ի՞նչ սկզբունքով պէտք է ազգային շրջանները սահմանագծուէին:

Յ.Յ.Դաշնակցութեան կարծիքը յայտնի էր: Նա սկզբից եւ եթէ կանգնած էր, եւ մնում էր կանգնած այն տեսակէտի վրայ, որ անդրկովկասեան ազգային շրջանները պէտք է որոշուէն համաձայն հայ, վրացի եւ թաթար ժողովուրդների իրական տեղաւորման, պայմանով սակայն, որ այս կամ այն ազգային փոքրամասնութեան գոհացում տալու համար ազգային շրջանի հողային ամբողջութիւնը չը խախտուի: Այս տեսակէտից ելնելով՝ նա պատրաստել էր արդէն նոր սահմանագծման իր ծրագիրը, որ հայկական բոլոր կուսակցութիւնների հաւանութեանն էր արժանացել:

Նոյն կարծիքին էին եւ վրաց ընկերվարականները:

Վրաց սոցիալ-դեմոկրատիան ասում էր.

«Ինքնավար շրջանների սահմանները որոշուում են այս կամ այն ազգի իրական տեղաւորման սկզբունքով: Այս սկզբունքը գործադրելիս հաշուի են առնուում տնտեսական եւ կենցաղային պայմանները: Ազգային սահմանները փոփոխելու դէպքում պէտք է հանրաքուէարկութիւն (*ռէֆրէնդում*) կատարուի այն վայրերում, որոնք, սահմանները որոշելիս, վիճելի կը համարուէն»<sup>43</sup>:

Աւելի կոնկրետ ձեւակերպութեամբ նոյն միտքն էր արտայայտում եւ վրաց սոցիալիստ-ֆեդերալիստների կուսակցութիւնը: 1917թ. ամռան խորհրդաժողովում այս կուսակցութիւնը որոշում է.

«Նորից հաստատել, որ Վրաստանի հողային սահմանները որոշելիս հիմք պէտք է ընդունել (ժողովուրդների) իրական տեղաւորումը՝ հողային ամբողջութիւնը պահպանելով: Վրաստանի հողն են կազմում Թիֆլիս նահանգի հետեւեալ գաւառները. Թիֆլիս, Գորի, Դուշեթ, Թելաւ, Սղնախ եւ Թիօնեթ գաւառները, *Բորչալու, Ախալց-*

*խա եւ Ախալքալաք գաւառների այն մասերը, որոնք բնակուած են վրացիներով, Ջաքաթալա նահանգի խառը մասը, Քութայիս նահանգը, Բաթում նահանգը եւ Սուխում նահանգի մի մասը<sup>44</sup>: Ինչ վերաբերում է Բորչալուին եւ Ջաքաթալա նահանգին<sup>45</sup>, նրանք կը միացուեն Վրաստանի հողին այն դէպքում միայն, եթէ նրանց բնիկ ազգաբնակութեան մեծամասնութիւնը հանրաքուտարկութեան (ռէֆրէնդումի) միջոցով իր ցանկութիւնը յայտնի այս մասին»:*

Այս բանաձեւի մէջ մեր ընդգծած տողերից երեւում է, որ վրաց սոցիալիստ-ֆեդերալիստները, որոնք ազգային խնդիրներում միշտ աւելի տարամերժ, աւելի ազրեսիւ են եղել, քան ցեղակից սոցիալ-դեմոկրատները, 1917թ. սկզբունքով հրաժարուում էին ոչ միայն Հայկական Բորչալուից եւ Ախալքալաքից (բացի մի քանի գիւղերից) այլեւ Ախալցխայից: Նրանք հակամէտ չեն երեւում վերջին երկու գաւառները կցելու Վրաստանին՝ անգամ եթէ նրանց բնակիչները ցանկանային այդ: Այսպիսի բացառութիւն թոյլ է տրուում միայն Հայկական Բորչալուի համար, եթէ միայն նրա բնակչութեան մեծամասնութիւնը ցանկութիւն յայտնի այդ մասին:

Եթէ այսքան համակրելի էր սոցիալիստ-ֆեդերալիստների դիրքը հողերի բաժանման խնդրում, ապա դժուար չէ կռահել, թէ ինչ ազատամիտ բովանդակութիւն պէտք է ունենար սոցիալ-դեմոկրատների վերոյիշեալ բանաձեւը:

Այդ բովանդակութեան մասին մենք որոշ տեղեկութիւններ ունէինք 1917-ի ամառը: Ըստ մեր տեղեկութիւնների՝ վրաց սոցիալ-դեմոկրատիայի խորհրդաժողովը Ն. Ժորդանիայի առաջարկով ընդունել էր հողային բաժանման մի ծրագիր, որի մէջ հայկական բոլոր պահանջները լիովին բաւարարուած էին: Համաձայն այս ծրագրի՝ Անդրկովկասը, Ժողովուրդների իրական տեղաւորման սկզբունքի հիման վրայ, բաժանուում էր երեք ազգային շրջանի. վրացական շրջան՝ Քութայիս գլխաւոր քաղաքով, հայկական շրջան՝ Երեւան գլխաւոր քաղաքով եւ թաթարական շրջան՝ Գանձակ գլխաւոր քաղաքով: Թիֆլիսն ու Բագուն պիտի դառնային ազատ միջազգային քաղաքներ:

Սա անկասկած աւելի ազատամիտ մի ծրագիր է, քան սոցիալիստ-ֆեդերալիստների առաջարկածը, որովհետեւ նա անդրկովկասեան ժողովուրդների արդար շահերի նկատառումը հասցնում է մինչեւ այնտեղ, որ թոյլ չէ տալիս այդ ժողովուրդների ընդհանուր ջանքերով շինուած Թիֆլիսի եւ Բագունի սեփականացումը այս կամ այն առանձին ժողովրդի կողմից:

Վրաց քաղաքական հոսանքների մէջ միայն ազգային-դեմոկրատների կուսակցութիւնն էր մնում նախկին ազգայնականներից եւ շովինիստներից ժառանգութիւն ստացած այն տեսակետի վրայ,

թէ հողային շրջանների սահմանագծումը պէտք է կատարուի համաձայն «պատմական իրաւունքի» եւ, որ Թիֆլիսի ամբողջ նահանգը պէտք է վրացական շրջանի անբաժանելի մասը համարուի: Սակայն այս կուսակցութիւնն այնքան չնչին էր քանակով ու որակով, որ Փետրուարեան Յեղափոխութեան շրջանին մեզ համար նկատառութեան գալ չէր կարող:

Մեզ համար բաւական ուշ պարզուեց, որ այս բուրժուական կուսակցութիւնը Ժորդանիային եւ նրա համախոհներին իր գաղափարաբանութեանն ու ազդեցութեանը ենթարկելու չափ մտաւոր եւ բարոյական ոյժ է ունեցել իր մէջ...

\* \* \*

Մինչ անդրկովկասեան ժողովուրդները եւ իրենց կուսակցութիւնները ազգային սահմանների ճշդման խնդիրներով էին զբաղուած՝ Ռուսաստանի կենտրոնական կառավարութիւնը, այդ ծայրագաւառի իշխանութիւնը օր առաջ կազմակերպելու մտահոգութեանը, ձեռնամուխ է լինում նրա մէջ տեղական ինքնավարութիւն մտցնելու գործին: 1917-ի ամառը յատուկ խորհրդակցութիւն է նշանակուում Պետերբուրգում այս հարցի քննութեան համար: Այդ ժամանակ Պետերբուրգ էին հաւաքուած Ռուսաստանի ժողովուրդների եւ հանրային հաստատութիւնների կողմից գրկուած ներկայացուցիչներ, որոնք պէտք է Հիմնադիր ժողովի գումարման կանոնները մշակէին: Օգտուելով այս հանգամանքից՝ վերոյիշեալ խորհրդակցութիւնը անդրկովկասեան ժողովուրդների ներկայացուցիչներից 2-ական հոգի է հիւսիսում այս գործին մասնակցելու:

Բնականաբար խորհրդակցութիւնը իր աշխատանքները պէտք է սկսէր սահմանների խնդրից: Կազմուում է շահագրգռուած երեք ազգերի ներկայացուցիչներից բաղկացած մի յանձնախումբ, այս խնդրի ուսումնասիրութեան համար: Յանձնախումբը սենատոր Ջուրաբ Աւալովի<sup>46</sup> (վրացի) նախագահութեանը քննում է հայկական նոր սահմանագծման ծրագիրը եւ իր հաւանութիւնը տալիս նրան: Հարցը նորից դրուում է խորհրդակցութեան առաջ, եւ վերջինիս մէջ եւս որեւէ է առարկութեան չէ հանդիպում վրացիների կողմից: Ներքին գործերի նախարարութիւնը չնչին փոփոխութիւններով իւրացնում է այդ ծրագիրը եւ ուղարկում Անդրկովկասեան Առանձին Կոմիտէին<sup>47</sup>, որ այդ ժամանակ այս ծայրագաւառի վերին վարչական իշխանութիւնն էր հանդիսանում, որպէսզի սա էլ իր եզրակացութիւնը յայտնի:

Սրանից յետոյ երեք անգամ խորհրդակցութիւն է հրաւիրում Թիֆլիսում՝ սահմանագծման խնդիրը կարգադրելու համար: Առա-

ջին անգամ՝ 1917թ. ամռան վերջը, Ն. Ժորդանիայի նախագահութեամբ, երկրորդ անգամ՝ հոկտեմբերի կեսերին Չխենկելիի նախագահութեամբ, եւ երրորդ անգամը՝ նոյեմբերին, Ն. Ռամիշվիլիի նախագահութեամբ: Բոլոր խորհրդակցութիւնների ժամանակ էլ Ժորդանիան, Ռամիշվիլին եւ իրենց համախոհները՝ միանգամայն անտես առնելով վրաց ազգային-դեմոկրատներին, որոնք Վրաստանի «պատմական իրաւունքի» երգն էին երգում շարունակ՝ յայտարարում են, որ իրենք հայերի հետ սահմանային որեւէ վեճ չունեն, քանի որ ընդունում են Ախալքալաքն ու Յայկական Բորչալուն Յայաստանին միացնելու օրինաւորութիւնը, եւ յորդորում էին, որ հայերն ու թաթարները համաձայնութեան գան՝ այս չարաբաստիկ հարցին վերջ տալու համար:

Սակայն, հայ-թաթարական անհամաձայնութեան պատճառով այս հարցը օրինական լուծում չստացաւ: Եւ, եթէ կ'ուզէք, սրա կարիքը շատ էլ չէր զգացւում. որովհետեւ Յեղափոխութիւնն արդէն փաստօրէն կատարել էր սահմանագծումը եւ կատարել լաւագոյն ձեւով. իսկ օրինական ձեւակերպութիւնները, ինչպէս յայտնի է, յեղափոխական ելեւեջների մէջ միշտ ստորադաս նշանակութիւն ունեն:

\* \* \*

Փետրուարեան Յեղափոխութեան հենց առաջին շաբաթներին Անդրկովկասում կազմւեցին հայոց, վրաց եւ թաթարաց, ինչպէս եւ միւս երկրորդական ժողովուրդների ազգային խորհուրդները, որոնցից իւրաքանչիւրը իր ազգի կազմակերպման, նրա քաղաքական եւ մշակոյթային պահանջների ձեւակերպման խնդիրներով էր զբաղուած: Յեղափոխութեան մակընթացութեանը զուգահեռ զօրեղանալով՝ այս ազգային խորհուրդները Անդրկովկասի կազմալուծման նախօրեակին, երբ կենտրոնական կառավարութիւնը անուանական մի բան էր դառել, փաստօրէն ազգային իշխանութեան հանգամանք էին ստացել: Նրանց ուղղակի կամ անուղղակի ղեկավարութեամբ էին կատարում տեղական հանրային, մշակոյթային եւ վարչական գրեթէ բոլոր գործերը: Այսպէս էր դրութիւնը գոնէ հայկական եւ թաթարական շրջաններում:

Այս ամբողջ ժամանակամիջոցում մեր հողային շրջանը կազմող բոլոր գաւառները, դրանց թւում եւ Ախալքալաքն ու Յայկական Բորչալուն ենթարկւում էին բացառապէս Յայոց Ազգային Խորհրդին: Վրաց Ազգային Խորհուրդը որեւէ առթիւ, որեւէ միջամտութիւն չէ ունեցել այդ գաւառների գործերում:

1917թ. աշնանը տեղի ունեցաւ զօրքի ազգայնացումը Անդրկովկասում: Յետաքրքրական է, որ միջդեռ Սոնախի կամ Գորիի հայերը վրացական գնդերն էին մտնում զինուորական ծառայութեան համար, ախալքալաքցի ու բորչալուցի հայերը զինուորագրւում էին միմիայն հայկական գնդերում:

Վրայ հասաւ թիւրքական արշաւանքը (1918թ.): Ազգային Խորհուրդները տենդագին աշխատանքի մէջ էին իրենց շրջանները պաշտպանելու համար: Ախալքալաքի եւ Յայկական Բորչալուի պաշտպանութեան հոգն ընկած էր ամբողջովին Յայոց Ազգային Խորհրդի վրայ: Այնտեղ գործող հայկական կամաւորների խմբերը եւ զօրամասերը գործում էին նրա հովանաւորութեամբ: Վրաց Ազգային Խորհուրդը, յետոյ եւ կառավարութիւնը, որոնց ղեկավարներն էին Ն. Ժորդանիան եւ իր կառավարութիւնը, մատը մատին չխփեցին այդ գաւառների պաշտպանութեան համար: Միակ բանը, որ նրանք արին այն էր, որ ինչպէս յետոյ կը տեսնենք, գերմանացիների օգնութեամբ գրաւեցին Յայկական Բորչալուի մի քանի ռազմական դիրքերը, որպէսզի... Թիֆլիսը պաշտպանեն թիւրքական ներխուժումից:

Սակայն, ամենակարկառուն փաստը, որ Ժորդանիան եւ իր ընկերները այդ գաւառները երբեք իրենցը չեն համարել եւ նրանց ժողովրդի վիճակով երբեք չեն հետաքրքրուել, յետոյ պիտի գար:

Թիւրքական ներխուժումից սարսափած՝ Ախալքալաքի բնակիչները ամբողջովին, իսկ Յայկական Բորչալուի բնակիչները մասամբ, գաղթեցին Վրաստան: Վրաց կառավարութիւնը պահակներով շրջապատեց այս գաղթական բազմութիւնները Բակուրիանիում, Ծալկայում եւ Նաւթլու<sup>48</sup> կայարանի մօտերը, որպէսզի նրանք չչարժուեն դէպի իր երկրի ներսը: Յայկական կազմակերպութիւնների բոլոր միջնորդութիւններն ու աղաչանքները, որ թոյլ տրուի այս դժբաղդ փախստականներին, տեղաւորուել մերձակայ գիւղերում, որով կարելի կը լինէր նրանց փրկել սովից եւ ցրտից, անհետեւանք մնացին: Բացառութիւն արուեց միայն փախստական վրացիների համար, որոնք ազատ էին հաստատուելու, ուր կը կամենային: Նրանց բաղդակից հայերին կառավարութիւնը մինչեւ վերջը փակած պահեց վերոյիշեալ արգելարաններում՝ պատճառ դառնալով տասնեակ հազարաւոր մարդկանց մահացութեան<sup>49</sup>...

Այս տխուր փաստը յիշատակում ենք ոչ թէ մեր ահռելի կորուստների կսկիծը վերարժարժելու համար, այլ որպէսզի ցոյց տանք, որ Ժորդանիան եւ իր ընկերները, նոյնիսկ Վրաստանի անկախութեան յայտարարութիւնից յետոյ էլ Ախալքալաքի եւ Յայկական Բորչալուի հայ բնակիչներին հանրապետութեան քաղաքացի

չէին նկատում, այլ անցանկալի եկուորներ, որոնց մասին հոգալը նրանք իրենց պարտականութիւնը չէին համարում:

Այդ պարտականութիւնը ընկնում էր Հայաստանի կառավարութեան վրայ, որը, չնայած իր սուղ միջոցներին, ջանք չէր խնայում թեթեւցնելու ժամանակավորապէս հարեւան երկիրն ապաստանած իր քաղաքացիների ծանր վիճակը...

#### **Գ. Վրաստանի Անկախութեան Շրջանին**

Վրաստանի անկախութեան յայտարարման առաջին օրերին (1918թ. մայիս-յունիս) վրաց կառավարութիւնը, որ բաղկացած էր սոցիալ-դեմոկրատներից՝ գլուխ ունենալով Նոյ Ռամիշվիլին, դեռեւս շարունակում էր սոցիալ-դեմոկրատիայի աւանդական քաղաքականութիւնը հայ-վրացական հողային խնդրում: Ախալքալաք գաւառն այդ ժամանակ ամբողջովին գրաւուած էր թիւրքերի կողմից, հետեւաբար նրա մասին մտածելն իսկ աւելորդ էր, իսկ Հայկական Բորչալուն փաստօրէն ճանաչուած էր ենթակայ Հայոց Ազգային Խորհրդին եւ կառավարում էր տեղական վարչութեամբ:

1918-ի յունիսին Բորչալու գաւառի թաթարական շրջանում, որ գտնուում էր վրաց կառավարութեան իշխանութեան տակ, սկսեցին լուրջ ապստամբական շարժումներ, որոնց նպատակն էր այդ շրջանը անջատել Վրաստանից եւ միացնել Ադրբեյջանին: Այս շարժումները պատրուակ բռնելով՝ թիւրքական զօրքերը սկսեցին շարժուել դէպի Հայկական Բորչալու՝ նրա վրայով ապստամբներին միանալու համար:

Ոչ Հայոց Ազգային Խորհուրդը եւ ոչ էլ տեղական իշխանութիւններն այդ շարժումը կասեցնել չէին կարող: Սակայն, Հայկական Բորչալուի գրաւումը թիւրքերի կողմից շատ լուրջ վտանգ էր ներկայացնում Թիֆլիսի համար: Այս վտանգը կանխելու համար՝ վրաց կառավարութիւնը, որ այդ օրերին Փոթիում համաձայնագիր էր ստորագրել գերմանացիների հետ<sup>50</sup>, Վրաստանը նրանց հովանաւորութեան տակ դնելով՝ Թիֆլիսում գտնուած գերմանական փոքրիկ զօրամասը ստուարացրեց վրացի զինուորներով եւ գրաւեց Բորչալուի մեծ մասը, նախքան թիւրքերն այնտեղ կը հասնէին: Խաղը շատ յաջող էր. թիւրքերը, իրենց առջեւ գերմանական պիկետներ գտնելով, կանգ առան եւ Թիֆլիսն ազատուեց նրանց վտանգից:

Սակայն, վրաց կառավարութիւնը գիտակցում էր, որ այս քայլը, որքան էլ հարկադրական լինէր իր համար, խախտում էր Հայաստանի հողային իրաւունքը: Եւ ահա, որպէսզի այս ակամայ վար-

մունքը որեւէ թիր մեկնութեան տեղիք չտայ հայերի մօտ, վրաց կառավարութեան եւ Ազգային Խորհրդի ներկայացուցիչները՝ Նոյ Ռամիշվիլին եւ Նոյ Ժորդանիան գալիս են Հայոց Ազգային Խորհուրդը եւ հանդիսաւոր կերպով յայտարարում նրան յանձնես Ա. Ա. հարոնեանի<sup>51</sup>, Ա. Խատիսեանի<sup>52</sup> եւ Յ. Քաջագունիի<sup>53</sup>, թէ իրենք, ինչպէս առաջ, նոյնպէս եւ այժմս Հայկական Բորչալուն Հայաստանի մասն են համարում, թէ այդ գաւառի որոշ մասերը իրենք գրաւել են միմիայն թիւրքական ներխուժումից Վրաստանի սահմանները պաշտպանելու համար եւ թէ հենց որ այդ վտանգը անցնի, նրանք կը թողնեն գրաւած հայկական հողերը: Սրա հետ միասին ժորդանիան եւ Ռամիշվիլին առաջարկում են, որ Հայոց Ազգային Խորհուրդը ներկայացուցիչներ նշանակի՝ վրաց Ազգային Խորհրդի ներկայացուցիչների հետ Հայաստանի եւ Վրաստանի սահմանները վերջնականապէս ճշտելու համար, քանի որ երկու երկրներն էլ անկախ պետութիւններ դառնալով՝ պէտք է որ ճշդուած սահմանագիծ ունենան:

Յաջորդ օրն իսկ Հայոց Ազգային Խորհուրդը ուղարկում է Խ. Կարճիկեանի<sup>54</sup>, Գ. Խատիսեանի<sup>55</sup> եւ Գ. Ղորղանեանի<sup>56</sup> Վրաց Ազգային Խորհուրդը՝ այս խնդիրը կարգադրելու համար: Սկսւում է բանակցութիւնը վրաց ներկայացուցիչների հետ, որոնց նախագահն էր Ի. Ծերեթելին<sup>57</sup>: Երբ մեր լիազորները ներկայացնում են նախկին բազմաթիւ խորհրդակցութիւնների ժամանակ երկու կողմից ընդունուած սահմանագիծը, Ծերեթելին յայտարարում է, որ այդ սահմանը իրենց համար այլեւս անընդունելի է եւ որ երկու երկրների սահմանը պէտք է գծուի այնպէս, որ Վրաստանին մնան ոչ միայն գրաւած Հայկական Բորչալուն, այլեւ Ղազախ գաւառը, իսկ թիւրքերի քաշուելուց յետոյ նաեւ Ախալքալաք գաւառը եւ Ալեքսանդրապոլ գաւառի Փամբակի շրջանը...

Մեր ներկայացուցիչների զարմանքին, թէ սա ինչ է նշանակում, Ծերեթելին պատասխանում է, թէ իրենց պահանջը թելադրուած է ոչ միայն Վրաստանի, այլեւ հայերի շահերից: Բաթումի դաշնագրից յետոյ, ասում է նա, Հայաստանը չի կարող կենսունակ պետութիւն կազմել, մինչդեռ Վրաստանը, գերմանացիների օգնութեամբ կարող է: Հայերի շահը պահանջում է ուժեղացնել այս միակ քրիստոնեայ պետութիւնը Կովկասում, որպէսզի իրենք էլ նրա հովանու տակ կարողանան ապահով ապրել:

Սրան Խ. Կարճիկեանը պատասխանում է, որ Ծերեթելու առաջարկը ոչ այլ ինչ է, բայց եթէ Հայաստանը Թիւրքիայի, Ադրբեյջանի եւ Վրաստանի միջեւ բաժանելու հին ծրագիրը, եւ որ այս հողի վրայ որեւէ խոսակցութիւն հայերի եւ վրացիների միջեւ լինել չի կարող:



Բանակցութիւնն այստեղ էլ պետք է ընդհատուէր, որովհետեւ վրացիների պահանջը ոչ մի կերպով չէր համապատասխանում այն յայտարարութեանը, որ նախորդ օրը ժողովարանի եւ Ռամիշվիլիին արել էին Հայոց Ազգային Խորհրդուն եւ որի հիման վրայ վերջինիս ներկայացուցիչները եկել էին գործ կատարելու: Սակայն Ծերեթելու առաջարկով որոշուում է, որ երկու կողմերն էլ համապատասխան մարմինների մէջ քննութեան առնեն արտայայտուած թեր եւ դէմ կարծիքները եւ մի քանի օր յետոյ նորից հաւաքուեն վերջնական եզրակացութեան գալու համար:

Մինչդեռ մեր ներկայացուցիչները նոր բանակցութեան հրաւերին էին սպասում՝ լրագրները յայտարարեցին, որ Վրաստանի Դեմոկրատիկ Հանրապետութեան կառավարութիւնը սեփական հայեցողութեամբ գծել է արդէն հայ-վրացական սահմանները՝ նրանց մէջ առնելով Հայկական Բորչալուն եւ Ախալքալաքը: Ղազախի եւ Փամբակի հարցերը ըստ երեւոյթին յարուցուած էին միայն «առեւտուրի» համար, դրա համար էլ նրանք Վրաստանին չկցուեցան:

Եւ սա հեքեաթ չէ, այլ պատմութիւն...

Իր այն ժամանակուայ անգոր վիճակում, Հայոց Ազգային Խորհուրդը, որ չէր էլ կարողանում Հայաստանի համար նշանակուած կառավարութիւնը Երեւան ուղարկել, որովհետեւ ճանապարհները բռնուած էին թշնամիներով, այլ բան չէր կարող անել, բայց եթէ թղթով բողոքել վրաց կառավարութեան անօրինակ կամայականութեան դէմ:

Սակայն թուրք թոյլ միջոց է կամայականութեան դէմ նաեւ այն դէպքում, երբ սրա հեղինակները սովորական մահկանացուներ չեն, այլ nec plus ultra<sup>58</sup> ընկերվարականներ...

\* \* \*

1918 թուի սեպտեմբերի վերջերին բուլղարական ռազմաճակատը փլեց, որ օրհասական նշանակութիւն պիտի ունենար Թիւրքիայի պատերազմական բախտի համար: Նրա բանակները բոլոր ճակատներում սկսեցին սեղմուել, յետ քաշուել առաջաւոր դիրքերից: Մեր ռազմագծի վրայ նրա առաջին գործը եղաւ պարպել Փամբակն ու Հարաւային Բորչալուն:

Սրանով վերանում էր թիւրքական այն վտանգը, որը կանխելու համար վրացիք 1918-ի ամառը գրաւել էին Հայկական Բորչալուի հիւսիսային մասը: Սակայն նրանք ոչ միայն չէին մտածում հեռանալ իրենց գրաւած շրջանից, այլեւ ուզում էին, գերմանացիների օգնութեամբ, գրաւել եւ թիւրքերի պարպած շրջանը:

Այս մասին մտերմական ձեւով յայտնեց ինձ Գերմանիայի Ձիւնուորական Միսիոնի պետ Ջօրավար Կրեւը, աւելացնելով, որ չնայած իր անձնական մեծ համակրանքին դէպի հայերը, ինքը ստիպուած է գերմանական զինուորներ տրամադրել վրաց կառավարութեանը, որովհետեւ համաձայն 1918 Մայիսին Փոթիում կնքած դաշնագրութեան՝ Թիֆլիս նահանգը, որի մասն է կազմում եւ Հայկական Բորչալուն՝ Վրաստանի սահմանների մէջ է ընկնում<sup>59</sup>:

Սա արդէն չափազանցութիւն էր: Հայաստանի կառավարութիւնը, որքան էլ ծանր լինէր նրա դրութիւնը, յամենայն դէպս 1918թ. անձար վիճակում չէր գտնուում՝ այսպիսի մի անարդարութիւն կլլելու համար: Նա հրամայեց, որ մեր զօրքերը անմիջապէս գրաւեն թիւրքերից պարպուած հողերը, առանց սակայն բռնի ուժով անցնելու այն գծից, որ վրացիների ձեռքին էր գտնուում մինչեւ թիւրքերի հեռանալը: Նա յոյս ունէր խաղաղ բանակցութիւններով պարպել տալ Հայկական Բորչալուի հիւսիսային մասը վրացիներից:

Կառավարութեան հրամանը գործարդուեց բաւական արագութեամբ: Մի-երկու տեղ մեր զօրքերը գերեցին մինչեւ անգամ գերմանացիներին, որոնք ճանապարհին էին բռնում վրաց զօրամասերի համար դէպի հարաւ:

Սակայն, հագիւ մեր պահակները հաստատուել էին թիւրքերից լքուած պահականոցներում, երբ ժողովարանի կառավարութիւնը վերջնագրի ձեւով ազդարարեց մեզ, թէ հայկական զօրքերի առաջխաղումը դէպի Հայկական Բորչալու՝ ամենավճռական ընդդիմութեան կը հանդիպի իր կողմից, որովհետեւ իր որոշմամբ Բորչալու գաւառն ամբողջապէս, իբրեւ մասը Թիֆլիս նահանգի, մտնում է Վրաստանի սահմանների մէջ:

Այս ազդարարութիւնը, մանաւանդ այն աղաղակող փաստից յետոյ, որ վրաց կառավարութիւնը ամբողջ 7-8 ամիս, Ծալկայում, Մանգլիսիում իբրեւ օտարականների ամենայն խստութեամբ արգելակած պահել էր այս շրջանից Վրաստան փախած հայերին, խորը վրդովմունք առաջ բերեց հայկական բոլոր շրջաններում: Երբ ես, իբրեւ Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ, վերոյիշեալ ազդարարութեան առթիւ ժողովարանի հետ խօսելիս մատնանշեցի, որ Հայկական Բորչալուում գրեթէ վրացի չկայ, որ վրաց կառավարութիւնը նրա ազգաբնակչութեան վիճակով երբեք չէ հետաքրքրուել, որ տեղական ինքնավարութեան հարցը քննելիս ժողովարանի եւ իր ընկերները բազմիցս յայտարարել են այդ գաւառի հայկական լինելը եւ այլն, իմ այս առարկութիւններին հետեւեալ պատասխանը ստացայ վրաց սոցիալ-դեմոկրատիայի պարագլխից,-

«Քանի անդրկովկասեան ժողովուրդներն ապրում էին մի ընդհանուր պետական յարկի տակ, մեզ, վրացիներին համար կարելուրութիւն չէր ներկայացնում, թէ այս կամ այն գաւառը որ նահանգի կամ վարչական միութեան մէջ կը դրուի: Բայց այժմս, երբ Վրաստան ինքնորոշուել է իբրեւ առանձին պետութիւն՝ մենք այդ պետութեան սահմանները գծելիս չենք կարող դեկլարուել ուրիշների ազգային ձգտումներով, որքան էլ նրանք ըստ էութեան համակրելի լինեն, այլ ամենից առաջ, մեր երկրի տնտեսական, քաղաքական եւ ռազմական շահերով: Այդ շահերը հրամայականօրէն պահանջում են Վրաստանի սահմանների մէջ առնել ամբողջ Բորչալու գաւառը»:

Յետագային այս պատասխանը զանազան վարիանտներով կրկնեցին Ծերեթելին եւ ուրիշները, իսկ Ռամիշվիլին, «օրինակացնելու» համար բռնի ուժի գործադրութիւնը Հայկական Բորչալուն զաւթելու գործում՝ նոյն մտքով յայտարարութիւն արաւ Վրաստանի պառլամենտում:

Այս ամենին զուգահեռաբար ընթանում էր զինուորական գործողութիւնների նախապատրաստութիւնը զինուորական նախարար Գեորգաձէի կողմից՝ նոյնպէս սոցիալ-դեմոկրատ:

Հոկտեմբերի 21-ին Վրաստանի զրահապատ գնացքների գլխաւոր պետ Գոգվաձէն Դիլիջանի մեր զօրամասի հրամանատարի միջոցով հետեւեալ վերջնագիրն է ուղղում Հայաստանի կառավարութեան. «Հիմնուելով Վրացական Հանրապետութեան զինուորական նախարարի թիւ 672 հեռագրի վրայ՝ յանձնարարում են (sic)<sup>60</sup> Ձեզ 24 ժամուայ ընթացքում տեղեկացնել Ձեր կառավարութեանը, որ Դուք պէտք է յետ քաշուէք Ձեր բռնած այժմեայ գծից դէպի Շահալի կայարանի միւս կողմը: Սպասում են Ձեր պատասխանին Հոկտեմբեր 22-ի ցերեկուայ ժամը 2-ին»:

Որ այս վերջնագիրը կատակի համար չէր տրուած՝ դա երեւում է յաջորդ օրը զինուորական նախարարութիւնից քաշուած հետեւեալ հեռագրից:

«Սանահին, զրահապատ գնացքների պետ Գոգվաձէին, պատճենը՝ տեղակալ Շէնէ-ին: Վաղը, Հոկտ.ի 22-ին ժամը 12-ի մօտերըը երկաթուղիով կը ճամբուին Ձեր մօտ նահանգական գումարտակից 250 հոգի: Զօրավար Ցիցիանովի զօրամասը, հրետանիներից եւ հետեւակից բաղկացած, ռազմական կարգով գնում է Վորոնցովկայի վրայ: Տեղ հասնելուն պէս զօրավար Ցիցիանովը կը ստանձնի բոլոր զօրքերի ընդհանուր հրամանատարութիւնը: Մեր պահանջը, որ (հայերը) պարպեն ամբողջ Բորչալու գաւառը եւ յետ քաշուեն մինչեւ Թիֆլիս նահանգի սահմանը, անվերապահ է: 22 հոկտեմբերի 1918 թիւ, թիւ 3662, Գնդապետ Գիգիվանով»...

Այս վճռական ընթացքը բռնելով՝ ժորդանիայի կառավարութիւնը անկասկած հաշուի էր առնում այն հանգամանքը, որ Հայաստանը, հիւժուած թիրքական արշավանքներից, ամեն բանից առաջ պէտք ուներ արտաքին խաղաղութեան՝ իր ժողովրդի վերքերն անքելու եւ երկիրը ներքին թշնամիներից ապահովելու համար: Նրա հաշիւը մասամբ ճիշդ էր. եւ այդ էր պատճառը, որ Հայաստանի կառավարութիւնը հրամայել էր իր զօրքերին՝ թիրքերից պարպուած հողերը գրաւելիս կռուի չբռնուել վրացիների հետ:

Բայց, ինչպէս ասացինք, ամեն բան սահման ունի: Հայաստանի կառավարութիւնը չէր կարող վրացիների հանդէպ ունեցած իր խաղաղասիրութիւնը դաւաճանութեան հասցնել՝ նրանց ռազմադիր պահանջների առաջ անպաշտպան ձգելով իր հողը: Այս մտքով էլ նա հետեւեալ հեռագրական պատասխանը տուեց Վրաստանի վերջնագրին.

«Թիֆլիս, վարչապետ ժորդանիային, պատճենը՝ Հայաստանի ներկայացուցիչ Ջամալեանին: Դիլիջանի զօրամասի պետը հաղորդում է, որ վրացական հրամանատարութիւնը նրան վերջնագիր է ներկայացրել պարպելու Շահալի կայարանը: Հրամայուած է չպարպել կայարանը, իսկ եթէ վրացիք յարձակման կը դիմեն – պաշտպանուել: Խոյս տալու համար բարդութիւններից, որոնք կարող են նոր թշնամութիւնների դուռ բանալ, խնդրում են յանուն Վրաստանի եւ Հայաստանի, որոնք այնքան տառապել եւ տանջուել են պատերազմից, յանուն իրաւունքի եւ արդարութեան - զգուշանալ յարձակողական գործողութիւններից եւ պահել վրաց զօրքերը նրանց բռնած այժմուայ գծի վրայ, իսկ սահմանների խնդիրը վճռել խաղաղ համաձայնութեամբ: Յիշեցնում են Ձեզ Ձեր հանդիսաւոր յայտարարութիւնը Յունիսին, Նոյ Ռամիշվիլիի, Ահարոնեանի եւ Խատիսեանի ներկայութեամբ, թէ Վրաստանը ոչ մի յաւակնութիւն չունի Լոռիի վրայ եւ միայն ժամանակաւորապէս է գրաւել այն: Վարչապետ Քաջազնունի»:

Արդեօք Հայաստանի ինքնապաշտպանութեան պատրաստականութիւնը ազդեց ժորդանիայի կառավարութեան, թէ այն, որ Լոռուայ հայ գիւղացիները թիրքական լծից ազատուելուց յետոյ՝ ամենեւին հակամետ չէին երեւում վրացական լծի տակ ընկնելու եւ այդ պատճառով էլ հրացանածգութեամբ էին դիմաւորում վրացական զօրամասերին՝ Շնող, Այրում գիւղերի դէպքերը, չգիտենք: Փաստն այն է, որ վրացիք ձեռք վերցրին Հայկական Բորչալուի հարաւային մասերը բռնագրաւելու մտքից: Բայց դրա փոխարէն նրանք կրկնապատկեցին իրենց ջանքերը այդ գաւառի հիւսիսային մասերում վերջնականապէս հաստատուելու համար:

\* \* \*

1918-ի հոկտեմբերի 30-ին Թիւրքիան նախնական զինադադար ստորագրեց դաշնակից պետութիւնների հետ, իսկ նոյեմբերի վերջերին հրաման ստացաւ պարպելու Անդրկովկասի գրաւած վայրերը: Թիւրք հրամանատարութիւնը նախ քան պարպման գործողութիւնների աւարտելը, որի համար, եթէ չենք սխալուում, նրան ժամանակ էր տրուած մինչեւ դեկտեմբերի 4-ը, թոյլ տուեց որ ախալքալաքցիները վերադառնան իրենց կիսաւեր տները: Բակուրիանիի սառնարանում խոշտանգուած հայ ժողովուրդը դրան էր սպասում՝ Վրաստանից հեռանալու համար: Բայց դրան էր սպասում եւ վրաց կառավարութիւնը՝ Ախալքալաքը օր առաջ բռնագրաւելու համար՝ քանի դեռ Հայաստանի կառավարութիւնը ոտք չէր դրել այնտեղ: Վերջինս անհրաժեշտօրէն պիտի ուշանար, որովհետեւ թիւրքերը Ախալքալաքից յետոյ միայն պիտի պարպէին Ալեքսանդրապօլը, որ ընկած է Երեւանի եւ Ախալքալաքի միջեւ:

Վրացիներն սկսեցին հապճեպով վարչութիւն կազմել այս գաւառի համար, ընդհանուր նահանգապետ նշանակեցին եւ առհասարակ պատրաստութիւններ տեսան իրենց իշխանութիւնն այնտեղ հաստատելու համար:

Այս ամենին տեղեկանալով՝ Հայաստանի կառավարութիւնը դեկտեմբերի 2-ին Վրաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Մդիվանիի միջոցով բողոք յայտնեց վրաց կառավարութեանը՝ Ախալքալաքը բռնագրաւելու մտադրութեան դէմ: Երեք օր վերջը նա, հաւաստիացում չստանալով, որ վրացիք հրաժարուել են իրենց մտադրութիւնից, իսկ միւս կողմից լուր առնելով՝ որ նրանց զօրքերը պատրաստ են մտնելու Ախալքալաք՝ հետեւեալ յուշագիրը ներկայացրեց նոյն Մդիվանիին. «Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան յանձնարարութեամբ խնդրում են Ձեզ հաղորդել Վրացական Հանրապետութեան կառավարութեանը, որպէս զի նա յետ կանգնի իր զօրքերը Ախալքալաքի գաւառը մտցնելու մտադրութիւնից՝ մինչեւ որ այդ շրջանի խնդիրը խաղաղութեամբ լուծուի: Արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանեան<sup>61</sup>»:

Սակայն, վրաց կառավարութիւնը, որ այդ օրերին էլ չէր ժխտում Ախալքալաքի վիճելի լինելը եւ խօսում էր խորհրդաժողովներով եւ միջնորդ դատարանով (արբեդրաժ) այդ վեճը կարգադրելու մասին, այնուամենայնիւ մտցրեց եւ իր իշխանութիւնը եւ իր զօրքը Ախալքալաքի գաւառը: Վերջինս Դեկտեմբեր 5-ին գրաւեց Ախալքալաքի կենտրոնը, իսկ մինչեւ նոյն ամսի 10-ը՝ ամբողջ վիճելի շրջանը:

Հետաքրքրականութիւնից զուրկ չէ այն պատասխանը, որ տուեց վրաց կառավարութիւնը Հայաստանի կառավարութեան վերջին

բողոքներին: Նա նորից շեշտում է, որ Ախալքալաքի խնդիրը վիճելի է, եւ նորից պատրաստակամութիւն է յայտնում այդ վեճը խաղաղ միջոցներով կարգադրելու. բայց դրա հետ միասին յայտնում է, որ «Ախալքալաք գաւառի նուաճումը ոչ պատմական, ոչ քաղաքական եւ ոչ բարոյական տեսակետներից վիճելի չէ հանդիսանում»: Մենք գիտենք արդէն այս տեսակետների արժեքը եւ մանաւանդ բարոյական տեսակետի արժեքը, երբ նրա մասին քաղաքագետներն են խօսում: Բայց եւ այնպէս ականայից հարց է ծագում մեր մէջ, եթէ այս բոլոր տեսակետներից էլ Ախալքալաքի գրաւումը վիճելի չէ, հապա ինչի՞ մէջ է կայանում վեճը...

Իր պատասխանի մէջ ժողովանիայի կառավարութիւնը Ախալքալաք զօրք ուղարկելու քայլը պատճառաբանում է ազգաբնակչութեան մէջ կարգ պաշտպանելու անհրաժեշտութեամբ: Մենք չգիտենք, թէ որ ազգաբնակչութիւնն էր նրան խնդրել իր մէջ կարգ հաստատելու մասին հոգալ: Գիտենք սակայն, որ այս բացատրութիւնը հեզմանքից զատ այլ բան չէ պարունակում իր մէջ, ինչպէս կ'երեւայ հետեւեալ փաստից:

Վրացական զօրքի ներխուժման լուրն առնելով՝ Ղարաքիլիսի<sup>62</sup> մեր զօրախումբը հեծեալների մի փոքրիկ ջոկատ էր դրկել Ախալքալաք գաւառը, որ գրաւել էր նրա հարաւ-արեւմտեան փոքրիկ անկիւնը: Եթէ զօրքի ներկայութիւնն անհրաժեշտ էր այս վայրերում կարգ պահպանելու համար՝ սա էլ զօրք էր, սա էլ կարող էր հոգալ այդ մասին: Սակայն վրացիք յաջորդական վերջնագրերով, եւ գերագանց զինուորական ուժերով, հարկադրեցին այս ջոկատին թողնել իր գրաւած հողամասը եւ այսպիսով ամբողջ Ախալքալաք գաւառը իրենց տիրապետութեան տակ առան:

Հայաստանի կառավարութիւնն անկարող էր իրական միջոցներով պաշտպանել իր իրաւունքները Ախալքալաքում, իսկ ուրիշ միջոցների մեր հարեւանները, ինչպէս յայտնի է, կարելորութիւն չէին տալիս, որովհետեւ հենց այդ օրերին Հայկական Բորչալուում տեղի ունեցած ծանր դէպքեր, որոնք նրա ուշադրութիւնը այլ կողմ պետք է դարձնէին:

\* \* \*

Թիւրքական ներխուժման առաջն առնելու համար 1918թ. յունիսին Հայկական Բորչալուի հիւսիսային մասը ժամանակաւորապէս գրաւելով՝ ժողովանիայի կառավարութիւնը սկզբում այնտեղ բաւական շրջահայեաց քաղաքականութիւն էր վարում, տեղական հայ ազգաբնակչութեանը չխտրնեցնելու համար: Վերջինս իր համաձայնական օրգաններով կառավարուելով՝ գրեթէ չէր ուզում վրացական իշխանութեան ներկայութիւնը:

Սակայն յետագային, երբ վրացիք իւրացրին այն տեսակետը, թէ այդ գաւառամասը ոչ թէ ժամանակաւորապէս, այլ տեսականապէս է դրուած իրենց իշխանութեան տակ, սկսեցին միջամտել նրա ներքին գործերին, որ խուլ դժգոհութիւնների դուռ բացաւ հայ ազգաբնակչութեան մէջ: Այս դժգոհութիւնները առաջին անգամ հրապարակ եկան Բորչալուի հայերին վրացական բանակի համար զինուորագրելու առթիւ, որի հրամանը տրուեց, եթէ չեն սխալուում, 1918 թ. ամռան սկզբներին:

Գրաւուած շրջանի հայ գիւղացիները, որոնք իրենց երբեք Վրաստանի քաղաքացի չէին համարում, հաւաքական գրութիւններով եւ պատգամաւորութիւններով պաշտպանութիւն էին խնդրում ինձնից, իբրեւ իրենց պետութեան ներկայացուցիչ: Իմ բողոքի հետեւանքով, չեն յիշում ժողովանիան փոխել տուեց վերոյիշեալ հրամանը, թէ մեղմացրեց: Յամենայն դէպս, այս հողի վրայ դժգոհութիւնները դադարեցին: Կային եւ ուրիշ կարգի անախորժութիւններ, գլխաւորապէս ռեկվիզիսիոնների<sup>63</sup> եւ մանր-մուրը պաշտօնեաների կամայականութեանց պատճառով, սակայն սրանք զինուորական գրաւման հետ կապուած անհրաժեշտ չարիքներ էին, որոնց շատ կարելորութիւն չէր տրուում:

Դրութիւնը հիմնովին փոխուեց հոկտեմբերի վերջերից սկսած, երբ թիւրքերն արդէն պարպել էին հարաւային Բորչալուի շրջանը: Այս շրջանը զաւթելու փորձի ընթացքին հանդիպելով հայ գիւղացիների բացայայտ թշնամութեանը, իսկ մի քանի տեղ նաեւ զինուած դիմադրութեանը՝ վրաց զօրամասերը գրգռուած էին առհասարակ գրաւման շրջանի հայ ազգաբնակչութեան դէմ: Միւս կողմից, վերջիններս տեսնելով, որ թիւրքական վտանգի անցնելուց յետոյ էլ վրացիք չեն հեռանում իրենց շրջանից եւ մշտապէս հաստատուելու մասին են մտածում՝ սկսեցին թշնամաբար վերաբերուել դէպի վրաց քաղաքացիական եւ մանաւանդ զինուորական իշխանութիւնները:

Որ այս պարագաներում հայ գիւղացիները ամեն մի դժուարութիւն պէտք է հանէին այդ իշխանութիւնների դէմ եւ մինչեւ իսկ միջոցներ խորհէին նրանց երկրից դուրս վտարելու համար, դա ըստ ինքեան հասկանալի, հայրենասիրական զգացմունքներից թելադրուած մի դրութիւն էր: Հասկանալի է նաեւ, որ այսպիսի միջավայրում ապրող եւ գործող վրաց զօրամասերը, որոնց մասին մենք առ հասարակ վատ կարծիք չունենք, պէտք է էքսցեսներ<sup>64</sup> կատարէին: Անհասկանալին այն է միայն, որ ժողովանիայի սոցիալիստական կառավարութիւնը չէր կարողանում ըմբռնել կացութիւնը եւ դրանից համապատասխան եզրակացութիւններ հանել:

Նոյեմբերին հայ գիւղացիների եւ գրաւող զօրամասերի յարաբերութիւնները ծայր աստիճանի լարուեցին: Ժողովրդական ընդվզումը մի քանի վայրերում բացայայտ ըմբոստութեան բնոյթ ստացաւ: Դրա հետ միասին բնակարանի եւ պարէնի բռնագրաւումները, խուզարկութիւնները, զինաթափումները, ձերբակալութիւնները եւ այսօրինակ գործողութիւնների հետ անխուսափելիօրէն կապուած կամայականութիւններն ու սանձարձակութիւնները ամեն չափ ու սահման անցան:

Զգալով, որ եթէ իրերն այս ընթացքին մնան՝ աղիտաւոր հետեւանքներ կարող են ստացուել՝ եւ յատուկ յուշագրով վրաց կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրեցի ստեղծուած կացութեան վրայ, առանձնապէս ընդգծելով, որ այդ կացութիւնը կարող է ծանր անդրադարձում ունենալ երկու երկրների փոխարաբերութեանց վրայ, որովհետեւ նախ՝ մեր Ղարաքիլիսայի զօրամասը, բաղկացած լինելով մեծ մասամբ Բորչալուի հայերից, կարող է ինքնագլուխ արարքների մղուել ի տես հայրենակից գիւղացիութեան տառապանքների, եւ ապա՝ ընդհանրապէս հայ ժողովուրդը չի կարող անտարբեր մնալ դէպի Հայկական Բորչալուում տիրող քաօսը:

Իսկ որ այնտեղ ամեն ինչ կարգին չէր, այդ երեւում է 1918թ. նոյեմբերի 21-ին Բորչալուի ընդհանուր նահանգապետ, զօրավար Զուլուկուձէին ուղղուած մի պաշտօնական զեկուցագրից, որի մէջ կարդում ենք.

«... Հեծեալ հարիւրեակի զինուորները եւ Ուզունլար գիւղի բնակիչները հրացանածօութեան են բռնուել, որի ժամանակ սպանուած է ուզունլարցի մի միլիցիոններ, վիրաւորուած է մի ձի եւ զինուորների կողմից խիստ ծեծուած է գիւղի կոմիսարը: ... Այս գործի համար քննութիւն են նշանակել, որ հիմա էլ շարունակուում է: ... - Պատմածներից երեւում է, որ հարիւրակի զինուորներն են մեղաւորը: Սակայն գիւղացիների յանդուգն, բացայայտ, զինուորական շղթայով կատարած զինուած յարձակումը առիթ է տալիս մտածելու, որ գիւղում շատ գէնք կայ: Անհրաժեշտ է խնամքով խուզարկել գիւղի բոլոր տները եւ միեւնոյն ժամանակ անհրաժեշտ է հեռացնել այնտեղից երկու հարիւրակն էլ, փոխարինելով նրանց ուրիշ զօրամասերով, որովհետեւ զինուորները շատ սանձարձակ են դառել եւ իրենց թալաններով յուզում են տեղական ժողովուրդը...»:

Զեկուցագրի հեղինակն է ընդհանուր նահանգապետի առժամեայ փոխանորդ փոխ-գնդապետ Ռամազովը:

Պատահականօրէն լոյս աշխարհ տեսած մի վաւերագիր է սա Ուզունլար գիւղում տեղի ունեցած մի դէպքի մասին: Թէ ինչ վաւերագրեր կային վրաց կառավարութեան ձեռքին նոյն գիւղում եւ հաւրեւան Աղվի, Ամուչ, Ակորի եւ այլ գիւղերում տեղի ունեցած ուրիշ

դէպքերի մասին, չգիտենք: Սակայն հենց այս մի հատիկ վաւերագիրն էլ բաւական էր, որպէս զի ժողովանիայի կառավարութիւնը ընթերցելով մի օտար հողամաս գինուորական գրաման տակ պահելու վտանգը: Նա այդ վտանգը չընթերցեց եւ այն, ինչ որ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ կարող էր կարգադրուել եւ պէտք է կարգադրուէր խաղաղ միջոցներով կարգադրուեց զենքի միջոցով...

Վերոյիշեալ զեկուցագրի մէջ յիշատակուած թաւաններն ու սանձարձակութիւնները մի կողմից եւ հայ գիւղացիների ազատագրական ձգտումները միւս կողմից իրար բաշխելով՝ ընդհանուր ապստամբութեան հրդեհը վառեցին վրացական լծի տակ գտնուած Լոռուայ գիւղերում: Ապստամբութեան ազդանշանը տուեց Ուզունլար գիւղը՝ վտարելով իր միջից վրացական զօրամասը: Նրա օրինակին հետեւեցին նախ Աղվի, Ամուչ, Ակորի գիւղերը, ապա եւ Հայկական Բորչալուի միւս բռնագրաւուած գիւղերը:

Յեղափոխութիւնից ելած ժողովանիայի կառավարութիւնը, փոխանակ գլուխ խոնարհելու ժողովրդական այս սրբազան պոռթկումի առաջ՝ ապստամբութիւնը ընկճելու հրաման տուեց: Վրացական զօրքերը շարժման մէջ դրուեցին այս հրամանը գործադրելու համար: Դեկտեմբերի 9-17-ը նրանք ռմբակոծում էին հայկական գիւղերը, յարձակումներ եւ հակայարձակումներ կատարում նրանց ընկճելու համար, բայց ապարդիւն: Լեռնական լռեցին առիծի պէս կռոււմ էր իր օջաղի պաշտպանութեան համար:

Այս ժամանակամիջոցում Հայաստանի կառավարութիւնը երեք անգամ դիմեց ժողովանիայի կառավարութեանը՝ խնդրելով վերջ տալ ընդհարումներին եւ ազդարարելով, որ նրանց շարունակումը կարող է ծանր հետեւանքներ ունենալ: Նա չէր պահանջում, որ վրացիք չէզօք գօտի յայտարարեն գրաւած շրջանը՝ իրենց իշխանութիւնը տեղական ժողովրդին միայն զիջելով: Նա համաձայն էր, որ մինչեւ հայ-վրացական հողային վեճերի կարգադրութիւնը այդ շրջանը մնայ վրացական վարչութեան տակ: Միակ բանը, որ նա պահանջում էր ամենայն վճռականութեամբ այն էր, որ վրացիք հեռացնեն այնտեղից իրենց զօրքը, որ, խիստ զազազած էր իր կրած անյաջողութիւններից եւ կարող էր մեծ արիւնհեղութիւնների պատճառ դառնալ:

Այսքան չափաւոր, այսքան արդար մի պահանջի հանդէպ էլ ժողովանիայի կառավարութիւնը մնում էր անյողողող: Հայաստանի կառավարութեան յուշագրերին նա պատասխանում էր չքմեղանքներով, թէ ոչ մի բռնութիւն կամ ռմբակոծութիւն տեղի չէ ունեցել գրաւած շրջանում, մինչդեռ վրաց գինուորական եւ քաղաքացիական իշխանութիւնների պաշտօնական հաղորդագրութիւնները, որոնք այսօր հրապարակի վրայ են, անառարկելիօրէն հաստատում

են թէ մեկը եւ թէ միւսը, կամ անհիմն մեղադրանքներ էր յարուցանում հայկական զօրքերի ինչ որ ազդեցիւ գործողութիւնների դէմ: Մինչդեռ մեր զօրքերը Դեկտեմբերի 14-ից առաջ որևէ մասնակցութիւն չեն ունեցել յիշեալ ժողովրդական շարժման մէջ, մի բան, որ հաստատուում է վրաց արտաքին գործերի նախարար Ե. Գեզեչկորիի<sup>65</sup> կողմից Դեկտեմբերի 15-ին պառլամենտում արուած յայտարարութեամբ:

Սակայն, ամենաապշեցուցիչը վրաց կառավարութեան պատասխանների մէջ այն էր, թէ ապստամբուած շրջանից վրացական զօրքերը հանելու պահանջը հանդիսանում է «միջամտութիւն Վրաստանի ներքին գործերին»: Հասկանալի<sup>66</sup> է: Վրաստանը կարող է ժամանակաւորապէս գրաւած հայկական հողամասը աննկսիոնի ենթարկել, նա կարող է այդ հողի վրայ ապրող հայ գիւղացիների ազատագրական ձգտումները խեղդել բռնութիւններով եւ թնդանօթներով, իսկ Հայաստանը իրաւունք չունի ծայն հանելու, որովհետեւ դա կը լինի միջամտութիւն օտար պետութեան ներքին գործերին...

Իր արդար պահանջի դէմ այսպիսի պատասխաններ ստանալուց յետոյ՝ Հայաստանի կառավարութեան այլ բան չէր մնում, բայց եթէ օգնութեան ձեռք մեկնել Լոռուայ գիւղացիներին:

Լոռին ազատուեց, վերստացաւ իր արդար իրաւունքը, բայց եւ պատմութեան մէջ արձանագրուեց հայ-վրացական պատերազմի տխուր փաստը...

\* \* \*

Արդէօք այս փաստը սթափեցնող նշանակութիւն ունեցա՞ւ ժողովանիայի կառավարութեան համար: Արդէօք նա զգա՞ց, թէ ուր կարող է տանել ազգերի ինքնորոշման իրաւունքի ոտնահարումը, անգամ եթէ ոտնահարողները արձանագրուած են Ընկերվարական Ինտերնասիոնալի մէջ:

Դժբաղդաբար ոչ: Որովհետեւ դրանից յետոյ էլ տեսնում ենք, որ նա շարունակում է Ախալքալաքը եւ մինչեւ անգամ ազատագրուած Հայկական Բորչալուն կլանելու քաղաքականութիւնը:

Հայ-վրացական պատերազմի յաջորդ շաբաթներին (1919թ. Փետրուար) Բեռնում տեղի է ունենում Բ. Ինտերնասիոնալի Խորհրդաժողովը: Հ. Յ. Դաշնակցութեան եւ վրաց սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները, որոնց թւում էր գտնուում եւ Ա. Չխենկելիմ<sup>66</sup>, համաձայնութեան են գալիս հայ-վրացական հողային վեճը դնել Խորհրդաժողովի քննութեանը: Խորհրդաժողովը վճռում է, որ այդ վեճը պէտք է լուծուի համաձայն «ազգերի ինքնորոշման իրաւունքի

ճշգրիտ գործադրութեան, այսինքն, որ ոչ մի հաւաքականութիւն (collectivite) չի կարող փոխանցուել կամ կցուել մի ուրիշին, առանց պատշաճ հանրաքուէարկութեան» (consultation en bonne forme)<sup>67</sup>:

Վիճող կողմերը իրենց պատրաստակամութիւն են յայտնում ենթարկուելու այս պայմանին:

Սա, անկասկած, խոշոր զիջում էր հայերի կողմից, որովհետեւ այն ամենից յետոյ, ինչ անցել-դարձել էր երկու կուսակցութիւնների միջեւ Յայկական Բորչալուի եւ Ախալքալաքի շուրջը, այն բոլոր հանդիսաւոր յայտարարութիւններից յետոյ, որ արել էին վրաց սոցիալ-դեմոկրատները անցեալում, այս գաւառները Յայաստանի սեփականութիւն ճանաչելով՝ մենք իրաւունք ունէինք պահանջելու, որ ոչ թէ նոր հանրաքուէարկութիւն կատարուի նրանց մէջ, այլ, գոյութիւն ունեցող վիճակագրութիւնների եւ վրաց սոցիալ-դեմոկրատիայի նախկին յայտարարութիւնների հիման վրայ, այդ գաւառները պարզապէս կցուեն Յայաստանին:

Սակայն, մեր ընկերները զիտակցաբար կատարում են այս զիջումը՝ իրենց պահանջի օրինականութեան դէմ որեւէ առարկութեան տեղիք չթողնելու համար: Այնուհետեւ նրանց միակ մտահոգութիւնը պէտք է լինէր՝ այնպէս անել, որ որոշուած հանրաքուէարկութիւնը կատարուի կանոնաւոր ձեւով, առանց կողմնակի ճնշումների եւ մեքենայութիւնների:

Միւս կողմից՝ վրացիք էլ համարում են սա զիջում, որովհետեւ դրանով նրանք իրաժարուում են այն բոլոր տնտեսական, քաղաքական, ռազմական եւ պատմական տեսակետներից, որոնցով նրանք վերջին ժամանակները պատճառաբանում էին Յայկական Բորչալուի եւ Ախալքալաքի բռնագրաւումը:

Սակայն, մինչդէռ Բեռնում այս համաձայնութիւնն է կայանում՝ վրաց սոցիալ-դեմոկրատները թէ Անդրկովկասում եւ թէ արտասահմանում շարունակում են իրենց հին քաղաքականութիւնը հողային խնդրում:

Այդ ժամանակները Թիֆլիսում իր նիստերն էր կայացնում հայ-վրացական հաշտարար յանձնաժողովը<sup>68</sup>, որ պէտք է կարգադրէր երկու երկրների միջեւ առկախ մնացած վէճերը: Այդտեղ վրաց լիազօրները լսել անգամ չէին ուզում ոչ միայն որեւէ ռէֆրէնդումի, այլ եւ վէճի մասին՝ Ախալքալաքի վերաբերմամբ. որովհետեւ այդ գաւառը նրանք անվիճելիօրէն Վրաստանի սեփականութիւն էին համարում: Միեւնոյն ժամանակ, արտասահմանում, վրաց պատուիրակութիւնը, որի մէջ շատ կարեւոր դէր էր կատարում Չխենկելին, անխռով կերպով շարունակում էր իր բոլոր «ելոյթների» ժամանակ Յայկական Բորչալուն եւ Ախալքալաքը ներկայացնել իբրեւ Վրաստանի հողեր:

Սկզբունքային յայտարարութեան եւ գործնական քաղաքականութեան այս հակասութիւնը, որով, դժբաղդաբար շատ յաճախ է աչքի ընկել վրաց սոցիալ-դեմոկրատիան, իրաւամբ վրդովմունք է պատճառում արտասահմանեան մեր ներկայացուցիչներին: Վրդովմունքը մեծանում է, երբ նրանք լուր են առնում, թէ Բեռնի խորհրդաժողովից մի քանի շաբաթ անց, Ամստերդամում տեղի ունեցած ընկերվարական միջազգային խորհրդաժողովին վրաց սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները, օգտուելով Ղաշնակցութեան ներկայացուցիչների բացակայութիւնից, յայտարարել են, թէ հողային խնդիրների վերաբերմամբ այլեւս որեւէ վէճ չկայ հայերի եւ վրացիների միջեւ: Ընկ. Մ. Վարանդեանը<sup>69</sup> հաղորդում է Բ. Ինտերնասիոնալի Գործադիր Մարմնին, որ վերոյիշեալ յայտարարութիւնը չէ համապատասխանում իրականութեան եւ դրա հետ միասին խնդրում է, որ Գործադիր Մարմինը միջոցներ ձեռք առնի Բեռնի խորհրդաժողովի որոշումը իրականացնելու համար:

1919թ. Մայիսի սկզբներին գործադիր մարմինը Փարիզում գբաղւում է այս խնդրով: Այստեղ Վրաստանի ներկայացուցիչները նոր առաջարկ են բերում՝ հայ-վրացական հողային վէճը լուծել ոչ թէ հանրաքուէարկութեամբ, ինչպէս իրենց իսկ համաձայնութեամբ որոշել էր Բեռնի խորհրդաժողովը, այլ միջնորդ դատարանով (արբիտրաժ):

Այս առաջարկի իմաստը հասկանալի է, ի հարկէ. վրացիք ոչ մի յոյս չունէին հանրաքուէարկութեամբ որեւէ բան շահիլ վիճելի համարուած հողերից: Այդ հողերի բնակչութեան ազգագրական կազմը եւ տրամադրութիւնները նրանց լաւ էին յայտնի, նման յոյսեր սնուցանելու համար: Մինչդէռ միջնորդ դատարանը, որ սովորաբար միջին գծեր է որոնում կողմերն իրար մօտեցնելու համար՝ կարող էր վիճելի հողերը կիսել հայերի եւ վրացիների միջեւ, օրինակ, Յայաստանին տալ Յայկական Բորչալուն, իսկ Վրաստանին՝ Ախալքալաքը: Այս հաշիւն աչքի առաջ ունենալով՝ նրանք անցեալում էլ իրենց հողային պահանջները մեծ էին բռնում, ինչպէս մենք տեսանք 1918թ. յունիսին, երբ վրացիք ուզում էին մեզնից ոչ միայն Յայկական Բորչալուն եւ Ախալքալաքը, այլեւ Ղազախն ու Փամբակը:

Նման «քաղաքագիտութիւնը» հարեւան ժողովրդի հանդէպ սկզբից եւեթ խորթ է եղել մեզ համար. այլապէս՝ մենք նրանից կարող էինք օգտուել շատ աւելի մեծ յաջողութեամբ քան վրաց սոցիալ-դեմոկրատները: Որովհետեւ վերջիններս երկինք էլ թռչեն՝ չեն կարող համոզել ունեւիցէ, թէ իրենք որեւէ պատմական կամ փաստական իրաւունք ունեն Ղազախի եւ Փամբակի վրայ, մինչդէռ մեզ չեն պակասում ոչ փաստական եւ ոչ էլ պատմական տուեալներ:

ընդ՝ ապացուցանելու համար, որ հայերը աւելի մեծ իրաւունքներ ունին թիֆլիս գաւառի եւ քաղաքի վրայ, քան վրացիները...

Միջնորդ դատարանի առաջարկը, բնականաբար, մերժուած է մեր ընկերների կողմից թէ գործնական եւ թէ սկզբունքային առարկութիւններով: Այս առարկութիւնների ուժը թուլացնելու համար՝ Ծերեթելին հարց է տալիս մեր ընկերներին. «Քանի որ դուք հանրաքուէարկութիւն էք պահանջում, պատրաստ էք նոյն սկզբունքը կիրառելու նաեւ թիւրքահայաստանում»:

Սա երկրորդ անգամն էր, որ վրաց սոցիալ-դեմոկրատները հայկական կոտորածները փաստ էին դարձնում հայ ժողովրդի արդար իրաւունքը ժխտելու համար: Առաջին անգամ այդ դիտողութիւնը լսել էինք, 1918թ. աշնանը Ն. Ժորդանիայից, երբ Պոլսից նոր վերադարձած ընկ. Ահարոնեանի եւ ընկ. Խատիսեանի հետ միասին գնացել էինք նրա մօտ՝ հայ-վրացական վեճերի մասին խօսելու համար: Այն ժամանակ էլ Ժորդանիան ասում էր մեզ, թէ քանի որ մենք ազգերի ինքնորոշման իրաւունքի վրայ ենք պնդում, ապա ուրեմն պէտք է հրաժարուենք թիւրքահայաստանից, որովհետեւ թիւրքերը կոտորել են այնտեղի հայերին:

Յիշում եմ, թէ այս դիտողութիւնը ինչքան ծանր մտածումների մղեց մեզ այն քաղաքական շարժառիթների մասին, որոնցով դեկաւարում էր վրաց կառավարութիւնը 1918թ.-ին, երբ նա թոյլ չէր տալիս Ախալքալաքի եւ Բորչալուի հայերին գէթ ժամանակաւորապէս տեղաւորուել Վրաստանի գիւղերում, չնայած որ Բակուրիանիի եւ Ծալկայի արգելարաններից օրական մի քանի տասնեակ դիակներ էին դուրս տարուում:

Վրաց սոցիալ-դեմոկրատների առաջարկը չանցաւ: Գործադիր մարմինը հասկացրեց նրանց, որ ժողովուրդները իրեր չեն, որոնց կարելի լինի միջնորդ դատարանների հրամաններով սրան կամ նրան յանձնել, եւ վճռեց համաձայն Բեռնի խորհրդաժողովի որոշման, որ Յայկական Բորչալուի եւ Ախալքալաքի բնակիչները իրենք պէտք է հանրաքուէարկութեամբ յայտնեն, թէ որ երկրի սահմաններում են ուզում մնալ:

Այս վճիռը գործադրելու համար, Ինտերնասիոնալը պէտք է վիճելի շրջաններն ուղարկէր մի յատուկ յանձնաժողով՝ բաղկացած արեւմտեան ընկերվարականներից: Մեր ընկերները պահանջում են, որ հանրաքուէարկութեան ժամանակ վրացական զօրքը եւ պաշտօնէութիւնը դուրս ելնեն վիճելի հողամասերից: Ի՞նչ կարելի է առարկել սրա օրինաւորութեան դէմ: Եթէ մի հողամաս երկու երկրի միջեւ վիճելի է համարում, ապա հասկանալի է, որ այդ վեճի լուծման պրոցեսի ընթացքին կողմերը հաւասար պայմանների մէջ պէտք է դրուեն:

Ներկայ դէպքում, դա կարող էր լինել երկու ձեւով. կամ այն է, որ Յայաստանն ու Վրաստանը հաւասար դիրք պէտք է ստանային Յայկական Բորչալուում եւ Ախալքալաքում եւ կամ երկուսն էլ հաւասարապէս պէտք է դուրս ելնէին այնտեղից: Երկուսն էլ ընդունելի էին մեր ընկերների համար:

Բայց նրանց խնդրի իրաւական կողմը չէր միայն հետաքրքրում, այլեւ մի ուրիշ բան. այդ այն է, որ, մեր ասիական բարքերում, տիրող իշխանութիւնը բազմապիսի միջոցներ ունի քուէարկութեան արդիւնքը իր ուզած ձեւով ներկայացնելու համար: Ներկայ դէպքում մեր ընկերները պարտաւոր էին առանձնապէս զգոյշ լինել, որովհետեւ քուէարկութեան պիտի դրուէր ոչ թէ մի հասարակ վեճ, այլ պետական սահմանների հարցը, որ չափազանց մեծ շահագրգռութիւն էր ներկայացնում Վրաստանի իշխանութեան համար: Պէտք էր այնպէս անել, որ այս շահագրգռութիւնը որեւէ ձեւով չանդրադառնայ ժողովրդական քւէի վրայ: Պէտք էր այնպէս անել, որ այդ քուէն ժողովրդական կամքի իսկական արտայայտիչը լինի:

Վրաց սոցիալ-դեմոկրատները գիտէին անշուշտ, որ այս առաջարկը այնքան օրինաւոր է, որքան եւ արդար: Եւ եթէ նրանք ցանկութիւն ունենային լօյեալ կերպով գործադրելու Ինտերնասիոնալի որոշումը՝ չպիտի որեւէ առարկութիւն յարուցանէին վերոյիշեալ առաջարկի դէմ: Բայց նրանք հասկանալի է, թէ ինչո՞ւ ամենայն վճռականութեամբ ընդդիմացան դրան, եւ Գործադիր մարմինը ցրուեց՝ առանց կարողանալու իրականացնել իր վճիռը:

Երկու ամիս անց Լիւցեռնի խորհրդաժողովում նորից սեղանի վրայ է դրուում այս չարաբաստիկ հարցը: Այստեղ էլ որոշուում է, որ ինչպէս բոլոր հողային վեճերը, այնպէս էլ հայ-վրացական վեճը պէտք է լուծուի ժողովրդական հանրաքուէարկութեամբ՝ կազմակերպուած Ազգերի Դաշնակցութեան կողմից եւ նրա անմիջական հակակշռի տակ:

Սրանից յետոյ մի քանի անգամ փորձ է կատարուում մեր կողմից Ինտերնասիոնալի ընդունած հանրաքուէարկութեան սկզբունքով լուծելու հայ-վրացական հողային վեճը, բայց մեր բոլոր փորձերն էլ վրիպում են:

Լիւցեռնի խորհրդաժողովից անմիջապէս յետոյ, 1918թ. օգոստոսի 29-30-ին հայ-վրացական խորհրդաժողով է տեղի ունենում թիֆլիսում, որի ժամանակ վրաց պատուիրակութիւնը Ռամիշվիլիի նախագահութեամբ, կտրականապէս յայտարարում է, թէ Յայկական Բորչալուի հիւսիսային մասը, ինչպէս եւ ամբողջ Ախալքալաք գաւառը պատկանում է Վրաստանին, եւ այդ վայրերից որեւէ հողամաս Յայաստանին զիջելու մասին խօսք չի կարող լինել: Իբրեւ ժամանակաւոր մի կարգադրութիւն, մինչեւ թիւրքահայաստանի

խնդրի լուծումը, նրանք համաձայնում են Հայաստանին թողնել Հայկական Բորչալուի հարաւային մասը..., որը արդէն իրենց ձեռքին չէր գտնուում: Որեւէ խօսք ժողովրդական կամքի, հանրաքուէարկութեան, Ազգերի Դաշնակցութեան մասին՝ մենք չենք գտնում այս յայտարարութեան մէջ, սակայն «բոլոր պատմական, աշխարհագրական ազգագրական եւ ռազմական նկատումները» իրենց փառաւոր տեղն ունին նրա մէջ...

Աւելի յաջող վախճան չունեցան այն փորձերը, որոնք կատարուեցին այդ ժամանակից ի վեր Անդրկովկասում եւ արտասահմանում:

Մեր բոլոր ջանքերը՝ թեքելու վրաց սոցիալ-դեմոկրատիան դէպի «ազգագրական սկզբունքը» եւ ժողովրդական հանրաքուէարկութիւնը, որոնք ազգերի ինքնորոշման իրաւունքի տարրերն են կազմում՝ անցան ապարդիւն, մինչեւ արտաքին ուժերը եկան եւ զրկեցին Հայաստանի եւ Վրաստանի ղեկավարող կուսակցութիւններին այս չարաբաստիկ հարցը համաձայն ընկերվարական սկզբունքների լուծելու հնարաւորութիւնից...

### ***Դ. Խորհրդայնացումից Յետոյ***

Հայաստանի եւ Վրաստանի Խորհրդայնացումից յետոյ՝ հայ-վրացական հողային վեճը մի փոքր մասով լուծուել է: Հայկական Բորչալուի հարաւային մասը, որ կոչւում է Լոռի եւ որտեղ 1918-ի դեկտեմբերին հայ գիւղացիութիւնը զենք բարձրացրեց վրացական իշխանութեան դէմ, ներկայիս, հիւսիսային սահմանի մի փոքրիկ շտկումով միացած է Հայաստանին: Դրա փոխարէն հայ կոմունիստները Վրաստանի անվիճելի սեփականութիւնն են յայտարարում Հայկական Բորչալուի հիւսիսային մասը՝ Լոռիից մինչեւ Խրամ գետը, որ պարփակում է մօտ 3000 քառ. վերստ տարածութիւն 35-40 հազար ազգաբնակչութեամբ, եւ ամբողջ Ախալքալաք գաւառը:

Հայ կոմունիստները առիթ չեն փախցնում պարծենալու, թէ իրենք վերջնականապէս լուծել են Լոռիի խնդիրը՝ նրան Հայաստանին կցելով, մինչդեռ «դաշնակների» ժամանակ այս հողամասը ոչ Հայաստանին եւ ոչ էլ Վրաստանին պատկանող մի չէզօք գոտի էր: Խօսք չունենք ասելու. մեր տնաքոյս հայրենասերները շատ խելօք գործ են կատարել: Նրանք Հայաստանի սեփականատիրական իրաւունքը հաստատել են տուել մի փոքրիկ հողամասի վրայ՝ մօտ 2200 քառ. վերստ տարածութեամբ եւ 45-50 հազար ազգաբնակչութեամբ, որ փաստօրէն արդէն Հայաստանի մասն էր կազմում, եւ ո-

րի հանդէպ ոչ մի խելքը գլխին վրացի այլեւս որեւիցէ յաւանակաւուքիւն չունէր, եւ, դրա փոխարէն, իրաւապէս Վրաստանին են զիջել կրկնակի քանակութեամբ հող եւ ժողովուրդ, որոնց վրայ Վրաստանը, բացի «բռունցքի իրաւունքից» այլ իրաւունք չունէր...

Բնականաբար, այսօրինակ գիջումները Հ. Յ. Դաշնակցութեան համար որեւէ բարոյական եւ իրաւական արժէք ունենալ չէին կարող: Այս բանում, անշուշտ, մեզ հետ համաձայն կը լինի վրաց սոցիալ-դեմոկրատիան, որը հիմնովին ժխտում է բոլշեւիկեան բռնակալութեան հետ կապուած որեւէ գործի օրինականութիւնը:

Որ մեր կուսակցութեան այս դիրքը լիովին համապատասխանում է հայ ժողովրդի տրամադրութիւններին՝ այդ մասին որ եւ է տարակոյս չունինք:

Նախ՝ բռնագրաւուած հողերի վրայ ապրող հայ ժողովուրդը չէ ուզում անջատուած մնալ մայր հայրենիքից: Նախանցեալ տարի Ախալքալաքի գիւղական խորհուրդները համախօսականներով եւ յատուկ պատգամաւորութիւններով պահանջեցին անդրկովկասեան եւ հայկական իշխանութիւններից, որ իրենց գաւառը կցուի Հայաստանին: Նրանց պահանջը մերժուեց եւ պիտի մերժուէր. որովհետեւ վրաց կոմունիստների երազը «մեծ Վրաստանի» մասին այնքան վառ է, որքան եւ սոցիալ-սեմոկրատների երազը, իսկ հայ կոմունիստները շատ են խղճուկ՝ վրացի ընկերներին անախորժ հարցերով ձանձրացնելու համար:

Բայց այն հանգամանքը, որ Խորհրդային բռունցքի տակ գտնուող Ախալքալաքը յանդգնում է այսքան «հակայեղափոխական մի ելոյթ» ունենալ, բաւական պերճախօս վկայութիւն է նրա տրամադրութիւնների մասին: Այս տրամադրութիւններին վերաբերեալ մենք ուրիշ վկայութիւններ էլ ունենք, որ առ այժմ չենք կարող հրապարակել:

Գալով մնացած հայութեանը՝ նրա համար Ախալքալաքի եւ բռնագրաւուած Հայկական Բորչալուի խնդիրը մասն է կազմում այն ընդհանուր ազգային պայքարի, որի նպատակն է հայ ժողովրդի համար իր քանակին եւ որակին վայել դիրք ստեղծել Անդրկովկասում: Այդ ժողովուրդ այսօր քանակով երկրորդ տեղն է բռնում Անդրկովկասի երեք գլխաւոր ազգերի մէջ, իսկ որակով յետ չէ մնում ոչ ոքից:

Սակայն, չնայած դրան՝ նրա համար ձեւել են մի հայրենիք, որ աւելի քան երկու անգամ փոքր է Վրաստանից եւ գրեթէ երեք անգամ փոքր՝ Ադրբեյջանից: Սրա պատճառները երկուսն են. նախ՝ որ Անդրկովկասի երկուայ ընդհանուր թշնամին, Թիւրքիան, իր յաղթանակների գինը գլխաւորապէս Հայաստանից է առել, եւ ապա՝ որ հայ ժողովրդի դաշնակից հարեւանները բռնի տիրացել են նրա



ծայրագալառներին: Առաջին պատճառը վերացնելը այսօր մեր հարեւաններից չէ կախուած, բայց երկրորդը մեծապէս նրանցից է կախուած: Նրանք կարող են եւ պարտաւոր են վերադարձնել Հայաստանին նրանից խլուած հայկական գաւառները, որից յետոյ իրաւունք կ'ունենան սպասելու, որ հայ ժողովուրդը, իբրեւ անդրկովկասեան ընտանիքի մի իրաւագօր եւ հարազատ անդամը, իր հարեւանների հետ ձեռք ձեռքի գործի լծուի յանուն ընդհանուր շահերի:

Ահա այս հունի մէջ է գտնուում հայ ժողովրդի ազգային պայքարը Անդրկովկասում: Եւ այս պայքարը չի կարող դադարել, մինչեւ որ Հայաստանից անջատուած հայկական գաւառները, դրանց թւում եւ Ախալքալաքն ու Հայկական Բորչալուի հիւսիսային մասը նրան չմիանան:

## ԺՈՐԴԱՆԻԱՅԻ «ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՅՑԸ»

Մենք հանգամանօրէն ներկայացրինք հայ-վրացական հողային վէճի գլխաւոր փուլերը եւ ցոյց տուինք վրաց սոցիալ-դեմոկրատիայի կատարած ձախորդ դերը նրա մէջ: Խորապէս համոզուած ենք, որ եթէ այս կուսակցութիւնը հաւատարիմ մնար իր իսկ յայտարարած որոշումներին եւ տեսակէտներին, մեր հողային վէճերն արդէն լուծուած կը լինէին, եւ երկու ժողովուրդների փոխարաբերութիւնները, թէ անկախութեան շրջանին եւ թէ հիմա, բոլորովին այլ պատկեր կ'ունենային:

Սակայն, անցածն անցած է: Նրա վրայ կանգ առանք ոչ թէ հին վերքերը քրքրելու, այլ մեր պահանջների արդարութիւնը պատմականօրէն հիմնաւորելու նպատակով: Մեզ համար շատ աւելի մեծ կարեւորութիւն է ներկայացնում այն հարցը, թէ ի՞նչ պէտք է լինի այսուհետեւ, արդե՞օք մենք պէտք է շարունակ իրար դէմ պայքարողի դերում մնանք եւ յաջող քաղաքական կոնիւնկտուրի<sup>70</sup> սպասենք մեր կամքը միմեանց պարտադրելու համար, թէ՞ պէտք է ուղիներ որոնենք վերացնելու այս չարաբաստիկ վէճը, որ անճոռնի խուփի պէս ընկած է երկու հարեւան ժողովուրդների իրար հասկացողութեան եւ գործակցութեան ճանապարհին:

Առողջ քաղաքական բնագոյր, անցեալի դառը փորձերը, Հայաստանի եւ Վրաստանի պատմական աւանդութիւնները եւ մեր ժողովրդապետական-ընկերվարական համոզումները մղում են մեզ եւ պէտք է մղեն դէպի երկրորդ ճանապարհը: Կարծում ենք, որ նոյն նկատումներով նոյն ճանապարհը պէտք է բռնեն եւ մեր հարեւանները:

Այս տեսակէտից խիստ օգտակար ծառայութիւն կարող է մատուցել մեզ Ն. Ժորդանիայի «Մեր տարածայնութիւնները» գիրքը: Եւ ի՞նչ է, ժորդանիան գրել է այս գիրքը Վրաստանի ազգային պահանջները ռուսական իմպերիալիզմի դէմ պաշտպանելու համար, սակայն, որովհետեւ նա այդ պահանջները հիմնաւորում է ոչ թէ ռուս-վրացական յարաբերութիւններին յատուկ պայմաններով, այլ՝ հանրաճանաչ սկզբունքներով, որոնք անհրաժեշտաբար հիմք պէտք է նկատուին նմանօրինակ բոլոր ազգային պահանջների դէպքում՝ ուստի եւ նրա գիրքը դառնում է մի տեսակ «սկզբունքային ուղեցոյց» բոլոր տեսակի ազգային վէճերի, հետեւաբար եւ հայ-վրացական հողային վէճի համար:

Տարակոյս չունինք, որ եթէ վրաց սոցիալ-դեմոկրատիան պատրաստակամութիւն յայտնի ղեկավարուելու այդ գրքի մէջ արծարծուած սկզբունքներով՝ մի քանի ժամում կարելի կը լինի համաձայնութիւն կնքել նրա հետ մեր հողային վէճերի մասին:

Այս սկզբունքների պարզաբանութիւնը բռնու՛մ է ժողովանիայի գրքի ամբողջ առաջին մասը: Նրանց էութիւնը բնորոշելու համար, միայն մի քանի մէջբերումներ կ'անենք, ցոյց տալով միաժամանակ, թէ մեր հողային պահանջներն ինչ չափով են նրանց համապատասխանու՛մ:

Ազգերի ինքնորոշման իրաւունքը, որը, ըստ մեր հեղինակի, ազգային բոլոր վեճերի լուծման ընդհանուր հիմքն է հանդիսանու՛մ՝ ըմբռնու՛մ է այստեղ իբրեւ *«իրաւունք ամէն մի ազգի, չնայած նրա թուին, նրա հողի մեծութեանը եւ նրա հարստութեանը, կազմելու անկախ քաղաքական համայնք»*:

Մենք՝ միանգամայն համակարծիք այս ըմբռնմանը՝ պահանջու՛մ ենք, որ Հայկական Բորչալուի եւ Ախալքալաքի հայ ժողովրդին իրաւունք տրուի ինքնորոշուելու կամ անկախ քաղաքական համայնք կազմելով եւ կամ միանալով Հայաստանին:

Իր գրքի մէջ ժողովանիան հիացմունքով դրուատու՛մ է «խաղաղութեան եւ Ազատութեան Միջազգային Լիգայի» կողմից հրատարակուած (1873թ.) *«ժողովուրդների իրաւունքների յայտարարութիւնը»*, որի մէջ ասուած է. *«Ոչ մի անհատ, ոչ մի կառավարութիւն, ոչ մի ժողովուրդ չի կարող (ինձ իրաւունք չունի՝ Ա. Զ.) ոչ օրինապէս, ոչ էլ որեւէ պատրուակով տիրել ուրիշ ժողովրդի կցումի, նուաճումի կամ որեւէ այլ ձեւով»*:

Կատարելապէս համաձայն ենք այս սկզբունքին եւ, նրա հիման վրայ, յայտարարու՛մ ենք, որ ոչ ժողովանիան, ոչ վրաց կառավարութիւնը եւ ոչ էլ վրաց ժողովուրդը իրաւունք չունին կցումի, նուաճումի, արքիտրաժի կամ որեւէ այլ միջոցով տիրելու հայ ժողովրդի վերոյիշեալ երկու հատուածին:

Իւրայատուկ բացատրութիւն տալով Ֆ. Էնգելսի մի արտայայտութեանը Ռուսաստանի մասին՝ ժողովանիան պահանջու՛մ է, որ, պետութիւնների սահմանները գծելիս, հաշուի առնուին ժողովուրդների *«ընդհանուր ծագումը, ընդհանուր պատմութիւնը, տնտեսութիւնը եւ մշակոյթը»* եւ ոչ թէ այն փաստական դրութիւնը, որ առաջ են բերել *«նուաճումը, պատերազմը, դիւանագիտութիւնը, մի խօսքով ոյժն ու բռնութիւնը»*:

Սրա դէմ եւս որեւէ առարկութիւն չունինք: Պնդել ենք շարունակ եւ այժմս էլ պնդու՛մ ենք, որ վրացիք իրենց պետութեան սահմանները գծելիս, հաշուի առնեն ախալքալաքցիների եւ բորչալուցիների հայկական ծագումը, ինչպէս եւ նրանց անքակտելի, օրգանական կապը մնացած հայութեան հետ՝ պատմութեան, տնտեսութեան եւ մշակոյթի մարզերի մէջ՝ եւ թողնեն որ նրանք միանան Հայաստանին, բայց ոչ թէ պատերազմի, նուաճումի եւ դիւանագիտութեան մեքենայութիւններով բռնադատեն, որ նրանք Վրաստանի սահմանների մէջ մնան:

Բռնի ուժով ազգերին իրար հետ միացնելու ցարական քաղաքականութիւնը դատաւիտելով՝ ժողովանիան ասու՛մ է.

*«Զանազան ազգերին ցարական գայիստնի տակ միացնող մտրակը երբեք չմիացրեց նրանց անցեալը, նրանց լեզուն, նրանց մշակոյթը, նրանց հոգեբանութիւնը եւ նրանց անհատականութիւնը: Ընդհանուր պետական յարկի տակ էլ առաջ մղուեց նրանց սեփական աշխատանքը, շարունակուեց նրանց մշակոյթային պատմութիւնը: Եւ հէնց որ մտրակը վերացաւ՝ իսկական սահմանները երեւան եկան. ժողովուրդները դիմեցին դէպի սեփական օջաղները»*:

Ամբողջովին իւրացնու՛մ ենք եւ այս պատմական վերլուծութիւնը: Մեր կողմից աւելացնու՛մ ենք միայն, որ ազգերին բռնի կերպով իրար հետ միացնող մտրակը ոչ ժողովանիայի կառավարութեան եւ ոչ էլ նրա ազգային քաղաքականութիւնը շարունակող վրաց բոլշեւիկների ձեռքում աւելի կտրուկ գէնք չի հանդիսացել եւ չի հանդիսանալու, քան ցարերի ձեռքին: Վրացական տասնամայ տիրապետութիւնը Ախալքալաքում եւ Հայկական Բորչալուում չի կարողացել վրացիացնել այդ գաւառների հայութեան անցեալը, լեզուն, մշակոյթը, հոգեբանութիւնը, անհատականութիւնը եւ չափտի կարողանայ, անգամ եթէ այդ տիրապետութիւնը աւելի երկարատեւ լինի, քան ռուսական տիրապետութիւնը Վրաստանում: Դրա համար էլ մենք պահանջել ենք եւ պահանջու՛մ ենք, որ վրացիները յետ քաշեն իրենց մտրակը ախալքալաքցիների եւ բորչալուցիների գլխից եւ ճամբայ տան նրանց դիմելու դէպի իրենց հայրենի օջաղը:

*«Բուրժուական կառավարութիւնները, ասու՛մ է ժողովանիան, իրենց դիւանագիտական խորհրդածողովներում ժողովուրդներ ու երկիրներ նուէր էին տալիս եւ առնու՛մ նոյնպիսի անպատկառութեամբ, ինչպէս որ այդ արւում էր միահեծան տիրապետութեան հին, բարի օրերին: Բնական, ազգագրական սահմանների նմանօրինակ արհամարհումը եւ ռազմագիտական, դիմաստիական, տնտեսական եւ դիւանագիտական նկատումներով սահմաններ ձեւելը անվերջ պատերազմների պատճառ են դարձել»*:

Այս պատմական դիտողութիւնը եւս իւրացնու՛մ ենք, մանաւանդ որ նրա ճշդութիւնը հայ-վրացական պատերազմի փաստով էլ հաստատու՛մ է: Այս տեսակէտից եւս մենք անհանդուրժելի ենք համարու՛մ, որ վրացիները Ախալքալաքն ու Հայկական Բորչալուի հիւսիսային մասը զաւթելով՝ խախտու՛մ են Հայաստանի բնական, ազգագրական սահմանները, անվերջ բաղխումների, եթէ չասենք պատերազմների առիթներ ստեղծելով:

Վերջապէս, ազգերի ինքնորոշման պաշտպանութիւնը ընկերվարութեան մենաշնորհը դարձնելով՝ ժողովանիան խարանու՛մ է ոչ-

ընկերվարական կուսակցութիւնների քաղաքականութիւնը ազգային խնդիրներում հետեւեալ խօսքերով.

*«Բոլոր ոչ-ընկերվարական կուսակցութիւնները, հետամտում են, ազգայնականութեան սկզբունքով, իրենց ազգի տիրապետութիւնը հաստատել ուրիշ ժողովուրդների վրայ, բոլորն էլ հաւասարապէս մերժում են, որ իրենց պետութեան սահմաններում Ազգային հարցը լուծուի ազատութեան եւ հաւասարութեան սկզբունքով»:*

Առանց մտնելու այս կարծիքի քննութեան մէջ, մենք համաձայնում ենք նրա եզրակացութեանը, այն է, որ ընկերվարական կուսակցութիւնը չպետք է հետամտի իր ազգի տիրապետութեանը ենթարկելու ուրիշ ժողովուրդների: Եւ մեր պահանջն էլ այլ բան չէ, քան այն, որ վրաց սոցիալ-դեմոկրատիան, իբրեւ ընկերվարական կուսակցութիւն, հրաժարուի Ախալքալաքի եւ Բորչալուի հայ ժողովուրդը վրացական տիրապետութեան տակ պահելու ազգայնական քաղաքականութիւնը:

Այս մէջբերումների շարքը մենք կարող ենք աւելի եւս երկարացնել, բայց, կարծում ենք, սրանք էլ բաւական են գաղափար տալու համար, թէ ինչ սկզբունքների, տեսակետների եւ կարծիքների շրջանակում է դառնում ժողովանիայի միտքը ազգային խնդիրներում: Նրանք ամենքն էլ այնքան հարազատ են Յ.Յ.Դաշնակցութեանը, որ մենք, առանց տատանուելու, նրանցից իւրաքանչիւրի տակ կը դնենք մեր ստորագրութիւնը:

Դժբախտաբար, նոյնը չենք կարող ասել այն գործնական առաջարկների մասին, որ անում է ժողովանիան իր քարոզած գեղեցիկ սկզբունքներն ու տեսակետներն իրականացնելու համար:

\* \* \*

Հանրային գործունեութեան ոչ մի մարզի մէջ սկզբունքների վիճակն այնքան խախտուտ չէ, որքան քաղաքականութեան մէջ: Վստահօրէն կարելի է ասել, չկայ մի պետական գործիչ, որ բարձր, յաճախ ամբողջ մարդկութեան բարօրութիւնն ընդգրկող սկզբունքներից չճանի, բայց մատի վրայ միայն կարելի է համարել այն պետական մարդկանց, որոնք գործնական քաղաքականութեան մէջ չեն անտեսում կամ վարկաբեկում իրենց դաւանած սկզբունքները:

Սրա համար էլ քաղաքագիտութեան մէջ կարելորն այնքան այն չէ, թէ ի՞նչ սկզբունքներ են առաջադրում այս կամ այն հարցը լուծելու համար, որքան այն, թէ ինչ միջոցներ են առաջարկում նրանց իրականացնան համար:

Սրանով չենք ուզում ասել, թէ քաղաքագիտութեան կամ քաղաքականութեան համար սկզբունքները միանգամայն անարժէք բա-

ներ են: Ոչ, նրանք ունին իրենց նշանակութիւնը: Անգամ անուղելի ինքնակալը, եթէ սկզբունքօրէն ընդունեց, որ իր իշխանութիւնը «կամօքն ժողովրդի» է եւ ոչ թէ «կամօքն Աստուծոյ»՝ այլեւս չի կարող սովորական քմահաճութեամբ անտես առնել ժողովրդապետութեան գաղափարից բխող պահանջները: Կամ՝ չի կարելի ասել, թէ Ազգերի Լիգան անպէտք մի հաստատութիւն է, որովհետեւ նրա հիմքը կազմող գեղեցիկ սկզբունքները գործադրական այնպիսի պայմանների մէջ են դրած, որ այսօր չեն կարող լիովին արժէքաւորուել:

Սակայն, սկզբունքների արժէքը երեւան է գալիս միայն ժամանակի, յաճախ շատ սերունդների կեանքը լափող ժամանակի ընթացքում: Դրա համար էլ ասում ենք, որ գործնական քաղաքականութեան մէջ, երբ մեր առաջ ծառանում են կոնկրետ հարցեր, որոնք իրենց անմիջական լուծումն են պահանջում, մեր ուշադրութիւնը պէտք է կենտրոնանայ ոչ այնքան այդ լուծման համար առաջադրուող սկզբունքների վրայ, որքան նրանց գործադրութեան եղանակի վրայ:

Արդ, ի՞նչ միջոց է առաջարկում ժողովանիան ազգային հարցի նկատմամբ իր քարոզած սկզբունքները Ռուսաստանում եւ Անդրկովկասում, քանի որ նա միայն այս երկրների մասին է խօսում, իրականացնելու համար, կամ ինչպէ՞ս է պատկերացնում նա այդ երկրներում գոյութիւն ունեցող ազգային կնճիռների լուծումը: Նա ասում է, որ եթէ չենք ցանկանում, որ ԽՍՀՄ-ի մէջ ապրող ժողովուրդների ապագայ փոխարաբերութիւնները տարեդային ընթացքով որոշուեն, այլ ուզում ենք որ որոշուեն դեմոկրատական ուժերի գիտակից միջամտութեամբ եւ սիրալիք համաձայնութեամբ, ապա մենք պէտք է որդեգրենք ազգային հարցերի լուծման հետեւեալ եղանակը.

*«Խորհրդային ռեժիմի տեղ հաստատուում է ժողովրդապետութիւն: Ներկայիս գոյութիւն ունեցող ազգային հանրապետութիւնների ժողովուրդները, իրենց երկրների սահմաններում դառնում են ինքնիշխան: Նրանցից իւրաքանչիւրը կազմում է իր ազգային իշխանութիւնը եւ նրանց օրինական ներկայացուցիչները ժողովուրդն են միասին՝ միջազգային փոխարաբերութիւնները կարգաւորելու համար: Հարցերը վճռում են շահագրգռուած կողմերի խաղաղ համաձայնութեամբ: Համաձայնութիւն չկայանալու դէպքում վէճը լուծուում է պարտադիր արբիտրաժով»:*

Ինչպէս տեսնում ենք, այս առաջարկով ազգային ինքնորոշման իրաւունք է տրուում այն ժողովուրդներին միայն, որոնք «ազգային հանրապետութիւն» ունին ԽՍՀՄ սահմաններում: Այդպիսի հանրապետութիւն չունեցող ժողովուրդները դուրս են մնում ժողովանիայի հաշուից: Սա անկասկած հակասում է նրա այն հիմնական սկզբունք-

քին, թե ինքնորոշման իրաւունքը ամէն մի ժողովրդի անկապտելի սեփականութիւնն է՝ անկախ նրա թւից, հողի մեծութիւնից եւ հարստութիւնից:

Բայց ենթադրում ենք, որ մեր հեղինակը սահմանափակում է իր պահանջը ազգային հանրապետութիւններով, որպէսզի հակասած չլինի Ա Ընկերվարական Ինտերնասիոնալի Մարտիլի համագումարի բանաձեւին, որ, ինչպէս յայտնի է, ինքնորոշման իրաւունք է պահանջում միայն Հայաստանի, Վրաստանի, Ուկրայինայի եւ այն երկրների համար, որոնք բոլշեւիկեան յեղաշրջման ժամանակ անկախութեան էին տիրացել: Մենք այս սահմանափակման վրայ կանգ չենք առնում՝ քննութեան ենթակայ գործնական խնդիրը սկզբունային կշռադատումներով չբարդացնելու համար:

Ժողովանիայի առաջարկի մէջ մեզ համար էական նշանակութիւն ունեցող երեք կէտ կայ: Առաջինը վերաբերում է ազգային հարցի մասնակի լուծման ճիգերին մինչեւ Խորհրդային ռէժիմի անկումը, երկրորդը՝ ազգային հանրապետութիւնների սահմանների, իսկ երրորդը՝ պարտադիր արբիտրաժին:

Առաջին կէտի էութիւնը հետեւեալն է.

Խորհրդային իշխանութիւնը յար եւ նման հին միահեծան իշխանութիւններին եւ բուրժուական կառավարութիւններին՝ «ազգային հանրապետութիւններ» կազմելիս, միանգամայն արհամարհելով ժողովուրդների «բնական, ազգագրական սահմանները» ձեւել է այդ սահմանները ամենակողմնակի նկատումներով եւ հաշիւներով: Սրա հետեւանքով ազգային խոշոր զանգուածներ թէ Անդրկովկասում եւ թէ նրա սահմաններից դուրս ընկել են կրկնակի ճնշման տակ: Մի կողմից նրանք Խորհրդային լծի տակ ընկած բոլոր ժողովուրդների պէս տառապում են ազգային, քաղաքացիական եւ տնտեսական անազատ կարգերից, իսկ միւս կողմից՝ նրանք տանջուում են, որ կտրուած, բաժանուած են իրենց ազգային հաւաքականութիւնից: Անկարող տապալելու Խորհրդային ռէժիմը իրենց լիակատար ազատութիւնը վերստանալու համար՝ այս զանգուածները այսօր պայքարում են գէթ իրենց ազգային հաւաքականութեանը միանալու կամ ինչպէս կ'ասէր ժողովանիան սեփական օջաղին հասնելու համար՝ դրա մէջ իրենց ազգային ինքնորոշման իրաւունքի մասնակի իրականացումը տեսնելով:

Արդ, ի՞նչ պէտք է լինի մեր՝ ընկերվարականներիս՝ ազգային ինքնորոշման իրաւունքի կողմնակիցներիս վերաբերմունքը դէպի այսօրինակ ազգային շարժումները, պէ՞տք է նրանց աջակցենք, թէ՞ ոչ:

Այս հարցի պատասխանը չափազանց կարեւոր է մեզ համար յատկապէս մեր եւ վրաց սոցիալ-դեմոկրատիայի իրարհասկացո-

ղութեան տեսակետից, որին մենք ձգտում ենք ամենայն անկեղծութեամբ:

Մի քանի տարի առաջ Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Վրաստանի միջեւ սահմանաբաժանում կատարուեց, որի ժամանակ Հայաստանին կցուեցին Հիւսիսային Բորչալուից մի քանի հայկական գիւղեր: Վրաց սոցիալ-դեմոկրատիան թէ կառավարութիւնը, լաւ չէն յիշում, այն ժամանակ բողոք բարձրացրեց դրա դէմ: Մեզ համար այն ժամանակ, արտասովոր բան չկար այդ բողոքի մէջ, որովհետեւ ծանօթ էինք նրա հեղինակների հին քաղաքականութեանը հայ-վրացական հողային խնդրում: Բայց այժմ, երբ ազգերի ինքնորոշման իրաւունքը այնքան ազատամիտ, այնքան անվերապահ կերպով հրապարակ է դրուում նրանց կողմից, երբ նրանք սկզբունքօրէն բնական եւ յառաջադիմական են համարում, որ ժողովուրդները դիմում են դէպի սեփական օջաղները, այժմ ի՞նչ վերաբերմունք ունին նրանք դէպի նման երեւոյթները:

Սա հետտորական հարց չէ, այլ խիստ գործնական մի հարց: Այսօր ախալքալաքցիները պայքար են մղում Խորհրդային Հայաստանին միանալու համար: Մենք այդ պայքարը ողջունում ենք եւ պատրաստ ենք նրան աջակցելու ինչով կարող ենք: Վրաց բոլշեւիկները, ընդհակառակը, ախալքալաքցիների ձգտումը որակում են իբրեւ «հակայեղափոխութիւն» եւ, մերթ դրակոնական միջոցներով, մերթ արեւելեան սիրաշահութեամբ, աշխատում են պահել ախալքալաքցիներին իրենց իշխանութեան տակ: Արդ, ո՞ւմ հետ է ժողովանիայի համակրանքը այս գործում: Արդեօք մե՞զ հետ, որ աշխատում ենք իրագործել նրա քարոզած սկզբունքները ազգերի ինքնորոշման խնդրում, թէ՞ ցեղակից բոլշեւիկների հետ, որոնք ոտնահարում են այդ իրաւունքը:

Այս հարցի պատասխանը մենք չենք գտնում ժողովանիայի վերոյիշեալ առաջարկի մէջ: Ի հարկե, տղայամտութիւն կը լինէր պահանջել, որ ժողովանիան ԽՍՀՄ-ի մէջ գտնուող ազգերի ազատագրութեան կամ փոխյարաբերութեանց պայմանները ճշդող մի առաջարկի մէջ Բորչալուի եւ Ախալքալաքի հարցեր շօշափէր. եւ այդպիսի ծիծաղելի պահանջ մենք չենք ներկայացնում նրան: Բայց մենք գտնում ենք, որ իր առաջարկը կարող էր ձեւակերպել եւ պէտք է ձեւակերպէր այնպէս, որ ԽՍՀՄ սահմաններում հէնց հիմա, մինչեւ բոլշեւիկեան դիկտատուրայի տապալումը, տեղի ունեցող ազգահաւաքման շարժումները, իբրեւ ազգային հարցի մասնակի լուծման կամ ազգային ինքնորոշման իրաւունքի աստիճանական գործադրութեան երեւոյթներ, քաջալերութիւն եւ աջակցութիւն գտնէին հետեւողական դեմոկրատիայի կողմից:

Երկրորդ կետը, ինչպես ասացինք, վերաբերում է ներկայիս գոյություն ունեցող հանրապետությունների սահմաններին: Համաձայն ժողովրդային առաջարկության՝ հենց որ բուլղարիկական ռեժիմը ԽՍՀՄ-ի մէջ տապալուեց եւ ժողովրդապետությունը վերահաստատուեց՝ Սիւրբեան բաղկացուցիչ մասերը կազմող «ազգային հանրապետությունները իրենց երկրների սահմաններում» պիտի դառնան ինքնիշխան: Ի՞նչ է նշանակում այստեղ «իրենց երկրների սահմաններում» խօսքը:

Եթէ ժողովրդային ազգերի ինքնորոշման խնդրում ելնում է սահմանների գոյութեան փաստից՝ ապա անհասկանալի է մնում, թէ ինչ հիմնաւորմամբ կարելի է պահանջել, որ ԽՍՀՄ-ի, առհասարակ որեւէ պետութեան փաստական սահմանները փոխարինեն ուրիշ սահմաններով: Իսկ եթէ նա մեկնում է ժողովուրդների ծագման, պատմական անցեալի, լեզուի, մշակոյթի, հոգեբանութեան եւ անհատականութեան առանձնայատկութիւններից՝ այն ժամանակ հարց է ծագում, թէ գոյութիւն ունեցող «ազգային հանրապետությունների» սահմանները ինչ չափով են համապատասխանում այս առանձնայատկութիւններին:

Կարո՞ղ է ժողովրդային ասել, թէ Խորհրդային Ուկրաինան, Բելոռուսիան չափուած-ծելուած են մալուրուս եւ բելոռուս ժողովուրդների վրայ: Կամ կարո՞ղ է նա պնդել, թէ Խորհրդային Վրաստանի աշխարհագրական եւ վրաց ժողովրդի ազգագրական սահմանները իրար համապատասխան են: Անշուշտ ոչ:

Ուրեմն ի՞նչ ենք ստանում, այն որ երկու տեսակետից էլ ժողովրդային առաջարկը, թէ գոյութիւն ունեցող սահմանները պետք է ելակէտ դարձնել ազգային-պետական ինքնորոշման համար՝ անընդունելի է:

Այդ առաջարկն անընդունելի է մասնաւորապէս հայ-վրացական կնճիռը հարթելու տեսակետից: Ըստ ժողովրդային ձեւակերպութեան՝ քանի որ Ախալքալաքն ու Հայկական Բորչալուի հիւսիսային մասը ներկայիս բռնադատուած են մնալու վրացական «ազգային հանրապետութեան» սահմաններում, ապա ուրեմն Խորհրդային ռեժիմի տապալման դէպքում եւս այդ գաւառները մեքենայօրէն պետք է Վրաստանի մասը կազմեն:

-Յետո՞յ:

-Յետոյ Հայաստանն ու Վրաստանը ձեռք կ'առնեն նորից հին վէճը եւ կը լուծեն կամ փոխադարձ համաձայնութեամբ եւ կամ պարտադիր արբիտրաժով,- պատասխանում է ժողովրդային:

Ոչ, ընկ. ժողովրդային, այս վէճի դառնութիւնը մենք շատ ենք ճաշակել եւ ամենեւին հակամէտ չենք հայ եւ վրացի ժողովուրդներին նորից նրա փորձութեանը ենթարկելու: Մենք գիտենք, թէ նմանօրի-

նակ վէճերը ինչ փոխադարձ անվստահութեան, ինտրիգների եւ ներհակութիւնների դուռ են բանում հարեւան ժողովուրդների միջեւ եւ ուր են մղում նրանց: «Փոխադարձ համաձայնութեամբ» մնան վէճերը լուծելու առաջարկը շատ ակորժելի է ինչում, ի հարկէ, բայց մեր յիշողութեան մէջ դեռ թարմ են այս նպատակով հրաւիրուած հայ-վրացական կոնֆերանսները, ուր մեզ առաջարկում էր հրաժարուել Ախալքալաքից՝ Վրաստանի վրայով ազատ տրանզիտ ունենալու համար, կամ ճանաչել Վրաստանի իրաւունքը մեր հողերի վրայ՝ փոխարէնը ստանալով... Երկաթուղու վազոններ: Պարտադիր արբիտրաժն (իրաւարարութիւն) էլ լաւ բան է, անշուշտ, սակայն, ինչպէս կը տեսնենք ստորեւ, հողային վէճերը, կամ աւելի ճիշդն ասած ինքնորոշման հարցերը նրա բնագաւառը չեն կազմում: Եթէ չենք ուզում, որ անցեալի տխուր կամ ամուլ դէպքերը կրկնուին՝ ապա պետք է այնպէս անենք, որ հակաբուլղարիկական յաջող յեղափոխութեան առաջին օրից իսկ մնան վէճերի տեղիք չմնայ, կամ ըստ կարելոյն քիչ մնայ:

Սրա համար շատ այս ու այն կողմը ընկնելու կարիք չկայ: Հարկաւոր է միայն համապատասխանեցնել ժողովրդային գործնական առաջարկը այն սկզբունքներին, որոնցով նա այնքան գեղեցիկ կերպով հիմնաւորում է ազգերի ինքնորոշման իրաւունքը:

Եթէ այս սկզբունքները ամենքիս համար քաղաքական դաւանանք են եւ ոչ թէ միջոց մի իմպերիալիզմ մի ուրիշով փոխարինելու, ապա առարկութիւն չի կարող լինել, որ մենք ժողովրդային առաջարկի սկզբնական մասը ձեւափոխենք հետեւեալ կերպով.

*Ներկայիս գոյութիւն ունեցող ամէն մի հանրապետութեան մէջ ազգային մեծամասնութիւն կազմող ժողովուրդը, իր ազգագրական սահմաններում դառնում է ինքնիշխան: Այդ հանրապետութեան մէջ ապրող ազգային փոքրամասնութիւնները ազատ են համաձայն ազգերի ինքնորոշման իրաւունքի, որոշելու իրենց պետական պատկանելիութիւնը, պայմանով, սակայն, որ դրանով մեծամասնութիւն կազմող ժողովրդի ազգագրական ամբողջութիւնը չխաթարուի:*

Այս առաջարկը, ինչպէս տեսնում էք, աւելի է համապատասխանում ժողովրդային քարոզած սկզբունքներին, քան նրա առաջարկը՝ առանց վերջինից նուազ գործնական լինելու: Նա հաշուի է առնում ազգային ինքնորոշման իրաւունքի պահանջը ամէն մի ժողովրդի համար «չնայած նրա թուին, նրա հողի մեծութեանը եւ նրա հարստութեանը», բայց եւ չէ անգիտանում, որ, «ազգային հանրապետութիւնների» այսօրուան ցեղագրական խառնակ վիճակում, այդ պահանջը կարող է «Սղնախի հայերի անկախութեան» կամ Թիֆլիսի «Չերքեզեան փողոցի ինքնորոշման»<sup>71</sup> անհեթեթութեանը հաս-

նել, եթե նրա համար բանական սահման չգծուի: Այդ սահմանը գծուած է մեր առաջարկի մէջ այն ձեւով, որ ազգային փոքրամասնութեան ինքնորոշման համար մեծամասնութիւնը չզրկուի հաւաքական ազգային կեանքով ապրելու հնարաւորութիւնից. ուրիշ խօսքով՝ որ փոքրիկ չարիքը դարձանելու համար մեծ չարիք չգործուի:

Դառնանք երրորդ կէտին:

Ժամանակակից դեմոկրատիայի ամենահամակրելի յղացումներից մէկն է միջազգային վեճերը պարտադիր արբիտրաժով լուծելու միտքը, որ հետզհետէ լայն ժողովրդականութիւն գտնելով՝ ներկայիս միջպետական յարաբերութիւնների մէջ խիստ կարեւոր դեր է կատարում: Մի շարք պետութիւններ, վերջին տարիների ընթացքում, մինչեւ անգամ յատուկ դաշնագրերով պարտաւորուել են իրենց մէջ ծագելիք բոլոր վեճերը պարտադիր արբիտրաժով լուծելու, եթէ, իհարկէ, փոխադարձ համաձայնութեամբ կարելի չլինի նրանց կարգադրութիւնը: Ժողովանիւմ եւս առաջարկում է, որ խորհրդային ռէժիմի տապալմամբ իրենց անկախութիւնը վերստացած հանրապետութիւնները այս ճանապարհով լուծեն իրենց վեճերը:

Մենք համաձայն ենք նրա առաջարկին մի վերապահութեամբ. որ *ազգային ինքնորոշման իրաւունքի պահանջները դուրս նկատուելին վիճելի հարցերի շրջանակից*: Որովհետեւ, եթէ կայ մի խնդիր, որի մէջ պարտադիր արբիտրաժը ոչինչ չի կարող անել կամ կարող է մեծ անպատեհութիւններ ստեղծել, դա ինքնորոշման խնդիրն է:

Մեր միտքը լուսաբանելու համար ենթադրենք, թէ Զայաստանը եւ Վրաստանը որոշեցին պարտադիր արբիտրի (իրաւարարի) առաջ դնել Ախալքալաքի խնդիրը: Ենթադրենք նաեւ, թէ արբիտրը ինչ-ինչ նկատումներով վճռեց, որ Ախալքալաքը Վրաստանի սահմաններում պէտք է մնայ: Սրանից յետոյ Զայաստանը, բնականաբար, կը հրաժարուի Ախալքալաքի պահանջից, բայց դրանով այս գաւառի հարցը կը լուծուի<sup>6</sup>: Բնաւ: Որովհետեւ այդ գաւառի մէջ ապրող ժողովուրդ կայ, որը չի ցանկանում Վրաստանի հպատակութեան մէջ մնալ: Նա գիտէ, որ ինքն ազգային ինքնորոշման իրաւունք ունի, գիտէ, որ այդ իրաւունքի գործադրութիւնը վրաց ժողովուրդի ազգային ամբողջութեանը չի վնասում, եւ, այս ամէնի հետ միասին, ձգտում է միանալ իր ազգային մայր հատուածին, որի հետ կապուած է ծագումով, լեզուով, մշակոյթով, հոգեբանութեամբ եւ պատմութեամբ: Ի՞նչ պէտք է անել այս ժողովուրդի հետ արբիտրի (իրաւարարի) դատավճռից յետոյ: Պէտք է նրան բռնի ուժով ստիպել Վրաստանի հպատակութիւն ընդունել, կամ պէ՞տք է դուրս անել նրան իր բնագաւառից: Եթէ այո՝ ո՞ր արդարութեամբ, իսկ եթէ ոչ՝ հապա ի՞նչ անել այս ժողովրդի հետ:

Այս դժուարութիւնը միշտ նախատեսել են ընկերվարականները: Նրանք միշտ գիտակցել են, որ ժողովուրդը անշունչ առարկայ չէ, որին կարելի չլինի որեւէ դատավճռով սրա կամ նրա սեփականութիւնը դարձնել: Այդ պատճառով էլ նրանք միշտ այն տեսակետն են պաշտպանել, որ ժողովուրդների պետական պատկանելիութիւնը պէտք է որոշուի նրանց կամքով, իսկ այս կամքն էլ պէտք է արտայայտուի ժողովրդական հանրաքուէով կամ ռեֆերենդումով:

Այս տեսակետին են եղել անցեալում վրաց սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-ֆեդերալիստները, որոնց բանաձեւերը ընթերցողին ծանօթ են արդէն: Այս տեսակետին է եղել եւ Ինտերնասիոնալը, որ Բեռնի եւ Լիւցեռնի խորհրդաժողովներում որոշում է հանել հայ-վրացական հողային վեճերը ռեֆերենդումով որոշելու եւ ոչ թէ արբիտրաժով: Վերջին խորհրդաժողովը մտածում էր հայ-վրացական վիճելի շրջանները մի յանձնախումբ ուղարկել, բայց նրան արբիտրի դեր չէր տրոււմ, այլ՝ ռեֆերենդումը իրականացնողի դեր: Դեռ աւելին կ'ասենք. նոյնիսկ բուրժուական կառավարութիւնները, անտեղի համարելով պարտադիր արբիտրի կամ որեւէ դատարանի դատավճիռը ազգային վեճերի ժամանակ՝ սկսել են ժողովրդական հանրաքուէի կամ ռեֆերենդումի միջոցով կարգադրել այդօրինակ վեճերը, ինչպէս օրինակ լեհ-գերմանական վեճերը Սիլեզիայում եւ Արեւելեան Պոլսիայում:

Եթէ Վրաստանի անկախութեան շրջանին զանազան նկատումներով եւ հաշիւներով, որոնց մասին խօսել ենք իր տեղում, ժողովանիւմ եւ իր կուսակցութիւնը լքեցին այս ժողովրդապետական եւ ընկերվարական տեսակետը, այժմ, երբ նրանք իրենց քաղաքականութեան անկիւնաքարն են դարձնում ազգերի ինքնորոշման իրաւունքը՝ անհրաժեշտաբար պէտք է վերադառնան այդ իրաւունքի իրականացման հետ կապուած վեճերը ժողովրդական հանրաքուէով կամ ռեֆերենդումով լուծելու գաղափարին եւ ոչ թէ պնդեն պարտադիր արբիտրաժի վրայ, որ լաւագոյն դէպքում աւելորդ, իսկ վատագոյն դէպքում անպէտք եւ մինչեւ իսկ վնասակար միջոց է նման վեճերը լուծելու համար:

Այս հիման վրայ մենք գտնում ենք, որ ժողովանիւմի առաջարկը պարտադիր արբիտրաժի մասին պէտք է ձեւափոխել այնպէս, որ վերջինիս կոմպետենցիայից կամ իրաւասութիւնից դուրս նկատուելին ազգային ինքնորոշման հետ առնչութիւն ունեցող հարցերը:

\* \* \*

Եթէ ամփոփելու լինինք մեր ասածները այն քաղաքականութեան մասին, որ պէտք է որդեգրենք մենք եւ վրացիները հայ-վրաց

ցական հողային վեճը լուծելու եւ երկու ժողովուրդների համերաշխութեան եւ գործակցութեան ուղին հարթելու համար՝ կը ստանանք հետեւեալը.

Յայ-վրացական հողային վեճը ոչ այլ ինչ է, բայց եթէ ազգերի ինքնորոշման իրաւունքի գործադրութեան խնդիր մի որոշ, սահմանափակ հողամասի վրայ:

Այդ վեճը լուծելու համար մենք պատրաստ ենք ղեկավարուելու այն սկզբունքներով, որ առաջադրում է Վրաստանի նախկին վարչապետ եւ վրաց Սոցիալ Դեմոկրատիայի պարագլուխ Ն. Ժորճանիան «Մեր տարածայնութիւնները» գրքում ազգերի ինքնորոշման իրաւունքի վերաբերեալ:

Ազգերի ինքնորոշման իրաւունքի իրականացման ուղին մեզ պատկերանում է հետեւեալ ձեւով.

*ԽՍՀՄ սահմաններում գտնուող ամէն մի ժողովուրդ, դիւրացնելու համար իր ինքնորոշման իրաւունքի գործադրութիւնը, ջանում է ի մի համախմբել իր ազգային հատուածները, եթէ այդ համախմբումը աշխարհագրորէն հնարաւոր է:*

*Խորհրդային ռեժիմի տապալման եւ ժողովրդապետական կարգերի վերահաստատման պահին գոյութիւն ունեցող ամէն մի հանրապետութեան մէջ, ազգային մեծամասնութիւն կազմող ժողովուրդը, իր ազգագրական սահմաններում, դառնում է ինքնիշխան: Նոյն հանրապետութեան մէջ ապրող ազգային փոքրամասնութիւնները ազատ են, համաձայն ազգերի ինքնորոշման իրաւունքի, որոշելու իրենց պետական պատկանելիութիւնը, պայմանով, սակայն, որ դրանով մեծամասնութիւն կազմող ժողովրդի ազգագրական ամբողջութիւնը չխաթարուի:*

*Այս ձեւով ստեղծուած ազգային հանրապետութիւններից իւրաքանչիւրը կազմում է իր ազգային իշխանութիւնը եւ նրանց օրինական ներկայացուցիչները ժողովուրդն են միասին՝ միջազգային փոխարարբերութիւնները կարգաւորելու համար: Խորհրդը վճռում են շահագրգռուած կողմերի խաղաղ համաձայնութեամբ: Անհամաձայնութեան դէպքում վեճը, եթէ ազգային ինքնորոշման իրաւունքին է վերաբերում, լուծուում է թեֆերենդումով, իսկ մնացած դէպքերում՝ պարտադիր արբիտրաժով:*

Եթէ այս առաջարկը որոշ կէտերում տարբերում է ժողովանիայի առաջարկից՝ պատճառն այն է, որ նա շատ աւելի լրիւ եւ շատ աւելի հետեւողական ձեւով է հետապնդում «Մեր տարածայնութիւնները» գրքի մէջ արտայայտուած հիմնական սկզբունքների իրականացումը, քան թէ ժողովանիայի պատկերացրած գործնական ուղին:

## ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՈՐՈՒԹԻՒՆ

Ազգային ինքնորոշման իրաւունքի գաղափարը, որ տրամաբանական զարգացմամբ յանգում է ազգային-պետական անկախութեան պահանջին, վերջին հաշուով էթիկական հիմնաւորում ունի: Նա իր սնունդն առնում է Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան օրերից ի վեր ժողովրդական գանգուածների գիտակցութեան մէջ հաստատուած Ազատութեան գաղափարից, որ սկզբում իբրեւ անհատի անկաշկանդ զարգացման պահանջ ձեւակերպուելով՝ վերջը իր հոգացողութեան առարկան դարձրեց ազգը իբրեւ հաւաքական անհատ:

Այս էթիկական հիմնաւորումը ցայտուն կերպով աչքի կ'ընկնի, եթէ մենք ազգային ինքնորոշման իրաւունքի գաղափարը իր զարգացման պատմական ընթացքի մէջ դիտենք: Այնտեղ կը տեսնենք, որ վերջինս համընթաց է զարգանում մարդկութեան լաւագոյն իդէալներով լուսաւորուած այն ժողովրդապետական կամ դեմոկրատական շարժումներին, որոնք հասարակութեան խոնարի խաւերը դուրս կորզելով ստրկութեան եւ ճորտութեան ճիրաններից՝ քայլ առ քայլ բերին դէպի նորագոյն քաղաքացիութիւնը:

Ժողովրդապետական եւ ազգային ինքնորոշման գաղափարների այս սերտ առնչութիւնը հաստատուում է եւ այսօրուայ իրականութեամբ: Այն երկրներում, ուր ժողովրդապետութիւնը ոտնահարուած է՝ Խորհրդային Ռուսաստան, Քեմալական Թուրքիա և Ֆաշիստական Իտալիա, ազգային շարժումները ևս ոտնահարուում կամ աղճատուում են: Ազգային շարժումները պահելով իբրեւ միջոց իր իշխանութեան ամրապնդման կամ իր ազդեցութեան տարածման՝ Խորհրդային Ռուսաստանը ձեւականօրէն խրախուսում է նրանց: Սակայն, փաստօրէն նա խեղդում է այդ շարժումները իրենց լաւագոյն արտայայտութիւնների մէջ բոլշեւիկեան միջազգայնութեան կաղապարով: Նրա համար ազգային ինքնորոշման ձգտումը անհրաժեշտ չարիք է միայն, որ առժամապէս պէտք է հանդուրժուի, մինչեւ որ պարագաները կը ներեն նրան արմատախիլ անելու մարդկանց հոգիներից, ինչպէս որ «արմատախիլ են արուած» անհատական ազատութեան պահանջները: Քեմալական Թուրքիան բացի թուրքից որեւէ այլ ազգային յորջորջում չէ ուզում ճանաչել: Նրա աչքում Թուրքիան թուրքերի սեփականութիւնն է, եւ ով ուզում է ապրել այնտեղ, պէտք է թուրքանայ: Պէտք է թուրքանան հայը, յոյնը, հրեան, քիւրդը, լազը եւ մնացած ցեղերը: Նման քաղաքականութեան է հետեւում եւ այսօրուան Իտալիան, որ ոչ միայն Տիրոլի<sup>72</sup> գերմանացիներին է ճնշում, որովհետեւ նրանք չեն ուզում հրաժա-

րուել իրենց ազգային իդեալներից, այլ եւ շարունակ քարեր է նետում բալկանեան ազգերի զարգացման ճանապարհին: Իտալիայի կարգը կարող են դասուել ներկայիս Ռումանիան, Հունգարիան, Լեհաստանը եւ Լիտուանիան, որոնց մէջ ժողովրդապետական կարգերի աղճատմանը զուգընթաց կատարուում են եւ բազմապիսի հաւածանքներ ազգային շարժումների դէմ:

Ընդհանրապէս, այն վայրերում, ուր ժողովրդապետական կարգերը մնում են իրենց ուժի մէջ՝ ազգային շարժումներն աստիճանաբար քաղաքացիութեան իրաւունք են ստանում եւ զարգանում: Այսպէս է անգլիական կայսրութիւնը, որը փաստօրէն անկախ ազգային պետութիւնների մի հաւաքականութիւն է դառել, այսպէս է Ֆրանսիան, որտեղ, չնայած մերթ ընդ մերթ պռնակող շովինիզմին, գաղութային ժողովուրդները ինքնավար ազգեր դարձնելու մտայնութիւնը օր-աւուր նուաճումներ է կատարում, այդպէս է Չեխօսլոնկայիան, որ նախկին տարիների ազգայնամոլութիւնից սթափուած՝ ներկայիս պարկեշտ ընթացք է բռնել այլացեղ ժողովուրդների հանդէպ եւ այլն:

Մարդկութեան լաւագոյն իդեալների եւ ազգային շարժումների այս կապակցութեամբ պէտք է բացատրել, որ ազգերի ինքնորոշման իրաւունքը այսօր անվերապահօրէն ճանաչուում է բոլոր յառաջադէմ տարրերի կողմից: Ընկերվարական Ինտերնասիօնալը, որ մինչեւ վերջին տարիները ընդհանրապէս անտարբեր էր դէպի այդ իրաւունքի պահանջը, չնայած յօգուտ նրա լսուող հատ ու կտոր ծայներին, այժմս իր գործնական քաղաքականութեան խնդիրներից մէկն է դարձրել նրա իրականացումը հետապնդելը: Այդ Ինտերնասիօնալի մարքսիստական հատուածը, որ առաջներում բացասական վերաբերմունք ուներ դէպի ազգային-ազատագրական ձգտումները, համարելով այդ հակոտնեայ շարժում տնտեսական յառաջադիմութեամբ պայմանաւորուած միջազգայնացման պրոցեսին, հիմա յարել է ընդհանուր տեսակէտին, թէւ հին հակազգային կամ ապազգային աւանդութիւնները դեռ եւս երբեմն երբեմն արտայայտուում են նրա ներկայացուցիչների կողմից: Վերջապէս նոյն իսկ բուրժուական դեմոկրատիան, յանձինս իր լաւագոյն գաղափարախօսների, այսօր պաշտպան է կանգնում ազգերի ինքնորոշման իրաւունքի: Նրա շրջանում արդէն վատ տոնի նշան է համարուում ազգային ազատագրական շարժումների դէմ խօսելը:

Այսպէս է գաղափարների վիճակը: Եթէ նրանք առարկայօրէն ներդաշնակուում են հանրային զարգացման ընթացքին եւ ենթակայօրէն համապատասխանում մեր բարոյական ընթանումներին, կարճ՝ եթէ նրանք առողջ են եւ արդար, ուշ կամ կանուխ պէտք է յաղթանակեն:

Սակայն, որովհետեւ ազգերի ինքնորոշման իրաւունքի գաղափարը այսքան առողջ եւ ազնիւ աղբիւրից է առնում իր սնունդը՝ անհրաժեշտ է, որ նրա իրականացումն էլ առողջ եւ ազնիվ պայմաններով կատարուի: Այս պայմանների տնտեսման վնասակարութիւնը կարող է պատմական մի որոշ վայրկեանում մեզ համար զգալի չլինել, մինչեւ իսկ շահաւէտ թւալ, սակայն նրա վատ հետեւանքները անկասկած պէտք է երեւան գան: Ազնիւ եւ արդար գաղափարները անազնիւ եւ անարդար միջոցներով չեն իրականանում, իսկ եթէ իրականանում են, սպասուած արդիւնքը չեն տալիս:

Այն ճշմարտութիւնը դժբախտաբար յաճախ անտես է առնում ազգերի ինքնորոշման իրաւունքի արտայայտների կողմից: Յափշտակուած իրենց ազգի ազատութեան եւ անկախութեան գաղափարով՝ նրանք, առանց աջ ու ձախ նայելու, յաճախ այնպիսի ընթացք են բռնում առաջադրուած նպատակին հասնելու համար, որ կարող է կորստաբեր հետեւանքներ ունենալ այն ազգի համար, որից նրանք ուզում են ինքնորոշուելով բաժանուել: Անձնական փոխարաբերութիւնների մէջ նրանք սովորաբար պահում են այն կանոնը, ըստ որի մի անհատի ազատութիւնը վերջանում է այնտեղ, ուր սկսուում է միւս անհատների ազատութիւնը. սակայն ազգային փոխարաբերութիւնների մէջ դեկավարուում են «սահման քաջաց զէնն իւրեանց»-ի սկզբունքով:

Ինքնորոշման իրաւունքի հետապնդման յախուռն ընթացքը բաւական անցանկալի մթնոլորտ է ստեղծել այս խնդրի շուրջը նախկին ռուսական եւ աւստրօ-հունգարական կայսրութիւնների սահմաններում գտնուած ժողովուրդների մէջ: Մթնոլորտը մինչեւ իսկ վտանգաւոր հանգամանք է առել ռուս հասարակութեան եւ Ռուսաստանից անջատուած կամ անջատուելու պատրաստուող ժողովուրդների փոխարաբերութեանց մէջ: Մեղքեր կան երկու կողմից էլ: Բայց մենք չենք ուզում նրանց վրայ կանգ առնել, ընթերցողի ուշադրութիւնը մեզ զբաղեցնող միւսից չշեղելու համար: Այդ մեղքերը կարելի է պարզել եւ հայ-վրացական փոխարաբերութիւնների օրինակով:

\* \* \*

Բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ Անդրկովկասը անջատուեց Մոսկուայի խորհրդային իշխանութիւնից (1917թ. նոյեմբերի 18-ին): Անջատման առաջարկը եկաւ վրացիներից կամ, աւելի ճիշդ, վրաց սոցիալ-դեմոկրատիայից: Այս առաջարկի համար հայ ժողովուրդը հոգեբանօրէն նախապատրաստուած չէր: Նա չէր համապատասխանում եւ մեր քաղաքական շահերին: Մինչեւ այսօր էլ կարծիքներ



կան, եւ լուրջ կարծիքներ, որ եթէ մենք այդ առաջարկը չընդունէինք՝ դեպքերը այլ, մեզ համար նպաստաւոր ընթացք կ'առնէին: Սակայն հայ ժողովուրդը յանձինս իր քաղաքական կուսակցութիւնների եւ, առաջին հերթին Յ.Յ.Դաշնակցութեան, համակերպեց այդ առաջարկին, որպէսզի Անդրկովկասի ամբողջութիւնը չխաթարուի եւ, մասնաւորապէս, որպէսզի այդ կրիտիքական պահին մեր եւ վրացիների միջեւ անջրպետ չստեղծուի:

Այս անջատումից հազիւ երկու օր անց՝ թիւրքական հրամանատարութեան կողմից զինադադարի առաջարկ եկաւ անդրկովկասեան զօրահրամանատարութեանը: Այս առաջարկը լուրջ քաղաքական մտահոգութիւն էր պատճառում հայ ժողովրդին, որ զգում էր թշնամու հետ առանձին յարաբերութիւնների մէջ մտնելու վտանգը: Սակայն Անդրկովկասեան Կոմիսարեատը<sup>73</sup> որոշեց զինադադար կնքել (1917թ. նոյեմբերի 21-ին) եւ մենք համակերպեցինք նրան այն մտածումով, թէ անհրաժեշտ է հարեւան ժողովրդների հետ ընթանալ:

Յաջորդ ամսի վերջին թիւրքերը, խախտելով զինադադարը, առաջ շարժուեցին դէպի մեր կողմերը: Համաձայն անդրկովկասեան զօրահրամանատարութեան հրամանին հայերը դիմադրեցին որտեղ կարող էին եւ ինչով կարող էին:

Այս ժամանակներում տեղի ունէին բանակցութիւններ Անդրկովկասեան Կոմիսարիատի եւ թիւրք հրամանատարութեան միջեւ խաղաղութեան շուրջը, մշակուեցին խաղաղութեան նախագծեր, որոնց մասնակցում էին մեր ներկայացուցիչները վրացիների հետ, կատարեալ լօյտալութեամբ:

Փետրուարի 17-ին (1918թ.) Թիֆլիսում լուր ստացուեց Բրեստ-Լիտովսկի անարգ դաշնագրի մասին, որով բուլշեւիկները զիջում էին Թիւրքիային Կարսը, Արտահանն ու Բաթումը՝ մահացու վտանգի տակ դնելով Անդրկովկասը եւ մասնաւորապէս Հայաստանը<sup>74</sup>:

Նոյն ամսի վերջին Տրապիզոնում գումարուած խաղաղութեան խորհրդաժողովը<sup>75</sup>, որին Անդրկովկասի կողմից մասնակցում էին չորս վրացի (Ա. Չխենկելու գլխավորութեամբ), երկու հայ (Քաջագունուհի, Խատիսեան) եւ հինգ ադրբեջանցի, չկարողացաւ դաշն կնքել բաւական հետաքրքրական պայմաններում: Թիւրքերը հիմնուելով Բրեստ-Լիտովսկի դաշնագրի վրայ՝ վերջնագրի ձեւով պահանջում էին վերոյիշեալ երեք քաղաքն իրենց շրջաններով: Անդրկովկասեան պատգամաւորութիւնը, որ սկզբում այդ դաշնագրի մասին լսել իսկ չէր ուզում, վերջը (մարտի 28-ին) համաձայնութիւն յայտնեց բանակցութեան հիմք դարձնելու այն: Սակայն բանակցութիւնները խզուեցին, որովհետեւ վրացիք, որոնք ինչպէս կառավարութեան մէջ, նոյնպէս եւ պատուիրակութեան մէջ վճռական ձայն ու-

նէին, համաձայնուեցին զիջել միայն Կարսն ու Արտահանը, բայց՝ երբեք Բաթումը: Այսպէս էլ բնորոշում է բանակցութեանց ելքը Ծերեթելին՝ խզման առթիւ մարտի 31-ին հրաւիրուած պաշտօնական մի նիստի ժամանակ: «Մենք զիջեցինք ամէն ինչ, բացի Բաթումից, բայց Թիւրքիան խաղաղութիւն չէ ցանկանում... որովհետեւ Բաթումն էլ է պահանջում»<sup>76</sup>:

Խզումը նշանակում էր պատերազմ Թիւրքիայի դէմ, որ եւ մարտի 31-ին որոշուում է վերսկսել վրաց սոցիալ-դեմոկրատիայի առաջարկով: Հայերը գիտէին, որ պատերազմը յայտարարուում է բացառապէս Բաթումի համար, բայց եւ այնպէս նրանք ամբողջ թափով նետուեցին կռուի դաշտը՝ յուսալով, թէ հայ-վրացական միացեալ ուժերով կարելի կլինի արգիլել թիւրքերի առաջխաղացումը Անդրկովկասում:

Սակայն, պատերազմի յայտարարութեան հէնց յաջորդ օրը (ապրիլի 1-ին) Բաթումն ընկաւ, եւ վրացիների դիմադրական կորովը սպառուեց: Նրանց համար պատերազմն այլեւս միտք չունէր, որովհետեւ նրանց Կարսի ճակատագիրը շատ չէր հետաքրքրում... Թիւրքերը վրացիների հետ իրենց հաշիւները կարգադրած համարելով՝ ամբողջ ուժով ընկան հայերի վրայ Կարսի շրջանում, որտեղ կռիւները մեծ թափ առան:

Ինչի՞ վրայ էին այս կռիւների շրջանում Անդրկովկասեան Կոմիսարիատն ու Սէյմը<sup>77</sup>, որոնք, կարելի է ասել, ամբողջովին գտնուում էին վրաց սոցիալ-դեմոկրատիայի ձեռքին: Նրանք խաղաղութեան բանակցութիւնները վերսկսելու հոգսով էին բռնուած, իսկ որովհետեւ թիւրքերը հրաժարուում էին բանակցութիւններ սկսել, մինչեւ որ Անդրկովկասը իրեն կատարելապէս անկախ չհամարի Ռուսաստանից, այդ պատճառով է նրանք նախապատրաստում էին Անդրկովկասի անկախութեան տրագիկոմեդիան:

Ապրիլի 9-ին անկախութեան հարցը դրուեց Սէյմի առաջ: Բազմաթիւ հռետորներ հանդէս եկան այդ օրը թեր եւ դէմ ընդարձակ ճառերով: Բեմ բարձրացաւ եւ Դաշնակցութեան ներկայացուցիչը, որ չորս տողանոց մի յայտարարութեամբ իր համամտութիւնը յայտնեց անկախութեան ակտին<sup>78</sup>: Ուրիշ կերպ լինել չէր կարող: Անկախութիւնը, այդ օրերին, մեզ համար նշանակում էր թռիչք դէպի անյայտը կամ քաօսը: Բայց մենք պէտք է կատարէինք այդ թռիչքը՝ մեր կապը հարեւան ժողովուրդների եւ մասնաւորապէս վրացիների հետ չկտրելու համար:

Անկախութեան ակտի հետ միասին Սէյմը ընդունեց մի որոշում խաղաղութեան բանակցութիւնները թիւրքերի հետ վերսկսելու մասին, իսկ յաջորդ օրը նոր կառավարութեան նախագահը՝ Չխենկե-

լին՝ հայկական զորքերին Կարսը պարպելու հրամանը հեռագրեց...

Կարսի դիմադրական ուժի մասին կարծիքները տարբերում են. ոմանք նրան մի քանի օրուայ կեանք էին խոստանում, իսկ կան հեղինակաւոր մասնագետներ էլ, որոնք պնդում են, թէ նա կարող էր շաբաթներով կամ նոյն իսկ ամիսներով դիմադրել: Մեզ համար կարեւորն այս չէ, այլ այն՝ որ հայ ժողովուրդը համոզուած էր, թէ ինքը կարող է պաշտպանել բերդը: «Ազգաբնակչութիւնը գլխովին պատրաստ էր պաշտպանելու Անդրկովկասի ամրութիւնը», - հեռագրում է Չխենկելու հրամանի առթիւ Կարսի շրջանի կոմիսարը: Բայց եւ այնպէս պէտք էր հնազանդուել անդրկովկասեան կառավարութեան կարգադրութեանը, եւ մենք հնազանդուեցինք՝ Կարսը իր ահագին սպառազինութեամբ, ռազմամթերքով, պաշարով եւ հարստութեամբ թշնամուն յանձնելով:

Այս պատմութիւնը մենք արինք ոչ թէ վրաց ժողովրդին կամ նրա առաջնորդներին մեղադրելու համար: Մենք այստեղ մեղադրանքի խնդիր չենք դարձնում մինչեւ անգամ Կարսը պարպելու պատմութիւնը, որի յիշողութիւնն իսկ բաւական է ամէն մի մի հայի սիրտը արիւնտետելու համար: Այս պատմութիւնը մենք արինք պարզապէս ցոյց տալու համար, թէ հայ ժողովուրդը ինչ զոհողութիւններ է կրել անդրկովկասեան հարեւանների միութիւնը եւ մասնաւորապէս վրաց ժողովրդի դաշնակցութիւնը ապահովելու համար եւ որպիսի հաւատարմութեամբ ծառայել է անդրկովկասեան եւ մասնաւորապէս հայ-վրացական ընդհանուր գործին:

Մենք անհրաժեշտ համարեցինք կատարելու այս պատմական ճշդումը, որովհետեւ նա շատ կարեւոր է Վրաստանի ինքնորոշման հետ կապուած մի շարք երեւոյթներ հասկանալու համար:

\* \* \*

Անկախութեան հռչակումից եւ Կարսի խնդիրը «կարգադրելուց» յետոյ՝ Չխենկելի կառավարութիւնը խաղաղութեան նոր բանակցութիւններ է սկսում: Անդրկովկասի եւ Թուրքիայի պատգամաւորները մայիսի 3-ին հաւաքուում են Բաթում: Մայիսի 11-ին տեղի է ունենում խորհրդաժողովի առաջին նիստը Խալիլ Բէյի<sup>79</sup> նախագահութեամբ: Թիւրքերը առաջարկում են խաղաղութեան դաշնագրի մի նախագիծ, որով պահանջում են բացի Բրեստ-Լիտովսկի դաշնագրով նախատեսուած հողերից՝ նաեւ Ախալքալաք եւ Ախալցխա գաւառները, Ալեքսանդրոպոլ քաղաքը, Ալեքսանդրոպոլ եւ Էջմիածին գաւառների մեծ մասը: Նրանք պահանջում են նաեւ Ջուլֆա-Ե-

րեւան երկաթուղին՝ հիւսիսային Պարսկաստանի հետ հաղորդակցութիւն հաստատելու համար, ինչպէս եւ զօրաշարժի իրաւունք անդրկովկասեան երկաթուղիներով՝ Բագուի դէմ արշաւանք կատարելու համար:

Այս նոր պահանջները հիմնաւորում են նրանով, որ Անդրկովկասը, Տրապիզոնում խաղաղութեան բանակցութիւնները Բաթումի պատճառով խզելուց յետոյ՝ պատերազմի է մտել Թիւրքիայի հետ, որով նոր կացութիւն է ստեղծել խաղաղութեան գործի համար: Այս հիման վրայ նրանք վճռականօրէն մերժում են Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը բանակցութիւնների հիմք դարձնելու բոլոր առաջարկները, որ արւում են անդրկովկասեան պատուիրակների կողմից:

Մայիսի 11-ից մինչեւ մայիսի 26-ը տեղի են ունենում ծանուցագրերի փոխանակութիւններ երկու պատուիրակութեանց միջեւ, մասամբ խաղաղութեան դաշնագրի նախագծի շուրջը, մասամբ էլ այն կամայականութեան առթիւ, որ կատարում էին թիւրքական զօրքերը գլխաւորապէս հայկական շրջաններում:

Այս ժամանակամիջոցում փորձեր են արւում եւ Գերմանիայի միջամտութիւնը հրաւիրելու խաղաղութեան բանակցութիւնների մէջ՝ թիւրքերի ախորժակը զսպելու համար: Միջնորդի դեր կատարելու առաջարկն անում է Գերմանիայի պատուիրակ Ջօր. Ֆոն Լոսովը: Այդ միջնորդութիւնն ընդունելու որոշումը, եւ առհասարակ իր բոլոր որոշումները, Անդրկովկասեան Պատուիրակութիւնը կայացնում է միաձայնութեամբ, ինչպէս այդ հաստատում է Քաջագունցին պատուիրակութեան մայիս 19-ի նիստին: Սակայն Ջօր. Ֆոն Լոսովը յաջողութիւն չէ ունենում թիւրքերի մօտ:

Մինչդեռ խաղաղութեան խորհրդաժողովը ծանուցագրերի փոխանակութեամբ, կամ, ինչպէս ասում են, «թղթի պատերազմով» էր զբաղուած՝ Հայաստանում արիւնը հոսում էր բոլոր անցքերից: Մայիսի 15-ին թիւրքերը անակնկալ յարձակմամբ գրաւեցին Ալեքսանդրոպոլը: Մայիսի 19-ին թիւրքերը յարձակուեցին Արաքսի մեր զօրամասի վրայ, բայց յետ մղուեցին մինչեւ Կարաբուրում<sup>80</sup>: Յաջորդ երկու օրը թշնամին, թաթարական եւ քրդական հրոսակների օգնութեամբ յարձակումներ կատարելով, գրաւեց Կողբն ու Իգդիրը: Նոյն այդ երկու օրը Անդրանիկը կատաղի կռիւների մէջ էր թիւրքերի հետ Ջալալօղլի<sup>81</sup>-Դսեղ գծի վրայ: Մայիսի 21-ին թշնամին յարձակուելով Սարդարապատի մեր զօրամասի վրայ՝ յետ մղեց նրան մինչեւ Էջմիածնի մօտերը: Մայիս 21-22-ին հայկական Առաջին Ջօրաբաժինը թշնամու գերագանց ուժերի ճնշման տակ Գեօքյոխուշ<sup>82</sup>-Աւդիբէկ<sup>83</sup> գծից նահանջեց դէպի Ղարաքիլիսա: Մայիս 23-ին զօր. Սիլիկեանը սկսեց Սարդարապատի նշանաւոր յարձակողականը եւ յաջորդ օրը, խորտակելով թշնամու դիմադրութիւնը՝

բոլոր կետերի վրայ փախուստի մատնեց նրան գրեթէ մինչեւ Ալագեօզ<sup>84</sup> կայարանը: Նոյն այդ երկու օրը Դրօն<sup>85</sup>, Սարդարապատի մեր զորքերի աջ թեւը թշնամու շրջափակումից ապահովելու համար, Բաշ-Աբարանի շրջանում կռուի բռնուեց թիւրքական 3-րդ զորաբաժնի հետ, որին նա, մի քանի օրուայ կատաղի կռիւներից յետոյ յետ մղեց դէպի Դուզքեանդ<sup>86</sup>: Վերջապէս մայիս 24-ին սկսուեց զօր. Նազարբէկեանի<sup>87</sup> ղեկավարութեամբ Ղարաքիլիսէի պատմական ճակատամարտը, որի ժամանակ երկարատեւ անյաջողութիւններից եւ նահանջներից յուսաբեկ մեր զորքերը անձնագոհութեան եւ քաջութեան օրինակելի փաստեր արձանագրեցին: Նրանց առաջին իսկ հարուածից փախուստի մատնուած թշնամին իր շունչը Յամանլուում<sup>88</sup> առաւ: Յաջորդ երկու օրը հետամտելով թշնամուն յատկապէս իր աջ թեւի վրայ՝ զօր. Նազարբէկեանը յետ շարտեց նրան Բզովդալի<sup>89</sup> եւ Մայմեխի<sup>90</sup> բարձունքներից:

Այս բոլոր կռիւները մղուում էին Յայաստանի հողի վրայ եւ հայկական զորքերով: Բայց նրանք նկատուում էին իբրեւ Անդրկովկասեան Ֆեդերատիւ Յանրապետութեան զինուորական ուժերի գործողութիւններ՝ հանրապետութեան սահմանները ներխուժած արտաքին ընդհանուր թշնամու դէմ: Թշնամու բոլոր շարժումների եւ իր մտադրութիւնների մասին հայկական զօրահրամանատարութիւնը օրը օրին զեկուցում էր անդրկովկասեան գլխաւոր զօրահրամանատարին եւ զինուորական նախարարին՝ նրանցից հրահանգներ ստանում:

Այսպէս օրինակ, երբ զօր. Նազարբէկեանը հաղորդագրում է գլխաւոր հրամանատարին, թէ թիւրքերը վերջնագրով պահանջում են Ալեքսանդրոպոլն ու Երեւան-Ջուլֆա երկաթուղին՝ գլխաւոր հրամանատար զօր. Կվինտաձէն հեռագրում է հայկական հրամանատարութեանը «... Առաջարկեցէք թիւրքերին դադարեցնել առաջխաղացումը եւ վերջ տալ արհմեղմութեանը: Եթէ թիւրքերը չհամաձայնեն Ձեր առաջարկին՝ ընդունեցէք կռիւը, Ալեքսանդրոպոլը եւ երկաթուղին գէնքի ուժով Ձեր ձեռքին պահելու համար»:

Թիւրքական վերջնագրի եւ նրա առթիւ եղած կարգադրութեան մասին մայիս 15-ին հաղորդելով Անդրկովկասեան Պատուիրակութեանը՝ Ռամիշվիլին՝ իբրեւ Անդրկովկասեան Դաշնակցային Յանրապետութեան փոխ-վարչապետ՝ կառավարութեան անունից առաջարկում է «ամենավճռական բողոք ներկայացնել օսմանեան գլխաւոր հրամանատարին եւ թիւրքական ու գերմանական պատուիրակութիւններին՝ պահանջելով զինուորական գործողութիւնների անմիջական դադարեցումը»:

Ալեքսանդրոպոլի գրաման առթիւ Անդրկովկասեան կառավարութիւնը մայիս 18-ին հրատարակում է պաշտօնական հաղորդագրութիւն, որի մէջ կարդում ենք.

*«Ռազմական գործողութիւնների մասին եղած վերջին հաղորդագրութիւնից արդէն յայտնի է, որ մայիսի 15-ի ժամը 7-ին թիւրքերը գրաւեցին Ալեքսանդրոպոլը: Մեր զօրքերը յետ քաշուեցին արեւելեան ուղղութեամբ:... Մայիսի 16-ին թիւրքական հրամանատարութիւնը վերջնագիր տուեց հայկական կորպուսի հրամանատար զօր. Նազարբէկեանին՝ պահանջելով մի ժամուայ ընթացքում դրական կամ բացասական պատասխան տալ (հարցը Ալեքսանդրոպոլ-Երեւան-Ջուլֆա երկաթուղով թիւրքական զօրքեր փոխադրելու մասին է - Ա. Ջ.): ...Թիւրքական պահանջին իր համաձայնութիւնը յայտնելով՝ զօր. Նազարբէկեանը դրա հետ միասին առաջարկում է, որ զօրքերի առաջխաղացումը դադարեցուի եւ որ ինչպէս թիւրքական մույնպէս եւ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ զօրամասերը մնան այն տեղերում, ուր նրանք այժմն գտնուում են, մինչեւ որ Կայսերական Կառավարութեան ներկայացուցիչները Բաթումում համաձայնութիւն կայացնեն Անդրկովկասեան Յանրապետութեան Պատուիրակութեան հետ: ... Ի պատասխան զօր. Նազարբէկեանի հարցումի՝ կառավարութիւնը, հիմնելով Ալեքսանդրոպոլի շրջանում տեղի ունեցած վերջին գործողութիւնների վրայ, իր համաձայնութիւնը տուեց թիւրքական առաջարկին:... Նկատի ունենալով որ Ալեքսանդրոպոլի ուղղութեամբ (գործող) թիւրք հրամանատարութիւնը վերջին ժամանակներս սկսել է քաղաքական բնաւորութեամբ վերջնագրեր ներկայացնել զօր. Նազարբէկեանին՝ կառավարութիւնն առաջարկեց Բաթումում գտնուող Անդրկովկասեան Պատուիրակութեան նախագահ Ա. Ի. Չիսենկելիին՝ պահանջել թիւրքական բարձր հրամանատարութիւնից, որ այսուհետեւ քաղաքական բարձր հրամանատարութիւնից, որ այսուհետեւ քաղաքական բնոյթ ունեցող բոլոր առաջարկութիւնները ուղղուեն անմիջապէս Անդրկովկասեան Կառավարութեանը»:*

Այս կռիւների ընթացքին Անդրկովկասեան պատուիրակութիւնը մի շարք բողոքներ եւ գրութիւններ է ներկայացնում Բաթումում թիւրքաց պատուիրակութեանը՝ Անդրկովկասում թիւրքերի կողմից կատարուած զինուորական գործողութիւնների մասին: Նրանք բոլորն էլ վերաբերում են բացառապէս Յայաստանում տեղի ունեցած դէպքերին, որովհետեւ այդ ժամանակ Անդրկովկասի մնացած մասերում թիւրքական զօրամասեր կամ չկային եւ կամ խաղաղ ընթացք ունէին: Սրանից էլ երեւում է, որ մեր զօրքերի կատարած գործը ինչպէս կառավարութեան, նոյնպէս եւ նրա պատուիրակութեան կողմից, անդրկովկասեան գործ էր համարուում եւ ոչ թէ զուտ հայկական:

Վերջապես, Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը եւս արտայայտուում է վերոյիշեալ կռիւների մասին: Մայիս 25-ին, քաղաքացիներին ուղղուած մի կոչի մէջ նա ի միջի այլոց ասում է.

*«Թիւրքաց զօրքերը առաջանում են մեր երկրի ներսը, խլում են մեր քաղաքները եւ գիւղերը եւ սպառնում են մեր մայրաքաղաքին՝ Թիֆլիսին: Խաղաղութեան պատուիրակութեանը նորանոր պահանջներ են առաջադրուում, եւ միեւնոյն ժամանակ, թիւրք-գերմանական մտադրութիւնները իրագործուում են նրանց զօրամասերի միջոցով: Ո՛ւր կանգ կ'առնի թշնամին, ե՞րբ կը դադարեցնի նա իր առաջխաղացումը եւ յափշտակութիւնները, մենք չգիտենք: Ասել չենք կարող նաեւ, թէ նա մեր խոշտանգուած հայրենիքի էլի որ մասերն են ուզում պոկել: Սակայն մի բան մենք պէտք է իմանանք: Ուժին կարելի է դիմագրաւել միայն ուժով: Միայն մեր արիութիւնը եւ կազմակերպութիւնը հնարաւորութիւն կը տան մեզ ծանր փորձութիւններից դուրս գալու»:*

Այս դիմումի մէջ ակնարկուած փաստերը եւս վերաբերում էին Հայաստանի իրադարձութիւններին: Թիւրք-գերմանական զօրամասերը այնտեղ էին կատարում իրենց սխրագործութիւնները, այնտեղից էին առաջանում նրանք, քաղաքներ ու գիւղեր գրաւելով, դէպի Թիֆլիս եւ այդ ճանապարհի վրայ էր, որ հայկական զօրքերը անհաւասար կռիւների մէջ արնաքամ էին լինում...:

Մեր կռիւները մայիս 26-ին հասել էին իրենց գագաթնակէտին: Այդ օրը Դրօն Դարաքիլիս-Կաղանֆար գծի վրայ կատաղի կռիւներ էր մղում Համանլուից եկած թիւրքական զօրամասերի հետ՝ նրանց դէպ Դուզբեանդ շարտելու համար: Այդ օրը զօր. Սիլիկեանը թիւրքերին հալածում էր Ալագեօզ եւ Կարաբուրուն կայարանների շրջանից՝ նպատակ ունենալով վերագրաւել Ալեքսանդրոպոլը, որ այնքան անհրաժեշտ էր հանրապետութեան մայրաքաղաքի՝ Թիֆլիսի հետ կապուելու համար: Այդ օրը Ջօր. Նազարբեկեանը երկու թեւով հալածելով թիւրքերին՝ իսկ նրանցից Բզովդալ եւ Հաջի Կալա գիւղերը, իսկ երեկոյեան դէմ գրաւեց Մայմեխ լեռը՝ վայր թափելով նրա գագաթներին թառած թշնամուն:

Եւ ահա հէնց այդ օրն էր, որ դաշնակից Վրաստանը, առանց մեր համաձայնութիւնը առնելու, առանց նոյն իսկ մեզ նախազգուշացնելու, լքեց մեզ մեն-միմակ պատերազմի դաշտում եւ, համաձայն ազգերի ինքնորոշման իրաւունքի, յայտարարեց իրեն անկախ պետութիւն...:

Վրաստանի անկախութեան յայտարարումը ունեցաւ իր նախերգանքը Անդրկովկասի Սէյմում: Նախերգանքն այն էր, որ Սէյմը, մայիս 26-ի առաւօտեան նիստ գումարելով՝ լսեց կառավարութեան հաղորդագրութիւնը քաղաքական կացութեան եւ հաշտութեան բա-

նակցութիւնների մասին, լսեց ֆրակցիաների ներկայացուցիչների թեր եւ դէմ ճառերը եւ, համաձայն վրաց սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի առաջարկի, որոշեց.

«Նկատի ունենալով, որ պատերազմի եւ հաշտութեան խնդրում արմատական տարակարծութիւններ են առաջացել Անդրկովկասեան անկախ Հանրապետութիւնը ստեղծող ժողովուրդների միջեւ, եւ այդ պատճառով էլ անհնարին է դարձել մէկ հեղինակաւոր, ամբողջ Անդրկովկասի անունից խօսող իշխանութեան հանդէս գալը՝ Սէյմը հաստատում է Անդրկովկասի քայաքայման փաստը եւ վայր դնում իր լիազօրութիւնները»:

Այս որոշումը քաղում ենք ընթերցողին արդէն յայտնի ժողովածուից, որ հրատարակուած է վրաց կառավարութեան կողմից 1919թ. սկզբներին, «Անդրկովկասի եւ Վրաստանի արտաքին քաղաքականութեան վերաբերեալ վաւերագրեր եւ նիւթեր» անունով: Նրա մէջ մենք գտնում ենք Սէյմի նիստերից հիմնի սղագիր արձանագրութիւնը (1918թ. մարտի 5-ի, մարտ 12-ի, մարտ 31-ի, ապրիլ 9-ի եւ ապրիլ 13-ի նիստեր), բայց չենք գտնում արձանագրութիւնը այս կարեւոր նիստի, որի մէջ Անդրկովկասեան Հանրապետութեան եւ հէնց իր, Սէյմի բախտն է որոշուում: Սրա փոխարէն մենք այնտեղ տեսնում ենք վրաց սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի լիդեր Ի. Ծերեթելիի երկու ճառը, որոնցով հիմնաւորուում են Սէյմի վերոյիշեալ որոշումը: Այդ ճառերից ենք տեղեկանում, միայն, որ մայիս 21-ի պատմական նիստին կառավարութիւնը հաղորդագրութիւն է ներկայացրել եւ նրա առթիւ, բացի Ծերեթելիից, խօսք են առել Ռուստամբէկով, Բերքոզով, Սիմէօնով, Գազաւա, որոնցից առաջին երեքը դէմ կամ քննադատօրէն են վերաբերել դէպի սոցիալ-դեմոկրատական առաջարկը:

Այս «թերացման» դրդապատճառը բարդ չէ, ի հարկէ: Վրաց կառավարութիւնը իր պաշտօնական ժողովածուի մէջ տեղ չէ տուել վերոյիշեալ արձանագրութեանը, որովհետեւ իր համար անյարմար բաներ եղել են՝ դա ինքն իրեն կ'երեւայ յետագայ պատմութիւնից: Առ այժմ տեսնենք, թէ ինչ է ասում Ծերեթելին իր ճառերի մէջ:

Նախ եւ առաջ նա վեր է հանում այն ճիգերը, որ գործադրել է իր կուսակցութիւնը՝ Անդրկովկասի ժողովուրդների միջեւ միութիւն առաջ բերելու համար՝ այդ միութիւնը երաշխիք նկատելով ոչ միայն վրաց ժողովրդի, այլ եւ բոլոր հարեւան ժողովուրդների համար: Այնուհետեւ նա, հաստատելով կառավարութեան հաղորդագրութիւնը՝ յայտարարում է, որ անդրկովկասեան ժողովուրդների միջեւ միութիւն չկայ, որ կառավարութիւնը չէ ներկայացնում այդ ժողովուրդների կամքը, որովհետեւ նրանք ամենքն էլ չեն կանգնում կառավարութեան թիկունքին, եւ որ Բաթումի հաշտարար պատուիրա-

կութիւնը իր ներսում պառակտուած լինելով՝ չէ կարող երկիրը միացեալ ճակատով ներկայացնել թշնամում: Եզրակացութիւն: Եզրակացութիւնն այն է, որ Սէյմը պէտք է դադրած համարի Անդրկովկասեան Ֆեդերատիւ Յանրապետութեան գոյութիւնը, որից յետոյ ամէն մի ժողովուրդի կը մնայ իր բռնելիք ճամբան:

Ո՞ւմ վրայ է ծանրանում այս կացութեան մեղքը: Ամենից առաջ ադրբեջանցիների վրայ: Նրանք մեղաւոր են, որ թիւրքերի հետ կրօնական եւ ցեղային կապեր ունենալով՝ ոչ միայն նրանց դէմ չեն կռոււմ, հայերի եւ վրացիների հետ միասին, այլ եւ ձեռքի տակից աշխատում են յօգուտ թշնամու եւ ընդդէմ դաշնակիցների:

Ծերեթելիի դէմ դուրս է գալիս ադրբեջանեան Մուսաւաթ կուսակցութեան ներկայացուցիչ Ռուստամբէկովը եւ յայտարարում, թէ նրա մեղադրանքները լոկ պատրուակներ են վրացիների համար Անդրկովկասի Յանրապետութիւնից անջատուելու: Թէ ինչպէս է հիմնաւորում Ռուստամբէկովը իր յայտարարութիւնը, չգիտեմք, որովհետեւ այդ մասին Ծերեթելին ոչինչ չէ ասում: Բայց այդ առարկութիւնները կարող էին շատ լուրջ լինել, որովհետեւ Ծերեթելիի պատճառաբանութիւնը որ եւ է քննադատութեան չէ դիմանում:

Եւ իրօք, մի՞թէ այն մեղադրանքները, որ նա դնում է ադրբեջանցիների առաջ, այդ օրուայ կամ նոյն իսկ այդ շաբաթների նորութիւններն էին: Հարկաւ ոչ: Այդ մեղադրանքները կային Անդրկովկասեան Կոմիսարիատի շրջանում էլ եւ նրանցից առաջ էլ, բայց նրանք արգելք չհանդիսացան, որ վրաց սոցիալ-դեմոկրատիան նախածեռնութիւն ստանձնի Անդրկովկասեան Յանրապետութիւն ստեղծելու ադրբեջանցիների մասնակցութեամբ:

Փաստերով խօսելու համար վերցնենք պատերազմի խնդիրը: Ե՞րբ են ադրբեջանցիք թագցրել, որ իրենք չեն կարող եւ չեն ուզում թիւրքերի դէմ պատերազմի դուրս գալ: Երբեք: Մարտի 31-ին, երբ Սէյմի բոլոր կուսակցութիւնները իրենց հռետորների բերանով մահուան ու կեանքի պատերազմ էին յայտարարում Թիւրքիային Բաթումը պաշտպանելու համար, նոյն Ռուստամբէկովը Մուսաւաթի, անկուսակցական մահմեդականների եւ Իթթիհատի (Ռուսաստանի մահմեդականների կուսակցութիւն) անունից հետեւեալ յայտարարութիւններն արաւ՝ Սէյմի մեծամասնութեան թշնամական բացազանչութիւնների տակ.

«Պատասխանատու եւ ղեկավարող կուսակցութիւնները որոշակի արտայայտուեցին ի պաշտպանութիւն այս պատերազմի անհրաժեշտութեան: Չեզ էլ լաւ յայտնի է... որ այս հարցի մէջ մահմեդական դեմոկրատիան բացառիկ դրութեան մէջ է գտնուում. առաջին՝ որ նա մինչեւ հիմա զինուորական ծառայութիւն չէ կատարել եւ երկրորդ՝ որ նրա կրօնական կապը Թիւրքիայի հետ թոյլ չէ տա-

լիս գործօն մասնակցութիւն ունենալ վերջինիս դէմ ձեռնարկուած պատերազմին: Այս խնդրում մենք նախատեսում ենք, որ ներքին քայքայումը եւ ներքին միութեան բացակայութիւնը անկասկածելիօրէն արգելք պիտի հանդիսանան պատերազմական գործողութիւնների յաջողութեանը... Մենք կասկածում ենք, թէ կարելի կը լինի այս միութիւնը գլուխ հանել, եթէ պատերազմական գործողութիւնները սկսուին...: Ինչպէս վերեւ ասացի, մենք չենք կարող գործօն մասնակցութիւն ունենալ այս պատերազմի մէջ եւ այս պատճառով գործօն պատասխանատուութիւն չենք ստանձնում»:

Ոչ մի թիրիմացութեան տեղիք չտուող այս ճառին հետեւում է վերոյիշեալ մահմեդական կազմակերպութիւնների բանաձեւը, որի մէջ, բարեացական չէզօքութեան մի քանի մշուշապատ խօսքերի հետ միասին, մենք գտնում ենք թէ վճռական մերժում ամէն մի պատասխանատուութեան եւ թէ շատ թափանցիկ ակնարկներ, թէ ուն կողմը կարող է լինել Անդրկովկասի մահմեդականութեան համակրանքը հակաթիւրքական պատերազմի դէպքում: Ահա այդ բանաձեւը.

«Պատասխանատուութիւն չստանձնելով Թիւրքիայի դէմ պատերազմը շարունակելու գործում եւ համարելով որ այդ պատերազմը, երկրի ներքին կեանքում ստեղծուած պայմանների մէջ, յղի է ծանր հետեւանքներով Անդրկովկասի ամբողջ դեմոկրատիայի համար՝ Մուսաւաթի ֆրակցիան, Անկուսակցականների խմբակը եւ Ռուսաստանի Մահմեդականութեան կուսակցութիւնը, աչքի առաջ ունենալով, որ ղեկավարող կուսակցութիւնները դրական իմաստով են վճռել պատերազմը շարունակելու հարցը, յայտարարում են, որ նրանք բոլոր մատչելի միջոցներով հնարաւոր աջակցութիւնը ցոյց կտան Անդրկովկասի միւս ժողովուրդներին այս ծանր խնդրում եւ բոլոր քայլերի կը դիմեն պատերազմը յաջողութեամբ հաշուեյարդարի (լիկվիտասիոն) ենթարկելու համար.

«Մենք յոյս ունինք, որ մեր դեմոկրատիան այս բանաձեւի մէջ մեզ հետ համերաշխ կը լինի: Մենք հաւատում ենք մեր դեմոկրատիայի պետական բնագոյին. մենք հաւատում ենք, որ այդ բնագոյը նրան կը թելադրի, թէ որի կողմը պէտք է բռնել եւ որտեղ նրա շահերը լաւ կը պաշտպանուեն»:

Այս ամէնը յայտնի էր վրաց սոցիալ-դեմոկրատիային Անդրկովկասի Յանրապետութիւնը հիմնելիս եւ գնահատում էր ինչպէս որ հարկն է: Ծերեթելին ասում է.

«Մենք, Անդրկովկասի անկախութիւնը յայտարարելիս, հասկանում էինք, որ Անդրկովկասեան Յանրապետութիւնը չի կարող, մանաւանդ այս կրիտիքական թուակէն, իր գոյութիւնը, իբրեւ պետական ամբողջութիւն, պահել, եթէ ազգաբնակչութեան կէսը (իմա՝

մահմեդականները - Ա. Ջ.) վճռական վայրկեանին, երբ պետութեան գոյութեան խնդիրն է որոնում, կանխօրէն հրաժարուում է պաշտպանելու իր պետութիւնը: Մենք այս լաւ էինք հասկանում, երբ յայտարարում էինք Անդրկովկասի անկախութիւնը»:

Եւ սա յետին ձեւով ասուած խօսք չէ, այլ իրականութիւն: Այդ իրականութիւնը աւելի եւս ցայտուն կերպով երեւան է գալիս այն գնահատութեան մէջ, որ տալիս է վրաց սոցիալ-դեմոկրատիայի ականաւոր ներկայացուցիչ Ջուղէլին ադրբեջանցիների վերոյիշեալ յայտարարութեանը Սէյմի նոյն միտում.

«...Նրանք լուանում են իրենց ձեռքերը,- ասում է Ջուղէլին՝ խօսքն ուղղելով մուսաւաթականներին,- թէւ գիտեն, որ լուանում են այդ ձեռքերը՝ մեր արիւնով (ծափահարութիւններ), թէւ գիտեն, որ իրենց ձեռքերը լուանալով՝ նրանք գործօն աջակցութիւն են ցոյց տալիս թիւքական իմպերիալիզմին, թիւքական ներխուժմանը (ծափահարութիւններ): Ընկերներ, մեր վիճակն այնպէս է, որ վերապահութեան կամ չեզոքութեան մասին խօսք լինել չի կարող, որովհետեւ ամէնքին յայտնի է, որ չեզոքութիւնը թիւքիային գործօն օգնութիւն հասցնելու բնոյթ է կրում: Եւ երբ Մուսաւաթ ֆրակցիայի ներկայացուցիչը երկդիմօրէն ասում էր, թէ բոլոր քայլերին կը դիմի, որպէս զի պատերազմը յաջողութեամբ հաշուեյարդարի ենթարկուի՝ նա չասաց միայն, թէ որ կողմի եւ ում համար է լինելու այդ յաջողութիւնը (ծափահարութիւններ)»:

Եթէ վրաց սոցիալ-դեմոկրատիան սկզբից եւեթ այսպէս է հասկացել ադրբեջանցիների դերը պատերազմի խնդրում, ապա հարց է ծագում, թէ ի՞նչ նոր բան էր պատահել, որ այդ նոյն դերի պատճառով հիմա առաջարկուում է չեղեալ համարել Անդրկովկասեան Յանրապետութիւնը: Ծերեթելին այս մասին ոչինչ չէ ասում, եւ չի էլ կարող ասել: Որովհետեւ այդ ժամանակները բացառիկ ոչ մի բան չկար:

Ճիշտ է, ադրբեջանցիները այստեղ եւ այնտեղ պարտիզանական գործողութիւններ էին կատարում գլխաւորապէս հայերի, մասամբ նաեւ վրացիների դէմ, բայց սրանում արտասովոր ոչինչ չկար: Դեռ Անդրկովկասեան Կոմիսարիատի ժամանակուանից սկսած՝ դրանք առօրեայ երեւոյթներ էին երեւանի եւ Գանձակի սահմաններում: Փետրուարին նրանք արծարծուեցին եւ թիֆլիսի նահանգում՝ Բորչալու եւ Ախալցխա, իսկ մարտի սկզբին մինչեւ անգամ Արտահանը գրաւուեցաւ տեղական հրոսակներից: Այս ամէնին շատ լաւ գիտակ էին Ծերեթելին եւ իր ընկերները: Սէյմի մարտ 5-ի միտումն նա եւ իր կուսակից Լօմթաթիձէն շատ որոշ կերպով խօսում էին այն ներքին եւ արտաքին «մութ ձեռքերի» մասին, որոնք այսօրինակ էքսցեսներ էին առաջ բերում: Բայց եւ այնպէս մի քանի շաբաթ յետոյ նրանք չվարանցին ադրբեջանցիների հետ

միասին Անդրկովկասեան Յանրապետութիւնը ստեղծել. ի՞նչպէս կարելի է նրանցով պատճառաբանել այդ Յանրապետութեան քայքայումը, մանաւանդ որ չէր էլ կարելի ասել, թէ բաժան-բաժան եղած անդրկովկասեան դեմոկրատիան աւելի յաջողութեամբ կարող էր կռուիլ նրանց դէմ, քան թէ թէկուզ անուանապէս մէկ ընդհանուր պետական յարկի տակ միացած դեմոկրատիան:

Ադրբեջանցիների դէմ Ծերեթելիի կողմից յարուցուած միւս մեղադրանքների մէջ էլ չենք գտնում բաւարար հիմունքներ Անդրկովկասեան Յանրապետութիւնը մեռցնելու կամ մեռած յայտարարելու առաջարկի համար:

Ծերեթելին ասում է, որ ադրբեջանցիները թեւ ու թիկունք չեն հանդիսանում հանրապետական կառավարութեանը, որ վերջինս չի կարող իրեն նկատել երկրի ամբողջ ազգաբնակչութեան կամքը ներկայացնող իշխանութիւն եւն.: Բայց այստեղ էլ որեւէ նորութիւն չկար: Այդ վիճակն ուներ Անդրկովկասի իշխանութիւնը սկսած այն օրերից, երբ թիւքերը, մօտենալով Անդրկովկասի սահմաններին, ադրբեջանցիներին իրենց քաղաքական օրբիտայի կամ հունի մէջ առան: Ապրիլի 9-ին, այսինքն Անդրկովկասն անկախ հանրապետութիւն հռչակելու օրը, երբ թիւքերն արդէն երկրի ներսն էին խուժել, ադրբեջանցիների թիւքական օրիէնտասիօնն այնքան յստակ եւ որոշ էր, որ վրաց սոցիալ-դեմոկրատիան նրանց լօյեալութեան մասին այլեւս որեւէ պատրանք սնուցանել չէր կարող:

«Մենք լաւ հասկանում էինք,- ասում է ինքը՝ Ծերեթելին,- որ ստեղծուած կացութեան մէջ անդրկովկասեան ժողովուրդները, նայած թէ ինչ պատմական եւ կրօնական պայմանների մէջ են գտնուում նրանք, կարող են երեւան բերել զանազան ձգտումներ, զանազան հակումներ դէպի զանազան արտաքին ուժերը»:

Սա նշանակում է, որ նրա կուսակցութիւնը ապրիլի 9-ին շատ լաւ ըմբռնում էր, որ եթէ ադրբեջանցիք առաջները, շնորհիւ իրենց պատմական եւ կրօնական պայմանների, հակուած լինելով դէպի թիւքիան, անլօյեալ վերաբերմունք ունէին դէպի Անդրկովկասի իշխանութիւնը ի դէմս Անդրկովկասեան Յատուկ Կօմիտէի եւ Անդրկովկասեան Կոմիսարիատի, յետագային թիւքական ներխուժման պատճառով, այդ անլօյեալութիւնը աւելի եւս պէտք է շեշտուէր:

Պարզ է, որ եթէ գիտակցութիւնը արգելք չհանդիսացաւ վրաց սոցիալ դեմոկրատիայի համար ադրբեջանցիների մասնակցութեամբ Անդրկովկասի անկախ Յանրապետութիւնը հիմնելու, նա չէր կարող եւ պատճառ նկատուիլ այդ հանրապետութիւնը ոչնչացած յայտարարելու համար:

Գալով այն մեղադրանքին, թէ Բաթումի բանակցութիւնների ժամանակ ադրբեջանցիք աւելի թշնամու կողմն են տաշում, քան

դաշնակիցների կողմը՝ այստեղ եւս նորութիւն չկար: Դեռ Տրապի-զոնի բանակցութիւնների ժամանակից (1918թ. փետրուար) յայտ-նի էր ամենքին, որ Ադրբեջանի ներկայացուցիչները թիւրքական գործակալների դէր են կատարում Անդրկովկասեան պատուիրա-կութեան մէջ: Որ Բաթումում նրանց դերն այլ չպէտք է լինէր՝ այս մասին տարակոյս չուներ ոչ ոք Բաթումի հաշտարար պատուիրա-կութիւնը կազմելիս: Եթէ այսպիսի պատճառաբանութեամբ պէտք էր քանդել Անդրկովկասի Զանրապետութիւնը, էլ ինչո՞ւ նա ստեղ-ծուեց:

Այս հարցին, որ ծագում է ադրբեջանցիների դէմ յարուցուած մե-ղադրանքներից, իւրաքանչիւրի քննութեան ժամանակ, Ծերեթելին շատ ընդհանուր եւ շատ միամիտ պատասխան է տալիս: Նա ասում է. Անդրկովկասը անկախ Զանրապետութիւն հռչակելով՝

«Մենք կարծում էինք, թէ գտնուած է այն միջոցը, որով կարելի էր արգելք հանդիսանալ, որ Անդրկովկասը երկու ներհակ բանակ-ների բաժանուի: Մենք կարծում էինք, թէ գտնուած է այն ընդհանուր հողը, որի շնորհիվ, սոսկալի դէպքերի տարերային ընթացքին իսկ, պիտի զարգանար եւ ամրապնդուէր պետական հայրենասիրութիւ-նը Անդրկովկասի սահմաններում, եւ, այդպիսով, ամեն մի ժողո-վուրդ, զգալով իրեն սոյն պետական օրգանիզմի գաւակը եւ ստա-նալով իր լիակատար իրաւունքները՝ լիովին պիտի ստանձնէր նաեւ իր վրայ ընկած պատասխանատուութիւնները»:

Ի հարկէ, այսպիսի միամտութիւն ոչ ոք չի կարող վերագրել վրաց սոցիալ դեմոկրատիային, որ այնքան փորձառու եւ աչքաբաց քաղաքական գործիչներ ունի իր շարքերում: Անդրկովկասեան Զանրապետութեան ամենակենսական խնդիրն էր պատերազմի եւ խաղաղութեան խնդիրը, որը պէտք է կարգադրուէր ամենաուշը օ-րերի կամ շաբաթների ընթացքում, եւ ոչ ոք չի կարող համոզուել, թէ Ծերեթելին եւ իր ընկերները այնքան միամիտ էին, որ կարծում էին, թէ պատերազմական գործողութիւնների եւ քաղաքական ծան-րակշիռ դէպքերի այդ թոհ ու բոհի մէջ, մի քանի օրերի կամ շաբաթ-ների ընթացում, ադրբեջանցիների պետական հայրենասիրութիւնը կը զարգանայ եւ կ'ամրապնդուի մինչ այն աստիճան, որ նրանք անդրկովկասեան ընդհանուր շահերը վեր դասեն իրենց պատմա-կան եւ կրօնական միւս բոլոր նկատառումներից:

Եթէ նրանք այսպիսի միամտութիւն ունեցած լինէին՝ մինչեւ Թիւրքիայի հետ հաշտութեան բանակցութիւններ սկսիլը պիտի զգային իրենց սխալը եւ համապատասխան եզրակացութիւններ հանէին: Որովհետեւ մինչեւ այդ էլ ադրբեջանցիք ոչ պատերազմի մասնակցութեան խնդրում, ոչ կառավարութեան հանդէպ պահան-ջուած լօյսալուծեան խնդրում եւ ոչ էլ թիւրքական օրիէնտասիոնի

խնդրում «անդրկովկասեան հայրենասիրութեան» որեւէ նշան ցոյց չէին տալիս: Նրանք մնում էին նոյնը, ինչ որ էին առաջ:

Անշուշտ, «հազարաւոր վաւերագրեր» կային, որոնցով Ծերե-թելին կարող էր ապացուցել նրանց անհայրենասիրութիւնը, բայց դրանք վերաբերում էին կամ Անդրկովկասի Զանրապետութեանը նախորդող շրջաններին եւ կամ այդ հանրապետութեան առաջին օ-րերին: Իբրեւ մէկը այդ «հազարաւոր վաւերագրերից» Ծերեթելին ներկայացնում է Սէյմին «Ախալցխայի եւ Ախալքալաքի մահմեդա-կան ազգաբնակութեան պատգամաւորների որոշումը», որով յանձ-նարարում է համապատասխան մարմինների՝ «...նկատի ունենա-լով, որ մահմեդականները խաղաղ կյանքի հնարաւորութիւն չունին Անդրկովկասի եւ Վրաստանի կազմի մէջ՝ խնդրել թիւրքաց կառա-վարութեանը, որ հաշտութեան դաշնագրով միացնի իր հողերին ամբողջ Ախալցխայի գաւառը եւ Ախալքալաքի մի մեծ մասը»: Բայց այս վաւերագիրն էլ կազմուած եւ ստորագրուած էր Անդրկովկասի Զանրապետութեան հռչակումից ընդամենը չորս օր յետոյ, այսինքն 1918թ. ապրիլ 13-ին, եւ այդ պատճառով էլ ոչ մի նոր բնորոշում չէր տալիս այն քաղաքական կացութեանը, որից մեկնում էր վրաց սոցիալ-դեմոկրատիան՝ այդ հանրապետութիւնը ի չիք յայտարա-րելու համար:

Այսքանը կարծում ենք բաւական է համոզելու համար, որ այդ յայտարարութեան մէջ ադրբեջանցիների մեղքերը, որքան էլ նրանք ըստ էութեան վերցրած մեծ լինէին, էական դէր չէին կատարում: Ե-թէ վրաց սոցիալ-դեմոկրատիայի աչքում այդ մեղքերն այս նշանա-կութիւնն ունենային, ինչ որ Ծերեթելին, յետին թուով, ուզում է տալ նրանց՝ Անդրկովկասեան Զանրապետութիւնը բնաւ կեանքի չէր կանչուի:

Ընդհակառակը, արդար լինելու համար, պէտք է ասենք, որ ադրբեջանցիք ոչ մի ժամանակ այնքան շահագրգռուած չէին Անդր-կովկասեան Զանրապետութեան գոյութեամբ, որքան հէնց այն օրե-րին, երբ վրաց սոցիալ-դեմոկրատիան նրա մահավճիռն էր ստո-րագրում: Այս շահագրգռութիւնը պայմանաւորուած է այն ակնկա-լութիւններով եւ երկիւղներով, որ ունէին ադրբեջանցիք դէպի թիւր-քերը:

Նրանց ակնկալութիւնները երեք էին: Առաջին՝ թիւրքերի օգնու-թեամբ խլել Բագոււն ռուսներից եւ այսպիսով ռուսական տիրապե-տութիւնը իսպառ վերացնել Անդրկովկասից: Երկրորդ՝ թուլացնել հայերին այնքան, որ նրանք ոչ միայն այլեւս չկարողանան Թիւր-քահայաստանի մասին մտածել, այլեւ հրաժարուեն այն ռուսահայ-կական գաւառներից, որոնց վրայ աչք ունէին ադրբեջանցիք: Եր-րորդ՝ թոյլ չտալ, որ վրացիք իրենց տիրապետութեան տակ առնեն

Աջարիայի, Ախալցխայի եւ Հիւսիսային Բորչալուի, Սղնախի եւ Կարսի որոշ շրջանների մահմեդական զանգուածները:

Առաջին ակնկալութեան տեսակետից Անդրկովկասեան Զանրապետութիւնը որեւէ վտանգ չէր ներկայացնում: Բաթումի բանակցութեան առաջին իսկ օրերին, թիւրքերը յայտարարեցին իրենց մտադրութիւնը Բագու արշաւելու, եւ Անդրկովկասեան պատուիրակութիւնը, որքան էլ նրա անդամների զգացումներն ու մտածումները տարբեր լինէին այս խնդրում, առանց այլեւայլութեան համակերպւեց այն բոլոր պահանջներին եւ պայմաններին, որ դրին թիւրքերը Բագուի արշաւանքը յաջողցնելու համար, հէնց թէկուզ այն պատճառով, որ ոչ մի կերպով դրան արգելք հանդիսանալ չէին կարող:

Երկրորդ ակնկալութիւնը իրագործուած էր լիովին: Կարսից, Ալեքսանդրապոլից, Շարուր-Նախիջեւանից եւ Էջմիածնի ու Երեւանի գաւառների մեծ մասից զրկուելուց յետոյ՝ հայերը քանակով եւ որակով այնպիսի ոչնչութեան էին վերածուած, որ ոչ միայն այլեւս Թիւրքահայաստանի մասին երազել չէին կարող, այդպէս էր այն ժամանակ ամենքի ըմբռնումը, այլեւ պիտի համակերպէին ադրբեջանցիների բոլոր պահանջներին, որքան էլ նրանք անարդար լինէին: Անդրկովկասեան Զանրապետութեան մէջ այս ձեւով ջլատուած հայութեան ներկայութիւնն այլ եւս ոչ միայն վտանգ, այլեւ անպատեհութիւն չէր ներկայացնում: Նրանք այնտեղ պէտք է ունենային շատ մի կանտոն, որ մօտ 5-6 անգամ փոքր լինելով Ադրբեջանից, որեւէ շօշափելի դէր չպիտի կարողանար կատարել, անգամ եթէ բոլոր հարցերում գնար Վրաստանի հետ եւ Ադրբեջանին ընդդէմ: Այնպէս, որ այս տեսակետից եւս ադրբեջանցիները Անդրկովկասեան Զանրապետութիւնից քաշուելու պատճառ չունէին:

Վերջապէս, երրորդ ակնկալութիւնը եւս իրագործուած էր մեծ չափով: Աջարիան եւ Կարսի շրջանի մահմեդականութիւնը անջատուած էին Վրաստանից վերջնապէս, Ախալցխայի եւ Ախալքալաքի մահմեդականութիւնը, ինչպէս տեսանք, կանգնած էր նոյն ճանապարհի վրայ՝ յաջողելու բոլոր շանսերով, վրացիք պատրաստ էին զիջելու Ադրբեջանին Ձաքաթալայի շրջանը. մնում էր միայն Հիւսիսային Բորչալուի եւ Սղնախի մահմեդականութեան խնդիրը, որին առանձին կարելորութիւն չէին տալիս ադրբեջանցիք, իսկ եթէ տային՝ կարող էին լուծել ինչպէս իրենք էին ցանկանում: Անդրկովկասեան Զանրապետութեան մէջ այս ձեւով կրճատուած եւ ջլատուած Վրաստանը այլեւս չէր կարող բանեցնել իր նախկին գերիշխանութիւնը (հեգեմոնիա), հետեւաբար, այս կողմից եւս այդ հանրապետութիւնը անպատեհութիւն չէր ներկայացնում ադրբեջանցիների համար:

Այսպիսով, տեսնում ենք, որ 1918-ի մայիսին հանգամանքներն այնպէս էին դասաւորուել Անդրկովկասեան Զանրապետութեան

շուրջն ու ներսը, որ ադրբեջանցիք ոչ մի պատճառ չունէին թշնամական վերաբերմունք ունենալու դէպի մա: Դրա փոխարէն, ընդհակառակը, նրանք շատ լուրջ պատճառներ ունէին նրա գոյութիւնը բարիք նկատելու իրենց համար:

Յարցն այն է, որ ինչպէս վերը ակնարկեցինք, ադրբեջանցիք ոչ միայն ակնկալութիւններ ունէին թիւրքերից, այլ եւ երկիւղ: Վերջինս այն էր, որ թիւրքերը ձգտումն էին ցոյց տալիս պարզապէս կլանելու Ադրբեջանը եւ օսմանեան կայսրութեան մի նահանգը դարձնելու: Սա արդէն ոչ մի կերպով ադրբեջանցիների հաշուին չէր գալիս: Թիւրք-ադրբեջանեան ցեղային եւ կրօնական կապերը գնահատելով հանդերձ՝ Ադրբեջանի ղեկավարները բոլորովին հակամտ չէին ռուսական տիրապետութիւնից ազատուելուց յետոյ ընկնել թիւրքական բացարձակ տիրապետութեան տակ: Սրա դէմ խօսում էին երկու ժողովուրդների կրօնական (սիւնի-շիա), լեզուական եւ մշակութային տարբերութիւնները, ինչպէս եւ այն հանգամանքը, որ Ադրբեջանի ղեկավարները գիտակցում էին, որ թիւրքական տիրապետութեան տակ իրենք պէտք է կորցնեն իրենց դիրքն ու իշխանութիւնը Ադրբեջանում: Ահա այս ձգողական եւ վանողական հանգամանքների հաշուառութեամբ, Ադրբեջանի ղեկավարները շատ շատ կարող էին հանդուրժել Թիւրքիայի հովանավորութիւնն իրենց վրայ, բայց ոչ թէ տիրապետութիւնը:

Սակայն Շէքսպիրեան Մաւրի պէս՝ թիւրքը, իր պարտականութիւնը կատարելուց յետոյ, մտադիր չէր երեւում գնալու: Ի՞նչ պէտք էր անել սրա դէմ: Սրա դէմ պէտք է կանգուն պահել Անդրկովկասեան Զանրապետութիւնը: Այսպէս էին մտածում Ադրբեջանի ղեկավարները 1918-ի մայիսին: Նրանց համար պարզ էր, որ այդ հանրապետութիւնը իր վրացական եւ հայկական տարրերով շատ աւելի դժուարամարս մի պատառ է Թիւրքիայի համար, քան Ադրբեջանը, եւ որ վերջինս, Զանրապետութեան մէջ մնալով՝ անկասկած շատ աւելի պաշտպանուած կը լինէր թիւրքական ոտնձգութիւնների դէմ, որին ծանօթ էին արդէն ադրբեջանցիք, քան միմակ մնալով:

Այսպիսով, մի կողմից որեւէ վտանգ կամ նույն իսկ անպատեհութիւն չտեսնելով Անդրկովկասի Զանրապետութեան գոյութեան մէջ, իսկ միւս կողմից՝ նրա գոյութիւնը շահաւետ նկատելով իրենց համար թիւրքական բացարձակ տիրապետութեան վտանգից ազատուելու համար՝ ադրբեջանցիք 1918-ի մայիսին շատ աւելի հարազատ վերաբերմունք պէտք է ունենային դէպի այդ հանրապետութիւնը, քան թէ երբ եւ իցէ: Այս տրամաբանական եզրակացութիւնը իր փաստական արդարացունը գտնում է եւ պատմական իրադարձութիւնների մէջ:



Ամբողջ մայիսի ընթացքում նրանք ոչ Բաթունում եւ ոչ էլ Թիֆլիսում կամ այլուրեք որեւէ տրամադրութիւն չեն ցոյց տալիս քաշուելու Անդրկովկասի Զանրապետութիւնից: Եթէ առաջները, Անդրկովկասի Յատուկ Կօմիտէի եւ Կոմիսարիատի ժամանակ, նրանք որոշ չափով հարկադրուած էին մնալ անդրկովկասեան ժողովուրդների միութեան մէջ, որովհետեւ Թիւրքիան հեռու էր, իսկ ռուսների ու հայերի վերաբերմունքը նրանց հանդէպ ոչ բարեկամական էր, ապա այժմ այդ հարկադրանքը չկար այլեւս: Նրանք հիմա շատ էին ուժեղ որեւէ մէկից վախենալու համար, մանաւանդ որ Թիւրքիան էլ իրենց կողքին կանգնած, եւ չէին բաժանուում Զանրապետութիւնից պարզապէս այն պատճառով, որ չէին ուզում բաժանուել:

Մայիսի 21-ին, Վրաստանի եւ Ադրբեջանի սահմանների ճշտման խնդրով մի խորհրդակցութիւն է կայանում Բաթունում, որին մասնակցում են մի կողմից ժողովարհա, Սուլուկիձէ եւ Ավալով, իսկ միւս կողմից՝ Խան Խոյսկի<sup>91</sup>, Խասմամեդով, Սաֆիկիրսկի, Պեպիոնով եւ Ջաֆարով: Այդտեղ էլ ադրբեջանցիք հաւաստութիւն են տալիս, որ ամէն կերպ պէտք է պաշտպանեն անդրկովկասեան երեք ժողովուրդների միութիւնը հանրապետութեան մէջ: Սակայն նկատի ունենալով, որ Թիւրքիան կարող է փաստօրէն անհնարին դարձնել հայերի մասնակցութիւնը այդ միութեան մէջ՝ նրանք առաջարկում են վրացիներին, թէկուզ միայն երկուսով մնալու պայմանով, պահպանել Անդրկովկասեան Զանրապետութիւնը: Թիւրքական բացարձակ տիրապետութեան վտանգը շատ էր ակնհայտ նրանց համար՝ Անդրկովկասեան Զանրապետութիւնից իսպառ հրաժարուելու համար:

Մայիսի 25-ին Թիֆլիսում տեղեկանալով, որ վրացիք եռանդուն պատրաստութիւնների վրայ են այդ հանրապետութեան թաղումը կատարելու համար՝ ադրբեջանցիք խնդրում են նրանց զոնէ յետաձգել իրենց որոշման գործադրութիւնը: Այլ պայմաններում վրացիք, որոնք երեւոյթները պահելու միշտ մեծ կարեւորութիւն էին տալիս, անշուշտ կը յարգէին այս խնդիրը, նախնական խորհրդակցութիւններ կը կազմէին կուսակցութիւնների եւ Սէյմի նախագահութեան հետ, բայց այս կարեւոր դէպքում նրանք ակտիւոր են համարում ձեւականութիւնների յետեւից ընկնել եւ Զանրապետութեան թաղումը կատարում է չորրորդ կարգով, յաջորդ օրն եւեթ Սէյմի մեզ արդէն ծանօթ նիստում...

Այս ամէնից յետոյ բնականաբար չենք կարող իրաւունք չտալ պատգամաւոր Ռուստամբէկովին, երբ նա Սէյմի այդ նիստում յայտարարում է, թէ Ծերեթելիի մեղադրանքներն Ադրբեջանի դէմ լոկ պատրուակներ են վրաց սոցիալ-դեմոկրատիայի ձեռքին՝ Անդրկովկասեան Զանրապետութիւնից յետ քաշուելու համար: Բնաւ չենք

ժխտում, որ Ադրբեջանը ծանր մեղքեր ունի այդ Զանրապետութեան տկարացման մէջ: Երբեք չենք անգիտանում, որ եթէ այդ մեղքերը չլինէին՝ Անդրկովկասը բոլորովին այլ պատրաստութեամբ, այլ դիմադրական ուժով եւ այլ կորովով հանդէս կը գար արտաքին ճակատում եւ նախ թիւրքերի, ապա բոլշեւիկների ոտքի կոխան չէր լինի: Բայց եւ այնպէս պնդում ենք, որ մայիսի 26-ին, երբ վրաց սոցիալ դեմոկրատիան երես դարձրեց Անդրկովկասեան Զանրապետութիւնից, նա, զոնէ առաջին հերթին, Ադրբեջանի մեղքերը չունէր աչքի առաջ, այլ՝ ուրիշ հաշիւներ:

Այդ հաշիւներին անցնելուց առաջ, անհրաժեշտ է ճշդել եւ միւս դաշնակցի դերն այս խնդրում:

Յոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ վրաց սոցիալ-դեմոկրատիան, փաստօրէն, անջատուելով Ռուսաստանի գործերից՝ իր անմիջական մտահոգութեան խնդիրը դարձրեց Վրաստանը զերծ պահել ռուսական բոլշեւիզմի վտանգից: Եւ որովհետեւ Վրաստանը միանակ մնալով չափաւ կարողանար դիմագրաւել այդ վտանգին, վրաց սոցիալ-դեմոկրատիան կառչեց անդրկովկասեան ժողովուրդներից եւ մասնաւորապէս երեք գլխաւոր ժողովրդից ընդհանուր հակաբոլշեւիկեան ճակատ կազմելու գաղափարին:

Այս գաղափարը իրագործելու ճանապարհին վրայ, վրաց Սոցիալ Դեմոկրատիան թերութիւններ շատ ունեցաւ մասնաւորապէս շնորհիւ գերիշխանութիւն կամ հեգեմոնիա բանեցնելու իր ձգտումներին, որոնք խիստ բացասական հետեւանքներ առաջ բերին: Բայց, այսուհանդերձ՝ գլխաւորապէս նրա ջանքերի շնորհիւ էր, որ յիշեալ ժողովուրդները համախորհուրդ, նախ մերժեցին ճանաչել Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնը ապա եւ կազմակերպուեցին ի դէմ Անդրկովկասեան Կոմիսարիատի, առաջին կիսանկախ պետական միութեան մէջ:

1918-ի սկզբին, երբ խորհրդային Ռուսաստանը մի շարք հակաբոլշեւիկեան երկրներով՝ Զարաւ-Արեւելեան Դաշնակցութիւն, Ուկրաինա եւ այլն, բաժանուած լինելով Վրաստանից այլեւս նրան զոնէ անմիջապէս չէր կարող սպառնալ, հանդէս եկաւ թիւրքական արշաւանքի վտանգը: Այս նոր պատուհասին դիմագրաւելու համար եւս վրաց սոցիալ-դեմոկրատիան ցանկանում էր հանդէս գալ անդրկովկասեան միացեալ ճակատով եւ մինչեւ իսկ մտածում էր այդ ճակատի մէջ առնել նաեւ Գիւսիսային Կովկասի եւ Ուկրաինայի ժողովուրդներին: Սակայն շուտով նա զգաց, որ սա անիրագործելի ցնորք է: Կովկասեան լեռնաշղթայից հիւսիս ընկած ժողովուրդները թիւրքական վտանգը չէին զգում եւ նրան շատ քիչ կարեւորութիւն էին տալիս, Անդրկովկասից ռուս զօրքերը հեռացել էին, իսկ տեղի մնալուն ռուս բնակչութիւնը, ինչ-ինչ պատճառներով այլեւս չէր հե-

տաքրքրում ոչ Անդրկովկասի եւ ոչ էլ մանաւանդ Վրաստանի ճակատագրով:

Մէջտեղը մնացել էին անդրբէջանցիները, հայերը եւ վրացիք, բայց սրանք էլ միեւնոյն վերաբերմունքը չունէին դէպի թիւրքական վտանգը: Ադրբէջանցիները կրօնական, ցեղային եւ այլ կապեր ունենալով թիւրքերի հետ՝ նրանց առաջխաղութեան մէջ իրենց քաղաքական երազների իրագործման երաշխիքն էին տեսնում, մինչդէռ հայերն ու վրացիները մահուան սարսուռ էին զգում այդ առաջխաղութեան հեռանկարից:

Այս պայմաններում յիշեալ երեք ժողովուրդների քաղաքական փոխարաբերութիւնը բնական ընթացքով հետեւեալ ձեւն ստացաւ. արտաքնապէս նրանք մնում էին միացած Անդրկովկասեան Կոմիսարիատի մէջ, բայց ներքուստ վերջինս հայ-վրացական դաշնակցութեան կամ զինակցութեան բնույթ էր կրում մասնաւորապէս պատերազմի եւ խաղաղութեան խնդրում, որ այդ կոմիսարիատի ամենակարեւոր, եթէ չասենք միակ, մտահոգութիւնն էր կազմում:

Ադրբէջանցիք մնացին այդ միութեան մէջ, որովհետեւ թիւրքերը դէռ հեռու էին, իսկ Խորհրդային վտանգը անմիջապէս կախուած էր նրանց գլխին: Հայերն ու վրացիները ցանկալի էին համարում նրանց մնալը, որովհետեւ մտածում էին, թէ նրանք, միութեան մէջ գտնւելով, մուսաւ չարիք կարող էին հասցնել իրենց, քան եթէ բոլորովին ինքնագլուխ մնային: Կար նաեւ այն նկատումը, թէ ադրբէջանցիները պատուար են հանդիսանում Հիւսիս-Արեւելքից սպառնացող բոլշեւիկեան վտանգի դէմ:

Գալով հայ-վրացական ներքին դաշնակցութեանը կամ զինակցութեանը՝ սրա անհրաժեշտութիւնը երկուստեք զգացում էր ոչ միայն այն պատճառով, որ թշնամին ընդհանուր էր, այլ եւ այն գիտակցութեամբ, որ ոչ հայերը եւ ոչ էլ վրացիք, միմակ մնալով, չպիտի կարողանային դիմագրաւել թշնամուն: Հայկական զօրաբանակն այդ ժամանակ ընդգրկում էր 24 գումարտակ կանոնաւոր հետեւակ, 13 գումարտակ կամաւորների, 13 գումարտակ տեղային զօրքերի, 14 ջուկատ (եսկադրոն) հեծեալների, 19 հրետանի (բատարեա) եւ մի շարք բերդային թնդանօթային, հաղորդակցութեան, պարենաւորման եւ այլ զօրախումբեր<sup>92</sup>: Ճիշդ է, այս զինուորական միութիւնները դեռեւս լաւ չէին կազմակերպուած եւ բազմապիսի թերութիւններ ունէին, բայց ստեղծուած պայմաններում, վրացիք, բացի իրենցից, միայն սրանց վրայ կարող էին յոյս դնել: Միւս կողմից հայերի համար մեծ նեցուկ էր հանդիսանում վրացական զօրաբանակը, որ թէեւ աւելի սակաւաթիւ էր եւ նոյն թերութիւններն ունէր ինչ որ հայկականը, բայց եւ այնպէս հայկական զօրքերի կողքին կանգնած միակ զինուորական ուժն էր ընդհանուր թշնամու դէմ ճակատած:

Ադրբէջանցիների չէզօքացումը պատերազմի հետ կապուած գործերից եւ հայ-վրացական գործակցութիւնը արտայայտում էր բոլոր կարեւոր դէպքերում: Այսպէս օրինակ, երբ 1917-ի վերջերին պէտք է զինադադար կնքուէր թիւրքերի հետ՝ իշխանութեան կողմից իբրեւ տեղական ժողովուրդների ներկայացուցիչներ ուղարկուեցին թիւրքերին մի հայ եւ մի վրացի, բայց ոչ մի ադրբէջանցի: 1918-ի մարտի 31-ին, երբ կառավարութիւնը Սէյմին ներկայացրեց Թիւրքիայի հանդէպ պատերազմական վիճակ յայտարարելու առաջարկը՝ հայերն ու վրացիներն էին միայն, որ նախնական համաձայնութիւն կայացրած լինելով ընդունել տւին այդ առաջարկը, չնայած ադրբէջանցիների ձեռնպահութեանը: Նոյն օրը Սէյմը, ժողովանիայի առաջարկով, պատերազմը վարելու գործը յանձնեց ոչ թէ կառավարութեան ամբողջ կողմին, այլ նրա միջից ընտրուած մի յատուկ մարմնի, որի մէջ մտնում էին միայն վրացի եւ հայ կոմիսարներ:

Ի հարկէ, այս ամենը կատարում էր արտաքին ձեւերը պահելով, բայց ոչ ռքի համար գաղտնիք չէր, որ նրանք արտայայտութիւն էին հանդիսանում հայ-վրացական անջատ զինակցութեան կամ լռելեայն դաշնակցութեան:

Ահա այս կարգի գործերից էր եւ Անդրկովկասեան Հանրապետութեան հռչակումը, զոնէ մեզ համար: Մենք մտանք նրա մէջ հակառակ մեր կամքի, (այս մասին առիթ ենք ունեցել արտայայտուելու), եւ մտանք բացառապէս մղուած այն զիտակցութիւնից, թէ դա անհրաժեշտ էր հայ-վրացական զինակցութիւնը եւ դաշնակցութիւնը կանգուն պահելու համար:

Արդ, ի՞նչ էին մտածում Ծերեթելին եւ նրա ընկերները այս դաշնակցի մասին, երբ նրանք Անդրկովկասեան Հանրապետութիւնը մեռած յայտարարելու առաջարկն էին դնում Սէյմի առաջ: Ենթադրենք, թէ նրանց մեղադրանքները ադրբէջանցիների հասցէին միանգամայն ճիշդ էին: Բայց չէ՞ որ կար եւ մի ուրիշ դաշնակից, որ մինչեւ վերջին թոպէն հաւատարիմ էր մնացել Հանրապետութեանը: Չէ՞ որ այս դաշնակիցն է եղել գլխաւոր դերակատարը պատերազմի հետ կապուած գործերում, որոնք այդ Հանրապետութեան հիմնական խնդիրներն էին հանդիսանում, եւ ոչ թէ Ադրբէջանը: Չէ՞ որ նա հայ-վրացական ընդհանուր որոշումով էր կռուի դաշտ իջել իբրեւ պատերազմող կողմ: Չէ՞ որ նա Հանրապետութեան վարիչների հրամանով էր յանձնել Կարսը թշնամուն եւ յանձնելուց յետոյ էլ իր կրծքին ընդունել սրա գլխաւոր հարուածները: Վերջապէս չէ՞ որ հենց այդ մասին եւ թոպէին, երբ Ծերեթելին իր դամբանականն էր կարդում, յիշեալ դաշնակիցը հանրապետութեան դրոշի տակ արիւնահեղ կռիւներ էր մղում թշնամու դէմ Բզովկալի բարձունքների վրա, Բաշ-Աբարանի առաջ եւ Ալեքսանդրապոլի շրջակայքում:

Այս աղաղակող հարցերի դիմաց մենք Ծերեթելիի ճառերի մէջ այն ենք գտնում միայն, որ նա, Անդրկովկասեան Հանրապետութեան պաշտպանութեան խնդրում, հայերին եւ վրացիներին ընդհանրապէս միացած դերով է դուրս բերում ադրբեջանցիների քայքայիչ քաղաքականութեան դէմ, եւ մի տեղ էլ յայտարարում է, որ հայոց ազգը «կատարեց ինչ կարող էր, բայց ստիպուած եղաւ իր հողերի խոշոր մասը տալ ֆիզիքական ուժի գերակշռութիւն ունեցող թշնամուն»:

Յետո՞յ:

Յետոյ Ծերեթելին հանգիստ սրտով թողնում է մնացած, դեռեւս չնուաճուած հայերին իրենց ճակատագրին եւ անցնում Վրաստան, որը իր երկու նահանգներով՝ Թիֆլիս եւ Քութայիս, ազատ լինելով նուաճումից՝ «դեռ եւս պատրաստ է իր տրամադրութեան տակ գտնուած բոլոր ուժերով դիմադրելու օկուպացիային (գրաւում)» եւ «իրապէս կանգնած է բանակցութիւններ վարող թշնամու դէմ: Այստեղ նա պէտք է իր ժողովրդին ասի. «Դու ներկայիս միմակ ես մնացել քո սեփական ուժերով...բայց իմացիր, որ եթէ ուզում ես պաշտպանել քո շահերը եւ փրկել քեզ՝ դու պէտք է ստեղծես քո պետական կազմակերպութիւնը եւ քո պաշտօնական ներկայացուցչութիւնը»:

Դժուար չէ, ի հարկէ ցոյց տալ այս պաթոսի արհեստականութիւնը:

Եթէ վրացիք Թիֆլիս եւ Քութայիս նահանգների համար թիրքական ներխուժման վտանգն էին տեսնում եւ պատրաստուում էին զէնքի ուժով պաշտպանելու այդ նահանգները՝ ապա, ինչ վերաբերումնք էլ նրանք ունենային դէպի ադրբեջանցիները եւ ինչ եզրակացութիւն էլ հանելու լինէին այս վերաբերումնքից, չէին կարող ասել, թէ իրենք միմակ են մնացել թշնամու դէմ: Պատերազմի դաշտում, սկզբից եւեթ միայն հայերն ու վրացիներն էին կանգնած, իսկ ապրիլի 10ից սկսած, երբ վրացական ճակատի վրայ զինադար կըքուեց, միայն հայերն էին կռուում թշնամու դէմ եւ կռուում էին այն պատճառով, որ թիրքական հրամանատարութիւնը, խախտելով զինադարի պայմանները եւ արհամարհելով անդրկովկասեան կառավարութեան բողոքները, պատերազմական գործողութիւնները հայկական ճակատում չէր դադրեցնում: Այսպիսով, պատերազմի ծանրութիւնը ապրիլի 10-ից ի վեր միմակ կրելով հայերը բնականաբար պէտք է տկարանային. բայց եւ այնպէս նրանք դեռեւս այնքան ոյժ ունէին, որ կարող էին 2-3 օր առաջ Սարդարապատի եւ Ղարաքիլիսէի ճակատամարտերը մղել, եւ, այդ պատճառով էլ, թշնամին նրանց դէմ շարունակ նորանոր ուժեր էր կենտրոնացնում:

Արդ, եթէ իրօք Վրաստանը թիրքական նոր ներխուժման վտանգի առաջ էր գտնուում եւ պիտի զէնքով պաշտպանէր իրեն,

մի՞թէ Ծերեթելին եւ իր ընկերները միամտութիւն ունէին կարծելու, թէ վրաց ժողովուրդի ռազմական ոյժն ու կորովը կը բարձրանային, երբ նրանք, նոր արիւնհեղութիւնների նախօրեակին, իրականութիւնը խեղաթիւրելով, յայտնէին այդ ժողովրդին, թէ նա իսպառ միմակ է մնացել ահաւոր թշնամու դէմ, որովհետեւ ադրբեջանցիներից օգնութիւն չկար ու չկայ իսկ հիմա էլ... «Նրանից բաժանել են հայ ժողովրդին»:

Բնականաբար, մենք այսպիսի միամտութիւն կամ անմտութիւն չենք կարող վերագրել ոչ Ծերեթելիին եւ ոչ էլ իր ընկերներին:

Նոյն արհեստականութիւնն ենք նկատում Ծերեթելիի Պաթոսի մէջ եւ Անդրկովկասի հաշտարար պատուիրակութեան խնդրում.

«Մեր պատուիրակութեան միասնութիւնը ֆիկտիւ է, - բացազանջում է Սոցիալ Դեմոկրատիայի հռետորը,- նա ոչ միայն հնարաւորութիւն չունի, իր գործողութիւնների ժամանակ յեռուելու Անդրկովկասի ամբողջ ազգաբնակչութեան հեղինակաւոր հանրային կարծիքի վրայ... այլ եւ ձեւակերպուած կապեր չունի ազգաբնակչութեան այն մասին հետ, որ դեռ եւս զերծ է թշնամու գրաւումից, միահամուռ նեցուկ է հանդիսանում մեր պատուիրակութեանը, բայց Անդրկովկասի կարեւոր մասը կազմելով հանդերձ՝ որպէս զի կարողանայ (առանձին) ներկայանալ մեր պատուիրակութեան միջոցով»:

Այս խօսքերից ունկնդիրը այն եզրակացութիւնը կարող էր հանել, թէ Ծերեթելիի նպատակն էր անջատել անդրկովկասեան միութիւնից ադրբեջանցիներին, որոնք նեցուկ չէին հանդիսանում պատուիրակութեանը, եւ մնացած, դեռեւս գրաւման տակ չգտնուող ազգաբնակչութիւնից, այսինքն վրացիներից եւ հայերից մի «ինքնուրոյն պետական դէմք» ստեղծել, որի անունից կարողանայ խօսել պատուիրակութիւնը: Այս պէտք է եզրակացնէր ամէն ոք, որ Ծերեթելիի չափ գիտէր, թէ, հայ ժողովուրդը ինչպիսի անվերապահութեամբ կապել էր իր բախտը այդ պատուիրակութեան հետ եւ ինչքան լօյտեալ դիրք պահել նրա հանդէպ:

Բայց Ծերեթելիի եւ իր ընկերների նպատակն այս չէր Ուստի եւ նա շտապում է յայտարարել, թէ «գրաւումից զերծ» եւ «Անդրկովկասի նշանաւոր մասը կազմող» ազգաբնակչութիւն ասելով ինքը հասկանում է միայն Թիֆլիս եւ Քութայիս նահանգների բնակչութիւնը...

Ինչու այս սահմանափակումը: Չէ՞ որ միայն այդ նահանգները չէին զերծ թիրքական գրաւումից: Չէ՞ որ դրանց թվում կային մի շարք հայկական գաւառներ, որոնց մէջ թիրքերը ոտք չէին դրել եւ տրամադիր էլ չէին ոտք դնելու: Վերջապէս չէ՞ որ այս գաւառներում առնուազն այնքան հայ կար, որքան եւ վրացի կար Թիֆլիս եւ Քութայիս նահանգներում:

Այս տրամաբանական հարցերը բաց են մնում Ծերեթելիի յայտարարութեան մէջ, որովհետեւ վերջինս տրամաբանութեան հրահանգներով չէր կազմուած, այլ կողմնակի հաշիւներով եւ կշռադատումներով...

Ձուր կը լինէր սրանց մասին որեւէ խօսք, որեւէ հետք որոնել Ծերեթելիի ճառերի մէջ: Նա կարող է ամէն ինչի մասին խօսել, բայց երբեք այն իսկական պատճառների մասին, որոնցով պայմանաւորուած էր նրա կուսակցութեան յանկարծակի դիմադարձութիւնը Անդրկովկասեան Յանրապետութիւնից:

Այդ պատճառները դրսեւորելու համար պէտք է թողնենք Ծերեթելիի ճառերը եւ անցնինք Բաթում: Այստեղ մենք հանդիսատես կը լինինք մի անարժան խաղի, որ մեզ կը բացատրի ամէն ինչ եւ որը Ծերեթելին, թերեւս հակառակ իր կամքի, ճգնում էր քողարկել Ալեմի առաջ հակաադրբէջանեան մեղադրանքներով եւ պաթետիկ դարձուածքներով:

\* \* \*

Այդ խաղը ընդհանուր գծերով յայտնի դարձաւ Ալեմի վերջին նիստից երկու օր անց, երբ Բաթումից վերադարձան Անդրկովկասեան Յաշտարար պատուիրակութեան հայ անդամները: Նրա մանրամասնութիւնները եական գծերով տալիս է մեզ նոյն պատուիրակութեան վրացական հատուածի խորհրդական Ձուրաբ Աւալովը՝ «Վրաստանի անկախութիւնը միջազգային քաղաքականութեան մէջ 1918-1921 թւերին» գրքով:

Մեզ զբաղեցնող հարցը սերտօրէն կապուած է Անդրկովկասեան Յաշտարար պատուիրակութեան գործունէութեան հետ: Ուստի, պէտք է աշխատինք ծանօթանալ, գոնէ ընդհանուր գծերով, այդ գործունէութեանը:

Վրացիք շաղկապող օղակը հանդիսանալով անդրկովկասեան երեք գլխաւոր ժողովուրդների միջեւ եւ ղեկավար դեր ունենալով Յանրապետութեան բոլոր կարեւոր գործերում, բնականաբար պէտք է պահէին այդ դերը եւ Յաշտարար պատուիրակութեան մէջ: Սա հասկանալի մի դրութիւն էր, որի դէմ առարկութիւն չունէին ոչ հայերը եւ ոչ էլ ադրբէջանցիք:

Շնորհիւ այս հանգամանքի՝ պատուիրակութեան նախագահ էր նշանակուած, բաւական լայն իրաւունքներով, Յանրապետութեան Արտաքին Նախարար Ա. Զիսենկելին, եւ գլխաւոր խորհրդական վերոյիշեալ Ձուրաբ Աւալովը, որի ձեռքից էին անցնում պատուիրակութեան անունից տրուող բոլոր կարեւոր պաշտօնական գրութիւնները:

Մայիսի 11-ին տեղի է ունենում երկու պատուիրակութեանց առաջին պաշտօնական նիստը, որի ժամանակ թիւրքերը ներկայացնում են հաշտութեան խիստ ծանր պայմաններ: Սրանց մէջ ամենակարեւորը հողային նոր պահանջներն էին: Թիւրքերը պահանջում էին, բացի Բրեստ-Լիտովսկի դաշնագրով նախատեսուած հողերից՝ Ախալքալաք եւ Ախալցխա գաւառները, Ալեքսանդրապոլ քաղաքը եւ Ալեքսանդրապոլ ու Էջմիածին գաւառների մեծ մասը:

Ի՞նչ պէտք էր անել այս պահանջների դէմ:

Մերժել առանց այլեւայլութեան՝ չէր կարելի, որովհետեւ դա նշանակում էր վերասկսիլ պատերազմը, որը վարելու համար ոյժ չունէին ոչ հայերը եւ ոչ էլ վրացիները, իսկ ադրբէջանցիների մասին խօսք էլ չի կարող, ի հարկէ: Սակայն, միւս կողմից դժուար էր նոյնպէս առանց այլեւայլութեան հրաժարուել թիւրքերի պահանջած հողերից: Այս պայմաններում պատուիրակութեան հայ եւ վրացի անդամների մէջ մի յոյս էր մնում՝ Գերմանիայի միջամտութիւնը: Նրանք յոյս ունէին, թէ Գերմանիան, յանձնին Ջօր. Ֆօն Լոսովի, մասնակցելով Բաթումի բանակցութիւններին՝ կարող է զսպել Թիւրքիային եւ թոյլ չտալ, որ վերջինս, ոտնահարելով Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, որի տակ Գերմանիայի ստորագրութիւնը եւս կար, իր տիրապետութիւնը տարածի անդրկովկասեան քրիստոնեայ զանգուածների վրայ:

Յայերի եւ վրացիների այն ժամանակուայ անճար կացութեան մէջ նման յոյսերը հասկանալի էին, անշուշտ, մանաւանդ որ Ֆոն Լոսովը քրիստոնեայ մարդ էր եւ շատ էլ լաւ չէր տրամադրուած դէպի թիւրքերը: Բացի սրանից՝ հայերի եւ վրացիների համար խրախուսիչ հանգամանք էր, որ Ֆոն Լոսովը մայիսի 11-ի պաշտօնական նիստին մասնակցելով՝ հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի այն տարակարծութիւնները, որ կային հակամարտ կողմերի միջեւ Բրեստ Լիտովսկի դաշնագրի ըմբռնողութեան խնդրում, եւ պատրաստակամութիւն է յայտնում «Գերմանական շահերը պաշտպանելու» պատրուակի տակ՝ զբաղուելու թիւրքերի առաջարկած հաշտութեան պայմաններով:

Սակայն, եթէ վրացիների եւ հայերի տեսակէտները Գերմանիայի միջամտութեան մասին նոյնն էին, միանգամայն տարբեր էին այն հետեւանքները, որ ստացւում էին այդ միջամտութեան յուսով հաշտութեան բանակցութիւնները ձգձգելուց: Թիւրքերը իրենց պայմաններն առաջարկելուց երեք օր անց, առանց սպասելու դաշնագրի ստորագրութեանը, սկսեցին գրաւել այն հողերը, որ պահանջում էին:

Վրացիները սրանից շատ բան էին կորցնում: Ախալքալաքը նրանք այդ ժամանակ իրենցը չէին համարում, իսկ Ախալցխան էլ

ապրիլ 13-ից ի վեր փաստօրէն գտնուում էր տեղական մահմեդականների ձեռքը, որ վրացիների հետ մնալու մասին չէր էլ մտածում: Վրաստանի ուրիշ հողամասերի վրայ թիրքերը աչք չունէին:

Այլ էր հայերի վիճակը: Թիրքերը անընդհատ շարժուում էին դէպի Հայաստանի ներսերը եւ ոչ միայն իրագործում իրենց պահանջները, այլ եւ գրաւում այնպիսի հողեր, որոնք նրանց պահանջների մէջ չէին մտնում, ինչպէս օրինակ Շարուր, Նախիջեւան, Սուրմալու, Փամբակ, Լոռի եւ այլն...

Էլ չենք խօսում այն կոտորածների, տարագրութիւնների, ակերի եւ թալանի մասին, որ կատարուում էին Հայաստանի գրաւած շրջաններում եւ որոնցից բարեբախտաբար զերծ էր Վրաստանը: Այս ամէնը գուցէ տեղի չէին ունենայ, գուցէ թիրքերը կը բաւակաւանային իրենց պահանջած շրջաններով եւ այդ շրջանների կանոնաւոր պարպման համար ժամանակ կը տային, եթէ հաշտութիւնը ժամանակին կնքուէր: Բայց, ինչպէս ասացինք, գերմանացիների միջամտութեան յոյսը դրդում էր հայերին, ատամները իրար սեղմած դիմանալ՝ լաւ օրերի հասնելու համար...

Վերջապէս, մայիս 19-ին Ֆոն Լոսովը պաշտօնական գրութեամբ իր պատրաստակամութիւնը յայտնեց Անդրկովկասեան պատուիրակութեանը՝ վերջինիս եւ թիրքերի միջեւ հաշտարար միջնորդ դառնալու, որպէսզի բանակցութիւնները դուրս գան այն մեռած կէտից, որի վրայ մնում էին մայիս 11-ից ի վեր:

Անդրկովկասեան պատուիրակութիւնը այն օր եւեթ իր համածայնութիւնը յայտնեց Ֆոն Լոսովի առաջարկին: Այս առթիւ տեղի ունեցաւ պատուիրակութեան մէջ մի թեթեւ միջադէպ. ադրբեջանցիները բողոքում էին, որ իրենց թիկունքում գործեր են կատարուում, ինչպէս օրինակ Չխենկելիի եւ Ֆոն Լոսովի գաղտնի բանակցութիւնները, որոնց իրենք անտեղեակ են: Փոխադարձ բացատրութիւններից յետոյ միջադէպը վերացաւ եւ ադրբեջանցիք էլ համածայնեցին, որ Ֆոն Լոսովը միջամտի:

Հինգ օր սպասելուց յետոյ, մայիս 24-ին, Ֆոն Լոսովը պաշտօնական գրութեամբ յայտնեց, որ թիրքաց պատուիրակութեան նախագահ Խալիլ բէյը մերժել է գերմանացիների միջնորդութեան առաջարկը, հետեւաբար եւ իր փորձը վրիպած պէտք է համարել:

Ինչ խօսք, որ այս գրութիւնը ջուր մաղեց Գերմանիայի հետ կապուած յոյսերի վրայ:

Հայերի համար շատ ծանր էր զգալ, որ այդ յոյսերի պատճառով բանակցութիւններն այնքան ձգձգուել էին թերեւս պատճառ դառնալով այնպիսի թշուառութիւնների, որոնք կարող էին խնայուած լինել հայ ժողովրդի համար, եթէ հաշտութիւնը ժամանակին կնքուէր:

Սակայն, ավելի եւս մեծ անակնկալը յետոյ պիտի գար: Յաջորդ օրը, մայիսի 25-ին, թիւ 326 գրութեամբ Ջօր. Ֆոն Լոսովը յայտնում է Անդրկովկասեան պատուիրակութեան նախագահին.

«Պատիվ ունիմ հաղորդելու Ձեզ, որ ես հաստատ տեղեկութիւններ եմ ստացել, որոնց համաձայն, Անդրկովկասեան Հանրապետութիւնը եւ Անդրկովկասեան կառավարութիւնը քայքայման փուլի մէջ են գտնուում: Որովհետեւ այս պարագան նախատեսուած չէ եղել, եւ որովհետեւ ես հրահանգ չունիմ շարունակել բանակցութիւնները Անդրկովկասեան Դաշնակցութեան ջբանալուց յետոյ, եւ իմ լիազօրութիւնները վերաբերում են միայն Անդրկովկասեան Դաշնակցութեան Կառավարութեան հետ սկսուած բանակցութիւններին՝ ես պէտք է նոր հրահանգներ ստանամ եւ անհրաժեշտ է որ, այդ նպատակով, անձնական յարաբերութեան մէջ մտնեմ համապատասխան գերմանական իշխանութիւնների հետ: Ժամանակ չկորցնելու համար ես որոշել եմ մեկնել Բաթումից այս գիշեր, «Սիննա Յորն» շոգեմաւով: Օգտուում եմ առիթից եւ այլն: Ֆոն Լոսով»:

Այս գրութիւնը այն օրը չյայտնուեց Պատուիրակութեան հայ անդամներին, այլապէս նրանք, յաջորդ օրը, տեղեկանալով, որ Անդրկովկասեան Հանրապետութիւնը քայքայուած է, այնպէս շանթահար չէին լինի, ինչպէս եղան համաձայն Ջ. Աւալովի վկայութեան: Բայց կարելորդ սա չէ, այլ այն, թէ որտեղից գիտէր Ֆոն Լոսովը, որ Անդրկովկասեան Հանրապետութիւնը քայքայման փուլի մէջ էր գտնուում: Հայերը նրան այդ մասին որեւէ բան ասել չէին կարող, որովհետեւ նախ իրենք այդ մասին գաղափար չունէին եւ ապա՝ դա կը վնասէր Գերմանիայի միջնորդութեան գործին, որի հետ նրանք այնքան յոյսեր էին կապել: Ադրբեջանցիք եւս հազիւ թէ այդ մասին խօսած լինէին գերմանացիներին, քանի որ հաշտ աչքով չէին նայում նրանց միջամտութիւններին արեւելեան գործերում եւ յարաբերութիւն չունէին նրանց հետ: Վրացիք էլ, պիտի մտածի ընթերցողը, չէին կարող յայտնել Ֆոն Լոսովին, թէ Անդրկովկասեան Հանրապետութիւնը քայքայուում է, որովհետեւ դա կը նշանակէր կտրել այն ճիւղը, որի վրա կանգնած էին իրենք: Չէ՞ որ նրանք այդ Հանրապետութիւնն էին ներկայացնում եւ նրա պատասխանատու վարիչներն էին հանդիսանում: Սակայն վերջապէս ինչի՞ վրայ էր հիմնուում Ֆոն Լոսովի հաղորդագրութիւնը, երբ, միւս կողմից, հրապարակի վրայ ոչ մի արտաքին նշան էլ չկար Անդրկովկասեան Հանրապետութեան քայքայման:

Այս հարցերին սպառնիչ պատասխան է տալիս Ջ. Աւալովը «Վրաստանի Անկախութիւնը ...» գրքի մէջ, որին անցնում ենք այժմ:

«Անդրկովկասեան Կօալիսիոնի անխուսափելի քայքայման կանխատեսութեամբ, - ասում է Աւալովը, - գերմանական պատուիրակութեան անդամների հետ ունեցած սրտաբաց խօսակցութիւնների ժամանակ նախապատրաստուած էր Վրաստանի դիրքը: Միայն մի քանի հոգի էինք տեղեակ այս գաղտնիքին: Թիֆլիսից եկած Ն. Ժորդանիան, իբրեւ նախագահ վրաց Ազգային Խորհրդի եւ առաջնորդ սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան Անդրկովկասեան Սէյմում եւ Վրաստանում, այն անձնաւորութիւնն էր, որին պիտի վիճակուէր Թիֆլիսում հիմնական ակտերը գլուխ բերելու ծանր գործը (Վրաստանի անկախութեան հռչակումը եւ Անդրկովկասեան Սէյմի ինքնաւուծումը): Ըստ երեւոյթին նա ունէր լիովին հասկանալի եւ օրինական տատանումներ: Վրաստանի անկախութիւնը լաւ էր հիւսուում նրա նախկին ուսմունքի հետ ինչպէս եւ այն հանգամանքի հետ, որ նա պատկանում էր ռուս սոցիալ-դեմոկրատական կուսակցութեանը: Սակայն մի անգամ «համոզուելուց» յետոյ՝ նա վարպետօրէն ձեռք առաւ նոր ծրագրի իրագործումը»:

Մայիս 22-ին նա վերադարձաւ Թիֆլիս. «Գերմանօ-վրացական» աշխատանքը «թուրք-անդրկովկասեան» աշխատանքին զուգահեռ ընթանում էր կատարեալ թափով» (Զ. Աւալով. «Վրաստանի անկախութիւնը եւն. »):

Այս լրիւ թափով ընթացող «գերմանա-վրացական» աշխատանքի մասին գաղափար կազմելու համար, ծանօթանանք Զ. Աւալովի օրագրի մի քանի հատուածների հետ.

*Բաթում, 21 մայիս 1918*

«Առաւօտեան Ն. Ժորդանիայի եւ Նիկոլաձէի հետ քարտէսի վրայ դիտում էինք մեզ համար անհրաժեշտ սահմանները»:

«Լաւ, վաղաժամ չէ՞ր Թիֆլիսում Անդրկովկասեան սահմանադրութեան շարադրելուն ձեռնարկելը»:

«Ուշ գիշերին օգնում եմ Օդիշէլիձէ<sup>93</sup> եւ Ղորդանեան գօրավարներին, որոնք, երկու թիւրք սպայի հետ քննում են յատուկ զինուորական համաձայնութեան տեքստը: Խեղճ գօրավարներ»:

*22 Մայիս*

«Վճռական խորհրդակցութիւն Վրաստանի անկախութիւնը յայտարարելու մասին՝ նկատի ունենալով Անդրկովկասին սպառնացող փլուզումը: Յատակագիծն այն է, ինչի վրայ ես, իբրեւ «խորհրդական», վաղուց եմ պնդում այստեղ, եւ որի հետ Չիսենկելին եւ ուրիշները համաձայն են. Վրաստանի անկախութիւնը եւ հողային ամբողջութիւնը ապահովում է Գերմանիան»:

«Գրեցի Վրաստանի անկախութեան յայտարարման նախագծի մի օրինակ, ժամանակն է գործի անցնելու: Չիսենկելին, Նիկոլաձէն, Ժորդանիան եւ Սուրգուլաձէն հաւանեցին: Ժորդանիան այդ նախա-

գիծը հետը Թիֆլիս տարաւ: Սենք առանձնապէս սեղմեցինք նրա ձեռքը մնաս բարեւի ժամանակ: Նա պէտք է բաւական լուրջ թատերախաղ բեմադրի... Բայց նա արդէն. ինչպէս երեւում է, պատրաստել է վերջին գործողութիւնը, մնում է միայն թելը քաշել»:

*23 մայիս*

«Վճռեցինք, որ Գերմանիայի հետ կնքելիք ժամանակաւոր համաձայնութիւնը, որի վրայ հապճեպ աշխատում ենք, ... պէտք է գրուի, համաձայն Բրեստ-Լիտովսկի սոդայի, երկու լեզուով՝ գերմաներէն եւ վրացերէն»:

«Այսօր ի միջի այլոց պիտի կարդանք նախագիծն այն համաձայնութեան, ըստ որի վրացական ժամանակաւոր կառավարութիւնը պէտք է Գերմանիային տրամադրի օգտագործման համար Վրաստանի նաւահանգիստներում գտնուած նաւերը»:

*24 մայիսի*

«Լարուած աշխատանք: Կարդում եմ Վեզենդոկի հետ վերջնական նախագծերը: Շատերն սկսում են գլխի ընկնել, որ իրենց թիկունքում խուլ աշխատանք է կատարում, որ խաղապատկերը (դեկորասիոն) փոխում է: Ուշ երեկոյեան կազմում եմ հետեւեալ հեռագիրը, որը ուղարկում է լոյս 25-ի գիշերը Չիսենկելիի ստորագրութեամբ.

«Թիֆլիս, գօրավար Կվենիտաձէին,

«Հաղորդեցէք Վրաստանի Ազգային Խորհրդի նախագահութեանը հետեւեալը. Անկախութեան յայտարարման աւելի եւս յետաձգելը անուղղելի հետեւանքներ կ'ունենայ: Գերմանական միջնորդութեան փորձը չյաջողուեց: Մնում է մի բան. հակադրել թիւրքական ներխուժմանը անկախ Վրաստանը Գերմանիայի աջակցութեամբ ապահովուած: Գերմանիայի ներկայացուցիչը կը լինի գրաֆ Շուլէնբուրգը, որին պէտք է ծանաչել անյապաղ, հենց որ (անկախութեան) յայտարարումը տեղի կ'ունենայ: Ստորագրութեան համար արդէն պատրաստ են մի շարք առժամեայ համաձայնութիւններ Գերմանիայի հետ ... Սպասում եմ (ծեր) շտապ հաղորդագրութեանը ակտի մասին»:

«Լրիւ թափով աւարտում ենք անդրկովկասեան աշխատանքը»:

«Գերմանացիք երեկոյեան կը մեկնին Մինտեկատերի յետեւից Ֆոն Լոսովի ադիւդանտը: Յանձնեցինք նրան ինչ պատրաստ էր»:

«Սուլոց: Միննա Յօրն մեկնեց. Ո՛ւր, ոչ ոք չգիտէ: Բայց մենք գիտենք: Միայն թէ չուշանայ անկախութեան յայտարարումը»:

«Ուշ գիշերին Չիսենկելիի եւ Նիկոլաձէի հետ խօսում ենք մեր շանսերի մասին: Թիֆլիսից հեռագիր. անկախութիւնը կը յայտարարուի վաղը, մայիս 26-ին: Բոլոր հաստատութիւններից հարցն անցած է: Միայն թաթարներն (ադրբէջանցիք) են խնդրում սպասել դռներս»:

26 մայիս, կիրակի

«Գրում եմ Թիֆլիսի համար, մի քանի կարեւոր ակտերի նախագծեր. նաեւ զօր. Ֆոն Լոսովին մի նամակ, որը Փոթի կը տանի Արտուր Լայստը: Պատուիրակութիւնը սկսում է ցրուել: Բայց մեր անդրկուլիսեան աշխատանքը աննկատելի անցաւ: Ըստ երեւոյթին ոչ ոք զաղափար չունի, թէ ինչ պիտի կատարուի այսօր կամ վաղը»:

«Երեկոյեան ժամը 9-ին ինձ եւ Նիկոլաձէին կանչում են Պատուիրակութեան նախագահի մօտ: Ծրար Խալիլ բէյից: Վերջնագրային պահանջ՝ 72 ժամուայ ընթացքում լիովին ընդունելու մայիսի 11-ին մեր ստացած թւրքական պայմանները: Թիւրքերն այժմ գրաւել են Նախիջեւանի գաւառը (Երեւանի նահանգ) այսինքն՝ Կարս-Ալեքսանդրապոլ-Չուլֆա երկաթուղին ամբողջովին»:

«Վերջնագիր: Իսկ մեր համաձայնութիւնները Գերմանիայի հետ դեռ ստորագրուած չեն: Օհո...»:

«Բերում եմ հեռագիրներ Թիֆլիսից: Նոտաների (կայարանի) հրամանատարը գնդապետ Կ. շնորհաւորում է... Բայց ահա Ն. ժողովանիայի եւ Ն. Ռամիշվիլիի հեռագիրը: «Այսօր ցերեկուայ ժամը 5-ին Ազգային Խորհուրդը յայտարարեց Վրաստանը անկախ հանրապետութիւն: Կառավարութեան նախագահն է Ռամիշվիլի, արտաքին նախարարը՝ Չխենկելի: Անդրկովկասեան Սէյնը իրեն լուծուած յայտարարեց եւ Անդրկովկասի Միութիւնը վերջացաւ»:

«... Գալիս եմ Չխենկելիի կարիւնետը Խատիսեանը, Քաջագունին եւ զօր. Օդիշելիձէն: Այս անգամ «ինչ նորութիւն» հարցը անպատասխան չէ մնում...»<sup>94</sup>:

Ահա այս է Բաթումի խաղը իր հակիրճ բայց խիստ տիպիքական գծերով: Նրա էութիւնը կարելի է ամփոփել հետեւեալ ձեւով: Անդրկովկասեան պատուիրակութիւնը թիւրքերի դէմ իրեն անզօր զգալով՝ ցանկանում է ապահովել Յանրապետութեան համար Գերմանիայի աջակցութիւնը: Այդ պատուիրակութեան նախագահը՝ Չխենկելին յանձնարարութիւն է ստանում բանակցութիւնների մտնել Գերմանիայի ներկայացուցիչների հետ՝ վերոյիշեալ ցանկութիւնը իրագործելու համար: Բանակցութիւնների ընթացքին Չխենկելին, մտադրած լինելով Գերմանիայից բացառիկ աջակցութիւն ապահովել Վրաստանի համար, իր վրացի ընկերակիցների հետ համախորհուրդ, սկսում է մշակել գերմանացիներին յօգուտ Վրաստանի: Գերմանացիները, որոնք Բաթում էին եկել Անդրկովկասի գործերին հետեւելու եւ ոչ թէ Վրաստանի գործերին՝ հրապուրուելով վրացիների քաղաքական, տնտեսական եւ ռազմական խոստումներից<sup>95</sup>, կանգնում են «վրացական տեսակետի» վրայ: Յետեւանքը լինում է այն, որ Գերմանիան ձգում է միւս ժողովուրդներին

իրենց ճակատագրին եւ պաշտպան կանգնում միայն վրացիներին: Պատկերը լրացնելու համար պէտք է աւելացնել նաեւ, որ Անդրկովկասեան պատուիրակութեան նախագահը՝ Չխենկելին պարտաւորեցնում է գերմանական ներկայացուցիչն ամէն ջանք գործ դնելու, որպէս զի «Գերմանիան օգնութեան գայ Վրաստանին վերջինիս սահմանները ապահովելու գործում եւ հարեւան պետութիւնների հետ փոխյարաբերութիւններ ճշդելիս»:

Այս ամէնը, ինչպէս տեսանք Ձ. Աւալովի օրագրից, կատարում է ծայրահեղ գաղտնապահութեամբ, որպէսզի Անդրկովկասեան պատուիրակութեան հայ եւ ադրբէջանցի անդամները ոչինչ չիմանան: Եթէ վերջինները կողմնակի նկատումներով կասկածով էին վերաբերվում Չխենկելիի և գերմանացիների բանակցութիւններին, ապա հայերը, ընդհակառակը, համոզուած էին, որ իրենց նախագահը եւ հավատարմատարը Անդրկովկասի ընդհանուր շահերը փրկելու համար է մաշում Ձօր. Ֆոն Լոսովի դռները... Իրաւունք ունի Ձ. Աւալովը ցինիկօրէն պարծենալու: Խաղն այնքան ճարպիկօրէն էր տարուած, որ արեւելեան խորամանկութիւնն ու խարդախութիւնն էլ կը կարմրէին նրա հեղինակների առաջ...

Իր ամբողջ քաղաքական ցինիզմով հանդերձ Ձ. Աւալովն զգում է այս անպատուաբեր արարքի տգեղութիւնը: Դրա համար էլ նա «մեղմացուցիչ դէպք յանցանաց»-ներ է բերում նրա տպաւորութիւնը թուլացնելու համար:

Առաջին մեղմացուցիչն այն է, թէ Չխենկելին եւ ընկերները «վրացական տեսակէտ»ն են իւրացրել այն ժամանակ միայն, երբ, գերմանացիների հետ բանակցելիս համոզուել են, որ «անդրկովկասեան տեսակէտը» չի անցնում:

Թող ներուի մեզ ասելու, որ մենք սրան չենք հաւատում: Երբ մայիս 23-ին արդէն վիրա-գերմանական համաձայնագրեն են մշակուում՝ կը մշանակի Վրաստանի անկախութեան շուրջը խօսակցութիւններն սկսուել են հենց բանակցութիւնների առաջին օրից: Ֆոն Լոսովը ինքնագլուխ չէր կարող Վրաստանի անկախութիւնը պաշտպանելու խոստում տալ Գերմանիայի կողմից: Սրա համար անհրաժեշտ էր վերջինիս զինուորական հրամանատարութեան եւ արտաքին նախարարութեան համաձայնութիւնը, որը մի օրից միւսը ստացուել չէր կարող: Մենք ոչ մի տարակոյս չունենք, որ զօր. Ֆոն Լոսովի առաջարկը՝ միջնորդ հանդիսանալու Անդրկովկասի եւ Թիւրքիայի միջեւ (մայիս 19)՝ պարզ ձեւականութիւն է, վրացիների թելադրութեամբ կատարուած, վերջիններիս «անդրկովկասեան աշխատանքը» քօղարկելու համար:

Երկրորդ մեղմացուցիչն էլ այն է, թէ Չխենկելին եւ իւրայինները Վրաստանի անկախութիւնը հետեւաբար եւ Անդրկովկասեան Յան-

րապետութեան քայքայումը հետապնդելով՝ վատ բան չէին անում: Այդ հանրապետութեան կառուցումը, ասում է Պ. Աւալովը, առաստաղից էր սկսուած եւ ոչ թէ հիմքից: Հիմքից կառուցելու համար նախ պէտք է, որ անդրկովկասեան ժողովուրդներից իւրաքանչիւրը առանձին կազմակերպուէր իբրեւ պետական միաւոր եւ ապա այդ միաւորները իրար գային եւ կազմէին Անդրկովկասեան Ղաշնակցային ամբողջութիւնը: Բացի դրանից, ասում է նա, Անդրկովկասեան Հանրապետութիւնը իբրեւ մի «հսկայ մոլլիկս» չէր կարողանում ռազմախաղ (մաներ) կատարել, մինչդեռ նրա բաղկացուցիչ մասերը, անջատուելով իրարից եւ ինքնորոյն կազմակերպուելով, ռազմախաղի լայն հնարաւորութիւններ կը ստանային:

Չենք վիճում, զուցէ եւ շատ իմաստուն, շատ շահեկան մտքեր են սրանք: Ջարմանում ենք միայն, թէ ինչպէս է, որ այս մտքերը Չխենկելիի եւ իր ընկերների գլուխը չեկան, երբ նրանք Անդրկովկասեան Հանրապետութիւնն էին կառուցում կամ նրա անունից Կարսը պարպելու իրաման արձակում... Բացի սրանից, եթէ ամէնքի համար այսքան լաւ, այսքան նպատակայարմար մի բան էր այդ «հսկայ մոլլիկսը» անդամահատելը, եւ նրա բաղկացուցիչ մասերին շարժման ազատութիւն տալը՝ ինչո՞ւ այս գործողութիւնը կատարուում էր գաղտնի, «անդրկովկասեան» փսփսուքներով եւ ոչ թէ Անդրկովկասեան պատուիրակութեան բոլոր անդամների հետ համախորհուրդ: Մի՞թէ նրանց մէջ այսքան տարրական ճշմարտութիւններ ըմբռնելու չափ խելք չէր ենթադրուում...

Չենք ուզում կանգ առնել Ձ. Աւալովի միւս մեղմացուցիչների վրայ: Նրանք բոլորն էլ իրար նման են եւ բոլորն էլ հաւասարապէս անզօր՝ ջնջելու այն սեւ բիծը, որ Բաթումի խաղի հեղինակները դրին Վրաստանի անկախութեան նուիրական գործի վրայ: Վրաց ժողովուրդը իր ինքնորոշման արդար իրաւունքին տիրանալու համար բնաւ կարիք չունէր հաւատարիմ գինակցին պատերազմի դաշտում լքողի, հաւատարիմ դաշնակցին «անդրկովկասեան աշխատանքներով» դաւաճանողի դերի մէջ դրուելու: Իր ազնիվ նպատակին հասնելու համար ազնիւ միջոցները չէին պակասում նրան:

«Բարոյականութեան եւ արդարութեան օրէնքները, որոնք կարգաւորում են անհատների փոխյարաբերութիւնները հասարակութեան մէջ՝ պէտք է կարգաւորեն ազգերի փոխյարաբերութիւնները մարդկութեան մէջ», - ասում է Ն. Ժորճանիան՝ Կ. Մարքսի հետեւողականութեամբ:

Ամբողջովին համաձայն լինելով այս սկզբունքին՝ մենք ամենայն իրաւամբ կարող ենք ասել, որ եթէ այն, ինչ որ կատարեցին Բաթումի խաղի հեղինակները հայ ժողովրդի հանդէպ, կոչուում է արդարութիւն եւ բարոյականութիւն, ապա մենք յանուն մարդկային

արժանապատութեան եւ յանուն միջազգային եղբայրութեան կը ցանկայինք, որ այդ «արդարութիւնն» ու «բարոյականութիւնը» բնաւ գոյութիւն չունենային ոչ անհատների եւ ոչ էլ ազգերի փոխյարաբերութեանց մէջ...

Անդրկովկասեան Սէյմի ողբերգական մահուանից հազիւ երկու ժամ անց՝ նոյն Սէյմի դահլիճում սկսուեց Վրաստանի անկախութեան արարողութիւնը: Այս նպատակով գումարուած վրաց Ազգային Խորհրդի առաջ, հիմնաւորելով նոր պետութեան ձգտումները միջազգային քաղաքականութեան մէջ՝ Ն. Ժորճանիան, ի միջի այլոց, ասում է.

«Վրաստանի նոր պետութիւնը, որը հիմնուում է այսօր, չի գնայ որեւէ ազգի, ժողովրդի եւ պետութեան շահերին ընդդէմ...»

Այդ պատճառով էլ, մեր երկրում, կամ նրա սահմաններից դուրս գտնուող ոչ մի ժողովուրդ չպէտք է յուզումի, հոգեկան տանջանքի եւ վիրավորանքի զգացում ունենայ...

Սենք ցանկանում ենք բարեկամական յարաբերութիւններ պահպանել մեր երկրում եւ նրանից դուրս գտնուող ժողովուրդների հետ:

Սենք առանձին ուշադրութեամբ պէտք է վերաբերուինք խորին ողբերգութեանը այն ժողովրդի, որի մի մասը ապրում է մեր հողի վրայ, իսկ միւս մասը նրա սահմաններից դուրս:

Ղա հայ ժողովուրդն է:

Ժամանակակից վրացիները կը յիշեն հին աւանդութիւնը, եւ հայ ժողովուրդը կը գտնի մեզ մօտ նոյն պաշտպանութիւնը, որը նա գտնում էր վրաց թագաւորների մօտ:

Ի՞նչն էր դրդում ժորճանիային այս արտակարգ համակրական ցոյցն անելու հայերի հանդէպ: Արդեօք արթնացած խղճի խափթը, թէ՞ լքուած դաշնակցի բնական ցասումը մեղմելու միտումը, մենք չգիտենք: Գիտենք, սակայն, որ վրաց կառավարութեան յետագայ քաղաքականութիւնը վերոյիշեալ յայտարարութեանը տրամագծօրէն հակառակ ուղղութեամբ գնաց գոնէ հայերի նկատմամբ:

Ընթերցողը յիշում է, անշուշտ, թէ ինչ ընթացք առաւ այդ քաղաքականութիւնը հայ-վրացական հողային վէճերի ժամանակ: Հազիվ անկախ պետական կեանքի համն առած՝ վրաց կառավարութիւնը սկսեց հետամտիլ զաւթելու հայերից ոչ միայն Ախալքալաքն ու Հայկական Բորչալուն, այլ եւ Փամբակն ու Ղազախը մինչեւ Ալեքսանդրապօլ եւ մինչեւ Սեւանայ լիճը: Ուրիշ խօսքով՝ ինչպէս իր տեղումն ասել ենք, վրաց կառավարութիւնը ցանկանում էր օգտուել մեր ժողովրդի ուժասպառ վիճակից եւ իր տիրապետութեան տակ առնել այն հայկական հողերը, որոնք պէտք է Վրաստանին



բաժին ընկնեին, եթե մեր երկիրը Թիւրքիայի, Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ բաժանելու հին ծրագիրն իրագործուէր:

Սա վրաց կառավարութեան «առանձին ուշադիր վերաբերմունքի» առաջին քայլն էր հանդէպ հայկական ողբերգութեան, որին պիտի յաջորդէին ուրիշները՝ մէկը միւսից քստմնելի՝ մինչեւ որ հայ-վրացական յարաբերութիւններն իսպառ թունաւորուէին... Այդ քայլերից մենք վեր կը հանենք մի քանիսը, որոնք սերտ առնչութեան մէջ են գտնուում միջազգային կամ հարեւանական իրաւախոհութեան խնդրի հետ եւ միաժամանակ խիստ բնորոշիչ են այն վերաբերմունքի համար, որ իրականի մէջ վրաց կառավարութիւնն ունէր դէպի հայ ժողովուրդն ու նրա պետութիւնը՝ հակառակ վերոյիշեալ ցուցական համակրանքին:

## ՎՐԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ԶԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Վրաստանի եւ Ադրբեջանի հետեւողութեամբ Յայաստանը անկախ պետութիւն յայտարարելուց յետոյ՝ Յայոց Ազգային Խորհուրդը, որ մինչեւ այդ գտնուում էր Թիֆլիսում, բնականաբար պէտք է մեկնէր Երեւան, որ նոր պետութեան մայրաքաղաքն էր համարուում: Սակայն մի շարք քաղաքական եւ տեխնիկական նկատումներով նա հարկադրուած էր յետաձգել իր մեկնումը:

Քաղաքական պատճառներից ամենակարեւորն այն էր, որ Թիւրքիայի հետ դեռ հաշտութիւն չէր կնքուած, եւ նրա մտադրութիւնները Յայաստանի գոյութեան կամ չգոյութեան խնդրում պարզ չէին:

Մայիսի 28-ին Յայոց Ազգային Խորհուրդը որոշեց իր պատուիրակներին Բաթում ղրկել՝ թիւրքերի առաջարկած հաշտութեան դաշնագիրն ստորագրելու համար: Վերջինս ստորագրուեց յունիս 4-ին, բայց դեռ պէտք է վաւերացուէր երկուստեք՝ իրաւական ոյժ առնելու համար: Մինչ այդ՝ ժամանակաւոր զինադադարով որոշուեցին այն ռազմագծերը, որ պէտք է բռնէին հայկական եւ թիւրքական զօրքերը՝ առանց իրար դէմ յարձակուելու: Սակայն թիւրքերը շարունակ խախտում էին զինադադարի պայմանները եւ փաստօրէն պատերազմական վիճակի մէջ պահում Յայաստանը: Յուլիսի 7-9-ին նրանք առանց որեւէ առիթի եւ որեւէ նախազգուշացման, մինչեւ անգամ կանոնաւոր պատերազմական գործողութիւններ սկսեցին Սարդարապատի եւ Էջմիածնի հայկական զօրամասերի դէմ եւ զրաւեցին մի շարք գիւղեր (Խաթունարխ<sup>96</sup>, Չոբանքեարա<sup>97</sup>, Նէչիլու<sup>98</sup>, Թազաքենդ<sup>99</sup>, Աղամզալու<sup>100</sup> եւ այլն.):

Այս պայմաններում գնալ Երեւան՝ նշանակում էր, Յայոց Ազգային Խորհրդի համար, ոչ միայն կտրուել արտաքին աշխարհից, այլ եւ վտանգել գոյութիւնը այս հաստատութեան, որ միակ շաղկապող օղակն էր հանդիսանում ի սփիւռս աշխարհի ցրուած հայութեան եւ միակ լիազորիչ մարմինը՝ Յայաստանի իշխանութիւնը կազմակերպելու համար:

Բացի սրանից՝ դիւրին չէր մի քանի օրում հաշուեյարդարի ենթարկել այն գործերը, որ Ազգային Խորհուրդն ունէր Վրաստանում: Պէտք էր կանոնաւորել Յայաստանի եւ Վրաստանի փոխյարաբերութիւնները, պէտք էր ճշդել հայկական կորպուսի ստացուածքի փոխադրութեան պայմանները, պէտք էր նորակազմ պետութեան դրամական կարիքները հոգալ, պէտք էր ծամբու դնել այն ռուս զինուորականներին, որոնք կռուել էին հայկական ճակատում եւ այժմ խռնուած Յայոց Ազգային Խորհուրդի առաջ, ապրուստ եւ ճանա-

պարհի ծախս էին պահանջում նրանից՝ իրենց տները վերադառնալու համար: Այնուհետև պետք էր իրար բերել Հայաստանից դուրս գտնուող մի շարք կարելու քաղաքական գործիչների եւ մասնագետների, նրանց օգնութեամբ Հայաստանի իշխանութիւնը կազմակերպելու համար եւ այլն:

Վերջապէս, անկախ այս ամենից էլ՝ Հայոց Ազգային Խորհուրդը եւ նրա կազմած կառավարութիւնը լուրջ դժուարութեան մէջ էին Հայաստան գնալու համար, որովհետեւ ճանապարհները փակուած էին նրանց առաջ: Թիւրքերը դեռ եւս հաշտութեան դաշնագիրը վաւերացրած չլինելով եւ, ինչպէս տեսանք, փաստօրէն պատերազմը շարունակելով հայկական ճակատում՝ թոյլ չէին տալիս, որ Հայաստանի իշխանութիւնը իրենց ռազմական գծերից անցնի: Եթէ թոյլ էլ տային՝ վստահութիւն չէին ներշնչում սրանց ապահովութեան համար: Մնում էր Ղազար-Դիլիջան ճանապարհը, որ նոյնպէս ապահով չէր համարուում՝ նկատի ունենալով Ադրբեյջանի թաքար ազգաբնակչութեան թշնամական վերաբերմունքը դէպի հայերը:

Հայաստանի նորակազմ իշխանութեան այս ծանր վիճակն ըմբռնելու համար՝ բնաւ կարիք չկար հայ ժողովրդին դարերով հարեւան լինելու: Սրա համար տարրական մարդկային վերաբերմունքն էլ բաւական էր: Բայց վրաց կառավարութիւնն ու ղեկավար շրջանները այս մարդկային վերաբերմունքն իսկ չունեցած հայ ժողովրդի իշխանութեան հանդէպ... Հազիւ մեր հաշտարար պատուիրակները վերադարձել էին Բաթումից, երբ վրացական շրջանակներից սկսեցին խուլ դժգոհութիւններ լսուիլ, թէ ի՞նչ գործ ունի Հայոց Ազգային Խորհուրդը Թիֆլիսում եւ ինչո՞ւ նա չէ գնում իր երկիրը: Կարծէք նրանք բոլորովին անտեղեակ էին, թէ ինչ ողբերգական վիճակի մէջ էր գտնուում այդ Խորհուրդը ամէն տեսակէտից:

Այս դժգոհութիւնների հոգեբանական աստառը պարզ է: Վրաց ժողովրդի ղեկավարները Բաթումում խիստ նենգ մի խաղ էին խաղացել դաշնակից հայերի գլխին եւ այժմ կասկածում էին, թէ Հայոց Ազգային Խորհուրդը նրանց վստահութեանը վատութեամբ պատասխանելու ծրագիրներ է որոճում: «Հայոց Ազգային Խորհուրդը վատ աչքով չէր նայում անկախ Վրաստանին եւ նրա կառավարութեանը: Մենք շատ փաստեր ունինք այդ ապացուցելու համար», - ասում էր վրաց սոցիալ-դեմոկրատիայի պաշտօնական օրգան «Երթորք»-ն (1918թ., համար 156): Փաստերն էլ որո՞նք էին: Այն, որ Հայոց Ազգային Խորհուրդը յանդգնել էր վրդովուելու Բաթումի դաւադրութեան դէմ, այն, որ նա մինչև Հայաստան գնալը և իշխանութիւն ստանձնելը, վաղաժամ էր համարել յայտարարելու թէ ճանաչում է Վրաստանի անկախութիւնը, եւ վերջապէս այն, որ մի քանի հայեր, դրանց հետ մասն Գերմանիայի ներկայացուցիչներից ո-

մանք, տարակոյս էին յայտնել, թէ վրացիք իրաւունք ունին, առանց այլեւայլութեան, տիրանալու անդրկովկասեան բոլոր ժողովրդների եւ մասնաւորապէս հայ ժողովրդի ջանքերով ստեղծուած Թիֆլիսին («Սաքարթուելօ», 1918թ., յուլիսի 19):

Վրաց ղեկավար շրջանների եւ մամուլի այս կասկածամտութիւնը մի քանի շաբաթում այնպիսի հեղձուցիչ մթնոլորտ ստեղծեց Հայոց Ազգային Խորհրդի շուրջը, որ վերջինս որոշեց, ինչ գնով ուզում է լինի, մեկնել Թիֆլիսից, մանաւանդ որ թիւրքերը տիրանալով Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղուն՝ յուլիսի 10-ից ի վեր դադարեցրել էին իրենց յարձակումները հայերի դէմ:

Այս առթիւ վրաց կառավարութիւնը հանդէս բերաւ իր իսկական վերաբերմունքը դէպի հարեւան պետութիւնն ու նրա իշխանութիւնը:

Մեկնումը տեղի պիտի ունենար յուլիս 17-ին, եւ այդ մասին պաշտօնական կարգով վաղօրօք յայտնուած էր վրաց կառավարութեանը: Քաղաքավարութեան կանոնները յարգած լինելու համար, Հայոց Ազգային Խորհրդի եւ կառավարութեան ներկայացուցիչները նախորդ օրը գնացել էին հրաժեշտ առնելու ժողովանիայից եւ իր պաշտօնակիցներից:

Սակայն, չնայած այս ամենին, երբ ես որոշուած ժամին կայարան հասայ մեկնողներին ողջերթ մաղթելու համար՝ հանդիսատես եղայ հետեւեալ տեսարանին: Հայոց Ազգային Խորհրդի եւ կառավարութեան ներկայացուցիչները նստած էին կայարանի մայթի հասարակ նստարանների վրայ, եւ սպասում էին, թէ երբ պետք է գնացք տան: Կայարանի «արքայական սենեակները», որոնք լայնօրէն բացոււմ էին ամէն մի թիւրք կամ գերմանացի «հիւրի» համար՝ փակուած էին Հայաստանի գերագոյն իշխանութեան առաջ: Սօս երկու ժամ մեզ այդ վիճակում սպասել տալուց յետոյ՝ մայթի առաջ կանգնեց այն գնացքը, որ պետք է Հայաստանի իշխանավորներին Աղստաֆա հասցնէր: Երկու թէ երեք խարխլած, փոշու եւ կեղտի մէջ կորած վագոններ էր ներկայացնում այդ գնացքը: Իմ դիտողութեանը, թէ մի՞թէ Վրաստանի երկաթուղու վարչութիւնը աւելի յարմար վագոններ չէր կարող տրամադրել հարեւան երկրի կառավարութեան համար, կայարանապետը կարկանդակով պատասխանեց, թէ բոլոր լաւ վագոնները ռուսները եւ թիւրքերը խլել են վրացիներից... Ըստ երեւոյթին նա «տեղեկութիւն չունէր» այն փառահեղ սալոն-վագոնների մասին, որոնցով երթեւեկում էին թիւրք եւ գերմանացի պաշտօնեաները Բաթումից Թիֆլիս եւ Թիֆլիսից Ջուլֆա: Քաջագունին արգելք հանդիսացաւ, որ ես հեռախօսով ամէնքիս վրդովմունքը յայտնէի վրաց կառավարութեանը այս անարգական վերաբերմունքի համար, եւ մենք բաւականացանք խնդրելով

կայարանապետին, որ սրբել տայ վագոնները: Վերջին պահին մի նոր դժուարություն ծագեց մեկնողների առաջ: Կայարանի ոստիկանությունը չէր թոյլատրում գնացքի վրայ բարձել Հայոց Ազգային Խորհրդի ինքնաշարժ կառքերը, որոնցով մեկնողները պետք է շարունակեին իրենց ճանապարհը Աղստաֆայից Երեւան: “Das ist gemein, das ist Schweinerei”<sup>101</sup> - բացազանչում էր իրեն կորցրած, գերման սպայ Այզենմանը, որ զօր. Ֆոն Կրեյսի կարգադրութեամբ պիտի ուղեկցեր կառավարութեանը Երեւան: Անգամ թիւրք սպան, որ նոյն հանձնարարությունն ուներ Վէիպ փաշայից, խօսք չէր գտնում իր վրդովմունքը արտայայտելու համար... Վերջապէս, հեռախօսային եւ անձնական բանակցութիւններից յետոյ, կարելի եղաւ վերացնել այս արգելքը եւ գնացքը մեկնեց Թիֆլիսից: Սահմանագլխին մի նոր անակնկալ էր սպասում մեկնողներին: Վրացական մաքսատան պաշտօնեաները չէին ուզում առանց խուզարկութեան բաց թողնել գնացքը: Եւ անկասկած Հայաստանի կառավարութիւնը վրաց պաշտօնեաների կողմից խուզարկուելու անարգանքին եւս կ'ենթարկուէր, եթէ նրան ուղեկցող գերման սպաները դրա առջքը չառնէին...

Վրաց կառավարութեան այս վերաբերմունքը դէպի հարեւան երկրի կառավարութիւնը, ժամանակին լայնօրէն արծարծուեց Թիֆլիսի թերթերում: Զգիտենք, վրաց կառավարութիւնը ինքն իր առաջ կարմրեց իր վարմունքից թէ՛ չէ, բայց գիտենք, որ նա հարկ չհամարեց որեւէ ձեւով բացատրելու այս այլանդակ դէպքը, կամ ցաւ յայտնելու նրա առթիւ: Հայաստանի կառավարութիւնն այդ ժամանակ շատ էր թոյլ, որպէս զի նրան հասցրած վիրաւորանքը որեւէ մտահոգութիւն պատճառէր վրաց կառավարութեանը...

## ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՍ

Հայոց Ազգային Խորհուրդը եւ նորակազմ կառավարութիւնը այնքան անվայել ձեւով Երեւան ճամբելուց յետոյ Վրաստանում սկսուեց մի կատաղի, ուղղակի անմարդկային հալածանք հայ գաղթականների դէմ:

Հասկանալու համար այս հալածանքի հրէշաւորութիւնը՝ պետք է աչքի առաջ ունենալ, որ գաղթականները ընդհանուր պատերազմի զոհերն էին հանդիսանում եւ հաւաքուել էին Վրաստան այն պատճառով միայն, որ ուրիշ ոչ մի տեղ չունէին իրենց տանջուած գլուխը պատսպարելու համար: Այդ ժամանակ Տաճկահայաստանն ամբողջովին եւ Ռուսահայաստանը մօտ 2/3 մասով փակուած էր հայ գաղթականների առաջ թիւրքերի կողմից: Աղրբէջան գնալ նրաք չէին կարող, նկատի ունենալով նրա բացայայտ թշնամական վերաբերմունքը, իսկ Պարսկաստան, Ռուսաստան կամ արտասահման գնալու համար էլ ոչ ազատ ճանապարհ կար եւ ոչ հնարաւորութիւն: Մնում էին միայն թիւրքական ներխուժումից ազատ մնացած եւ 12 000քառ. կիլոմետր տարածութիւն ներկայացնող Հայաստանը, որ, չնայած իր անապահովութեանը եւ կենսական մթերքների պակասին, բերնէ բերան լցուած էր գաղթականներով, եւ մէկ էլ Վրաստանը, որ դեռ կարող էր որոշ ժամանակով մի քանի հարիւր հազար գաղթական պատսպարել: Այս էլ պետք է ասել, որ հայ գաղթականների ճնշիչ մեծամասնութիւնը Վրաստան էր ժողովուել այն ժամանակ, երբ նա դեռ եւս անկախ պետութիւն չէր, այլ Ռուսաստանի կամ Անդրկովկասեան Հանրապետութեան մի մասն էր կազմում:

Սկզբում այս գաղթականները ապրում էին Վրաստանի հայկական շրջաններում, մասամբ իրենց խնայողութիւններով, մասամբ զանազան աշխատանքների ձեռնարկելով եւ մասամբ էլ նպաստ ստանալով պետական, համայնական եւ բարեգործական հաստատութիւններից: Սակայն, Վրաստանի անկախութիւնը յայտարարուելուց յետոյ, վրաց ղեկավարները երկիւղ կրելով, թէ այս վիճակում գաղթականութիւնը կարող է հաստատուել Վրաստանի հողի վրայ եւ այնտեղի հայկական տարրը զօրացնել՝ որոշեցին հանել գաղթականներին իրենց բնակավայրերից եւ կենտրոնացնել որոշ վայրերում, որպէս զի յետագային դիւրին լինէր նրանց տուն ճամբելը:

Որեւէ մտադրութիւն չունենալով Վրաստանում տեւականօրէն հաստատուելու՝ հայ գաղթականները առարկութիւն չէին ունենայ այս որոշման դէմ, եթէ նրանց բնակութեան համար յատկացուին այնպիսի վայրեր, ուր կարելի լինէր օթեւան եւ ապրուստ ճարել: Բայց վրաց կառավարութեան նշանակած «կենտրոնացման բնա-

կատեղիները» այս տարրական պայմանները չէին լրացնում: Այսպես օրինակ՝ կառավարութիւնը, փակելով Թիֆլիսի բոլոր ապաստարանները, բացի երկուսից, հրահանգեց, որ մօտ 40 000 գաղթականութիւն կենտրոնանայ այսպէս կոչուած «300-րդ վերստի վրայ գտնուող» բանակատեղին, ուր ոչ ջուր կար այդքան բազմութեան համար, ոչ օթեւան եւ ոչ էլ ապրուստի միջոց: Աւելի եւս ծանր պայմաններ էին ներկայացնում Ծալկայի, Բակուրեանիի եւ ուրիշ վայրերի «բանակատեղիները»:

Հիւժուած, ուժասպառ գաղթականներին այսպիսի վայրերում կենտրոնացնելը շուտով սպիտակ ջարդի բնոյթը առաւ: Սովը, համաճարակը եւ ցուրտը աւերներ էին գործում նրանց մէջ: Ահա մանուկի հաղորդագրութիւններից մի քանիսը այդ մասին.

«Ցարսկիէ Կոլոդցիից գրում են, որ (գաղթականների մէջ) սուկալի սով է տիրում, դիակներն ընկած են ճանապարհին» («Բորբա», 1918թ., յուլիսի 19):

«Ծալկայի գաղթականների մէջ տարածուած են զանազան հիւանդութիւններ: Մահացութեան տոկոսը հսկայական է: Հացի պաշարն սպառուել է եւ միջոց էլ չկայ հաց գնելու: Գաղթականները դատապարտուած են սովամահութեան: Այսքանը բաւական չէ՝ գաղթականներին հանգիստ չեն տալիս Դարա, Նարդիվան եւ Այազմա գիւղերի մահմեդական հրոսակները իրենց յարձակումներով եւ թալանով: Սրանք, իջնելով լեռներից, խլում են գաղթականներից ամէն ինչ: Առաջ գաղթականները ստանում էին մի քիչ փող եւ լուբիա, իսկ հիմա ոչինչ չեն ստանում» («Հորիզոն», 1918թ., օգոստոսի 21):

«Թիալէթի կոմիսար Բարկուլաշվիլին հեռագրում է, որ գաղթականները պարենաւորման եւ բժշկա-ամողջապահական տեսակետից թշուառութեան են մատնուած: Անհրաժեշտ է դիւանագիտական միջամտութիւն գաղթականներին հայրենիք վերադարձնելու համար: Սակայն առանց բաւարար երաշխիքի գաղթականները չեն համաձայնի Թիւրքիա վերադառնալ, որովհետեւ դառը փորձից խրատուած, նրանք չեն հաւատում թիւրքերի խօսքերին» («Բորբա», 1918թ., օգոստոսի 28):

Պրոֆեսոր Շիրոկորոդովը, վերադառնալով Բակուրեանից, սուկալի տեղեկութիւններ է հաղորդում գաղթականների վիճակի մասին: Նրա վկայութեամբ՝ երեսուն հազար գաղթականներ ձգուած են իրենց ճակատագրին, անտառներում, ուր մշտական անձրեւները ցեխի կոյտ են ստեղծել: Եվ այդ ցեխի մէջ, թշուառ գաղթականները իրենց անասունների հետ ապրում են բաց երկնքի տակ, մատնուած սովի եւ հիւանդութիւնների: Օրեր են լինում, երբ մեռնողների թիւը 100-ի է հասնում: Արդէն սկսուել են ցրտերը, եւ եթէ այս

դրութիւնը մի քանի շաբաթ էլ շարունակուի՝ բոլոր գաղթականները կը կոտորուեն: («Հորիզոն», 1918թ., օգոստոսի 30):

«Մանուկի բիրօի տեղեկութիւնների համաձայն, Վրաստանում գտնուող երկու հարիւր հազար հայ գաղթականներից օրական հազար մարդ է մեռնում սովից եւ հիւանդութիւններից: Մեռնողներն առաւելապէս երեխաներ են» («Բորբա», 1918թ., օգոստոսի 8):

Մինչդեռ հայ գաղթականների զարհուրելի վիճակը սեւ ու սուգով էր համակում ամէն մի մտածող եւ զգացող հայի սիրտը՝ վրաց մանուկը, կարելի է ասել առանց բացառութեան, կատարեալ խաչակրական արշաւանք էր սկսել այս թշուառ բազմութիւնների դէմ: Նրանց մեղադրում էին բոլոր եօթը յանցանքների մէջ: Սոցիալ-Դեմոկրատական «Էրթորբա»ն (1918թ., յուլիսի 25) եւ «Բորբա»ն (1918թ., յուլիսի 30) հաւար էին կանչում, թէ ունեւոր գաղթականները չարաշահութեամբ (սպեկիւլասիոն) են պարապում: Կառավարութեան պաշտօնական օրգանը՝ «Սաքարթուելօս ռեսպուբլիկա»-ն, ուշադրութիւն հրաւիրելով ազգայնական տարրերի վրայ, որոնք ատելութիւն եւ թշնամութիւն էին սերմանում հարեւան ժողովուրդների մէջ, գրում էր. «Հայերը չպէտք է իրենց թոյլ տան հարեւաններին հալածելու եւ դրանով իսկ վնասելու այն հանրապետութեան շահերին, որ նրանց ապաստան է տուել»: «Էրթորբան» (1918թ., յուլիսի 19), «Սախալօ սաքմէ» (1918թ., սեպտեմբերի 6) եւ միւս թերթերը գրգռում էին վրացիներին գաղթականների դէմ՝ ասելով, թէ վերջիններս մասնակից են Դուշեթի, Լեխումի եւ Բելի Կլիւչի ապաստանութիւններին եւ մնացած հակակառավարական ցոյցերին: Իսկ ամենքից հրէշաւորն այն է, որ բոլոր թերթերը միաբերան յայտարարում էին, թէ գաղթականները դիտաւորեալ կերպով խոյս են տալիս «կենտրոնացման բանակատեղիներից», որպէսզի փչացնեն վրաց ժողովուրդը համաճարակ հիւանդութիւններով: Սրա մէջ Դաշնակցութեան մասը տեսնելով կամ տեսնել ձեւացնելով՝ «Էրթորբան» (1918թ., յուլիսի 19) պաթետիկ եղանակով բացագանչում էր. «Թող (Դաշնակցականները) բաւական համարեն այն գծտութիւնն ու ատելութիւնը, որ նրանք արդէն ստեղծել են հայերի եւ թաթարների միջեւ: Ինչո՞ւ են թագցնում հիւանդ գաղթականներին: Մի՞թէ հայ ժողովուրդը որեւէ բան կը շահի, եթէ հայ գաղթականների միջոցով համաճարակը տարածուի վրացական գիւղերի եւ քաղաքների մէջ: Մարդասիրական կամ դեմոկրատական ո՞ր սիկզբունքներն են հարկադրում նրանց այսպիսի յանցագործութեան դիմելու...»

Կարելի է երեւակայել, թէ հակահրէական պոզրոմային զրականութիւնը յիշեցնող այս մեղադրանքները եւ մանաւանդ վերջին գազրելի մեղադրանքը ինչ մթնոլորտ պէտք է ստեղծէին վրաց հանրային կարծիքի մէջ հայ գաղթականների շուրջը: Դրա համար էլ

բնաւ զարմանալի չափտի համարեմք, որ Թելաւում ժողովրդական միտինգը որոշում է մի շաբթուայ ընթացքում արտաքսել գաղթականներին քաղաքից («Սաքարթուելոս ռեսպուբլիկա», 1918թ., օգոստոսի 3), որ Սուրամի քաղաքային վարչութիւնը հրամանագրում է գաղթականներին կորչիլ, «ուր ուզում են» («Բորբա», 1918թ., յուլիսի 19). որ Սղնախում վրացիները խիստ գրգռուած էին հայ գաղթականների դէմ, եւ, համաձայն կառավարական կոմիսարի վկայութեան, նրանց միջեւ կարող էր արինհեղութիւն տեղի ունենալ («Էրթոբա», 1918թ., օգոստոսի 21) եւ այլն...

Իր իսկ ներշնչուով ստեղծուած այս հանրային կարծիքից «ագդուելով»՝ վրաց կառավարութիւնը օրէցօր խստացնում էր գաղթականների կենտրոնացումը «մահուան բանակատեղիներում» եւ դրագոնական միջոցներ ձեռք առնում թիւրք-թաթարական սրածութիւնից ճողոպրած գաղթականների մուտքը Վրաստան արգիլելու եւ եկածներին էլ անյապաղ իրենց տեղերը վերադարձնելու համար («Տիֆլիսակի լիստոկ», 1918թ., յուլիսի 20): Այս քաղաքականութիւնը իր ցայտուն արտայայտութիւնը գտաւ Նուխուայ եւ Արեշի կոտորածներից մագապուրծ ազատուած գաղթականներին նորից Ադրբեջանի դահիճներին յանձնելու բարբարոսութեան մէջ, որի մասին ակնարկել ենք արդէն մի անգամ: Մեր բոլոր ջանքերը յետ պահելու վրաց կառավարութիւնը այս անմարդկային արարքից ապարդիւն անցան: Ռուս սոցիալիստ-յեղափոխականների օրգան «Տրուդովոյէ զնամիա»-ն հետեւեալ ձեւով է ներկայացնում այս դէպքը:

Գաւառային կոմիսար Տկելամաձէն, իրեն ենթակայ ժողովրդական պահակների հետ միասին, օրը կէսօրին որսում էր տանջուած եւ չարչարուած գաղթականներին՝ նրանց Վրաստանի սահմաններից դուրս՝ Շիրաքի անջուր անապատը քշելու համար, ուր նրանց անխուսափելի մահ էր սպասում: Չնայած որ ներքին գործերի նախարար Ռամիշվիլին հանդիսաւոր խօսք էր տուել Չայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Ջամալեանին, որ պիտի դադարեցնի այդ գաղթականներին դուրս անելը Վրաստանից՝ Տկելամաձէն իր անելիքը արաւ: Սոսկալի հեղեղից անմիջապէս յետոյ, նա հրամայեց իր միլիցիոներներին՝ «ինչ գնով ուզում է լինի» դուրս քշել գաղթականներին: Վերջիններիս աղաչանքին, որ խնայեն իրենց կեանքը, պատասխանում էին մտրակի հարուածներով եւ մինչեւ իսկ հրացանագարկութեամբ: Այսպիսով արդէն տասերեք հազար հայ գաղթականներ շարտուած են Շիրաքի անապատը եւ յանձնուած ճակատագրի քմահաճոյքին («Տրուդովոյէ զնամիա», 1918թ., օգոստոսի 7):

Այս տասնեակ հազարաւոր գաղթականների կոտորուիլը Ալագանի միւս ափին, հէնց վրաց պահակների աչքի առաջ, մի րոպէ

ցնցեց վրաց կառավարութեան խիղճը եւ հալածանքները մնացած գաղթականութեան դէմ մեղմացան: Բայց դրանց հիմնական քաղաքականութիւնը մինչեւ վերջը մնաց անփոփոխ:

1919-ի աշնանը «կենտրոնացման բանակատեղիներում» եւ մասնաւորապէս Բակուրեանիի շրջանում, ուր արգելափակուած էին ախալքալաքցիները, դրութիւնն այնքան ծանրացել էր, որ վերջիններս որոշել էին վերադառնալ իրենց տները, թէկուզ եւ թիւրքերի ձեռքով կոտորուելու պայմանով: Չայաստանի կառավարութիւնը տեղեկանալով ախալքալաքցիների այս մտադրութիւնը, արտաքին գործերի նախարարի միջոցով հետեւեալ ծանուցագիրը յանձնեց Վրաստանի ներկայացուցչին Երեւանում:

«Ախալքալաքցի գաղթականների ծանր վիճակն աննկարագրելի է: Թախանձագին խնդրում են չմերժել նեցուկ հանդիսանալ իմ դիմումին, որ հեռագրով հաղորդել են վրաց կառավարութեանը մեր դիւանագիտական ներկայացուցչի միջոցով՝ խնդրելով վերացնել այն կարգադրութիւնները, որոնք արգելք են հանդիսանում, որպէսզի յիշեալ գաղթականները ժամանակավորապէս տեղավորուին իրենց այժմուայ բնակավայրին մօտ գտնուած հայկական գիւղերում»:

Այս ծանուցագիրը հեռագրելով իր կառավարութեանը՝ Վրաստանի ներկայացուցիչը իր կողմից էլ եռանդագին խնդրում է չմերժել Չայաստանի կառավարութեան առաջարկը:

Սակայն, վրաց կառավարութիւնը մնաց անյողողոյ իր քաղաքականութեան մէջ: Նա արգելափակ պահեց Ախալքալաքի հայ գաղթականներին մինչեւ այն օրը, երբ թիւրքերը հեռացան նրանց գաւառից եւ այդ գաղթականները՝ թուով կիսուած եւ նիւթապէս ու ֆիզիքապէս իսպառ քայքայուած՝ վերադարձան իրենց տները: Այդ օրն էլ վրաց կառավարութիւնը յիշեց, որ ախալքալաքցիք Վրաստանի քաղաքացիների թուին են պատկանում, եւ նրանց յետեւից կրնկակոխ մտաւ Ախալքալաք՝ իր «քաղաքացիների» ապահովութեան վրայ պահապան հրեշտակի պէս հսկելու համար...

«Ժամանակակից վրացիները կը յիշեն հին աւանդութիւնը, եւ հայ ժողովուրդը կը գտնի մեզ մօտ նոյն պաշտպանութիւնը, որը նա գտնում էր վրաց թագաւորների մօտ»- ասում էր ժողդանիան Վրաստանի անկախութեան յայտարարման ժամին, անդրադառնալով հայ ժողովրդի ողբերգութեանը: Եթէ վրաց թագաւորներն էլ այնպէս են պաշտպանել թշնամու սրից իրենց երկիրն ապաւինած հարեւաններին, ինչպէս «պաշտպանեցին» ժողդանիան եւ իր կառավարութիւնը՝ ապա հասկանալի է, որ վրացիք, այս տեսակետից գոնէ, իրենց անցեալով պարծենալու շատ բան չունին: Բայց, բարեբախտաբար, մենք բոլորովին այլ կարծիք ունինք վրաց թագաւորների ասպետականութեան մասին...

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՅՔԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Անդրկովկասում հաստատուելուց յետոյ ռուսաց կառավարութիւնը վրացական, թաթարական եւ հայկական հողերի ընդհանուր կենտրոն դարձրեց Թիֆլիսը: Այստեղ էին գտնուում երկրի վարչական, դատաստանական, զինուորական եւ մշակութային բոլոր հաստատութիւնները, ինչպէս օրինակ՝ փոխարքայի կառավարչատունը, դատաստանական պալատը, զինուորական շրջանային վարչութիւնը, դպրոցական տեսչութիւնը, պետական բանկի գլխաւոր բաժանմունքը, հաղորդակցութեան, հողաշինութեան, ջրային տնտեսութեան, պետական կալուածների հսկողութեան բոլոր գլխաւոր վարչութիւնները եւ այլն:

Այս հաստատութիւնների ներսն ու շուրջը համապատասխան կուլտուրական մթնոլորտ ստեղծելու նպատակով՝ նոյն ռուսական կառավարութիւնը Անդրկովկասի բարեկարգութեան համար յատկացուած գումարների մեծ մասը գործադրում էր Թիֆլիսի վրայ: Սրա շնորհիւ այստեղ բարձրացան բազմաթիւ կառավարչական շէնքեր, որոնցից շատերը այսօր էլ կարող են պատիվ բերել Եւրոպայի առաջնակարգ քաղաքներին: Հիմնուեց կովկասեան թանգարանը, որ ամփոփում է իր մէջ այս ծայրագուստի բոլոր ժողովուրդներին վերաբերեալ պատմական խիստ արժեքաւոր յիշատակարաններ: Հիմնուեց պետական հոյակապ թատրոնը, որ ամբողջ Ռուսաստանում լաւագոյններից մէկն է համարուում: Բացուեցին բազմաթիւ գիմնագիտներ, ռէալական դպրոցներ եւ կանանց միջնակարգ կրթարաններ: Բացուեցին մի շարք մասնագիտական վարժարաններ, ինչպէս երկաթուղային, երկրաչափական (հւնկերական) եւ ուսուցչական վարժարանները: Հիմնարկուեց Թիֆլիսի պոլիտեխնիկումը, որի համար Բագուն միայն մօտ 800 000 ռուբլի էր տրամադրել: Հիմնուեցին ամբողջ Անդրկովկասի բարգաւաճման համար խիստ կարեւոր մի շարք այլ հաստատութիւններ, որոնց շարքին՝ Միքայելեան հիւանդանոցը, Օլգինեան մանկաբարձարանը, Պաստերեան բուժարանը, բուսաբանական այգին, օդերեւոյթաբանական դիտարանը, Մուշտայիդի շերամապահական կայանը եւ այլն:

Այս հսկայական հաստատութիւնները կեանքի էին կոչուած Կովկասի բոլոր ժողովուրդների կարիքները հոգալու համար, եւ նրանց վրայ ծախսուած գումարը, որ մի քանի հարիւր միլիոն ոսկի ռուբլիների է հասնում, հոգացել էին մեծ մասով այդ ժողովուրդները տեղական տուրքերով (գեմսկի սբոր<sup>102</sup>) եւ փոքր մասով էլ Ռուսաստանի պետական գանձարանը: Այնպէս որ, իրաւապէս նրանց սեփականատերերն էին հանդիսանում նախ Կովկասի ժողովուրդ-

ները եւ ապա՝ ռուսական պետութիւնը: Իսկ եթէ նկատի ունենանք, որ այս ժողովուրդներն էլ, իբրեւ Ռուսաստանի քաղաքացիներ, իրաւունք ունին բաժին ստանալու վերջինիս հարստութիւնից, ապա կարող ենք ասել, որ վերոյիշեալ հաստատութիւնները գրեթէ ամբողջովին նրանց են պատկանում:

Սակայն, չնայած այս ակներեւ իրողութեանը, վրաց ղեկավարները, իրենց երկրի անկախութիւնը յայտարարելուց եւ Թիֆլիսն էլ նորակազմ պետութեան մայրաքաղաքը դարձնելուց յետոյ՝ վճռականապէս մերժում էին ճանաչել հարեւանների իրաւունքը այնտեղ մնացած ընդհանուր պետական գոյքերի վրայ:

1919թ. ապրիլին գումարուած Անդրկովկասեան առաջին խորհրդաժողովին եւ նոյն թուի սեպտեմբերին գումարուած հայկրացական խորհրդաժողովին, Վրաստանի ներկայացուցիչները՝ Ն. Ռամիշվիլի, Կանդելակի, Ս. Մդիվանի, Կ. Սաբախտարաշվիլի եւն., պաշտօնապէս ձեւակերպեցին այն պատճառաբանութիւնը, որ նրանք 1918թ. մայիսից ի վեր առաջ էին քաշում, ամեն անգամ, երբ Թիֆլիսի ընդհանուր պետական գոյքերից հարեւաններին բաժին հանելու մասին խօսք էր լինում: Նրանք ասում էին, թէ այդ գոյքերի համար Վրաստանը պատասխանատու է Դաշնակից պետութիւնների եւ գլխաւորապէս Ռուսաստանի առաջ: Վրաստանը, ակեւացնում էին նրանք, աչքի առաջ ունենալով հարեւանների կարիքը, կարող է, որոշ պայմաններով կամ փոխհատուցումով նրանց համար բաժին հանել այդ գոյքերից, բայց սկզբունքօրէն մերժում է ճանաչել այդ հարեւանների իրաւունքը նրանց վրայ:

Մի կողմ թողնենք դաշնակից պետութիւններին, որոնք պարզ քաջքշուքի համար են այստեղ մէջ գցում: Մի կողմ թողնենք եւ «որոշ պայմաններով» կամ փոխհատուցումով բաժին ստանալու խնդիրը, որովհետեւ այդ եղանակով կարելի է «բաժին» ստանալ եւ Չինաստանի պետական գոյքերից: Կը մնայ՝ որ վրաց ղեկավարները Թիֆլիսում մնացած ընդհանուր գոյքերի սեփականութեան խնդիրը միայն Վրաստանի եւ Ռուսաստանի խնդիր էին համարում:

Սակայն, հարց է ծագում, թէ վրաց ղեկավարները այդ երկուսից որի՞ն էին յատկացնում խնդրոյ առարկայ գոյքերի արժէքի այն մասը, որը գոյացել էր հայերից, ադրբեջանցիներից եւ ուրիշ ժողովուրդներից զանձուած գեմսովոյական տուրքով: Եթէ մի րոպէ միամտութիւն ունենանք կարծելու, թէ նրանք հակամէտ էին այդ մասը Ռուսաստանին յատկացնելու՝ իսկոյն երկու հարցեր կը ցցուին մեր առաջ. մախ՝ ո՞ր իրաւունքով կամ արդարութեամբ Վրաստանը ինքնագլուխ կարող էր հարեւանների սեփականութիւնը Ռուսաստանի ձեռքը մատնել եւ ապա՝ մի՞թէ Ռուսաստանի սեփականատիրական իրաւունքները ակելի լաւ ապահովուած կը լինէին, երբ նրա պար-

տապանը հաշուետուն միայն Վրաստանը լինէր, եւ ոչ թէ սրա հետ միասին նաեւ Հայաստանը, Ադրբեջանը եւ Դաղստանը... Իսկ եթէ վրաց ղեկավարները այս պետութիւնների բաժինը Վրաստանի սեփականութիւն էին համարում՝ այն ժամանակ աւելի շիտակ չէ՞ր լինի, որ նրանք ամենեւին չխառնէին Ռուսաստանի անունը այս գործում, այլ պարզ կերպով ասէին, թէ իրենք որոշել են օգտուել պատեհ առիթից եւ կողոպտել իրենց հարեւանները...

Որ կողոպտել խօսքը բնաւ խիստ որակում չէ այս խնդրում վրաց կառավարութեան եւ ղեկավար շրջանակների որդեգրած քաղաքականութիւնը բնորոշելու համար, դրանում կը համոզուի ամէն ոք՝ աչքի առաջ ունենալով հետեւեալ փաստերը:

1918թ. մայիսից սկսած մինչեւ 1919թ. վերջերը Հայաստանի կրթական գործը ողբալի վիճակի մէջ էր գտնուում: Մեր դպրոցները գաղթականների եւ որբերի կայան դառնալով կամ թիւրքական ատերածութեանը ենթարկուելով՝ փչացել էին մեծ մասամբ: Աշակերտական նստարան, գրատախտակ, քարտեզ, ուսուցչական եւ դպրոցական այլ պարագաներ նրանց մէջ գրեթէ չէին մնացել: Շատ տեղերում երեխաները գետնի վրայ էին նստում եւ աւագի վրայ գծագրելով ընտելանում տառերին եւ թւանշաններին: Այդ միեւնոյն ժամանակամիջոցին Վրաստանում Ռուսաստանից կամ Անդրկովկասեան Հանրապետութիւնից մնացած ահագին դպրոցական գոյքեր կային, որոնք փոշիների տակ թաղուած էին մնում, որովհետեւ կովկասեան բոլոր ժողովուրդների կարիքները բաւարարելու համար ձեռք բերուած այդ գոյքերը գերազանցում էին վրաց ժողովրդի պահանջներին: Սակայն, մեր ջանքերը՝ նրանցից գէթ մի քանի հարիւր նստարան կամ այլ առարկաներ ստանալու՝ ապարդիւն անցան:

Անձնապէս իմ կատարած դիմումներին եւ միշտ այն պատասխանն էի ստանում վրաց կառավարութիւնից, թէ ինքը պատասխանատու է իր ձեռքն անցած գոյքերի համար Ռուսաստանի ապագայ կառավարութեան առաջ եւ չէ կարող նրանցից որևէ մաս զիջիլ Հայաստանին: Կարծէր Ռուսաստանի ապագայ կառավարութեան առաջ Հայաստանը չէր կարող մի քանի հարիւր նստարանի պատասխանատուութիւն ստանձնել, կամ այդ կառավարութիւնը կը կախէր Վրաստանի վարիչներին, եթէ իմանար, որ վերջիններս ընդհանուր դպրոցական գոյքերից մի փոքրիկ բաժին են հանել հարեւան ժողովրդին...

Նոյն հետեւանքն ունեցան ռուսաց պետութիւնից Վրաստանում մնացած հեռագրական եւ հեռախօսական մեքենաներից կամ մետաղալարից իր որոշ բաժին ստանալու համար մեր կատարած դիմումները: Հայաստանը՝ ընդհանուր պատերազմի մէջ ընդհանուր

թշնամուց թաւանուած՝ հնար չունէր այս տեխնիքական միջոցներով մինչեւ անգամ իր մայրաքաղաքը կապելու երկրի կարելուր կենտրոնների հետ, իսկ Վրաստանը հեռագրային եւ հեռախօսային ցանցեր էր հաստատաւում իր յետ ընկած գաւառակների մէջ, որովհետեւ ինքն էր «պատասխանատուն» Ռուսաստանից ժառանգութիւն մնացած բոլոր բարիքների համար...

Առանձնապէս ուշագրաւ է այս տեսակետից երկաթուղային վագոնների պարագան: Ռուսական տիրապետութեան ժամանակ, անդրկովկասեան երկաթուղիների գլխաւոր դէպօները գտնուում էին Վրաստանում (Թիֆլիս եւ Միխայիլովօ), որտեղից հոգացում էին բոլոր գծերի կարիքները: Թիւրքական արշաւանքի ժամանակ (1918թ., ապրիլ-մայիս) ամէն կողմից դէպի այդ դէպօներն էին քշուում այն բոլոր գնացքներն ու երկաթուղային հարստութիւնները, որ յաջողում էր փրկել թշնամուց: Այս տեսակետից առանձնապէս աչքի էին ընկնում հայերը, որոնք թիւրքերի առաջխաղումը կասեցնելու կամ դանդաղեցնելու համար՝ ամէն միջոցի դիմում էին նրանց ձեռքից փախցնելու բոլոր շոգեշարժերը եւ վագոնները: Բայց որովհետեւ անգամ Ալեքսանդրապոլի դէպօն, ուր կարելի էր տեղաւորել այս թանկագին հարստութիւնը, գտնուում էր թշնամու գրաման վտանգի տակ, Հայաստանի զինուորական եւ երկաթուղային իշխանութիւնները բոլոր աւելորդ գնացքները բարձում էին երկրում մնացած պետական գոյքերով եւ ճամբում Անդրկովկասեան Հանրապետութեան մայրաքաղաքը՝ Թիֆլիս: Շնորհիւ այս եռանդուն աշխատանքի՝ թիւրքերի ձեռքին մնացին շատ սակաւաթիւ շոգեշարժեր եւ վագոններ:

1918թ. յուլիսի 4-ին Օսմանեան կայսրութեան եւ Անդրկովկասեան երեք հանրապետութիւնների միջեւ մի համաձայնագիր ստորագրուեց, որի մէջ ասուած է.

*«Երկաթուղային գնացքները (վագոններ եւ շոգեշարժեր) որոնք պատկանում էին ռուսաց պետութեանը, պէտք է բաշխուին չորս պայմանագիր կողմերի միջեւ՝ համաչափօրէն նրանցից իւրաքանչիւրի հողի վրայ գտնուած երկաթուղիների երկարութեանը»:*

Այս պայմանագրի տակ ստորագրել են Վրաստանի կողմից Ն. Ռամիշվիլի, Գ. Գւազալա եւ Ի. Օդիշելիձէ, իսկ Հայաստանի կողմից՝ Ա. Խատիսեան, Յ. Քաջագնունի եւ Մ. Պապաջանեան:

Թիւրքերի յետ քաշուելուց յետոյ, Հայաստանի երկաթուղիների վրայ՝ Ղարաքիլիսից մինչեւ Սարիղամիշ եւ Ալեքսանդրապոլից մինչեւ Ջուլֆա մենք գտանք միայն 93 լայն գծանի եւ նեղ գծանի շոգեշարժ, որոնց մեծ մասը միանգամայն փչացած էր, իսկ փոքր մասը կարօտ հիմնական վերանորոգութեան: Բանուկ վիճակի մէջ էին գտնուում միայն երկու շոգեշարժ, որոնք հրաշքով ազատուել

էին ապաստանելով Երեւանի կայարանը: Գալով վագոններին՝ սրանցից 34-ը մարդատար էին, ամենքն էլ կողոպտուած մինչեւ նստարանների պաստառները, իսկ մնացածը՝ ապրանքատար: Վերջիններս համեմատաբար աւելի լաւ վիճակում էին գտնուում, բայց այնքան սակաւաթիւ էին, որ նուազագոյն չափով իսկ չէին կարող բաւարարել երկրի հաղորդակցութեան կարիքներին:

1919թ. գարնանից սկսած, երբ Հայաստանի հաղորդակցութիւնը արտաքին աշխարհի հետ կենդանացաւ, շոգեշարժերի եւ վագոնների պակասից չափազանց նեղուում էր մեր երկաթուղային վարչութիւնը: Վերջինս ուղղակի հերոսական ճիգերով շարժման մէջ էր դրել փչացած շոգեմեքենաներից 10-15 հատ եւ կենդանութիւն տուել մինչեւ իսկ «մեռած» վագոններին, բայց եւ այնպէս չէր կարողանում երկրի ներսը փոխադրել նոյն իսկ Ամերիկայից ստացուած ալիւրը, որ ամբարուած էր հայ-վրացական սահմանգլխին, Սանահին կայարանում: Քանի, քանի անգամ դիմումներ կատարուեցին վրաց կառավարութեանը, որ մեզ բաժին հանի Վրաստանի երկաթուղիների վրայ գտնուող շոգեքարշերից, որոնց թիւը մօտ 400-ի էր հասնում, եւ վագոններից, որոնք հազարներով էին հաշուուում: Քանի, քանի անգամ մեր երկաթուղային վարչութիւնը խնդրեց վրաց համապատասխան վարչութեանը, որ թիֆլիսի եւ Միխայիլովի դէպոններից բաց թողնի Հայաստանին որոշ քանակութեամբ մեքենական մասեր, որոնք անհրաժեշտ էին մեր «հիւանդ» շոգեշարժերը եւ վագոնները կարգի բերելու համար: Սակայն այս բոլոր դիմումները մնացին «ձայն բաբառոյ յանապատի»...

1919թ. սեպտեմբերին, վերեւ յիշատակուած հայ-վրացական խորհրդաժողովի ժամանակ այս հարցը իբրեւ հայ-վրացական փոխարաբերութիւնների կարգաւորման պայմաններից մէկը, նորից սեղանի վրայ դրուեց: Հայաստանի պատուիրակութեան նախագահը՝ Ստ. Սամիկոնեանը<sup>103</sup> վեր հանելով, որ մեր երկաթուղիները սուր կարիք ունին ինքնաշարժերի եւ վագոնների, եւ որ այդ կարիքն առաջացել է նրանից, որ թիւրքական արշաւանքի ժամանակ մեծ քանակութեամբ գնացքներ են քշուել Հայաստանից դէպի Վրաստան՝ աւելացնում է.

*«Թիւրքերի դէմ մղուած պատերազմը ընդհանուր է եղել եւ առաջին հերթին Հայաստանն է ընդունել նրա հարուածը: Սրա համար էլ հայկական պատուիրակութիւնը Հայաստանի արդար իրաւունքն է համարում առաջարկելու որ Վրաստանը զիջի նրան այնքան շոգեշարժեր եւ վագոններ, որ կարելի լինի հայկական երկաթուղիների վրայ վերականգնել ապրանքների փոխադրութիւնը այն չափով, ինչ չափով դա կատարվում էր անդրկովկասեան երկաթու-*

*ղիների այդ ճիւղի վրայ նախապատերազմական շրջանում, մինչեւ 1914 թիւը»<sup>104</sup>:*

Այդ ժամանակները վրաց կառավարութիւնը մեծ կարելորութիւն էր տալիս հայ-վրացական մերձեցմանը՝ Ռուսաստանի դէմ միացեալ անդրկովկասեան ճակատ կազմելու եւ Վրաստանի հանդէպ Եւրոպայում բարեացական վերաբերմունք ստեղծելու համար: Դրա պատճառով էլ, այս խորհրդաժողովի ժամանակ, Վրաստանի ղեկավարները տրամադրութիւն են ցոյց տալիս «զիջող» ընթացք բռնելու հայկական պահանջների հանդէպ: Սասնաւորապէս շոգեշարժերի եւ վագոնների խնդրում այս «զիջողականութիւնը» արտայայտուում է վրաց պատուիրակութեան նախագահ Ն. Ռամիշվիլիի հետեւեալ պատասխանի մէջ.

Յետագայ բանակցութիւններից պարզուում է, որ մնացած տնտեսական զիջումների հետ միասին այս «զիջումն» էլ Վրաստանի ներկայացուցիչներն անում են այն հաշուով, որ դրանց փոխարէն Հայաստանը պէտք է Վրաստանին հողային զիջումներ անի՝ հրաժարուելով ամբողջ Ախալքալաք գաւառից եւ հայկական Բորչալուի հիւսիսային մասից: *«Մենք մեզ համար աննպաստ տնտեսական զիջումներ ենք անում այն հաշուով, որ պէտք է որոշ հատուցում ստանանք հողային հարցում»*, - ասում է վրաց պատուիրակութեան անդամ Ս. Մոլիվանին: *«Մենք յոյս ունենք, որ հայոց պատուիրակութիւնը կը գնահատի մեր արած տնտեսական զիջումները եւ իր կողմից զիջումներ կ'անի հողային խնդրում»*, - աւելացնում է Ն. Ռամիշվիլին:

*«Հայաստանին վագոններ եւ ինքնաշարժեր տալու խնդրում վրաց պատուիրակութիւնը որոշակի իր տեսակէտը արտայայտել է, Անդրկովկասեան խորհրդաժողովի նիստերի ժամանակ: Սակայն նկատի ունենալով հայկական երկաթուղիների դժուարին վիճակը՝ վրաց պատուիրակութիւնը հնարաւոր է նկատում օգնութեան գալու յիշեալ երկաթուղիներին՝ նրանց տրամադրութեան տակ դնելով որոշ քանակութեամբ վագոններ կապալի հիմունքներով»:* Այսինքն՝ վարձով:

Այսպէս ուրեմն, Ռուսաստանից անդրկովկասեան ժողովուրդներին ժառանգութիւն մնացած երկաթուղային գոյքերից օգտուելու համար, Հայաստանը Վրաստանին պէտք է տուրք վճարէր եւ դեռ նա էլ վրաց ղեկավարների կողմից դիտուում էր իբրեւ զիջում, իբրեւ մէկը այն զիջումներից, որոնց փոխարէն Հայաստանը պէտք է հրաժարուէր Վրաստանին առաջադրուած իր հողային պահանջներից...

Եւ երբ մեր պատուիրակութեան ներկայացուցիչը հեզմանքով նկատում է, որ «վագոնների եւ ինքնաշարժերի փոխարէն հողեր զիջիլ չի կարելի» սրանով էլ անէանում է վրաց ղեկավարների համար



մեր արդար իրաւունքը՝ Ռուսաստանից անդրկովկասեան ժողովուրդների ժառանգութիւն մնացած պետական գոյքերի վրայ:

Ի դէպ է ասել, որ վրաց կառավարութեան ընչաքաղցութիւնը երեւան էր գալիս ոչ միայն այդ ընդհանուր գոյքերի նկատմամբ, որոնց ցանկը դարձրած պիտույքներով, հեռագրական գործիքներով եւ երկաթուղային գնացքներով չէ սահմանափակուում, իհարկէ, այլեւ՝ պատահաբար Վրաստանի սահմաններում մնացած ամէն մի ստացուածքի նկատմամբ, որի մասին Յայաստանը բարոյական կամ իրաւական պահանջներ կարող էր առաջադրել: Այսպէս օրինակ՝ Վրաստանում էին գտնուում մի շարք հայկական ընկերութիւններ՝ Կովկասեան Յայոց Բարեգործական Ընկերութիւնը, Կովկասեան Յայոց Յրատարակչական Ընկերութիւնը, Յայոց Ազգագրական Ընկերութիւնը, Յայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը եւ այլն, որոնք կեանքի էին կոչուած բացառապէս հայ ժողովրդի մշակութային եւ խնամատարական կարիքները հոգալու համար եւ այդ նպատակներով ահագին գոյքեր էին ձեռք բերել՝ դարձնելով պարագաներ, գրադարաններ, թանգարան, գրքերի պահեստ եւ այլն:

Թիւրքերի յետ քաշուելուց յետոյ, երբ Յայաստանը սկսեց կանոնաւոր պետութիւն դառնալու նշաններ ցոյց տալ, այս ընկերութիւնները ձգտում էին իրենց գործնութեան դաշտը Յայաստանը դարձնել: Վրաց ղեկավարները սրա դէմ ոչինչ չունէին: Նրանց մանուկի որոշ օրգանները մինչեւ անգամ խիստ ցանկալի էին համարուում որ հայ մտաւորականները, որոնց մի զգալի մասը համախմբուած էր վերոյիշեալ ընկերութիւնների շուրջը, թողնեն Վրաստանը եւ գնան Յայաստան: Բայց երբ վերջիններս ցանկութիւն էին յայտնում յիշեալ ընկերութիւնների ստացուածքը Յայաստան փոխադրելու, որպէսզի այնտեղ իրենց մշակութային աշխատանքը շարունակել կարողանան, նրանք հանդիպում էին անյաղթելի դժուարութիւնների վրաց իշխանութիւնների կողմից: Ինչքան քաջքշուքների եւ չարչարանքների ենթարկուեց Յայոց Ազգագրական Ընկերութիւնը, մինչեւ որ նրան յաջողուեց երեւան փոխադրել իր թանգարանը, որ հայկական տարազների մի հաւաքածու ներկայացնելով, ոչինչ չէր ասում ոչ վրաց ժողովրդի սրտին եւ ոչ էլ նրա մտքին ... Միւս ընկերութիւնները, եթէ չենք սխալուում, մինչեւ վերջն էլ չկարողացան իրենց գոյքերը Յայաստան տանելու մտադրութիւնն իրագործել:

Աւելի եւս անյողողող էր վրաց կառավարութիւնը հայկական այն գոյքերի նկատմամբ, որոնք շոշափելի նիւթական արժէք էին ներկայացնում նրա աչքում: Նմոյշի համար յիշատակենք մի քանի դէպքեր:

Մոսկուայի Յայկական Կոմիտէն Փետրուարեան մեծ Յեղափոխութեան ժամանակ սեփական միջոցներով ձեռք էր բերել մի թէ եր-

կու սանիտարական գնացք՝ խիստ հարուստ կահաւորութեամբ եւ դեղօրայքի, բժշկական գործիքների, հիւանդանոցային սպիտակեղէնի եւ այլ պաշարներով: Գնացքի համար վարձուած էր բացառապէս հայերից կազմուած յատուկ բժշկական սպասարկութիւն: Յայկական մի զինուած պահակախումբի հսկողութեամբ այդ գնացքն ուղարկուեց Յայաստան՝ վիրաւոր եւ հիւանդ հայ զինուորականներին դարմանելու համար: Սակայն, նախ քան նրա Յայաստան հասնելը, սկսուեց թիւրքական արշաւանքը, եւ հայոց Ազգային Խորհուրդը ստիպուեց վար դնել գնացքը Թիֆլիսում, մինչեւ որ ճանապարհները կը բացուէին կամ թիւրքերի կողմից բռնագրաւուելու վտանգը կ'անցնէր, մանաւանդ որ այստեղ էլ կային բաւականաչափ հիւանդ եւ վիրաւոր հայ զինուորականներ, որոնք կարօտ էին սանիտարական գնացքի օգնութեանը:

Վրաստանի անկախութեան յայտարարումից հազիւ երկու ամիս անց՝ վրաց զինուորական իշխանութիւնը փորձեց ձեռք դնել այս գնացքի վրայ, ասելով թէ նա ռուսաց պետութեան սեփականութիւնն է կազմում, եւ, Վրաստանի հողի վրայ գտնուելով, պէտք է ընդհանուր կարգով վրաց կառավարութեանը յանձնուի: Չնայած որ Յայաստանի դիւանագիտական ներկայացուցչութեան ձեռքը անվիճելի վաւերագրեր կային, որ այդ գնացքը ոչ մի կապ չի ունեցել ռուսական գոյքերի հետ եւ Յայոց Ազգային Խորհրդի բացարձակ սեփականութիւնն է կազմում, այնուամենայնիւ ահագին ջանք էր հարկաւոր վրացական բռնագրաւումից նրան փրկելու համար: Բայց եւ այնպէս վրաց իշխանութիւնները, այդ գնացքը մեր ձեռքը թողնելով հանդերձ, նրա վրայ հսկողութիւն նշանակեցին եւ, չնայած Յայաստանի հիւանդանոցներից տեղացող պահանջներին՝ հնար չէղաւ այնտեղից որեւէ դեղօրայք, բժշկական գործիք կամ վիրաբուժական պիտոյք փոխադրել Յայաստան, մինչեւ որ վրայ հասաւ հայ-վրացական պատերազմը եւ Յայաստանի ներկայացուցչութեան ինչքերի հետ վրաց կառավարութիւնը յափշտակեց եւ այս գնացքը...

Նման մի դէպք է հանդիսանում եւ հայկական կորպուսի կողմից Թիֆլիսում թողնուած ստացուածքի յափշտակութիւնը: Վրաստանի անկախութեան յայտարարման միջոցին, մի քանի հայկական զօրամասեր կային Թիֆլիսում, որոնք յիշեալ կորպուսի մասը կազմելով՝ պատերազմական իրադարձութիւնների հետեւանքով կենտրոնացել էին Թիֆլիս: Յայ գաղթականների դէմ սկսուած հալածանքին զուգահեռաբար հալածանքներ սկսուեցին եւ այս զօրամասերի դէմ, հենց որ Յայոց Ազգային Խորհուրդը հեռացաւ Թիֆլիսից: 1918թ. օգոստոսի սկզբներին վրաց զինուորական իշխանութիւնը հրամայեց, որ հայկական զօրամասերը երեք օրուայ ընթացքում

հեռանալով Կրաստանից: Իմ դիմումների վրայ Ն. Ռամիշվիլին, որ այդ ժամանակ փոխարինում էր վարչապետին, բեկանեց այս կարգադրությունը, համոզուելով, որ խնդրոյ առարկայ զորամասերը զինաթափուած են մեր կողմից եւ հնար չունին Յայաստան գնալու՝ ճանապարհների փակուած լինելու պատճառով:

Ահա այս զորամասերի զենքերից էր կազմուած հայկական կորպուսի ստացուածքը եւ մէկ էլ այն զինուորական գոյքերից, որ անդրկովկասեան հրամանատարութեան կողմից ժամանակին դրուել էին հայկական հրամանատարութեան տրամադրութեան տակ, բայց վերջինս միջոց չէր ունեցել հասցնելու գործող բանակին:

Այս ստացուածքը պահուում էր Մանթաշեանի քարվանսարայում Յայաստանի ներկայացուցչութեան զինուորական կցորդի անմիջական իշխանութեան տակ, մի փոքրիկ պահակախմբի հսկողութեամբ:

Հայկական զորամասերի հեռացման խնդիրը կարգադրելուց մի քանի օր անց, վրաց զինուորական իշխանութիւնը մի գիշեր յանկարծ շրջապատեց Մանթաշեանի քարվանսարան եւ ձերբակալելով մեր պահակախումբը՝ գրաւեց հայկական կորպուսի զենքի պահեստը: Ոչ ոք չէր հասկանում, թէ ինչ է պատահել:

Իմ հարցումին Ն. Ռամիշվիլին ոչինչ չկարողացաւ պատասխանել՝ ասելով թէ ինքը տեղեակ չէ կատարուած դէպքին: Սակայն յաջորդ օրը վրացական թերթերը խոշոր գրերով յայտարարեցին, թէ նոր դաւադրութիւն է բացուած Կրաստանի անկախութեան դէմ, թէ Յ.Յ.Ղաշնակցութեան գաղտնի զինանոցները բացուել են եւ այլն: Ի զուր անցաւ Յայաստանի ներկայացուցչութեան պաշտօնական հաղորդագրութիւնը, որի մէջ մանրամասն յիշատակուած է, թէ երբ եւ ինչ պայմաններում է գոյացել գրաւուած զինապահեստը: Ի զուր անցաւ, որովհետեւ վրաց կառավարութիւնը ինքն էլ շատ լաւ տեղեակ էր թէ այդ զինապահեստի գոյութեանը, թէ նրա պատմութեանը եւ թէ այն իրողութեանը, որ Ղաշնակցութիւնը որեւէ կապ չունէր նրա հետ: Եթէ տեղեակ չլինէր այս ամէնին, եթէ այդ զինապահեստի գոյութիւնը գաղտնիք լինէր նրա համար, եւ այն էլ Ղաշնակցութեան դաւադրական յղացումներով պայմանաւորուած գաղտնիք, Յայաստանի ներկայացուցչութեան միջամտութիւնը այս գործին անտարբեր չէր ձգի նրան: Հայկական կորպուսի զինապահեստը գրգռում էր նրա ախորժակը եւ նա յագուող տուեց իր ախորժակին: Այսքանը բաւական էր նրա համար: Թող այնտեղ Յայաստանի ներկայացուցչութեան տեղեկատու բիւրօն եւ «Էրթօբան» (1918թ., օգոստոսի 21) վիճեն միմեանց հետ վրաց կառավարութեան այս բացայայտ թաւանը որակելու համար: Սա նրան չէր հետաքրքրում...

Փոքր ինչ այլ կարգի դէպք է հանդիսանում Ա. Մելիք-Ազարեանի տան պարագան: Այս պարոնը, որ սրտացաւ հայի համբաւ ունէր

Թիֆլիսում, Վերիսկե Սպուսկի<sup>105</sup> վրայ գտնուած իր հոյակապ տունը օրինական կարգով ժառանգութիւն էր թողել Յայաստանի կառավարութեանը եւ ցանկանում էր, որ վերջինս այնտեղ հաստատի իր դեսպանութիւնը՝ Յայաստանը արտաքին աշխարհի առաջ ըստ արժանւոյն ներկայացնելու համար: Սակայն, չնայած թէ Ա. Մելիք-Ազարեանի եւ թէ Յայաստանի դիւանագիտական ներկայացուցչի կողմից ձեռք առնուած բոլոր միջոցներին՝ վրաց կառավարութիւնը մինչեւ վերջն էլ չուզեց ճանաչել Յայաստանի սեփականատիրական իրաւունքը այս տան վրայ:

Հայկական բուրժուազիան հարիւրաւոր հոյակապ տներ եւ կուլտուրական հաստատութիւններ էր շինել Թիֆլիսում, որոնք ամէնքն էլ տրամադրելի էին վրաց կառավարութեան եւ հանրային հաստատութիւնների պէտքերի համար: Չնչին, ուղղակի ծիծաղելի վճարով կարող էին Ա. Իւզբաշեանի Արտիստական թատրոնը վրացական դրամայի համար վարձել, Արամեանի հսկայական տունը արհեստակցական միութիւնների սեփականութիւն դարձնել, Յ. Մելիքեանի պալատը Հասկէլին կամ Կաուցկուն տրամադրել, միւս հայերի փառահեղ բնակարաններում էլ օտար ներկայացուցիչներին կամ իր նախարարներին եւ պաշտօնեաներին բնակեցնել: Պատահեց, որ մի հայ բուրժուա էլ ցանկութիւն յայտնեց իր տունը Յայաստանի կառավարութեանը պարգեւելու: Եւ ահա վրաց կառավարութիւնը, որի համար այժմուայ Թիֆլիսը իր կուլտուրական սարք ու կարգով հայկական բուրժուազիայից հրամցված մի պարգեւ էր, իր բոլոր յայտնի եւ գաղտնի լծակները շարժման մէջ դրեց Յայաստանի կառավարութիւնը իր ստացած նուէրից զրկելու համար:

Այսպիսի դէպքեր մենք շատ կարող ենք յիշատակել. բայց, կարծում ենք, սրանք էլ բաւական են ցոյց տալու համար, որ վրաց սոցիալ-դեմոկրատական կառավարութեան ընչաքաղցութիւնը չէր գոհանում Ռուսաստանից մնացած ահագին պետական գոյքերով, այլեւ աչք էր տնկում պատահաբար Թիֆլիսում մնացած այն չնչին ստացուածքի վրայ, որ ոչ մի կապ չունենալով այդ գոյքերի հետ, բարոյապէս կամ իրաւապէս Յայաստանի սեփականութիւնն էր կազմում:

\* \* \*

Սակայն չպէտք է կարծել, թէ վրաց կառավարութիւնը բոլոր դէպքերում անտես էր առնում, որ Յայաստանը Ռուսաստանի կամ Անդրկովկասեան Հանրապետութեան ժառանգներից մէկն է: Ոչ, նա յիշում էր այս ժառանգութեան հանգամանքը, երբ պէտք էր լինում

Ռուսաստանի կամ Անդրկովկասեան Յանրապետութեան... պարտքերը վճարել:

Ռուսական ընդհանուր ճակատի փլուզումից յետոյ՝ Թիֆլիսում ահագին քանակութեամբ ռուս զինուորականներ էին մնացել՝ մեծ մասամբ սպաներ եւ զինուորական պաշտօնեաներ, որոնց պէտք էր ապրուստ եւ տուն վերադառնալու ճանապարհածախս տալ: Քանի որ վրաց կառավարութիւնը ինքն էր ժառանգորդ եւ «պատասխանատու» համարոււմ ռուսաց պետութիւնից Վրաստանում մնացած գոյքերի, բնականաբար նա էլ պէտք է հոգար այդ պետութեան զինուորական եւ քաղաքացիական պաշտօնեաների կարիքները, մինչեւ որ նրանք ի վիճակի կը լինէին տուն հասնիլ կամ իրենց գլխի ճարը տեսնել: Թէ ինչ վերաբերմունք ունեցաւ նա քաղաքացիական պաշտօնեաների հանդէպ, ես չգիտեմ: Բայց նա երեսի վրայ էր գցել Թիֆլիսում գտնուած ռուս զինուորականների ճնշիչ մեծամասնութիւնը այն պատճառաբանութեամբ, թէ նրանք գործել են Տաճկահայաստանում, հետեւաբար եւ նրանց մասին հոգալու պարտականութիւնը Յայաստանի կառավարութեան վրայ է ընկնում:

Անել կացութեան մատնուած՝ այս հսկայական բազմութիւնները հարիւրներով եւ հազարներով խռնոււմ էին սկզբում Յայոց Ազգային Խորհրդի, յետոյ եւ Յայաստանի դիւանագիտական ներկայացուցչութեան առաջ եւ օգնութիւն աղերսում:

Մենք գիտէինք, իհարկէ, որ Ռուսաց կառավարութիւնը տաճկահայ կամ կովկասահայ ժողովրդի սիրուն աչքերի համար չէր քշել այս մարդկանցը դէպի Երզրում, Վան եւ Բիթլիս: Բայց եւ զգում էինք, որ անմարդկային մի բան կը լինէր բարոյապէս եւ ֆիզիկապէս չարչրկած այս զինուորականներին, որոնցից շատերը օրուայ հացի կարօտ էին, ձգել երսի վրայ: Եւ ահա, բուն Յայաստանում եղած ռուս զինուորականներին պաշտօնով կամ դրամով բաւարարելուց յետոյ հայոց կառավարութիւնը բարոյապէս հարկադրուեցաւ Թիֆլիսում գտնուած հազարաւոր ռուս զինուորականներին էլ նպաստ եւ ճանապարհածախս տալ սպառելով իր վերջին կոպէկները այս գործի վրայ...

Դեռեւս Թիֆլիսում գտնուած ժամանակ Յայոց Ազգային Խորհուրդը համաձայնութեան էր եկել վրաց կառավարութեան հետ՝ Յայաստանի եւ Վրաստանի պատասխանատուութեամբ երկու հարիւր միլիոն ռուբլու անդրկովկասեան բռնաներ<sup>106</sup> լոյս ընծայելու, որից 2/5-ը Յայաստանը պէտք է ստանար, իսկ 3/5-ը՝ Վրաստանը:

Այս համաձայնութեան շուրջը բանակցութիւնները շարունակուելով՝ Վրաստանի մեր դիւանագիտական ներկայացուցչութիւնը կարողացաւ հանդգել վրաց պատուիրակներին, որ անարդարու-

թիւն է ռուս զինուորականների հաշուեյարդարը գրեթէ ամբողջովին բարդել Յայաստանի տկարացած մեջքին, եւ նրանք համաձայնեցին, որ լոյս ընծայելիք երկու հարիւր միլիոնից նախապէս հանուին երկուստեք արուած հաշուեյարդարի ծախսերը, եւ մնացած դրամը բաժանուի վերոյիշեալ համեմատութեամբ:

Սակայն, վրաց կառավարութիւնը մերժեց այս լրացումը: Նա այս դէպքում յիշեց, որ մենք ժառանգորդներ ենք հանդիսանում ռուսաց պետութեան, եւ, որպէս ժառանգորդներ, պէտք է կատարէինք նրա պարտականութիւնները անգամ Թիֆլիսում... առանց որեւէ իրաւունք ունենալու նրանից մնացած հսկայական հարստութեան վրայ: Շնորհիւ այս վերաբերմունքի՝ մենք ստիպուած էինք մեր ստացած 80 միլիոն ռուբլու մի զգալի մասը յատկացնել այն պարտքերին, որ արել էինք կովկասեան ռազմաճակատում աշխատած ռուս զինուորականներին բաւարարելու համար:

Մեզ ժառանգորդ ճանչնալու պատիւը չզլացուեց Վրաստանի ղեկավարների կողմից եւ Անդրկովկասեան Կոմիսարիատի պարտքերի կարգադրման գործում: Այս կոմիսարիատը, իր կարճատեւ գոյութեան ընթացքում երեք հարիւր միլիոն ռուբլու բռնաներ էր բաց քողել եւ սպառել: Ո՞վ էր այս պարտքի տէրը, երբ ինքը պարտապանը յօդս էր ցնդել: Հարկաւ անդրկովկասեան երեք հանրապետութիւնները: Բայց ինչո՞վ պէտք է վճարէին այս հանրապետութիւնները երեք հարիւր միլիոն պարտքը: Անշուշտ նախ եւ առաջ այն պետական ստացուածքով, որ Կոմիսարիատը ժառանգութիւն էր ստացել Ռուսաստանից եւ որը առաջին իրական երաշխիքն էր հանդիսանում նրա դրամական էմիսիոնի համար:

Սակայն, Վրաստանի ղեկավարները այս տրամաբանութիւնը պարտադիր չէին նկատում իրենց համար: Նրանք աւելի ճիշդ եւ արդար էին համարում նախ գրպանել Անդրկովկասեան Կոմիսարիատից, յետոյ տեղական ժողովուրդներին մնացած ընդհանուր պետական հարստութեան առիւծի բաժինը եւ ապա խօսել նրա պարտքը հանգցնելու մասին:

Այս մտքով էլ արտայայտուեց վրաց Ազգային Խորհուրդը: 1918թ. յուլիս 19-ի նիստին նա, առանց մի խօսք ասելու Անդրկովկասեան Կոմիսարիատից յետոյ մնացած պետական գոյքերի մասին, որոշեց, որ նրա պարտքը պէտք է իրենց վրայ առնեն Յայաստանը, Ադրբեջանը եւ Վրաստանը:

Իսկ որովհետեւ Ադրբեջանն այդ ժամանակ զբաղուած էր Բազուայ հոգսերով, եւ անդրկովկասեան գործերը նրան շատ չէին զբաղեցնում, Վրաց Ազգային Խորհուրդը բռնեց Յայաստանի օձիքից՝ յայտարարելով, որ, մինչեւ Ադրբեջանի հետ այս խնդրի մասին համաձայնութեան գալը, Յայաստանը եւ Վրաստանը մինակ պէտք է

ստանձնեն Անդրկովկասեան Կոմիսարիատի պարտքի պատասխանատվութիւնը:

Այլ պայմաններում մենք, ի հարկէ, առանց այլեւայլութեան չէինք համակերպի այս յայտարարութեանը: Ոչ մի բան չի րաժարուելով մեր բաժին պարտականութիւնից, մենք կը պահանջէինք, որ Անդրկովկասեան Կոմիսարիատի պարտքը գոցելու համար նախ եւ առաջ մէջտեղ հանուին ռուսաց պետութիւնից այդ կոմիսարիատի միջոցով ժառանգորդ հանրապետութիւններին անցած գոյքերը, կը պահանջէինք նաեւ, որ հաշուի առնուին այս հանրապետութիւններից իւրաքանչիւրի կրած վնասները ընդհանուր պատերազմների ժամանակ եւ ըստ այնմ կատարուի Կոմիսարիատի հաշուեյարդարը:

Բայց այդ ժամանակ մենք ի վիճակի չէինք այսպիսի հարցեր յարուցելու: Նորակազմ հայկական պետութիւնը ստիպողական կարիք ունէր դրամի՝ իր որբերին եւ գաղթականներին խնամելու, վերահաս սովի եւ հիւանդութիւնների դէմ մաքառելու, ռուս զինուորականներին տուն ճամբելու նպատակով արուած պարտքերը վճարելու եւ կառավարական մեքենան կազմակերպելու համար: Իսկ դրամ նա չէր կարող ստանալ առանց վրացիների համաձայնութեան, որովհետեւ դրամատիպ մեքենաները, դարձեալ իբրեւ ընդհանուր պետական գոյք, նրանց մօտ էին գտնուում:

Վրաց ազգային խորհուրդը գիտէր մեր վիճակի ծանրութիւնը, եւ այդ պատճառով էլ ըստ կանս թելադրում էր մեզ իր պայմանները՝ կարծէք մի աւելորդ անգամ եւս շեշտած լինելու համար, որ Զայաստանը, վրաց ղեկավարների ըմբռնումով, ժառանգորդ է ռուսաց պետութեան կամ նրան յաջորդած անդրկովկասեան միութեան պարտքերին միայն, բայց երբեք նրանցից մնացած հարստութիւններին:

Ազգային ինքնորոշումը երբեք աւելի ծանր ապտակ չէ իջեցրել հարեւանական իրաւախոհութեան երեսին...

## ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Անդրկովկասի բոլոր գլխաւոր կառավարչական եւ կուլտուրական հաստատութիւնների կենտրոնացումը Թիֆլիսում պէտք է հսկայական զարկ տար այդ քաղաքի առեւտրին եւ արդիւնաբերութեանը՝ նրան Անդրկովկասի տնտեսական կեանքի առանցքը դարձնելով: Որովհետեւ այդ հաստատութիւններից իւրաքանչիւրը իր հետ բերում էր ռոճիկաւոր պաշտօնեաների մի բազմութիւն, որոնք իրենց ընտանիքների հետ միասին, ապահով սպառողների մի բանակ էին կազմում եւ ամէն կարգի ապրանքների պահանջ առաջացնում շուկայում: Բացի սրանից այս հաստատութիւնների համար անհրաժեշտ շէնքերը կառուցելու եւ կահաւորելու նպատակով կառավարութիւնը հսկայական գումարներ էր յատկացնում, որով տնտեսագործական ահագին ասպարէզներ էին բացւում ժողովրդի համար:

Սակայն, ռուսաց կառավարութիւնը արհեստական միջոցներով աւելի եւս մեծացրեց Թիֆլիսի տնտեսական նշանակութիւնը՝ նրան ցամաքային հաղորդակցութեան հանգոյց դարձնելով մի կողմից Ռուսաստանի եւ արտասահմանի, իսկ միւս կողմից Տաճկաստանի եւ Պարսկաստանի միջեւ: Փոխանակ Բաթումը ճորոխի հովտով անմիջապէս կապելու Կարսին, իսկ Բագուն Ալեքի վրայով միացնելու Ջուլֆային, որ խիստ կը կարճացներ Ռուսաստանի եւ արտասահմանի երկաթուղային հաղորդակցութիւնը վերոյիշեալ երկրների հետ՝ Ռուսաց կառավարութիւնը, ռազմական եւ այլ նկատումներով, Կարսն ու Ջուլֆան երկաթուղով կապեց Թիֆլիսին, որով վերջինս կենտրոնատեղի դարձաւ նաեւ Անդրկովկասի արտաքին առեւտրի համար:

Թիֆլիսին այսքան բացառիկ դիրք տալը բնականաբար առանց ազդեցութեան չէր կարող մնալ Վրաստանի համար: Անդրկովկասում բազմաթիւ հանքային ջրեր կան, բայց շահագործման առարկայ դարձաւ միայն Բաթումի ջուրը, որովհետեւ նա մօտ է գտնուում Թիֆլիսին: Նոյն պատճառով էլ մի Աբասուման<sup>107</sup>, Կոջոր<sup>108</sup> կամ մի Բակուրեան<sup>109</sup> բարեկարգուեցին եւ առաջնակարգ ամարանոցների հռչակ ստացան, մինչդեռ Մարցի<sup>110</sup>, Գանձակի, Ջանգեզուրի եւ Ղարաբաղի հոյակապ ամարանոցները իրենց նախնական վիճակի մէջ մնացին: Անգամ Ադրբեջանի արգաւանդ հողերը եւ Արարատեան դաշտը, որոնք բամբակի, խաղողի, ծխախոտի եւ այլ թանկարժէք բոյսերի մշակութեան ահագին կարելիութիւններ ունին՝ շահագործողների համար չէին ներկայացնում այն հրապույրը, ինչ որ դիցուք Բաթումի թէյի տնկարանները կամ Տվենդալբի (Սղնախ) այգիները:

Ռուսաց կառավարութեան կամքով Անդրկովկասի վարչական, կուլտուրական եւ առեւտրա-արդիւնաբերական կենտրոնը դառնալով՝ Վրաստանը եւ մասնաւորապէս Թիֆլիսը պէտք էր դէպի իրենց քաշէին երկրի ուշիմ, գործունեայ տարրերին: Սրանց մէջ առաջին տեղը բռնում էին հայերը, նախ որովհետեւ շրջապատող ժողովուրդների մէջ ամենէն ձեռնբերեցը եւ առեւտրա-արդիւնաբերական գործերի համար ամենից ընդունակը նրանք էին, եւ ապա՝ որովհետեւ նրանք հայկական գաւառներում նեղուում էին սակաւահողութիւնից եւ տնտեսագործական պայմանների անձկութիւնից: Լաւագոյն հողերն այնտեղ բռնուած էին թիւրքերի կողմից, ազգաբնակութեան խոշոր զանգուածը՝ զիւղացիութիւնը, շնորհիւ իր աղքատութեան, վատ յաճախորդ էր հանդիսանում արհեստագործութեան եւ մանր առեւտրի համար, իսկ խոշոր առեւտրա-արդիւնաբերական ձեռնարկների համար պակասում էր անհրաժեշտ դրամագլուխը: Երբ մենք մեղադրում ենք հայ բուրժուազիային, որ նա մոռանում էր իր հայրենիքը եւ օտար երկրների բարգաւաճմանը զարկ է տալիս, մենք նկատի ունինք ոչ թէ օտար երկրներում աշխատանք որոնելը, որ անկախ նրա կամքից ստեղծուած պայմաններում, բնական երեւոյթ էր, այլ այն, որ այդ բուրժուազիան, անհրաժեշտ դրամագլուխը ձեռք բերելուց յետոյ էլ երբեք չանդրադարձաւ իր դրամագլուխը կամ նրա մի մասը հայկական գաւառներում գործադրելու մտքին: Վրաստանում նա գլուխ էր պատռում ազնուականների հողերը ձեռք ձգելու եւ նրանց վրայ օրինակելի տնտեսութիւններ ստեղծելու կամ այլեւայլ գործարաններ հիմնելու համար, իսկ Չայաստանի բամբակը, խաղողը, ջրային ուժը եւ հանքերը վրիպում էին նրա ուշադրութիւնից:

Այսպէս թէ այնպէս, Թիֆլիսում եւ Վրաստանում ռուսաց կառավարութեան կողմից բացուած տնտեսագործական կարելիութիւններից հրապուրուած՝ հայ արդիւնաբերողը, վաճառականը, արհեստաւորը եւ գործաւորը խումներամ դիմեցին դէպի այդ վայրերը, մանաւանդ որ նրանք, իբրեւ ընդհանուր պետութեան քաղաքացիներ, ազատ էին ապրելու եւ գործելու ուր կը ցանկային:

Չասկանալի է, որ հայ ժողովրդի այս կենսունակ գործոն տարրերը, Թիֆլիսում իրենց համար տնտեսապէս բարգաւաճ կեանք ստեղծելով, պիտի այնտեղ քաշէին եւ հայ մտաւորականութիւնը, որը ռուսների բերած մշակոյթային նոր պայմաններից ազդուելով եւ խթանուելով՝ ազգային մշակոյթի մի նոր դարաշրջան բացեց այնտեղ կովկասահայութեան համար: Սրա շնորհիւ էր, որ հայկական դպրոցը, մանուկը, գրականութիւնը, թատրոնը եւ արուեստը աննախընթաց ծաղկման հասան Վրաստանի մայրաքաղաքում:

Վրայ հասաւ համաշխարհային պատերազմը: Սկզբում Ռուսաստանի առաջնորդութեամբ, յետոյ մինակ մնացած՝ Անդրկովկասը

կռոււմ էր Թիւրքիայի դէմ: Պատերազմի անյաջող իրադարձութիւնները 1917թ. վերջերին եւ մանաւանդ 1918թ. գարնանը դէպի երկրի կենտրոնը՝ Թիֆլիս եւ Վրաստան մղեցին թշնամու վայրագութիւններից խուճապահար ազգաբնակութիւնը, որի մէջ առաջին տեղը բռնում էին բնականաբար հայերը, քանի որ թիւրքական ներխուժումը առաջին հերթին նրանց գոյութիւնն էր վտանգում: Դէպի Անդրկովկասի մայրաքաղաքն էին դիմում այս հայերը ամբողջ կողմից: Գալիս էին Կարսի ու Բաթումի շրջաններից, Ախալքալաքից ու Ախալցխայից, Ալեքսանդրապոլից ու Փամբակ-Լօռիից: Գալիս էին՝ բերելով իրենց հետ այն ամէնը, ինչ կարելի էր փախցնել թշնամուց՝ անասուններ, կենսամթերքներ եւ մինչիսկ տնային կահ-կարասիներ՝ գորգերից ու անկողիններից սկսած մինչեւ խոհանոցի պղինձներն ու աթոռ-սեղանները: Այս տարտեղութեան շնորհիւ Թիֆլիսում եւ Վրաստանում հայերի թիւը խիստ մեծ համեմատութիւններ առաւ:

Վրաստանի անկախութեան յայտարարումից յետոյ, բնականաբար վրաց ղեկավարների համար հարց պէտք է առաջանար, թէ ինչ անել Վրաստանում խճողուած այս ահագին հայկական բազմութիւնների հետ: Գրել նրանց բուրդին Վրաստանի քաղաքացի կամ հպատակ նրանք չէին ցանկանում, որովհետեւ դրանով հայկական փոքրամասնութեան տոկոսը Վրաստանում անհարկի կերպով կը բարձրանար: Եւ ցանկանային էլ՝ չէին կարող, որովհետեւ նախ զաղթականներն ու փախստականները իրենց յոյսը հայրենիքից չէին կտրել եւ չէին ուզում Վրաստանի քաղաքացիներ դառնալ եւ ապա՝ տեղ չկար նրանց բնակեցնելու համար:

Չասկանալի է, որ այս պայմաններում վրաց ղեկավարները պէտք է ձգտէին, որ, առաջին հերթին, զաղթականներն ու փախստականները վերադառնան իրենց տեղերը: Անհասկանալին եւ վրդովեցուցիչն այն էր, որ նրանք չէին ուզում հաշուի առնել, որ այս թշուառ բազմութիւնները ընդհանուր պատերազմների եւ մասնաւորապէս վրաց գործիչների նախաձեռնութեամբ յայտարարուած վերջին պատերազմի զոհերն էին, եւ, ինչպէս առիթ ունեցանք վերը տեսնելու, բազմապիսի հալածանքների էին ենթարկում նրանց: Վրդովեցուցիչ էր մանաւանդ այն, որ յետագային, երբ թիւրքական վտանգը վերացաւ Չայաստանի գլխից, եւ Վրաստան ապուխնած զաղթականներն սկսեցին դէպի տուն վերադառնալ՝ վրաց իշխանութիւնները չէին թոյլ տալիս, որ նրանք իրենց տները տանին մինչեւ անգամ հետները բերած կահկարասին:

Այո, վրաց իշխանութիւնների ընչաքաղցութիւնը մինչեւ այստեղ էր հասնում: Գաղթականն ու փախստականը, իրենց պղինձը, գորգը եւ միւս անհրաժեշտ առարկաները տուն տանելու համար, պէտք է

յատուկ թոյլտուութիւն խնդրէին եւ, շատ մեծ դժուարութիւններով, գրեթէ բացառիկ պարագաներում, այդ թոյլտուութիւնը ստանլու դէպքում էլ՝ ահագին մաքս վճարէին սահմանազխին: Երեւի զաղթականի բերած տնային իրերն էլ Վրաստանի գոյքերն էին համարում, որոնց համար վրաց կառավարութիւնը «պատասխանատու» էր չգիտենք ում առաջ...

Գալով Վրաստանի այն հայերին, որոնք տարիներից ի վեր հաստատուն բնակութիւն ունէին՝ այստեղ էլ վրաց կառավարութիւնը իւրատեսակ վերաբերմունք ունէր: Երբ նա սրանց ինչքի եւ ստացուածքի վրայ ուզում էր կարգադրութիւններ անել, կամ երբ մտադրում էր նրանց եւս զինուորակոչութեան ենթարկել, նա ամէնքին էլ դիտում էր իբրեւ Վրաստանի քաղաքացիներ: Իսկ երբ Վրաստանի շովինիստական տարրերին բաւարարութիւն տալով հարկ էր համարում բացառիկ հալածանքներ սկսել հայերի դէմ, կամ այնպէս անել, որ նրանք այս եւ այն քաղաքում մեծամասնութիւն կազմելով հանդերձ քաղաքային ինքնավարութիւնից վտարուեն, այն ժամանակ խիստ մեծ սահմանափակումների էր ենթարկում իր իսկ հրատարած քաղաքացիութեան օրէնքը՝ դժուարացնելով նրա նպաստաւոր տրամադրութիւններից օգտուելու հնարութիւնը հայերի համար:

Այս մասին հանգամանօրէն կը խօսինք ազգային փոքրամասնութիւնների հարցը քննելիս: Առ այժմ, ըստ էութեան խնդրի պէտք է ասենք հետեւեալը:

Վրաստանում հաստատուած հայերը, ճնշող մեծամասնութեամբ, եկել էին այնտեղ ռուսական տիրապետութիւնից յետոյ, իբրեւ Ռուսաստանի քաղաքացիներ: Եկել էին այն համոզմամբ, որ Վրաստանում ապրելն ու աշխատելը որեւէ փոփոխութիւն չի կարող առաջացնել իրենց իրաւական վիճակի մէջ, քանի որ այդ երկիրը, ինչպէս եւ անդրկովկասեան միւս երկրները, Ռուսաստանի մասն էին կազմում եւ ենթակայ էին նրա օրէնքներին:

Անդրկովկասեան Հանրապետութիւնը քաղաքացիութեան հարցով չզբաղուեց: Նախ՝ որովհետեւ նա շատ կարճատեւ եւ փոքրկալի կեանք ունեցաւ պետական կազմակերպութեան վերաբերեալ գործերով զբաղուելու համար, եւ ապա՝ որ քաղաքացիութեան հարցը նրա ժողովուրդների համար աւելի շուտ ձեւական կամ իրաւաբանական նշանակութիւն ունէր, քան թէ՝ գործնական: Նոր քաղաքական պայմաններում էլ Անդրկովկասը պահում էր իր տնտեսական ամբողջութիւնը, իսկ նրա բնակիչները մնում էին ընդհանուր օրէնքների ենթակայ քաղաքացիներ՝ անկախ այն հանգամանքից, թէ երկրի որ մասումն են նրանք ապրում եւ գործում:

Անդրկովկասեան Հանրապետութեան փլուզումը հիմնովին փոխեց այս վիճակը: Երկիրը բաժանուեց երեք անջատ մասերի՝ ի չիք

դարձնելով նախկին տնտեսական եւ քաղաքական ամբողջութիւնը: Բաժան-բաժան եղած մասերը անջրպետուեցին իրարից մաքսային պատնէշներով, եւ նրանցից իւրաքանչիւրի մէջ ուրոյն ռեժիմ հաստատուեց: Բայց որ ամէնից գլխաւորն է, ազգային հարցերը անդրկովկասեան ժողովուրդների համար բոլորովին այլ հանգամանք առան: Այդ հարցերն այլեւս չպէտք է լուծուէին ընդհանուր պետութեան շրջանակում, ընդհանուր օրէնքների պարտադրութեամբ, այլ՝ անջատ պետութիւնների փոխարաբերութիւններով, որոնք կարող էին եւ խաղաղ ընթացք չուներալ, ինչպէս որ չուներան փաստօրէն:

Այս հանգամանքներում, Վրաստանի հայ ազգաբնակչութիւնը եւ յատկապէս նրա այն մասը, որ ուշ ժամանակներում էր հաստատուել այնտեղ, ողբերգական վիճակի էր մատնւած: Վրաստանը նրա համար այլեւս նախկին հրապոյր չէր ներկայացնում մի քանի պատճառներով: Նախ՝ որովհետեւ օրուայ իշխանութիւնը առաջուայ պէս մէկ աչքով չէր նայում հային եւ վրացուն, շրջապատի ազգայնամոլութիւնից ազդուած՝ նա խորութիւն էր դնում սրանց միջեւ՝ ամէն բանում յետ մղելով մէկին եւ առաջ քաշելով միւսին, թէւ նա աշխատում էր վարագուրել այս ազգային խտրականութիւնը դասակարգային պայքարի ֆրագելոլոգիայով: Այնուհետեւ՝ Վրաստանի հանրային եւ մշակութային կեանքը շատ բնական եւ շատ հասկանալի ընթացքով ազգայնամոլում, վրացական գոյն էր առնում, իսկ սրան յիշեալ հայութիւնը վարժ չէր: Եւ վերջապէս՝ Վրաստանը այլեւս տնտեսագործութեան համար այն կարելիութիւնները չուներ, ինչ որ առաջ, երբ Թիֆլիսը Անդրկովկասի կառավարչական կենտրոնը եւ նրա ներքին ու արտաքին առեւտրի հանգոյցն էր հանդիսանում:

Ողբերգականն այս կացութեան մէջ այն էր, որ Վրաստանի նորեկ հայութիւնը, վերոյիշեալ բոլոր անպատեհութիւնները զգալով եւ գիտակցելով հանդերձ, չէր կարող միանգամից կտրել իր կապերը այս երկրի հետ: Որովհետեւ տարիների եւ տասնեակ տարիների ընթացքում տնտեսական բազմապիսի յարաբերութիւններ էին ստեղծուել նրանց միջեւ, որոնք մի օրից միւսը խզուել չէին կարող: Մարդիկ ահագին աշխատանքով տներ, այգիներ, գործարաններ, արհեստանոցներ, մեծ եւ փոքր խանութներ էին ձեռք բերել: Ինչպէ՞ս ձգէին եւ ո՞ւմ ձգէին այս ամէնը՝ Վրաստանից հեռանալու համար, անգամ եթէ վերջինս կրկնապատիկ անհրապոյր երեւար նրանց աչքում:

Միւս կողմից՝ թէպէտ եւ Վրաստանի այս հայութիւնը հետզհետէ աւելի ու աւելի հետաքրքրւում էր նրա ճակատագրով, բայց եւ այնպէս չէր վստահանում վերջնականապէս հայրենիք վերադառնալ, որովհետեւ նրա վիճակը դեռ անկայուն էր եւ վտանգների ենթակայ:

Անշուշտ ժամանակի խնդիր էր միայն, որ այս վարանումը վերանար, եւ արդէն նա 1920թ. ամռան դէպքերի ազդեցութեամբ զգալի կերպով թուլացել էր, երբ թիւրք-բուլղերէիկեան դաւերը եկան նորից դէպի յոռետեսութիւն մղելու ամէնքին:

Այս կացութեան հանդէպ ի՞նչ վերաբերմունք ունէին Վրաստանի եւ Հայաստանի վարիչները: Նրանք երկուսն էլ ցանկանում էին, որ Վրաստանի հայութիւնը վերադառնայ Հայաստան: Դեռ 1918թ. ամռանը, Հայոց Ազգային Խորհրդի մեկնելու առթիւ, վրաց մամուլը գրեթէ միաբերան այս պահանջն էր դնում: Հայ-վրացական պատերազմից յետոյ աւելի եւս յաճախ էր լսուում նոյն պահանջը: Ինչ խօսք, որ Հայաստանի վարիչները որեւէ առարկութիւն չէին կարող ունենալ սրա դէմ, նրանց ձգտումն էր, որ Հայաստանը հանուր հայութեան հաւաքատեղին դառնայ, ուր մնաց Վրաստանի հայութեանը, որի աջակցութիւնն այնքան անհրաժեշտ էր երկրի վերաշինութեան համար:

Տարբերութիւնը մեր եւ վրացիների մէջ այն էր, որ մենք ցանկանում էինք, որ Վրաստանի հայութիւնը վերադառնայ հայրենիք ոչ թէ իբրեւ ընչազուրկ գաղթականութիւն, այլ իբրեւ մի բարեկեցիկ տարր, որ կարող էր իր երկրի տնտեսութեանը եւ բարգաւաճմանը զարկ տալ: Ամէն տեղից դէպի Հայաստան էին դիմում նպաստի եւ օգնութեան կարօտ բազմութիւններ: Մենք ցանկանում էինք, որ Վրաստանից գոնէ հայութիւնը այլ վիճակով մեզ հանէր:

Ուրիշ կերպ էին մտածում վրաց ղեկավարները: Նրանք ձգտում էին, բոլոր երեւոյթները պահելով հանդերձ, այնպէս անել, որ Վրաստանի հայութիւնը չնչին փոխհատուցումով թողնի իր ինչքն ու ստացուածքը վրացիներին եւ մերկանդամ տուն դառնայ: Այս միտքը նրանք հրապարակօրէն չէին արտայայտում, իհարկէ, սակայն նրանց ամբողջ քաղաքականութիւնը Վրաստանի հայութեան հանդէպ սրան էր հետամտում:

Ահա այս հիմնական տարբերութեամբ են բացատրուում մեր եւ վրացիների միջեւ եղած տարածայնութիւնները քաղաքացիութեան խնդրում: Վրաց ղեկավարներն այն տեսակէտին էին, թէ ինչպէս ռուսաց պետութիւնից մնացած ընդհանուր գոյքերի խնդրում, նոյնպէս եւ Վրաստանում գտնուած հայերի քաղաքացիութեան խնդրում, իրենք իրաւագօր են միակողմանի կերպով օրէնքներ հանելու եւ գործադրելու: Մենք, ընդհակառակը, պնդում էինք, որ անդրկովկասեան հանրապետութիւնները, եւ մասնաւորապէս Հայաստանն ու Վրաստանը, հպատակութեան կամ քաղաքացիութեան վերաբերեալ օրէնքները պէտք է կազմեն փոխադարձ համաձայնութեամբ եւ այն հիմունքով, որ նախ՝ մի մարդ չբռնադատուի, հակառակ իր կամքի, այս կամ այն պետութեան հպատակ դառնալու, եւ ապա՝ ե-

թէ մէկը ապրելով մի պետութեան հողի վրայ, չի ուզում նրան հպատակ դառնալ՝ սրա պատճառով նրա սեփականատիրական իրաւունքը իր գոյքի եւ ստացուածքի վրայ որեւէ չափով չսահմանափակուի:

1919թ. սեպտեմբերին Թիֆլիսում գումարուած հայ-վրացական ծանոթ խորհրդաժողովի ժամանակ, Հայաստանի պատուիրակութիւնը յայտարարում է.

*«Վրաստանի հողի վրայ շատ հայեր կան, որոնք առաջ ռուսահպատակներ էին, եւ մինչեւ հիմա էլ չեն որոշել, թէ ի՞նչ հպատակութիւն պէտք է ընդունին: Հայկական պատուիրակութիւնը այս հարցին արտակարգ կարեւորութիւն է տալիս եւ կարծում է, որ նա չի կարող լուծուել անջատ եւ միակողմանի օրէնսդրութեամբ հանած վճռով, այլ պէտք է լուծուի երկու հանրապետութիւնների փոխադարձ համաձայնութեամբ:*

*Վրաց պատուիրակութիւնը պատրաստակամութիւն է յայտնում այս հարցի մասին օրէնսդրական կարգով այնպիսի որոշում հանել, որ միանգամայն բաւարարի հարեւան հանրապետութիւնը»<sup>111</sup>:*

Սակայն, այս յայտարարութիւնը մնաց մեռած տառ: Որովհետեւ սա էլ էր պատկանում այն «զիջումների» թուին, որոնց փոխարէն վրաց պատուիրակութիւնը պահանջում էր մեզնից Ախալքալաքն ու Հայկական Բորչալուի հիւսիսային մասը...

Մենք գլխաւոր գծերով ներկայացրինք այն քաղաքականութիւնը, որ որդեգրել էին մեր դէմ Վրաստանի ղեկավարները՝ իրենց ժողովրդի ազգային-պետական ինքնորոշումը հետամտելու օրերից սկսած: Դիտմամբ խոյս տուինք մի շարք մանրամասնութիւններից, որոնք խիստ բնորոշ են այս քաղաքականութեան համար, որպէսզի ընթերցողի ուշադրութիւնը կենտրոնացած մնայ հայ-վրացական կնճիռի հիմնական խնդիրների վրայ:

Ներկայ գլխում մեզ զբաղեցնում էր այն հարցը, թէ ազգային ինքնորոշման գաղափարի հիմքում ընկած էթիկական կամ բարոյական ընթերցումները ինչ չափով էր արտայայտուում վրաց ղեկավարների գործնական քաղաքականութեան մէջ: Ուրիշ խօսքով՝ թէ ազգային ինքնորոշման հետապնդող նրանց գործնելիքները որքան էր ներդաշնակուում միջազգային կամ աւելի ճիշդ, հարեւանական իրաւախոհութեան եւ արդարութեան պահանջներին: Եւ մենք տեսանք, որ վրաց ղեկավարների քաղաքականութիւնը, մասնաւորապէս հայ-վրացական փոխարաբերութիւնների խնդրում, չափազանց հեռու էր եւ իրաւախոհութիւնից եւ արդարութիւնից:

Մենք տեսանք, որ նրանք, Անդրկովկասեան Հանրապետութիւնը ղեկավարելու պատասխանատուութիւնը ստանձնելով՝ այդ Հանրապետութեան ճգնաժամային պահին, զաղտնի դիւանագի-

տութեան վատթար միջոցներով, դաւեցին իրենց հաւատարիմ դաշնակցին՝ նրան առանց որեւէ նախազգուշացման, միմակ ձգելով ահարկու թշնամու առաջ:

Տեսանք նաեւ, որ այս ձեւով Վրաստանի անկախութիւնը յայտարարելուց յետոյ՝ վրաց ղեկավարները, չնայած իրենց հանդիսաւոր յայտարարութիւններին, թէ խնայող եւ միմչեւ իսկ պաշտպանող վերաբերմունք պէտք է ունենան դէպի ծանր ողբերգութեան մատնուած երեկուայ դաշնակիցը՝ նրա դէմ գրեթէ բացայայտ թշնամական դիրք բռնեցին՝ բռնագրաւելով նրա հողերը, անարգանքի ենթարկելով նրա կառավարութիւնը, հալածելով նրա գաղթականներին ու փախստականներին, զրկելով նրան ընդհանուր պետական գոյքերից, յափշտակելով Վրաստանում մնացած նրա ստացուածքը եւ այլն:

Արդ, ի՞նչ ազդեցութիւն ունեցան այս իրադարձութիւնները հայ-վրացական փոխյարաբերութեանց վրայ, եւ ի՞նչ շահեց նրանից Վրաստանը:

Յարաբերութիւնները թունաւորուեցին ծայր աստիճանի: Այն ներհակութիւնը, որ վրաց ազնուականութիւնը եւ հայ բուրժուազիան, տասնեակ տարիների ընթացքում չէին կարողանում սերմանել հայ եւ վրացի ժողովուրդների միջեւ՝ իրենց դասակարգային հակամարտութիւնը քօղարկելու համար՝ այդ ներհակութիւնը ընդամենը մի քանի ամիսների ընթացքում ծաւալուեց աննախընթաց չափով, շնորհիւ վրաց սոցիալ-դեմոկրատիայի եւ նրա շուրջը բոլորած հոսանքների ազգայնամոլ քաղաքականութեան: Փոխադարձ անվստահութիւնը, կասկածամտութիւնը, չարախնդութիւնը յատկանշական դարձան այս շրջանում երկու կողմերի համար էլ: Բանն այնտեղ հասաւ, որ վրաց մամուլը զսպուած կամ բացայայտ ձեւով գոհունակութիւն էր յայտնում Բագուայ անկման առթիւ, թէւ նա լաւ գիտէր, որ այդ օրերին ամբողջ հայութեան սրտից արիւն էր կաթում Բագում տեղի ունեցած գազանութիւնների պատճառով, որոնց զոհ էին գնացել մի քանի տասնեակ հազար հայեր:

Միւս կողմից՝ հայ ազգայնականները ուրախանում էին, երբ Վրաստանում ապստամբութիւններ էին բռնկում, կամ երբ նրա կառավարութիւնը որեւէ դժուարութեան էր մատնուում ներքին կամ արտաքին քաղաքականութեան մէջ: Խոցուած ազգային ինքնասիրութիւնը շատ էր մթազնել նրանց գիտակցութիւնը, որպէսզի հասկանալ կարողանային, որ ստեղծուած պայմաններում հայ ժողովրդի համար կենսական անհրաժեշտութիւն էր Վրաստանի կանգուն մնալը՝ ինչքան էլ պախարակելի լինէր նրա ղեկավարների ընթացքը:

Այս թունաւորուած փոխյարաբերութիւնները ոչ միայն անհնարին դարձրին երկու հարեւան պետութիւնների իրարհասկացողու-

թիւնն ու մերձեցումը, որ այնքան անհրաժեշտ էր նրանց բարգաւաճման եւ միմչեւ իսկ գոյութեան համար, այլեւ մղեցին նրանց դէպի մի շարք ընդհարումներ եւ հակամարտութիւններ, որոնք աղէտաբեր եղան երկուսի համար էլ:

Օրինակի համար վերցնենք հայ-վրացական պատերազմը: Մենք խորապէս համոզուած ենք, որ վրաց զինուորական եւ քաղաքացիական իշխանութիւնները երբեք իրենց թոյլ չէին տայ Լօռուայ հայ գիւղացիների վրայ գործադրելու այն բռնութիւնները, ինչ որ նրանք գործադրում էին: Համոզուած ենք նաեւ, որ անգամ այդ բռնութիւնները չէին կարող դրդել հայ ժողովրդին զէնք բարձրացնելու վրաց ուզուրպատորների դէմ, եթէ ժողդանիայի կառավարութիւնը Լօռուայ դէպքերին նախորդող իր քաղաքականութեամբ ծայրայեղօրէն լարած չլինէր երկու ժողովուրդների յարաբերութիւնները՝ մի կողմից շարունակ հայերի ազգային եւ պետական շահերը ոտնահարելով, իսկ միւս կողմից վրացիների շովետական տրամադրութիւնները իրահրելով:

Այս հանգամանքը շատ լաւ էին գիտակցում Ինտերնացիոնալի մեր ներկայացուցիչները՝ Ա. Սիարոնեան, Մ. Վարանդեան եւ Յ. Օհանջանեան<sup>112</sup>, որոնք 1919թ. մայիսեան հայ-վրացական հողային վէճերը հարթելու նպատակով Փարիզում գումարուած խորհրդաժողովից պահանջում էին դատի ենթարկել վերոյիշեալ ամօթալի պատերազմի հեղինակներին եւ մեղաւորներին<sup>113</sup>:

Նրանք շատ լաւ գիտէին, որ Ինտերնացիոնալի առաջ ժողդանիան եւ իր ընկերները ծիծաղելի կը դառնային, եթէ կրկնէին այն բացատրութիւնը, որ նրանք տալիս էին այդ պատերազմին իրենց պարլամենտում՝ ասելով, թէ Հայաստանի կառավարութիւնը զէնք է բարձրացրել Վրաստանի դէմ, որովհետեւ նրա ասելով, «մեր սահմանի վրայ, հայկական մի գիւղում մեր զինուորները վիրաւորանք են հասցրել բնակիչներին<sup>114</sup>»...

Մի ուրիշ օրինակ է հանդիսանում հայ-վրացական եւ անդրկովկասեան խորհրդաժողովների պարագան: 1918թ. աշնանը եւ 1919թ. ընթացքին մի քանի անգամ փորձեր եղան այսպիսի խորհրդաժողովներ կայացնելու՝ նպատակ ունենալով հայերի եւ վրացիների կամ անդրկովկասեան երեք գլխաւոր ժողովուրդների միացեալ ճակատ կազմել արտաքին ուժերի եւ վտանգների դէմ: Թողնենք, որ վրաց կառավարութեան նախածեռնած փորձերը երբեմն կատարուում էին ոչ-վայելուչ եւ միմչեւ իսկ վիրաւորական ձեւով: Նրանց յաջողութիւնը բոլոր պարագաներում կարելոր էր ինչպէս Վրաստանի, նոյնպէս եւ Հայաստանի համար: Բայց եւ այնպէս ծրագրուած խորհրդաժողովները չէին գումարուում, կամ, գումարուելու պարագային, արդիւնք չէին տալիս, բացի այն դէպքերից, երբ



կողմերը, մեծ մասամբ, արտաքին ճնշման տակ, որոշ գործնական հարցերի շուրջը համաձայնութեան էին գալիս:

Ի՞նչ էր սրա պատճառը: Այն, որ փոխադարձ անվստահութիւնը թանձր վարագոյր էր քաշել երկու երկրների միջեւ: Մեծ էր այս անվստահութիւնը մանաւանդ Հայաստանում: Համաձայն ժողովրդական ասացուածքի, թէ «սեւ օձ տեսածը սեւ չուանից էլ կը վախենայ», հայերը վրաց կառավարութեան կողմից եղած ամեն մի այսօրինակ առաջարկի ժամանակ յետին նպատակներ էին գուշակում նրա մօտ: 1919թ. գարնանը վրաց կառավարութեան հրաւերով, Թիֆլիսում Անդրկովկասեան Հանրապետութիւնների խորհրդաժողով պիտի գումարուէր, որի մէջ, ըստ մեր ունեցած տեղեկութիւնների, պէտք է քննուէին Դենիկինի<sup>15</sup> դէմ զինակցութիւն հաստատելու եւ Անդրկովկասեան Հանրապետութիւնների կոնֆեդերասիոն կազմելու հարցերը:

Այս առթիւ Հայաստանի կառավարութիւնը կազմել էր մի խորհրդակցութիւն պատասխանատու անձանց մասնակցութեամբ: Կառավարութիւնն այն կարծիքէն էր, թէ պէտք էր գնալ խորհրդաժողովին. սակայն ժողովականներից շատերը վճռականօրէն դէմ էին արտայայտուում, որովհետեւ ոչ մի վստահութիւն չուէին ոչ վրացական զինակցութեան եւ ոչ էլ նրանց դաշնակցութեան վրայ: Ի՞նչ երաշխիք ունի կառավարութիւնը, ասում էին նրանք, որ վրացիք, վճռական պահին մեզ մինակ չեն ձգի, ինչպէս որ ձգեցին թիւրքերի առաջ, որոնք աւելի մահացու վտանգ էին ներկայացնում Անդրկովկասի համար քան ռուսները: Կամ ո՞վ կարող է ապահովել, որ մեր հարեւանները, իրենց յարմար դատած վայրկեանին, չեն լքի Անդրկովկասեան կոնֆեդերասիոնը, ինչպէս որ լքեցին Անդրկովկասեան Հանրապետութիւնը... Ոմանք էլ այս առթիւ վեր էին հանում այն բոլոր զրկանքներն ու անարդարութիւնները, որ հասցրել էր վրաց կառավարութիւնը Հայաստանին, եւ պահանջում, որ վերջ տրուի «վրացիների յետեւից քարշ գալու» սովորութեանը:

Երբ այս ընդդիմախօսների դէմ «վրացական օրիէնտասիոնի» կողմնակիցներից մէկը փորձեց արդարացնել Վրաստանի անջատուելը Անդրկովկասեան Հանրապետութիւնից խորտակուող նախից դուրս նետուելու օրինակը բերելով՝ նա ստիպուած եղաւ կարճ կապել իր խօսքը, ընելով ժողովասրահի խորքից հետեւեալ բացազանչութիւնը.

- Այո, բայց վրացիք ոչ միայն դուրս նետուեցին խորտակուող նախից այլ եւ արքայի կողմից նրան դէպի ալիքների անդունդը...

Կառավարութիւնը վերջ ի վերջոյ պատուիրակներ ուղարկեց Անդրկովկասեան խորհրդաժողովին, բայց հասկանալի է, որ նա, այսօրինակ հանրային կարծիք ունենալով իր յետեւը, չէր կարող ո-

րել վճռական ընթացք բռնել վերոյիշեալ կարեւոր խնդիրներում, որով եւ խորհրդաժողովը ապարդիւն ցրուեց:

Նոյն հիմնական պատճառներով նոյն վախճանն ունեցան եւ յետագային հրաւիրուած անդրկովկասեան կամ հայ-վրացական խորհրդաժողովները:

Աւելի եւս ծանր անդրադարձում ունեցաւ այս փոխադարձ անվստահութիւնը երկու երկրների դիւանագիտական գործնութեան վրայ Եւրոպայում՝ հաշտութեան վեհաժողովների օրերին: Առողջ քաղաքական դատողութիւնը հրահանգում էր միացեալ ճակատով ներկայանալ այս վեհաժողովներին եւ հաւատ ներշնչել, որ Հայաստան ու Վրաստանը կարող են բարի հարեւանութեամբ եւ միացեալ ուժերով ապահովել խաղաղութիւնը Անդրկովկասում: Նոյն խորհուրդն էին տալիս նրանց եւ օտար դիւանագետները, որոնք Անդրկովկասի եւ մասնաւորապէս Հայաստանի եւ Վրաստանի անկախութեան համար էական պայման էին նկատում հայ-վրացական համերաշխութիւնը: Բայց եւ այնպէս մինչեւ վերջն անհնարին եղաւ ցանկալի համերաշխութիւնը գլուխ բերել:

Այս տեսակէտից խիստ բնորոշ է այն պատմութիւնը, որ անում է վրաց պատուիրակութեան խորհրդական Զ. Աւալովը՝ Սան Ռէմօի վեհաժողովի<sup>16</sup> ժամանակ Հայաստանի եւ Վրաստանի ներկայացուցիչների միջեւ անցած-դարձածի մասին, «Վրաստանի անկախութիւնը միջազգային քաղաքականութեան մէջ 1918-1921 թուերին» ծանօթ գրքում:

Այդ վեհաժողովում պէտք է որոշուէր անդրկովկասեան հանրապետութիւնների հարցը: Անգլիան խիստ շահագրգռուած էր, որ նրանց անկախութիւնը ճանաչուի դաշնակից պետութիւնների Գերագոյն խորհրդի կողմից, բայց սրա համար նա անհրաժեշտ էր նկատում, որ անդրկովկասեան հանրապետութիւնները նախապէս համաձայնութեան գային իրենց վիճելի խնդիրները խաղաղ ճանապարհով կարգադրելու մասին:

Այս համաձայնութիւնը գլուխ բերելու նպատակով՝ Լորդ Քերզնի<sup>17</sup> ներկայացուցիչը՝ Ռոբերտ Վանսիտարտ, Սան Ռէմօի վեհաժողովից մի շաբաթ առաջ (1920թ. ապրիլի 13-ին) գալիս է Փարիզ եւ, իր մօտ կանչելով Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի ներկայացուցիչներին՝ խիստ ազդու խօսքերով յորդորում է նրանց, որ համաձայնութիւն կայացնեն վիճելի հարցերի եւ, մասնաւորապէս, Բաթումի շուրջը յարուցուած վեճերի մասին: «Գերագոյն խորհուրդի շրջաններում շատերը այն կարծիքին են, ազդարարում է նա, թէ Անդրկովկասեան հանրապետութիւնները ապագայ չունեն, որովհետեւ նրանք անընդունակ են որեւէ համերաշխութեան եւ հիւժուում են փոխադարձ զժողութիւնների մէջ»:

Երկու օր ժամանակ է տրուում այս հանրապետութիւնների ներկայացուցիչներին պահանջուած համաձայնութիւնը կայացնելու համար: Սակայն երեք օրուայ անընդհատ բանակցութիւններից յետոյ էլ նրանք չեն կարողանում վերջնական պատասխան տալ Վանսիտարտին, որովհետեւ Բաթումի շրջանի եւ, մասնաւորապէս, այդ նաւահանգիստը հայկական երկաթուղիով անմիջապէս Կարսի կապելու խնդրի շուրջը համաձայնութիւն չէ կայանում Հայաստանի եւ Վրաստանի միջեւ:

Նորից խորհրդակցութիւններ Վանսիտարտի ներկայութեամբ (ապրիլի 16-ին), նորից յորդորներ վերջինիս կողմից, որ վիճող կողմերը զիջին միմեանց: «Մի՞թէ ձեզ համար պարզ չէ, ասում էր նա ի միջի այլոց, որ օրինակի համար, ձեզ զէնք եւ ռազմամթերք ուղարկելու գործը<sup>118</sup> ձգձգուեց հէնց ձեր անհամաձայնութիւնների պատճառով, որովհետեւ վախենում էին, թէ դուք այդ զէնքը կը գործադրէք ձեր փոխադարձ վէճերը լուծելու համար»:

Այս յորդորներն էլ ազդեցութիւն չունեցան: Ընդհակառակը, նոյն օրը նշանակուած հայ-վրացական խորհրդակցութեան ժամանակ, կողմերն աւելի եւս տարամերժ դիրք բռնեցին իրար հանդէպ:

Ապրիլի 21-ին բանակցութիւնները վերսկսուեցին Անդրկովկասեան հանրապետութեանց պատուիրակների միջեւ, Վանսիտարտի ներկայութեամբ, Սան Ռեմոյում, երբ արդէն Գերագոյն Խորհուրդի նիստերն սկսուած էին: Ձ. Աւալովը հետեւեալ տողերով է ներկայացնում անգլիական ներկայացուցչի ջանքերը՝ համաձայնութեան բերելու վիճող կողմերին:

«Վանսիտարտը... հաղորդեց, որ ինչպէս ինքն սպասում էր եւ ինչպէս որ մեզ նախազգուշացրել էր, Գերագոյն Խորհուրդը ամենից առաջ սկսեց զբաղուել մեր հանրապետութիւններին վերաբերեալ հարցերով: Հակառակ խոստման, մենք երեքշաբթի օրը (20-ը ապրիլի) չներկայացրինք նրան ստորագրուած համաձայնագրերը: Նա խոսում է բոլորովին բաց: Եթէ անդրկովկասեան հանրապետութիւնների միջեւ համաձայնութիւն չկայանայ հէնց այժմ եւեթ, երբ Գերագոյն Խորհուրդն սպասում է դրան, հետեւանքների մասին պատասխանատու պիտի մնանք ինքներս: Մեր ներդաշնակուած, համերաշխ գործունէութիւնն անհրաժեշտ է առանձնապէս ներկայ վայրկեանին, երբ մեզ վտանգ է սպասում հիւսիսից: Իւրաքանչիւր ըրովին թանկ է: Քիչ էլ որ անցաւ, Գերագոյն Խորհուրդն այլեւս մեզնով չի հետաքրքրուի»:

«Ճիշտ է,- շարունակեց Վանսիտարտը,- ես ինքս լիազօրութիւն չունիմ հարցեր վճռելու, բայց կարծում եմ, որ վայելում եմ իմ գլխաւորների վստահութիւնը, եւ որ իմ կարծիքը նրանց համար նշանակութիւն ունի: Արդ, եթէ հէնց այժմ եւեթ չիրականանայ այն,

ինչի մասին ես աշխատում եմ, ինձ կը մնայ խոստովանել իմ անզօրութիւնը եւ խնդրել, որ ինձ ազատեն վրաս դրած պարտականութիւնից, որից յետոյ ես ձեռքբերս կը լուսան եւ մի կողմ կը քաշուեմ... Ուղղակի կ'ասեմ, որ ես անկարող եմ հասկանալ, ես վճռապէս իրաժարում եմ հասկանալ, թէ ինչու դուք, այսքան հասարակ, այսքան պարզ մի խնդրի շուրջը համաձայնութիւն չէք կայացրել: Ինչու՞ն է խնդիրը. ինչու՞ դուք չէք ցանկանում զիջումների գնալ, երբ դրա հետեւանքներն այնքան թանկագին, այնքան նպաստաւոր պէտք է լինին ձեզ համար: Մի վերջին անգամ էլ ես դիմում մ ձեզ իմ խորհրդով. հաւատացէք, որ նա բարեկամութեան թելադրանք է»:

Այս խօսքերի ազդեցութեան տակ, պատուիրակութիւնները յաջորդ օրը երկու նիստ են ունենում: Կողմերն այստեղ փոխադարձաբար մի շարք զիջումներ են անում, հայերը այլեւս չեն պնդում ճորտի ձախ ափը իրենց պետական գերիշխանութեան տակ ունենալու վրայ, վրացիք էլ չեն առարկում, որ Հայաստանը ճորտի ձախ ափով երկաթուղի անցկացնի Կարսը Բաթումին միացնելու համար: Վէճն այժմ կենտրոնանում է այդ երկաթուղիի իրաւական վիճակի շուրջը: Մեր պատուիրակները պահանջում են համաձայնագրի մէջ մտցնել, որ այդ երկաթուղիին իր հունով, շինութիւններով եւ այլ պարագաներով Հայաստանի կատարեալ սեփականութիւնն է կազմում, վրաց պատուիրակները Հայաստանի սեփականատիրութեան իրաւունքի դէմ ըստ էութեան չառարկելով՝ աւելորդ են նկատում համաձայնագրի մէջ մտցնել հայերի պահանջած լրացումը: Բոլոր ջանքերը՝ համաձայնութեան բերելու կողմերին այս համեմատաբար երկրորդական կէտում՝ անցնում են ապարդիւն, որից յետոյ անգլիացի ներկայացուցիչը յայտարարում է, որ իր դերն արդէն վերջացած է եւ ինքը մի կողմ է քաշուում:

Ապրիլ 24-ին Վանսիտարտը նորից իր մօտ է հրաւիրում հանրապետութեանց ներկայացուցիչներին եւ այս անգամ պաշտօնապէս լորդ Քերզնի անունից առաջարկում, որ հայերն ու վրացիները համաձայնութեան զան ապագայ պատասխանատուութիւնից ազատուելու համար: Սակայն այս փորձը եւս ի զուր է անցնում:

Ապրիլ 26-ին Գերագոյն Խորհուրդը վերջացրեց իր աշխատանքները, առանց անդրկովկասեան հանրապետութիւնների հարցով զբաղուելու, եւ սրանց պատուիրակները ձեռնունայն Փարիզ վերադարձան:

Չենք ուզում գուշակութիւններ անել այն մասին, թէ յետագայ քաղաքական իրադարձութիւններն ինչ ընթացք կ'առնէին, եթէ հայ-վրացական տարածայնութիւնների պատճառով անդրկովկասեան հանրապետութիւնների դէ ժիւր ճանաչուը Սան Ռեմոյում կատարուէր:

Թերեւս անհիմն չէ Ձ. Աւալովի ենթադրութիւնը, որ Անգլիան, խիստ շահագրգռուած լինելով Ռուսաստանի եւ Մերձաւոր Արեւելքի միջեւ ստեղծուած պատմէշ-պետութիւնների գոյութեամբ՝ պիտի յաջողէր Անդրկովկասեան հանրապետութիւնների անկախութիւնը ճանաչել տալ Խորհրդային Ռուսաստանին, մանաւանդ որ վերջինս այդ ժամանակները շատ էր աշխատում Անգլիայի հետ բնականոն յարաբերութիւնների մէջ մտնել եւ հակամէտ էր ամեն կարգի գիջումներ անելու նրան: Թերեւս իրաւացի են եւ նրանք, ովքեր կարծում են, որ եթէ 1920-ի ապրիլին, Հայաստանը եւ Վրաստանը իրաւապէս ճանաչուէին Դաշնակից պետութիւնների կողմից եւ Ազգերի Լիգայի պաշտպանութեան տակ դրուէին՝ դա զգաստացնող աղոթքութիւն կ'ունենար Անգորայի վրայ, եւ վերջինս մատերի արանքով չէր նայի Քեազիմ Կարաբէքիր փաշայի պատերազմական ծրագիրներին, մանաւանդ, որ այդ ծրագիրները, ինչպէս այժմ պարզուած է, շատ էլ չէին ոգեւորում Անգորային: Սրանք աւել կամ պակաս չափով հաւանական ենթադրութիւններ են, որոնք կարող էին իրականացնալ կամ չիրականացնալ: Եականն այստեղ այն է, որ ինչպէս Հայաստանի, նոյնպէս եւ Վրաստանի պատուիրակները խիստ մեծ յոյսեր կապելով՝ Սան Ռեմոյի հետ եւ համոզուած լինելով, որ այս յոյսերի իրականացումը կախուած է նրանց համերաշխութիւնից՝ այնուամենայնիւ մինչեւ վերջը չկարողացան համաձայնութեան գալ մի փոքրիկ հարցի շուրջը եւ տանուլ տուեցին իրենց գործը:

Հիմա այս պատմութիւնը քաղաքական գաւեշտի տպաւորութիւն է թողնում ընթերցողի վրայ, եւ Ձ. Աւալովն էլ գաւեշտական զօժերով է ներկայացնում նրա գլխաւոր դերակատարներին: Սակայն նրա տակը մի խոր ողբերգութիւն կայ, որ վրիպում է մեր հեղինակի ուշադրութիւնից: Ողբերգութիւնն այն է, որ ինչպէս Անդրկովկասում, նոյնպէս եւ Եւրոպայում հայ-վրացական յարաբերութիւնները թունաւորուած էին անվստահութեան եւ կասկածամտութեան թոյնով: Եթէ այս անվստահութիւնը չլինէր, եթէ մասնաւորապէս հայ պատուիրակները անցեալի դառը փորձերի հիման վրայ կասկածներ չունենային, թէ Վրաստանը հետամտում է Հայաստանի արտաքին հաղորդակցութեան ճանապարհները իր հակակշիռ տակ պահել, որպէս զի յետագային կարողանայ գերիշխանութիւն բանեցնել նրա գլխին, մի կասկած, որ իր արդարացումը գտնում է այս գործում վրաց պատուիրակութեան նախագահ Զխէիձէի բռնած ընթացքի<sup>19</sup> մէջ, կրկնում ենք, եթէ այս ամենը չլինէր, Բաթումի հետ կապուած հարցերի երեք քառորդը բնաւ հրապարակ չէին գայ, իսկ մնացած մի քառորդն էլ երկու ժամում կը լուծուէր:

Ահա թէ ուր կարող է հասցնել արդարութեան եւ իրաւախոսութեան անտեսումը հարեւանական յարաբերութիւնների մէջ...

Այս անվստահութիւնն ու կասկածամտութիւնը օրիասական դեր կատարեցին նոյնիսկ այնպիսի մի ծանրակշիռ գործում, որպիսին էր Հայաստանին եւ Վրաստանին անմիջականօրէն սպառնացող արտաքին ուժերի դէմ միացեալ ճակատ կազմելու գործը: Այդ արտաքին ուժերն էին Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնը եւ քեմալական Թիւրքիան, որոնց մէջ 1919թ. աշնանից խիստ որոշ բարեկամութիւն էր հաստատուած:

Հայաստանում ոչ մի լուրջ մարդ տարակոյս չունէր, որ եթէ Խորհրդային Ռուսաստանը իր թաթը դնէր Վրաստանի մէջքին՝ մեր անկախութիւնը վայրկենապէս ի չիք կը դառնար, որովհետեւ խորհրդային իշխանութիւնը կրկնակի պատճառներ ունէր թշնամութեամբ վերաբերուելու դէպի մեր հանրապետութիւնը. նախ՝ որ նա դաշնակից պետութիւնների հետ յարաբերութիւնների մէջ էր եւ ապա՝ որ նրա մէջ ժողովրդական կարգեր էին իշխում: Միւս կողմից վրաց ղեկավարները եւս կասկած չունէին, որ եթէ Հայաստանը Թիւրքիայի իշխանութեան տակ ընկնի, Վրաստանն էլ չպիտի կարողանայ իր գլուխը պահել՝ հարաւի կողմից թիրջական, իսկ հիւսիսի եւ արեւելքի կողմից բոլշեւիկեան ներխուժման վտանգին ենթարկուելով: Այս միտքը յստակօրէն ձեւակերպում է Ծերեթելին Ինտերնացիոնալի Լիւցերնի խորհրդաժողովում ասելով. “Si L’Armenie est etranglée, s’en est fait de l’indépendance de la Georgie”<sup>20</sup>: («Եթէ Հայաստանը խեղդուեց՝ Վրաստանի անկախութեան բանը վերջացած է»):

Այս կացութիւնից ի՞նչ էր հետեւում այն, որ Հայաստանն ու Վրաստանը պէտք է իրենց ուժերը միացնէին՝ թիրջ-բոլշեւիկեան գրոհի դէպքում ըստ կարելոյն երկար դիմանալու համար, մանաւանդ որ նրանցից ոչ մէկը եւ ոչ միւսը բնաւ հակամէտ չէր երեւում, իր ուժի տկարութեան պատճառով, առանց ընդդիմութեան անձնատուր լինել թիրջին կամ բոլշեւիկին:

Պէտք է աւելացնել նաեւ, որ հայ-վրացական միացեալ ուժը արհամարհելի քանակ չէր կարող նկատուիլ ոչ թիրջերի եւ ոչ էլ բոլշեւիկների աչքում. նախ՝ որովհետեւ այդ երկուսն էլ այն ժամանակ դեռ անկազմակերպ, կողմնակի հոգսերով ծանրաբեռնուած (յոյն-թիրջական պատերազմ, լեհական հարց, ներքին խռովութիւններ Ռուսաստանում) եւ թոյլ վիճակ ունէին, այնուհետեւ, որ հայ-վրացական ուժերի միացումը կը փարատէր մենակութեան յուսալքիչ զգացումը հայ եւ վրացի ժողովուրդների միջից եւ նրանց մարտական կորովը կը բարձրացնէր եւ վերջապէս, որ իրենց ուժերը միացնելով՝ հայերն ու վրացիները դաշնակից պետութիւններից ռազմական օգնութիւն ստանալու շատ աւելի մեծ շանսեր կ'ունենէին:

նային, քան անջատորեն գործելով, քանի որ այս դեպքում ամեն ոք նրանց երկուսի պարտութիւն էլ կանխորոշուած պիտի նկատէր:

Որ սրանք սին ենթադրութիւններ չեն, այլ խիստ հաւանական կարելիութիւններ, դա երեւում է այն հանգամանքից, որ Մուստաֆա Քէմալը, չնայած Քեզադին Կարաբէքիր փաշայի պնդումներին, չէր համաձայնում Հայաստանին պատերազմ յայտարարել, մինչեւ որ նա Իսուֆ Քէմալի (նախկին նախարար) միջոցով հաւաստիացնում չստացաւ ժողովանիայի կառավարութիւնից, որ պատերազմի դեպքում վրաց բանակը հայկականի հետ չէ լինելու<sup>121</sup>: Միւս կողմից՝ բոլշեւիկները, որոնք Ադրբէջանի խորհրդայնացման օրերից սկսած (1920թ. ապրիլ) Վրաստանի անկախութիւնը ոչնչացնելու ծրագիրներ էին որոնում, չձեռնարկեցին նրանց իրագործմանը, մինչեւ որ հայկական բանակը չքայքայուէր, թէւ նրանք Ադրբէջանի ճակատից եւ Սեւ ծովի ափերից էլ կարող էին յարձակուել Վրաստանի վրայ:

Հայաստանին եւ Վրաստանին սպառնացող ընդհանուր վտանգները կանխատեսելու եւ հայ-վրացական միացեալ ճակատի անհրաժեշտութիւնը կռահելու համար 1920թ. սկզբներին մարգարեական պայծառատեսութիւն չէր պահանջում: Միջակ քաղաքական գործիչն էլ այդ ժամանակ զգում էր թէ մէկը եւ թէ միւսը: Բայց անգամ Ադրբէջանի խորհրդայնացումից յետոյ, երբ թիւրք-բոլշեւիկեան գործակցութիւնը եւ նրանից սպասուող վտանգը այնքան յստակօրէն գծուած էր Հայաստանի եւ Վրաստանի քաղաքական հորիզոնի վրայ՝ այս երկու երկրները չանդրադարձան զինակցութիւն հաստատելու եւ միացեալ ճակատով վերահաս վտանգին դիմագրաւելու մտքին:

Կարծում ենք չափազանցութիւն չի լինի ասել, որ եթէ այդ օրերին իսկ Հայաստանի վարիչները հայ-վրացական զինակցութեան հարցը դնէին հանրային կարծիքի առաջ, հազիւ թէ նրանք որեւէ խրախոյս գտնէին վերջինիս կողմից: Անձամբ եւ մի քանի անգամ առիթ եմ ունեցել մեր քաղաքական շրջաններում եւ հասարակական ժողովներում խօսելու այս հարցի մասին, եւ միշտ թերահաւատ վերաբերմունք եմ գտել ունկնդիրների կողմից: Նախորդ տարիներից մնացած անվստահութիւնն ու կասկածամտութիւնը դէպի Վրաստանի վարիչներն այնպէս էին պաշարել մարդկանց միտքը, որ նրանք ոչ միայն որեւէ յոյս չէին կարող դնել Վրաստանի օգնութեան վրայ, այլեւ մեծ բան կը համարէին, եթէ նրա ղեկավարները, օգտուելով Հայաստանի նեղ դրութիւնից, նորից ոտնձգութիւններ չանէին վերջինիս դէմ<sup>122</sup>...

Նոյն վերաբերմունքն ունէին դէպի այս խնդիրը եւ վրացիք, որոնց միտքը թունաւորուած էր «հայ-ռուսական կամ հայ-բոլշեւի-

կեան գաղտնի համաձայնութեան» շինծու լուրերով եւ առասպելներով, որ եռանդով տարածում էին սոցիալ-դեմոկրատական եւ ազգայնական թերթերը: Այս հողի վրայ անվստահութիւնն այնքան մեծ էր դէպի հայ ժողովուրդը, որ թէ հայ բոլշեւիկների մայիսեան արկածախնդրութիւնը, թէ Հայաստանի բռնի խորհրդայնացումը եւ թէ փետրուարեան մեր հերոսամարտը բոլշեւիկեան բռնակալութեան դէմ որակուում էին վրացիների կողմից իբրեւ մեր բոլշեւիկների «գաղտնի համաձայնութեան» խաղեր...

Յետագային, երբ թիւրքերը գրաւելով Սարիղամիշը սկսեցին շարժուել դէպի Կարս եւ Վրաստանի առաջ ամեն կողմից քեմալական-բոլշեւիկեան ուժերով օղակուելու հեռանկարը ցցուեց իբրեւ մօտիկ օրերի հաւանականութիւն, վրաց մամուլը հաւար բարձրացրեց ընդհանուր վտանգի դէմ, իսկ նրա օրգաններից մի քանիսը՝ «Սաքարթուլեւիօ», «Սախալիսօ սաքմէ» եւ այլն, մինչեւ անգամ սկսեցին խօսիլ հայ-վրացական զինակցութեան մասին: Բայց արդէն բանը բանից անցել էր: Դէպքերը գլորում էին գահավիժօրէն՝ խառնելով այս զինակցութեան հետ կապուած հաշիւները: Նրանց ազդեցութեան տակ Վրաստանի ղեկավարները մի անգամ եւս մոռացան Ծերեթելիի խօսքը, թէ «Si L'Arménie est e'tranglée, s'en est fait de la Georgie», եւ թողնելով Հայաստանն իր ճակատագրին՝ փրկութիւն որոնեցին Թիւրքիայի բարեացակամութեան մէջ, մանաւանդ, որ Անգորայի Ազգային Մեծ ժողովը, որ ինչպէս տեսանք, Վրաստանի չէզոքութիւնը իր յաղթանակի երաշխիքներից մէկն էր համարում, 1920-ի հոկտեմբեր 21 թուակիր ծանուցագրով յայտնել էր վրաց կառավարութեանը, թէ «նա անկախ եւ ուժեղ Վրաստանի գոյութիւնը համապատասխան է նկատում Թիւրքիայի շահերին»<sup>123</sup>... Անգորան մի քանի ամիս յետոյ միայն (1921թ. փետրուարի 22-23-ին) պէտք է ցոյց տար Վրաստանին իր ժանիքները՝ քսան եւ չորս ժամուայ ընթացքում պահանջելով եւ առնելով նրանից Արդահանն ու Արդւիհը եւ ուղղելով իր թնդանոթների բերանը Բաթումի դէմ...

Այսպիսով տեսնում ենք, որ 1918թ. մայիսին Անդրկովկասեան Հանրապետութեան կշիռին վրայ դիւանագէտների խաղացած խաղը եւ դրանից յետոյ նոյն դիւանագէտների կողմից Հայաստանի եւ հայ ժողովրդի հանդէպ որդեգրած եսական քաղաքականութիւնը, որի մէջ հարեւանական նրբանկատութիւնը, իրաւախտութիւնը եւ արդարութիւնը գրեթէ իսպառ բացակայում էին՝ այնպէս թունաւորուեցին հայ-վրացական յարաբերութիւնները, փոխադարձ անվստահութեան, կասկածամտութեան եւ ներհակութեան ախտերով այնպէս վարակեցին երկու հարեւան ժողովուրդներին, որ նրանք, հակառակ սեփական շահերի թելադրանքին, չկարողացան ներդաշնակել իրենց քաղաքական քայլերը եւ, նոյնիսկ ամենաճակատագ-

րական պահին, երբ արտաքին մահացու վտանգները կորուստ էին սպառնում հաւասարապէս երկուսին էլ՝ կարծէք գերադասեցին առանձին-առանձին զոհ գնալ, քան թէ միացած ուժերով դիմագրաւել այդ վտանգներին...

Այս ողբալի իրադարձութիւնից, մենք, ի հարկէ, չարաչար տուժեցինք, բայց ի՞նչ շահեցին Վրաստանն ու իր ղեկավարները...

\* \* \*

Դժբախտաբար, այսքան ահաւոր փորձութիւններից յետոյ էլ, հայ-վրացական փոխյարաբերութիւնները մնում են հիւանդոտ ազգայնականութեան թմրեցուցիչ ազդեցութեան տակ: Հայաստանի եւ Վրաստանի այսօրուայ վարիչները թող հազար կտոր լինեն համոզելու համար չգիտենք ում, թէ բուլշեւիկեան դիկտատուրան սիրոյ եւ համերաշխութեան կամուրջներ է հիւսել երկու երկրների միջեւ: Սրա մասին օր-աւուր կատարուող թմբկահարութիւնները երբեք աւելի չարժեն, քան բոլոր մնացած թմբկահարութիւնները, որոնցով ամէն գոյնի բուլշեւիկները տնքում են ապացուցանել, թէ խորհրդային երկիրը ոչ թէ տառապանքի հովիտ է, այլ՝ ընկերվարական դրախտ: Առանց քաղաքական խոշորացոյցի էլ կարելի է տեսնել, որ միջազգային համերաշխութեան պատմութեան տակ միտում են հին ազգային վէրքերը Հայաստանում եւ Վրաստանում:

Մի տարբերութիւն յամենայն դէպս կայ: Այն է, որ մինչդեռ վրաց բուլշեւիկները, քայլ առ քայլ հետեւելով իրենց մենշեւիկ ուսուցիչների քաղաքականութեանը, ամէն մարզի մէջ իրաւագրկում, յետ են մղում հայերին Անդրկովկասում եւ Վրաստանում, ընդհակառակը, հայ բուլշեւիկները, Դաշնակցականների պէս տղամարդութիւն չունին ընդվզելու այս քաղաքականութեան դէմ: Թող ապա նրանք մի անգամ քաջութիւն ունենան հարց յարուցանելու, թէ քանի որ ԽՍՀՄ-ի մէջ ընդունուած է ազգային պետութիւնների սկզբունքը, այնպէս անենք, որ Հայաստանին սահմանակից հայ աշխատաւորութիւնը, օրինակ Ախալքալաքի հայ գիւղացիութիւնը, Հայաստանի շրջանակի մէջ առնուի, մանաւանդ որ այդ աշխատաւորութիւնն ինքն էլ ցանկանում է Հայաստանին միանալ: Կամ թող մի անգամ նրանք յանդգնեն ասելու վրաց ընկերների, որ Թիֆլիսում մնացած ընդհանուր ռուսական հարստութիւնից մի փոքրիկ բաժին զիջեն Երեւանին, որ նոյնպէս ժառանգորդ է այդ հարստութեան: Վերջապէս թող, փորձի համար, նրանք, թէկուզ խնդրանքի ձեւով, առաջարկեն, որ Ներսիսեան դպրոցի ստացւածքը, որ ամբողջ Անդրկովկասեան հայութեան սեփականութիւնն է կազմում, համեմատական ձեւով բաժանուի Հայաստանի,

Վրաստանի եւ Ադրբեջանի կրթական «ժողկոմատ»-ների միջեւ: Բաւական կը լինի նմանօրինակ որեւէ մի քայլ Հայաստանի այսօրուայ ղեկավարների կողմից, որպէսզի վրաց բուլշեւիկների աչքերը իսկոյն բոցավառուեն մենշեւիկեան կամ ազգային-դեմոկրատական շովինիզմով...

Եթէ միջազգային համերաշխութիւն ասած բառը այն է, ինչ որ հայ եւ վրացի բուլշեւիկներն են հասկանում, այդպիսի համերաշխութիւն վայրկեանապէս կարելի է հաստատել երկրագնդի բոլոր անկիւններում: Սրա համար բաւական է միայն, որ զրկուած ազգերը ձայն չհանեն զրկանքի դէմ, իսկ զրկող ազգերն էլ արգելքներ չունենան իրենց շահատակութիւնների առաջ...

Դժբախտաբար, թէ բարեբախտաբար, նորմալ մարդիկ այսպէս չեն ըմբռնում ազգերի համերաշխութեան գաղափարը, այդ պատճառով էլ հին եւ նոր անարդարութիւններով պղտորուած հայ-վրացական փոխյարաբերութիւնները այսօր էլ շատ անմախամծելի վիճակ են ներկայացնում:

Այս վիճակի ակտանիշն է, որ երբ ռուս բուլշեւիկները ազգային ատելութիւններ հրահրելու ակնյայտնի դիտաւորութեամբ Վրաստանի Չեկայի մէջ բազմեցնում են հայ դահիճներ՝ վրաց հանրային կարծիքը ենթարկելով բուլշեւիկեան պրովոկասիոնին<sup>124</sup>, իսկոյն թշնամական դիրք է բռնում ամբողջ հայութեան դէմ, եւ նոյնիսկ հայկական *պոզորմների*<sup>125</sup> սպառնալիքներ են լսում վրացական շրջաններից... նոյն վիճակի ակտանիշը պէտք է համարել նաեւ, որ երբ Թիֆլիսում Միասնիկեանը<sup>126</sup> զոհ է գնում սաւառնակային մի արկածի՝ Հայաստանի բոլոր անկիւններում սկսում են շշնջալ, թէ դա «վրացիների» սարքած բանն է ...

Այս հիւանդագին յարաբերութիւնները մեզ չափազանց մտահոգում են եւ, կարծում ենք, որ նրանք չեն կարող մտահոգիչ չլինել նաեւ մեր հարեւանների համար: Որովհետեւ եթէ անցեալում նրանք երկու ժողովուրդների քաղաքական գործակցութեանն են միայն արգելք հանդիսացել՝ ապագայում կարող են աւելի եւս աղիտալի ձեւեր առնել ամէն տեսակէ պրովոկասիոնի նիւթ դառնալով եւ Անդրկովկասի կեանքը դժոխքի վերածելով: Ամէն լուրջ վէրք պէտք է ժամանակին բուժուի, այլապէս նրա շարաւր կարող է տարածուել մարմնի մէջ, վարակել արիւնը եւ մահուան պատճառ դառնալ: Սա այբբենական ճշմարտութիւն է ոչ միայն կենդանական եւ հանրային օրգանիզմների, այլ եւ միջազգային յարաբերութիւնների համար: Ինչքան պատերազմներ եւ արհաւիրքներ խնայուած կը լինէին, եթէ պատասխանատու պետական մարդիկ ժամանակին հոգ տանէին ազգային կամ դասակարգային հաւաքականութիւնների յարաբերութիւններն ազատել վրանգաւոր պալարներից:

Արդ, ի՞նչ պետք է անել հայ-վրացական յարաբերությունները շտկելու եւ անցեալի ցաւալի դէպքերի կրկնութիւնը անհնարին դարձնելու համար:

Մենք չենք կարող այստեղ, ի հարկէ, մէկ-մէկ թուել այդ յարաբերությունները փչացնող բոլոր կոնկրետ դէպքերը եւ մատնանշել նրանց վերացնելու միջոցները: Հին դէպքերից շատերը կորցրել են իրենց այժմեականութիւնը, նորերն էլ կանխատեսել չի կարելի: Անգամ փոքր ազգերի յարաբերությունները շատ են բարդ եւ հարուստ բազմապիսի պատահարներով, որպէսզի կարելի լինի նրանց ցանկը կազմել եւ ամէն մէկի համար առանձին դեղատոմս պատրաստել:

Միակ բանը, որ այժմ կարելի է անել այն է, որ ճշդուն դեկավարող սկզբունքները, որոնք պետք է հիմք ծառայեն Հայաստանի եւ Վրաստանի մէջ գոյութիւն ունեցող կամ ծագելիք ամէն մի տարածայնութեան կամ վեճ լուծելու համար:

Այս սկզբունքային խնդրում եւս մեզ խիստ արժեքաւոր օգնութիւն է հասցնում Ն. Ժորդանիան: Ինչպէս մի անգամ էլ առիթ ենք ունեցել յիշատակելու, նա «Մեր տարածայնությունները» գրքի մէջ արտայայտուում է այն իմաստով, թէ միջազգային յարաբերությունները կարգաւորելու լաւագոյն միջոցը ընկերվարական ըմբռնումի կիրառումն է այս գործում: Իսկ «... միջազգային փոխյարաբերությունների ընկերվարական ըմբռնումը, - ասում է Ժորդանիան Կարլ Մարքսի հետեւողութեամբ, - բխում է անհատական յարաբերությունների ընկերվարական ըմբռնողութիւնից: Բարոյականութեան եւ արդարութեան օրէնքները, որոնցով ճշդուն է անհատի դիրքը հասարակութեան մէջ, պետք է ճշդեն եւ ազգի դիրքը մարդկութեան մէջ»:

Եթէ այս ընդհանուր սկզբունքով կաղապարելու լինենք հայ-վրացական փոխյարաբերությունները, ապա կը ստանանք, որ, ըստ Ժորդանիայի, հայ եւ վրացի ժողովուրդները, կամ նրանց ղեկավարները, պետք է վերաբերուեն միմիեանց այնպէս, ինչպէս որ բարոյականութեան եւ արդարութեան օրէնքներով ղեկավարուող երկու անհատ վերաբերուում են միմեանց:

Կարծում ենք, որ մի աւելի ճիշդ, աւելի մարդկայնական եւ աւելի գեղեցիկ ձեւակերպութիւն հայ վրացական փոխյարաբերությունների կարգաւորման համար դժուար է գտնել: Եւ եթէ Ժորդանիան եւ իր համախոհները ժամանակին այսպիսի ըմբռնումով մօտենային այն հարցերին, որոնք այդ փոխյարաբերութեանց միւթն են կազմում, երբեք տեղի չէին ունենայ այն ցաւալի դէպքերը, որոնք պառակտեցին հայ եւ վրացի ժողովուրդները եւ նրանց անզօր որս դարձրին դարանակալ թշնամիների համար:

Պարզենք մեր միտքը մի քանի տեսակետներով:

Բարոյականութեան եւ արդարութեան օրէնքներով առաջնորդուող մարդը չի կարող իր հետ ընկերութիւն անող մարդու թիկունքին, նրանից ծածուկ, այնպիսի քայլեր կատարել, որոնք բախտորոշ նշանակութիւն ունին նրանց ընկերութեան համար: Եթէ վրացիք այս կարգով շարժուէին, նրանք Բաթումում հայ ժողովրդի գլխին չէին խաղայ Ձ. Աւալովի նկարագրած խաղը:

Բարոյականութեան եւ արդարութեան օրէնքներով ղեկավարուող մարդը չի կարող իր հետ միասին, ընդհանուր թշնամու հետ կռուի մտած մարդուն մենակ ձգել եւ մի կողմ քաշուել: Եթէ վրացիք այսպէս վարուէին նրանք մեզ հետ միասին միջոցներ կը խորհէին թիրք-անդրկովկասեան անյոյս կռուին վերջ տալու մասին, բայց ոչ թէ մեզ մենակ թողնելով թիրքերի առաջ՝ պատերազմի դաշտից յետ քաշուէին:

Բարոյականութեան եւ արդարութեան օրէնքներով շարժուող մարդը, եթէ ստացուածքի վեճ ունի մի ուրիշ մարդու՝ թոյլ չի տայ ինքնակամօրէն բռնագրաւել վիճելի ստացուածքը, այլ նախ դատի կը դնի վիճելի ստացուածքը եւ ապա միայն, համաձայն դատավճռի կը տիրանայ կամ կը հրաժարուի նրանից: Այսպիսի ինքնական արարքներ, ճիշտ է, մարդկանց մէջ պատահում են, բայց ոչ բարոյականութեան եւ արդարութեան օրէնքներով գործող մարդկանց մէջ: Արդ, եթէ վրացիք էլ վերջին կարգի մարդկանց համեմատ վարուէին, նրանք թոյլ չէին տայ իրենց, հակառակ մեր բողոքների, բռնագրաւել Հայաստանի Բորչալուն եւ Ախալքալաքը՝ այնքան պայքարների եւ մինչեւ իսկ արիւնահեղութեան պատճառ դառնալով, այլ թոյլ կը տային, որ երկուսին ներկայութեամբ կամ բացակայութեամբ մի որոշ վիճակ ստեղծուէր այդ վիճելի գաւառներում, մինչեւ որ նրանց ճակատագիրն այս կամ այն կերպ կը կարգադրուէր:

Նոյն բարոյական նկարագրի տէր մի արդար մարդ, որ խանութ է բացել կամ որեւէ այլ գործ սկսել մի ուրիշ մարդու հետ՝ չի կարող յանկարծ ասել իր ընկերակցին, թէ դու վեր կաց եւ գնա քո տունը, որովհետեւ ես մեր խանութը կամ գործը փակում եւ նրա մէջ գտնուող գոյքը իւրացնում եմ: Եթէ վրացիք էլ այսպէս վարուէին հայերի հետ՝ չէին կարող նրանց Թիֆլիսից դատարկածեռն Երեւան ճամբել՝ այնտեղ գտնուած ռուսական կամ անդրկովկասեան կամ հայկական գոյքերը գրաւելով:

Այսպէս եւ հայ-վրացական փոխյարաբերությունների հետ առնչութիւն ունեցող մնացած բոլոր հարցերում: Նրանք ամէնքն էլ ձախորդ լուծումն ստացան եւ բաւական արիւն պղտորեցին, որովհետեւ վրաց ղեկավարները նրանց մօտեցան ոչ թէ անհատական յա-

րաբերութիւնների համար պարտադիր բարոյականութեան եւ արդարութեան օրէնքներով, այլ այդ օրէնքների հիմին ոչ մի առնչութիւն չունեցող ազգային եսականութեամբ:

Ցարական շրջանի կամայականութիւններին վարժուած ռուս քաղաքացիներից մէկին, որ մեղադրուում էր ինչ որ հակաօրինական արարքի համար՝ դատաւորը հարցնում է.

- Հապա օրէնքն ինչի՞ համար է գրուում:

- Չանց առնուելու համար, պարոն դատաւոր, պատասխանում է միամիտ մեղադրեալը:

Դժբախտաբար, զանց առնուելու պարագան սկզբունքների իրականացման խնդրում շատ անելի յաճախ է հանդէս գալիս, քան օրէնքների գործադրութեան խնդրում: «Սկզբունքը սկզբունք է, իրականութիւնն էլ իրականութիւն» - ասում են, սովորաբար, գործնական մարդիկ՝ իրենց մասնաւոր նկատումները այս կամ այն հարցում առաջ տանելու համար: Լաւագոյն դէպքում, նրանք «հեռաւոր խտելի» փառապսակ են հիւսում սկզբունքների շուրջը, առանց թոյլ տալու, որ նրանք իրենց անհասանելի բարձունքներից իջնեն դէպի կեանքի «գծուած հաշիւները»:

Վրաց քաղաքական գործիչները, մեր խօսքը բացառութիւնների մասին չէ, ի հարկէ, չափազանց յաճախ են «գործնական մարդու» դիրք բռնել իրենց իսկ քարոզած սկզբունքների հանդէպ, որպէսզի մենք կարողանանք առանց վերապահութեան վերաբերուել դէպի նրանց սկզբունքային յարաբերութիւնները: Ներկայ դէպքում եւս մենք շօշափելի փաստերի կարիք ենք զգում համոզուելու համար, թէ ժողովանիւն տրամադիր է աջակցելու, որ հայ-վրացական վէճերն ու տարածայնութիւնները լուծուեն անհատական փոխյարաբերութիւնների համար պարտադիր բարոյականութեան եւ արդարութեան օրէնքների համաձայն:

Այն օրը, երբ այս համոզումը կը ստեղծուի մեր մէջ, երբ մենք կը տեսնենք որ միջազգային փոխյարաբերութիւնները կարգաւորելու համար ժողովանիւնի առաջարկած սկզբունքը, որ այնքան ներդաշնակօրէն հաշտեցնում է ազգային ինքնորոշման եւ հարեւանական պահանջները միմեանց հետ, զանց առնուելու համար չէ հրապարակ նետուիլ, այլ շիտակօրէն եւ անկեղծօրէն գործադրելու համար նաեւ հայ-վրացական կնճիռի միւթը կազմող հարցերում՝ այդ օրը կը լինի մեր քաղաքական կեանքի երջանիկ օրերից մէկը:

Որովհետեւ, չնայած բոլոր անցած-դարձածին՝ մենք, ինչպէս երէկ, նոյնպէս եւ այսօր մնում ենք այն անխախտ համոզման մէջ, թէ հայ-վրացական համերաշխութիւնն ու գործակցութիւնը անհրաժեշտ նախադրեալներից մէկն է կազմում հայ եւ վրացի ժողովուրդների ազատութեան, անկախութեան եւ բարգաւաճման համար:

## ՎՐԱՑԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԶԳՏՈՒՄՆԵՐԸ

Վստահօրէն կարելի է ասել, որ անդրկովկասեան ժողովուրդների փոխադարձ անհասկացողութեան եւ գժտութեան մէջ օրհասական դեր կատարեցին վրացական հեգեմոնիայի ձգտումները: Սկզբում սրանք վրաց սոցիալ-դեմոկրատիայի<sup>127</sup> մէջ էին արտայայտուում, կուսակցական յարաբերութիւնների վրայ էին ազդում: Սակայն, վերջը, երբ այդ սոցիալ-դեմոկրատիան վրաց ժողովրդի կամքը միահեծանօրէն ներկայացնող ազգային կուսակցութիւն դառաւ, հեգեմոնիայի ձգտումները ազգային գոյն առան եւ թունաւորեցին Անդրկովկասի քաղաքական մթնոլորտը:

Մինչ 1917թ. Փետրուարեան Մեծ Յեղափոխութիւնը վրաց սոցիալ-դեմոկրատիայի ձգտումը՝ գերիշխող դեր կատարելու անդրկովկասեան գործերում՝ ընդհանրապէս բնականօրէն երեւոյթ ունէր: Ամէն կուսակցութիւն աշխատում էր իր ազդեցութեան շրջանակը տարածել, եթէ հնարաւոր է՝ տէր եւ տիրական դառնալ պետական եւ հանրային գործերի մէջ: Վրաց սոցիալ-դեմոկրատիայի մէջ այս ձգտումը անելի եւ շեշտուած էր, որովհետեւ առաջին՝ նա միջազգային կուսակցութիւն էր, նրա մէջ բացի վրացիներից կային եւ ռուսներ, հայեր, թաթարներ եւ այլ մանր ցեղերի պատկանողներ, երկրորդ՝ ցարիզմի դէմ մղած պայքարում նա շատ աչքի ընկնող դեր էր կատարում, երրորդ՝ Անդրկովկասի մայրաքաղաքում՝ Թիֆլիսում, նա ամենաուժեղ յեղափոխական կազմակերպութիւնն էր, իսկ Անդրկովկասի արդիւնաբերական կենդրոնում՝ Բագուում մեծ ազդեցութիւն ունէր, այնուհետեւ՝ երկրի ամենայնեղափոխական տարրը՝ բանուորութիւնը գերազանցօրէն նրա ղեկավարութեան տակ էր գտնուում, եւ վերջապէս՝ նա շատ ձեռնհաս եւ հմուտ առաջնորդներ ունէր եւ խիստ լաւ էր կազմակերպուած:

Այս հանգամանքների նկատառութեամբ՝ Անդրկովկասի մնացած յեղափոխական կուսակցութիւնները ընդհանրապէս չէին ժխտում վրաց սոցիալ-դեմոկրատիայի առաջնութեան իրաւունքը երկրի ընդհանուր գործերում: Չէր ժխտում այս առաջնութիւնը եւ Գ.Յ.Ղաշնակցութիւնը, որովհետեւ նախ՝ այդ գործերը երկրորդ հերթին էին զբաղեցնում նրան, նրա գլխաւոր ուշադրութիւնը դարձած էր տաճկահայկական խնդրի վրայ, յետոյ՝ ազգային հողի վրայ եւ կան հակամարտութիւններ չկային երկու կուսակցութիւնների միջեւ, եւ ի վերջոյ՝ վրաց սոցիալ-դեմոկրատիան հակամարտութիւն չէր ցոյց տալիս հայոց ազգային գործերին խառնուելու՝ խորապէս համոզուած, որ քանի Ղաշնակցութիւնը կայ, իսկ նա ոչ միայն կար, այլ եւ օր ու աւուր ուժեղանում էր, ինքը նրանց մէջ դեր կատարել

չէր կարող, ինչպէս այդ ցոյց տուեց հայ-թաթարական ընդհարումներին միջամտելու անյաջող փորձը 1905-ին:

Այս ամէնը չէր խանգարում, որ Յ.Յ.Դաշնակցութիւնը եւ վրաց սոցիալ-դեմոկրատիան միմեանց քննադատեն եւ մեղադրեն զանազան արարքների մէջ, բայց սրանից լուրջ հետեւանքներ չէին առաջանում ոչ երկու կուսակցութիւնների եւ ոչ էլ նրանց յետեւը կանգնած ազգային զանգուածների համար:

Դրութիւնը հիմնովին փոխուեց Փետրուարեան Յեղափոխութիւնից յետոյ: Այս յեղափոխութիւնը, ինչպէս յայտնի է, մի հարուածով տապալեց ցարիզմը, ամենալայն քաղաքացիական ազատութիւններ հաստատեց եւ ընկերային բարենորոգումների ընդարձակ ասպարէզ բացաւ: Այսպիսով կամ իսպառ վերացան եւ կամ չափազանց մեղմացան յեղափոխական պայքարի այն խնդիրները, որոնք սնունդ էին տալիս վրաց սոցիալ-դեմոկրատիայի յեղափոխական եռանդին եւ նրա մէջ հեգեմոնիայի ձգտումների հրահրում:

Դրանց փոխարէն պետական եւ հանրային կեանքի մէջ միանգամից տիրական դարձաւ ազգային հարցը իր բազմապիսի երեւոյթներով: Ի՞նչ մասնակցութիւն պիտի ունենային անդրկովկասեան ազգերը երկրի կենդրոնական իշխանութեան մէջ, պէ՞տք էր շարունակել պատերազմը Տաճկաստանի հետ, թէ հաշտութիւն կնքել եւ ի՞նչ պայմաններով, ի՞նչ կարգադրութիւն պէտք էր անել հողային հարցի լուծման համար Անդրկովկասի զանազան շրջաններում, ի՞նչ հիմունքներով եւ որպիսի՞ վարչական սահմանաբաժանումներով պէտք է տեղական ինքնավարութիւն (զեմստվո) հաստատել երկրում, ի՞նչ դեր պէտք է ունենային ազգային խորհուրդները հանրային եւ պետական կեանքում, եւ այլ այս կարգի գործերի մէջ ազգային հարցը հիմնական նշանակութիւն ունէր:

Անգամ այն խնդիրները, որոնք համապետական նշանակութիւն ունէին, ինչպէս օրինակ պայքարը Ջօր. Կորնիլովի<sup>128</sup> կամ բոլշեւիկների դէմ՝ ազգային բնույթ էին ստանում Անդրկովկասում, որովհետեւ իւրաքանչիւր ժողովուրդ իր չափերի տեսակէտից էր մտտենում նրանց:

Այս հսկայական փոփոխութեանը կարծես անտեղեակ՝ վրաց սոցիալ-դեմոկրատիան, անցեալի իներցիայով, շարունակում էր իր հեգեմոնիայի քաղաքականութիւնը: Նրան մինչեւ անգամ թոււմ էր, թէ իր գերիշխանութեան շանսերը մեծացել են փետրուարեան յեղափոխութեան շնորհիւ եւ ոչ թէ նուազել: Այսպէս էր թոււմ նրան, որովհետեւ նախ՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան տիրապետող դիրքի մէջ էր գտնուում պետական կեանքում, իսկ ինքը այդ կուսակցութեան ամենագօրեղ հատուածներից մէկն էր կազմում, երկրորդ՝ Ռուսաստանի կենդրոնական իշխանութեան մէջ կամ մօտ

իր անդամները՝ Չխէիձէն, Ծերեթելին եւ ուրիշներ ղեկավարող դեր էին կատարում եւ երրորդ՝ կովկասեան ճակատում գտնուող բանակը համառուական կուսակցութիւն համարելով վրաց սոցիալ-դեմոկրատիան՝ սկզբում նրան էր նեցուկ հանդիսանում, յետագային էր միայն, որ նրա համակրանքները թեքուեցին դէպի սոցիալիստ-յեղափոխականները<sup>129</sup>:

Յեղափոխութեան առաջին շրջանի համար այս հաշիւները որոշ չափով ճիշտ էին: Կենդրոնական կառավարութեան հետ ունեցած իր ազդեցիկ կապերի շնորհիւ, վրաց սոցիալ-դեմոկրատիային յաջողուեց Անդրկովկասեան Առանձին Կոմիտէի գործերում բացառիկ դեր գրաւել: Մինչդէռ երկրի բարձրագոյն վարչութիւնը ներկայացնող այդ Կոմիտէի մէջ հայերը, թաթարները եւ ռուսները ունէին մէկական ներկայացուցիչ, վրացիք այնտեղ երկու անգամ ավելի ունէին՝ Ա. Չխենկելի եւ Բ. Աբաշիձէ: Վերջինս, ճիշտ է, սոցիալ-դեմոկրատ կուսակցութեանը չէր պատկանում, սակայն իր վրացի պաշտօնակցի՝ Չխենկելիի հետ կատարեալ համերաշխութեամբ էր ընթանում: Այնպէս որ Կոմիտէի հինգ աթոռներից երկուսը, որոնցից մէկը, ամենակարեւորը ներքին գործերի կոմիսարութեան աթոռն էր, գտնուում էին, փաստօրէն վրաց սոցիալ-դեմոկրատիայի տրամադրութեան տակ: Անդրկովկասեան գլխաւոր յեղափոխական մարմինները եւ, մասնաւորապէս բանուորական զինուորական եւ գիւղացիական Կենդրոնական Խորհուրդը, որ երկրի քաղաքական կեանքի վերին օրգանն էր հանդիսանում եւ վերջը բովանդակ իշխանութեան տէրը դարձաւ, ընկաւ այդ սոցիալ-դեմոկրատիայի գերակշռող ազդեցութեան տակ: Անդրկովկասի մայրաքաղաքը, ուր վրացական տարրը փոքրամասնութիւն էր կազմում, նոյնպէս անցաւ այդ կուսակցութեան ձեռքը, որովհետեւ նրան յաջողվեց թիֆլիսում գտնուած ռուս զինուորների ձայներով մեծամասնութիւն շահիլ քաղաքային ընտրութիւնների ժամանակ: Այդպէս եւ Անդրկովկասի պետական-հանրային կեանքի բոլոր ասպարէզներում. ամէն տեղ վրաց սոցիալ-դեմոկրատիան գերակշիռ դեր էր կատարում:

Սակայն, այս յաջողութիւնները փոխանակ ընդլայնելու այդ կուսակցութեան ազդեցութեան շրջանը, ընդհակառակը անելի եւս սեղմեցին: Պատճառն այն էր, որ նա քաշում էր իր յետեւից վրացական ազգի ջախջախիչ մեծամասնութիւնը, որով նրա գերակշռութիւնը անդրկովկասեան գործերում անխուսափելիօրէն ազգային գերակշռութեան բանուորութիւն էր ստանում: Արդ, եթէ Յ. Յ. Դաշնակցութիւնը եւ հարեւան ժողովուրդների ազգային կազմակերպութիւնները կարող էին առաջները հանդուրժել, որ ընդհանուր սոցիալ-դեմոկրատական անուան տակ գործող մի կուսակցութիւն գերակշռող դեր կատարէր համառուասական կամ համաանդրկովկա-



սեան գործերում, նրանք երբեք չէին կարող հաշտուել վրացական ազգային գերակշռութեան հետ, մանաւանդ, որ ինչպէս վերեւ տեսանք, այդ գործերի մէջ ազգային փոխարարբերութիւններին վերաբերեալ հարցերը շատ մեծ տեղ էին բռնում: Իսկ որովհետեւ անդրկովկասեան մասշտաբով էին կարող մրցել այդ վրացական գերակշռութեան դէմ, ուստի նրանք, եւ նրանց յետեւը կանգնած ազգային հաւաքականութիւնները աստիճանաբար ուժացան երկրի ընդհանուր գործերից եւ ամփոփուեցին իրենց ազգային շրջանակի մէջ, ուր վրացիք որեւէ լուրջ ազդեցութիւն ունենալ չէին կարող:

Այսպիսով, անդրկովկասեան ժողովուրդների եւ առաջին հերթին հայերի ու թաթարների հանրային հետաքրքրութիւնը խտացաւ ազգային կուսակցութիւնների եւ ազգային խորհուրդների շուրջը: Վերջիններս կամաց-կամաց ազգային իշխանութեան հանգամանք առան եւ սկսեցին սեփական հայեցողութեամբ ընթացք տալ իրենց գործերին: Այս պայմաններում, վրաց սոցիալ-դեմոկրատիային եւս այլ բան չէր մնում անել, բայց եթէ կժկուել վրացական պատերում, մանաւանդ որ, շնորհիւ Ռուսաստանում սկսուած ներքին շփոթի եւ թիրքերի կողմից սպառնացող վտանգի, համապետական խնդիրներն այլեւս հետաքրքրութիւնը չէին ներկայացնում Անդրկովկասում, ինչ որ առաջ:

Այսպիսով, վրաց-սոցիալ դեմոկրատիայի հեզեմոնիան անդրկովկասեան ժողովուրդների փոխադարձ ուժացման հոգեբանական հիմունքը ստեղծեց: Նրանց վեջնական պառակտումը ժամանակի խնդիր էր միայն...

\* \* \*

Վրաստանի անկախութեան հռչակումից յետոյ վրաց սոցիալ-դեմոկրատիան պաշտօնապէս անջատուեց Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայից եւ իրեն յայտարարեց Վրաստանի կուսակցութիւն: Ձեւականօրէն նա պահպանեց իր միջազգային կազմակերպութիւնը երկրի ներսում, նրան կարող էին անդամակցել Վրաստանի բոլոր քաղաքացիները՝ առանց ցեղային խտրութիւնների, բայց փաստօրէն նա զուտ վրացական կուսակցութիւն դարձաւ, որովհետեւ անգամ հանրապետութեան սահմաններում ապրող ռուսները, հայերը եւ մնացած այլազգիները այս կամ այն պատրուակով հեռացան նրանից:

Այլեւս նախկին ձեւերով անդրկովկասեան գործերում գերիշխանութիւն բանեցնելու մասին խօսք լինել չէր կարող, ի հարկէ, որովհետեւ մի ազգի անունից խօսող կուսակցութիւն չի կարող յոյս ունենալ ուրիշ ազգային կուսակցութիւններ իր տրամադրութիւններ

րին ենթարկելու: Չէր կարող այդ մասին խօսք լինել եւ այն պատճառով, որ հարեւան երկու գլխաւոր ազգերը՝ հայերն ու թաթարները եւս անկախութիւն էին յայտարարել եւ այդպիսով Անդրկովկասի ժողովուրդներին շողկապող պետական օրգանները, որոնց միջոցով վրաց սոցիալ-դեմոկրատիան ազդեցութիւն էր բանեցնում, վերջնականապէս քայքայուել էին:

Սակայն, եթէ այս ժողովուրդները քաղաքականապէս անջատուած էին միմեանցից, այդ չէ նշանակում, թէ նրանք իրար հետ այլեւս խնդիրներ չունէին: Ընդհակառակը, խնդիրները հիմա պիտի սկսուէին եւ այն էլ ամենացաւոտ, ամենասուր բնաւորութեամբ: Կային նրանց միջեւ սահմանային վեճեր, Ռուսաստանից ժառանգութիւն մնացած ստացուածքի բաժանման վերաբերեալ հարցեր, տնտեսական փոխարարբերութիւնների, տրամգիտային, հաղորդակցութեան, մաքսային տուրքերի եւ արտաքին քաղաքականութեան վերաբերեալ խնդիրներ, որոնք իրենց լուծմանն էին սպասուած:

Եւ ահա վրաց սոցիալ-դեմոկրատիան մի նոր հող գտաւ հանդէս բերելու իր գերիշխանական ձգտումները՝ նոր պայմաններին համապատասխան ձեւ տալով նրանց: Նա այլեւս չէր կարող խօսել իբրեւ կուսակցութիւն, դրա համար էլ սկսեց խօսել իբրեւ կառավարութիւն, չէր կարող հանրամարդկային բարձր գաղափարների կռքնել՝ իր եսական կամքը վերոյիշեալ խնդիրների կարգադրութեան ժամանակ պարտադրելու համար, եւ կռքնեց այլ յենարանների: Այդ յենարաններն էին Վրաստանի աշխարհագրական դիրքը, հարեւանների թուլութիւնը, նրանց փոխադարձ հակակրօնութիւնները եւ այլն.:

Վրաստանի աշխարհագրական դիրքը յայտնի է: Սեւ ծովի նավահանգիստները՝ Բաթումը, Փոթին, Սուխումը, նրա ձեռքին էին, հետեւաբար Յայաստանն ու Ադրբեջանը, Եւրոպայի հետ յարաբերութիւններ ունենալու խնդրում, Վրաստանից են կախուած: Ադրբեջանի համեմատութեամբ՝ Յայաստանի վիճակը, արտաքին յարաբերութիւնների տեսակետից առաւել եւս վատ է: Առաջինը գոնէ Ռուսաստանի հետ անմիջական հաղորդակցութիւն ունի, մինչդէռ վերջինը այդ էլ չունի, որովհետեւ թէ ռազմավարական խճուղին<sup>130</sup> եւ թէ երկաթուղին, որոնցով Յայաստանը կարող է կապուել Ռուսաստանի հետ, վրացական հողերով են անցնում:

Այս նպաստաւոր աշխարհագրական դիրքը ըստ կամս օգտագործուում էր ժողդանիայի կառավարութեան կողմից՝ յատկապէս Յայաստանի վրայ ճնշում բանեցնելու համար: Որովհետեւ Ադրբեջանը նման ճնշումների հակազդելու հնարաւորութիւններ ունէր, նախ, ինչպէս տեսանք, նա կարող էր անկախօրէն յարաբերութիւն

պահպանել Ռուսաստանի հետ եւ ապա՝ նա իր ձեռքին ունէր Բագուայ նաւթը, առանց որի Վրաստանի հաղորդակցութեան եւ արդիւնաբերութեան միջոցները կ'անդամալուծուէին, եթէ չասէնք կը մահանային... Հայաստանը զուրկ լինելով թէ մէկից եւ թէ միւսից, եւ ուրիշ միջոց էլ չունենալով ազդելու ժողովրդային կառավարութեան վրայ՝ ստիպուած էր համակերպել նրա պահանջներին, որովհետեւ առանց նրա բարեհաճ թոյլտուութեան, չէր կարող արտասահմանից ոչ հաց, ոչ զէնք եւ ոչ էլ ապրանք ստանալ իր կարիքները բաւարարելու համար:

Ի հարկէ, եթէ հայ ժողովուրդը ոյժ ունենար իր համար ճանապարհ բանալու դէպի Սեւ ծովը՝ ժողովրդային կառավարութիւնը այլ վերաբերմունք ցոյց կտար դէպի Հայաստանը: Սակայն նա գիտէր, որ թիւրքական արշաւանքներից հիւծուած եւ քայքայուած մեր ժողովուրդը այդ ոյժը չունէր եւ այդ այդ պատճառով էլ իրեն կատարելապէս ազատ էր զգում իր քայլերի մէջ:

Ժողովրդային կառավարութիւնը գիտէր իհարկէ, որ այս թուլութիւնը յարատեւ լինել չէր կարող: Նա տեսնում էր, որ Հայաստանը, հազիւ ազատագրուած թիւրքական մղծաւանջից՝ խիստ արագութեամբ բուծում էր իր վերքերը եւ շտկում իր մէջքը: Այս սրընթաց վերելքը մտահոգում էր վրացական հեգեմոնիայի սիրահարներին: Որովհետեւ մտածում էին նրանք, եթէ հայ ժողովուրդը 1918թ. ուժասպառ վիճակում կարողացավ հարկադրել վրացիներին պարպելու Հարաւային Բորչալուն կամ Լոռին, նա իր կագոլորուած վիճակում կարող էր եւ այլ ազդու միջոցների դիմել՝ թօթափելու վրացական հեգեմոնիայի լուծը:

Սակայն, այսօրինակ անպատեհութիւնների հանդէպ Վրաստանի վարիչները շատ էլ անճար չէին զգում իրենց: Հայ-թաթարական հակամարտութիւնը, որ 1918թ.-ից ի վեր անպաշտօնական պատերազմի հանգամանք ունէր՝ միշտ կարելի էր օգտագործել թէ Հայաստանը եւ թէ Ադրբեջանը Վրաստանից առկախ, նրա հեգեմոնիային ենթակայ վիճակում պահելու համար:

\* \* \*

Վրաստանի նպաստաւոր աշխարհագրական դիրքը, հարեւանների թուլութիւնը եւ նրանց հակամարտութիւնները առարկայական կարելիութիւններ էին ստեղծում վրաց կառավարութեան համար՝ պարտադրելու իր կամքը հարեւաններին, բայց նրանք անպատճառ անհրաժեշտ էին դարձնում այդ պարտադրութիւնը: Եթէ ժողովրդային կառավարութիւնը տոգորուած լինէր անդրկովկասեան ժողովուրդների արդար շահերը պաշտպանելու, նրանց բոլորի

բարգաւաճումը հաւասար պայմանների մէջ դնելու եւ այսպիսով նրանց համերաշխ կենակցութիւնն ու գործակցութիւնը ապահովելու մտահոգութեամբ, նա կարող էր իր քաղաքականութեանը այնպիսի ուղղութիւն տալ, որ յիշեալ առարկայական պատճառները անդրկովկասեան ժողովուրդների փոխարարբերութեանց մէջ որեւէ դեր չկատարէին:

Սակայն, ժողովրդային կառավարութիւնը այս մտահոգութեամբ չէր տարուած, այլ՝ մեծ Վրաստան ստեղծելու եւ վրացական գերիշխանութիւն անդրկովկասեան ժողովուրդների վրայ հաստատելու մտահոգութեամբ: Նրա դէմ չէր, ի հարկէ, որ Վրաստանի կողքին գոյութիւն ունենային Հայաստանն ու Ադրբեջանը, ոչ միայն դէմ չէր, ի հարկէ, որ Վրաստանի կողքին գոյութիւն ունենային իբրեւ ինքնուրոյն պետութիւններ, սակայն պայմանով, որ նրանք մնան Վրաստանի ղեկավարութեան տակ, ինչպէս որ անդրկովկասեան յեղափոխական շարժումը մի ժամանակ մնում էր վրաց սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարութեան տակ...

Այս գերիշխանական ձգտումով պայմանաւորուած անարդարութիւնները հայ ժողովրդի հանդէպ ծանօթ են արդէն ընթերցողին հայ-վրացական հողային վեճերի, անդրկովկասեան պետական գոյքերի կամայական իւրացման եւ յարակից հարցերի պատմութիւնից, որ մենք արինք նախորդ գլխում: Պատկերն ամբողջացնելու համար աւելորդ չենք համարում մի քանի փաստեր եւս յիշատակել:

1918թ. աշնանը ամբողջ Հայաստանը խավարի մէջ էր թաղուած եւ Հայաստանի մի քանի տասնեակ ատոմոսիւները անշարժութեան դատապարտուած՝ նաւթի եւ բէնզինի չզոյութեան պատճառով: Ամբողջ երկու շաբաթ Ադրբեջանի ներկայացուցիչների հետ բանակցելուց յետոյ, վերջապէս, յաջողեց, եթէ չեն սխալուում գեներալ Ֆոն Կրէսի միջնորդութեան շնորհիւ, թոյլատուութիւն ստանալ Բագուում 40 ցիստերն նաւթ եւ 9 ցիստերն բէնզին գնելու եւ Հայաստան արտահանելու:

Սակայն, անսպասելիօրէն մի նոր արգելք ցցուեց մեր առաջ: Վրացական իշխանութիւնները չէին ուզում այդ նաւթի եւ բէնզինի փոխադրութիւնը վրացական երկաթուղով արտօնել: Վերջը պարզուեց, որ վրացիք ցանկանում են բաժին ստանալ մեր գնած ապրանքից: Ճարահատյալ այս պահանջին էլ համաձայնեցին՝ խոստանալով նաւթի եւ բէնզինի 20 %-ը յանձնել վրացիներին: Երբ այսպիսով խնդիրը կարգաւորուած էր համարուում՝ յանկարծ Վրաստանի հաղորդակցութեան նախարարութիւնից գրութիւն ստացանք, թէ մեր նաւթը եւ բէնզինը չեն կարող Հայաստան փոխադրել, որովհետեւ... զինուորական իշխանութիւնը զինուորական դրութիւն են հաստատել հարաւային երկաթուղագծի վրայ:

Ինչո՞ւմն էր բանը: Նրանում, որ այդ ժամանակները լուրեր էին տարածուած թէ թիւրքերը շուտով պէտք է յետ քաշուեն Անդրկովկասի սահմաններից եւ, առաջին հերթին հայկական Բորչալուի եւ Ախալքալաք գաւառներից: Արդ, որովհետեւ վրաց կառավարութիւնը մտադիր էր բռնագրաւել այդ գաւառները, նա արգելեց մեր նաւթի փոխադրութիւնը կրկնակի նպատակով. նախ՝ որպէսզի դրանով մի անգամ եւս բարոյական ճնշում գործադրի Յայաստանի վրայ՝ զգալ տալով նրանց, որ իր դրսի դռան բանալին վրացիների ձեռքին է գտնուում, եւ ապա որպէսզի Յայաստանի հաղորդակցութեան միջոցները անդամալոյծ վիճակի մէջ մնան, մինչեւ որ ինքը կ'աւարտաի յիշեալ գաւառների բռնագրաւման գործը...

1919-1920թթ. ընթացքին Ամերիկայից եւ Եւրոպայից Յայաստան ղրկուեցին նախ՝ ալիւր եւ պարէն՝ հայ ժողովուրդը սովահարութիւնից փրկելու, ապա նաեւ զէնք ու ռազմամթերք՝ նրա ինքնապաշտպանութեանը սատարելու համար: Վրացիք լուրջ արգելքներ չէին կարող յուրացնել այս ապրանքների փոխադրութեան դէմ, որովհետեւ նրանք զրկուած էին Դաշնակից պետութիւնների կողմից կամ նրանց աջակցութեամբ: Բայց այս դէպքում էլ նրանք պէտք է արժեցնէին Վրաստանի աշխարհագրական դիրքը, եւ արժեցրին, պահանջելով, որ իրենց տրուի ղրկուած ալիւրի եւ զէնքի 25% -ը:

Բաթումում վերահաստատուելու օրից սկսուած վրացիք հարիւր հազարաւոր փթերով ապրանքներ ստացան Եւրոպայից, առանց երբեւիցէ նրանցից Յայաստանին բաժին հանելու: Սակայն անգամ սովահար հայ ժողովրդի համար եկած ալիւրը նրանք չէին ուզում առանց այլեւայլութեան բաց թողնել ձեռքից: Ի՞նչ պէտք էր անել, եթէ ոչ համակերպուել այս վրդովեցուցիչ պահանջին, քանի որ անգամ Դաշնակից պետութիւնների միջամտութեան դէպքում վրացիք կարող էին հազար ու մի դժուարութիւններ յուրացնել մեր ապրանքների փոխադրութեան գործում:

Եթէ այս եւ նմանօրինակ բազմաթիւ դէպքերի ժամանակ սովորական ընչաքաղցութիւնը եւ հեզեմոնիայի մտայնութիւնը իրար խաչաձեւում են, ապա կան եւ այնպիսի դէպքեր, երբ այդ հեզեմոնիայի մտայնութիւնը հանդես է գալիս միանգամայն անպաճոյճ մերկութեամբ:

Սրանից մէկին ծանօթ է արդէն ընթերցողը: Մեր խօսքը վերաբերում է այն արհամարհական վերաբերմունքին, որ ունեցաւ վրաց կառավարութիւնը դէպի հայոց Ազգային Խորհուրդը եւ նորակազմ հայկական կառավարութիւնը, երբ վերջիններս պատրաստուում էին Թիֆլիսից Երեւան մեկնելու: Յեզեմոնիայի զգացումը գռեհիկ գոռոզութեամբ դրսևորող այս դէպքի մասին մենք խօսել ենք արդէն նախորդ գլխում, դրա համար էլ անցնում ենք մի ուրիշ դէպքի:

1919թ. սկզբներին Ժորդանիայի կառավարութիւնը լոյս ընծայեց «Անդրկովկասի եւ Վրաստանի արտաքին քաղաքականութեան վերաբերեալ վաւերագրերը եւ նիւթերը» գիրքը, որ ծանօթ է մեր ընթերցողին: Ամէն կառավարութիւն իրաւունք ունի իր երկրի արտաքին քաղաքականութեան վերաբերեալ վաւերագրերն ու նիւթերը հրապարակ հանելու: Սակայն յիշեալ գրքի մէջ վրաց կառավարութիւնը լոյս է ընծայել ոչ միայն Վրաստանի, այլ եւ Անդրկովկասեան Առանձին Կոմիտէութեան, Անդրկովկասեան Կոմիսարիատի եւ Անդրկովկասեան Յանրապետութեան սեփականութիւնը կազմող վաւերագրերն ու նիւթերը: Արդ, այս երեք պետական կազմաւորումների մէջ էլ հայերն ու ադրբէջանցիք վրացիների հետ միասին են եղել եւ հրատարակուած վաւերագրերն ու նիւթերը նրանց երեքի սեփականութիւնն են կազմում: Յարց է ծագում. վրաց կառավարութիւնը այդ վաւերագրերն ու նիւթերը հրապարակելիս համաձայնութիւն առա՞ւ Յայաստանից եւ Ադրբէջանից, որոնք Վրաստանի հետ միասին ժառանգորդներն էին հանդիսանում յիշեալ պետական կազմաւորումների: Յարկաւ ոչ: Նա իրեն շատ էր տէր ու տիրական համարում անդրկովկասեան գործերի, որպէսզի կարիք զգար Յայաստանի կամ Ադրբէջանի համաձայնութեանը...

Քանի որ խօսքը այս գրքին է վերաբերում, թող ներուի մեզ մի փոքրիկ շեղում կատարել նրա փոլէութիւնը երեւան բերելու համար, մանաւանդ որ օտարներն այսօր մեծ մասամբ նրանով են ղեկավարում անդրկովկասեան գործերի եւ մասնաւորապէս հայ-վրացական վէճերի մասին գաղափար կազմելու համար:

\* \* \*

Մեր ընթերցողներին յայտնի է արդէն, որ այդ գրքի հեղինակները Անդրկովկասեան Սէյմի վերջին նիստի արձանագրութիւնից դիտաւորեալ կերպով դուրս են ձգել բոլոր ճառերը, բացի Ծերեթելիի երկու ճառից: Դիտաւորութիւնն այն է, որ հանրութիւնը մոլորութեան մէջ մնայ կարծելով, թէ Անդրկովկասեան Յանրապետութեան կործանման պատճառը վրացիները չեն, այլ ուրիշները: Սրան կ'աւելացնենք, որ այդ գրքի մէջ դուք չէք գտնի հետքն անգամ այն համաձայնութիւնների եւ դաշնագրութիւնների, որ գերմանացիների հետ կնքել են վրացիք Բաթումում եւ Փոթիում՝ Անդրկովկասեան Յանրապետութեան կործանման նախօրեակին եւ յետնօրեակին:

Սակայն, մեզ համար շատ աւելի հետաքրքրական են այն յապաւումները, որ կատարել են յիշեալ հեղինակները մասնաւորապէս հայ-վրացական վէճերի վերաբերեալ նիւթերն ու վաւերագրերը դասաւորելիս: Այդ յապաւումներն են.

1. Արձանագրութիւնները այն բանակցութիւնների, որ վարել է Յայոց Ազգային Խորհուրդը վրաց կառավարութեան հետ: 1918-ի Յունիսին եւ որոնց միջոցին Վրաստանի ինպերիալիստները յանձինս Ծերեթելիի ու ուրիշների, իրենց երկրի սահմանները հասցնում էին գրեթէ մինչեւ Ալեքսանդրապոլ եւ Սեւանայ լիճը:

2. Այն բողոքը, որ Յայոց Ազգային Խորհուրդը տեղեկանալով, որ վրաց կառավարութիւնը որոշել է գրաւել հայկական Բորչալուն՝ հրապարակօրէն ներկայացրեց նրան:

3. Իմ երեք բողոքները վրաց կառավարութեան դէմ՝ հայկական Բորչալունում զօրածողով կատարելու մասին, հայ գաղթականների տեղաւորումը այնտեղի գիւղերում արգիլելու մասին եւ այդ գիւղերում վրացիների կողմից կատարված բռնութիւնների մասին:

4. Վրացական զրահապատ գնացքների գլխաւոր պետ Գոգվածէի անպատկառ վերջնագիրը Դիլիջանի մեր զօրքերի հրամանատարին՝ հեռանալով թիւրքերի կողմից գրաւուած հայկական գիւղերից: Սրա հետ միասին եւ հոկտեմբերեան ընդհարման վերաբերեալ միւս վաւերագրերն ու նիւթերը:

5. Քաջագունիի հեռագիրը ժորդանիային եւ ինձ՝ Գոգվածէի վերջնագրի առթիւ: Ուշագրաւ է, որ գրքի հեղինակները երեք անգամ յիշատակում են այս հեռագիրը, բայց հեռագրերը մէջ չեն բերում: Պատճառն անշուշտ այն է, որ նրա մէջ Քաջագունին յիշեցնում է ժորդանիայի եւ Ռամիշվիլու կողմից արված յայտարարութիւնը, թէ վրացիք միայն ժամանակաւորապէս են գրաւելու հայկական Բորչալուն:

6. Բորչալուի ընդհանուր նահանգապետի առժամեայ փոխանորդ փոխգնդապետ Թամագովի զեկուցագիրը զօրավար Յուլուջիձէին, որի մէջ հաստատում են վրաց զինուորների կատարած բռնութիւնները Լոռիում, ապստամբութեան նախօրեակին:

7. Յայաստանի կառավարութեան բողոքները այդ բռնութիւնների դէմ եւ պահանջները, որ վրացիք իրենց զօրքերը դուրս հանեն Լոռիից եւ Ախալքալաք չմտնեն մինչեւ վիճելի հողամսերի խնդիրը չկարարդուի փոխադարձ համաձայնութեամբ:

Չենք ուզում երկարացնել այսօրինակ յապաւումների շարքը: Յեղինակները ակներեւ դիտաւորութիւն են ունեցել, պատմական ճշմարտութեան երեսին ապտակ գարնելով, դուրս ձգել իրենց պաշտօնական գրքից այն ամէնը, ինչ որ իրենք անհամապատասխան են նկատում Վրաստանի կամ նրա կառավարութեան շահերին: Միւս կողմից՝ նրանք թուղթ եւ թանաք չեն խնայել իրենց գիրքը լցնելու ամենաերկորդական վաւերագրերով եւ նիւթերով, եթէ նրանց մէջ որեւէ արդարացում են նկատել իրենց արտաքին քաղաքականութեան համար:

Այս դիտողութիւնը ի միջի այլոց: Մեր գլխաւոր միտքն էր մատնանշել այն արհամարհական վերաբերմունքը, որ մեծամուլութեամբ բռնուած ժորդանիայի կառավարութիւնը ուներ դէպի հարեւան Յայաստանն ու Ադրբեջանը: Եթէ այս մեծամուլութիւնը չլինէր, նա թոյլ չէր տար իրեն առանց այդ երկրների հաւանութեան լոյս ընծայել Անդրկովկասի արտաքին քաղաքականութեան վերաբերեալ վաւերագրերն ու նիւթերը սեփական հայեցողութեամբ եւ սեփական ընտրութեամբ:

Սակայն, այդ մեծամուլութեան ամենակարկառուն փաստը մենք տեսնում ենք հետեւեալ դէպքի մէջ:

1918-ի Յոկտեմբեր 27-ին Վրաստանի արտաքին գործերի նախարար Ն. Ռամիշվիլին մի ծանուցագիր է ուղղում ինձ իբրեւ Յայաստանի դիւանագիտական ներկայացուցչի, հետեւեալ բուանդակութեամբ. «*Համաշխարհային պատերազմը մօտենում է իր վախճանին: Շուտով պիտի գումարուի համաշխարհային վեհաժողով, ուր պետք է որոշուի նաեւ Ռուսաստանից ազատուած ժողովուրդների բախտը: Անհրաժեշտ է, որ անդրկովկասեան ժողովուրդները վեհաժողովին ներկայանան միացեալ ճակատով: Դրա համար անհրաժեշտ է, որ Անդրկովկասի եւ Կովկասի կառավարութիւնները համաձայնութեան գան թէ այդպիսի միացեալ ճակատ կազմելու եւ թէ իրար հետ բարի դրացիական յարաբերութիւններ հաստատուելու»:*

«Այս նպատակով,- ասուած է ծանուցագրի մէջ,- Վրաստանի Յանրապետութեան կառավարութիւնը առաջարկում է Յայաստանի եւ Ադրբեջանի Յանրապետութիւնների կառավարութիւններին, ինչպէս նաեւ Յիւսիսային Կովկասի Լեռնական ժողովուրդների Միութեան կառավարութեանը խորհրդածողով գումարել Թիֆլիսում, Նոյեմբեր 3-ին, ժամը 12-ին արտաքին գործերի նախարարութեան շէնքի մէջ (Երմոլովի փող.), ուղարկելով այդ խորհրդածողովին 2-ական ներկայացուցիչ համապատասխան օրինական լիազօրութիւններով: Աւելացնում ենք, որ Վրաստանի Յանրապետութեան կառավարութիւնը որոշել է (օրակարգի մէջ) դնել հետեւեալ հարցերը.

1. Փոխադարձ ճանաչումը այն պետութիւնների, որոնց կառավարութիւնները հրաւիրում են խորհրդածողովի:

2. Բոլոր վեճերի, որոնց թւում եւ սահմանային վեճերի, լուծումը շահագրգռուած պետութիւնների համաձայնութեամբ, իսկ համաձայնութիւն չկայանալու դէպքում իրաւարքով (արբիտրաժ):

3. Փոխադարձ յանձարութիւն չկայացնելու՝ ի վնաս խորհրդածողովի մասնակցող որեւէ ժողովրդի՝ որեւէ համաձայնութիւն որեւէ պետութեան հետ:

4. Համերաշխօրէն եւ փոխադարձ աջակցութեամբ հանդէս գալ համաշխարհային վեհաժողովին՝ նպատակ ունենալով ճանաչել

տալ հանրապետութիւնների անկախութիւնը եւ պաշտպանել նրանց ընդհանուր շահերը»:

Այս ծանուցագիրը շնչեցուցիչ տպաւորութիւն թողեց մեզ վրայ: Մեզ ծանօթ Աւալովը, «Վրաստանի Անկախութիւնը ...» գրքի մէջ, հեզնաւքով որակում է նրան իբրեւ ներքին գործոց նախարարի վարչական հրամանագիր, սակայն իրականի մէջ նա աւելի վատթար մի բան էր պարունակում, քան նախարարական հրամանագիրը: Նրա մէջ ամենախտացած ձեւով հանդէս էր գալիս վրացական հեզեմոնիայի զգացումը եւ այդ զգացումով պայմանաւորուած արհամարհանքը դէպի հարեւան պետութիւնները... Այլապէս ինչպէ՞ս կարելի է բացատրել, որ մի պետութեան կառավարութիւն թոյլ է տալիս իրեն, առանց նախնական խորհրդակցութեան եւ համաձայնութեան, խորհրդաժողով նշանակել ուրիշ պետութեանց կառավարութիւնների համար՝ ինքնակամօրէն որոշելով խորհրդաժողովի վայրը, օրը, ժամը եւ մինչեւ անգամ օրակարգը...

Մեր դիւանագիտական ներկայացուցչութիւնը զգալ տուեց, ի հարկէ, վրաց կառավարութեանը իր անվայել ընթացքը: Սակայն Յայաստանի հանրային կարծիքը շատ աւելի բուռն թափով արծագանգեց նրան: Այս մասին Վրաստանի դիւանագիտական ներկայացուցիչը Երեւանից հետեւեալն է զեկուցագրում իր կառավարութեանը:

«... Վրաց կառավարութեան այսօրինակ ընթացքը ներկայանում է այստեղի գործիչներին անհամապատասխան Յայաստանի արժանապատուութեանը: Դրա մէջ նրանք այն են տեսնում, թէ Վրաստանը փորձում է գերիշխող դիրք բռնել կովկասեան ուրիշ պետութիւնների մէջ, մի յայտնի չափով վերջիններիս քաղաքական ուղիները որոշել եւ իրեն ենթարկել նրանց գործողութիւնները եւ քայլերը: Ուրիշ խօսքով, նրանք վրդովուում են, որ, իրանց ասելով ... Վրաստանը ձգտում է իր համար գերիշխանութիւն հաստատել կովկասեան ժողովուրդների մէջ եւ նրանց իր հնազանդ կամակատարները դարձնել: Այս տեսակէտը այստեղ շատ տարածուած է... Յայաստանի խորհրդի բոլոր ֆրակցիաները եւ խորհրդարանի բոլոր անկուսակցական անդամները կանգնած են նոյն այդ տեսակէտի վրայ, որ իր շիտակ եւ խիստ վճռական արտայայտութիւնը գտաւ խորհրդի Նոյեմբեր 8-ի որոշման մէջ»<sup>131</sup>:

Այդ որոշումն այն է, թէ Յայաստանը չէ կարող ընդունել վրաց կառավարութեան առաջարկը, նախ՝ որովհետեւ վրաց կառավարութիւնը խորհրդաժողովի համար անհրաժեշտ աշխատանքները հարեւան հանրապետութիւններին արժանավայել եղանակով չէ կատարել եւ ապա՝ որ խորհրդաժողովի հրաւերը ուշ է ստացուել:

Վրաց կառավարութեան եւ մասնաւորապէս Ե. Գեզեչկորիի բոլոր ջանքերը՝ մեղմելու այս վրդովմունքը՝ ապարդիւն անցան: Յայաստանի կառավարութիւնը մինչեւ վերջն էլ չզնաց վրացիների նշանակած խորհրդաժողովին (թէեւ վերջինս մի քանի անգամ յետաձգուեց հայերի պատճառով) եւ Թիֆլիս հաւաքուած միւս երկրների պատուիրակները ձեռնունայն վերադարձան իրենց տեղերը, որովհետեւ առանց հայերի մասնակցութեան այդ խորհրդաժողովը քաղաքական իմաստ չունէր<sup>132</sup>:

Վրացական հեզեմոնիայի այսօրինակ արտայայտութիւնները երկու հակոտնեայ տրամադրութիւններ էին առաջ բերում ժողովրդի մէջ՝ երկուսն էլ վնասակար անդրկովկասեան ժողովրդների պետական զարգացման եւ խաղաղ կենակցութեան տեսակէտից:

Ոմանք, որ անկախ պետական կեանքի բարիքները դեռ չէին ճաշակել եւ տատանուող կամ քննադատական վերաբերմունք ունէին դէպի անկախութեան գաղափարը, չարախնդօրէն հարց էին տալիս. արժէ՞ Ռուսաստանից ազատագրուել՝ Վրաստանի վասալը դառնալու համար: Կամ ի՞նչ արժէք ունի անկախութիւնը մի երկրի համար, որի արտաքին յարաբերութեան բոլոր ճանապարհները բռնուած են օտարներով եւ որը իր թուլութեան պատճառով շարունակ շահագործման եւ ճնշման պէտք է ենթարկուի ուժեղ հարեւանների կողմից:

Սրան միանգամայն հակառակ տրամադրութիւն էին արտայայտում հայ ժողովրդի այն տարրերը, որոնք սրտով փարել էին Յայաստանի անկախութեան գաղափարին եւ ոչ մի գոհողութիւն մեծ չէին նկատում այդ անկախութիւնը պաշտպանելու համար: Սրանց կարծիքով Յայաստանը պէտք է պատրաստուէր, թէկուզ զենքի ուժով, իրեն համար ճանապարհ բանալու դէպի ծով եւ ընդհանրապէս վերացնելու այն բոլոր անարդարութիւնները, որոնց ենթարկուել էր նա հարեւանների կողմից: Հրապարակային մի ժողովի ժամանակ, Երեւանում, ուր մեր ընկերներից մէկը ծանր ու բարակ հիմնաւորում էր Վրաստանին առաջադրուած մեր պահանջների օրինականութիւնն ու արդարութիւնը՝ մի պարզ արիեստաւոր խօսք առնելով ասաց մօտաւորապէս հետեւեալը. «Այն իրաւունքը եւ արդարութիւնը, որի մասին պարոն բանախօսը ճառում է, ժողդանիան էլ գիտէ եւ պարոն դասախօսից էլ լաւ գիտէ: Բայց նա ուրիշ բան է ասում: Նա ասում է մեզ. «Ախալքալա՞ք էք ուզում, եկէք տիրացէք, եթէ ուժերդ յաղթում է: Ընդհանուր գոյքերից բաժի՞ն էք պահանջում, եկէք տարէք եթէ հարաքեաթ ունէք: Սրա մասին պէտք է մտածէք դուք, թէ չէ այս աշխարհում արդարութիւնն ինչ է, օրէնքն ինչ...»:

Թէ «սրա մասին» մտածելը ինչ թունաւոր մտայնութիւն կարող էր ստեղծել մի ժողովրդի մէջ, ինչպէս եւ ժողովուրդների փոխյարա-

բերութեանց մէջ, այդ հասկանալի է ամէնքին: Սակայն ստեղծուած հոգեբանական վիճակում վրացական հեգեմոնիայի ձգտումները անհրաժեշտօրէն դէպի այս օրհասական երկընտրանքն էին մղում հայ ժողովրդին, կամ իսպառ հրաժարուել անկախութեան գաղափարից, հետեւաբար եւ ջանալ խորտակելու իր շուրջը բարձրացած անկախութեանց պատմէշները եւ կամ պատրաստուել ուժով բանալու անկախ պետական կեանքի զարգացման ուղիները:

Այս ուղիներից մէկն ու մէկի վրայ կանգնելու դէպքում հայ ժողովուրդը կարող է պարտուել եւ մինչեւ իսկ ջախջախուել: Սակայն Վրաստանը շա՞տ կը շահի դրանից...

\* \* \*

Այսօր Յայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի անկախութիւնը խորհրդային Ռուսաստանի ճնշմամբ վերացած է, եւ Անդրկովկասի միութիւնը վերահաստատուած մի իւրատեսակ ֆեդերասիոնի ձեւով: Նորից կեանքի են կոչուած ընդհանուր պետական օրգաններ, ճիշտ է, այլ անուններով եւ այլ ֆունկսիոններով, որոնք շաղկապում են անդրկովկասեան ժողովուրդների քաղաքական, տնտեսական եւ հանրային կեանքը: Պէտք էր սպասել, որ նոր կացութեան մէջ կուսակցական կամ ազգային հեգեմոնիայի հարցեր այլեւս չեն լինի Անդրկովկասում, որովհետեւ այդ կացութեան տէրերը, կոմունիստները, լինին նրանք հայ, վրացի թէ թաթար, միացած են մի ընդհանուր կուսակցութեան մէջ եւ ամէնքն էլ անխտիր «դաւանում են» ազգերի կատարեալ հաւասարութեան սկզբունքը: Պէտք էր սպասել այս, մանաւանդ որ նրանք, կոմունիստները շարունակ խարանել են եւ խարանում են «դաշնակների», մենշեւիկների եւ նրանց ստեղծած կառավարութիւնների իրարամերժ, ազգայնական եւ շովինիստական քաղաքականութիւնը:

Բայց իրականութեան մէջ ի՞նչ ենք տեսնում. այն՝ որ անդրկովկասեան Կոմկուսի մէջ իշխում է վրացական հատուածի հեգեմոնիան, իսկ Անդրկովկասեան Ֆեդերասիոնի մէջ՝ Վրաստանի հեգեմոնիան: Ով այս մասին կասկած ունի, թող աչքի առաջ բերի Անդրկովկասեան երկրային Կենտրոնական Կոմիտէի, ինչպէս եւ կառավարութեան կազմը թէկուզ հենց միայն վերջին հինգ տարեշրջաններին: Իսկոյն կ'երեւայ, որ Անդրկովկասի թէ կուսակցական եւ թէ պետական կեանքի բարձունքները գերակշռօրէն բռնուած է վրացիների կողմից:

Այնուհետեւ՝ առանձին սրատեսութիւն չի պահանջուում նկատելու համար, որ երկրի շինարարական աշխատանքների համար ընդհանուր պետական բիւջէով բացուած վարկերից առիծի բա-

ժինը ստանում է Վրաստանը, որ գերադասօրէն գործադրում է այդ վարկերը զուտ վրացաբնակ շրջաններում: Ազգային փոքրամասնութիւնները եւ մանաւանդ հլու հնագանդ հայկական փոքրամասնութիւնը չնչին փշրանքներ է միայն ստանում Վրաստանի համար բացուած վարկերից:

Ընթերցողը յիշում է անշուշտ, որ ժողովանիան եւ իր ընկերները առարկութիւն չունէին Ախալքալաքը եւ Յայկական Բորչալուն Յայաստանին կցելու դէմ, եթէ հայերն ու վրացիները միեւնոյն պետական յարկի տակ ապրելու լինէին: Այժմ այդ ժողովուրդները միեւնոյն պետութեան սահմաններում են ապրում, չափազանց ամուր կապերով միացած են իրար հետ, բայց վրաց կոմունիստները լսել անգամ չեն ուզում իրենց իշխանութեան տակ մնացած հայկական հողերը Յայաստանին զիջելու համար:

Վրաստանի անկախութեան շրջանին Թիֆլիսում ապրած ամեն մի հայ գիտէ, թէ վրաց սոցիալ-դեմոկրատները ինչքան ջանք էին թափում այդ քաղաքը օտար տարրերից (իմա՝ հայերից) «մաքրելու» եւ վրացական դարձնելու համար: Վրաց կոմունիստները ոչ մի կերպով յետ չեն մնում իրենց սոցիալ-դեմոկրատ հայրենակիցներից:

Ռուսաստանից Անդրկովկասին ժառանգութիւն մնացած ստացուածքի բաժանման խնդրում եւս Վրաստանի խորհրդային կառավարութիւնը եւ կոմունիստական կուսակցութիւնը այն վերաբերմունքն ունին, ինչ որ ժողովանիայի կառավարութիւնը եւ վրաց սոցիալ-դեմոկրատիան: Ոչ մի բաժին հարեւան ժողովուրդներին այդ ստացուածքից: Այս է նրանց կարգախօսը:

Ֆեդերասիոնի հիմնական բարիքներից մէկը պէտք է լինէր մեզ համար՝ վերացնել մաքսային ներքին սահմանները, որպէսզի Վրաստանը իր աշխարհագրական նպաստաւոր դիրքի շնորհիւ մաքսային շահագործման չենթարկէ մեր երկիրը: Սակայն նոր քաղաքական փոխյարաբերութիւնների մէջ էլ Վրաստանը մաքսային տուրքերով ծանրաբեռնում է Յայաստան ներմուծող եւ այնտեղից արտահանող ապրանքները:

Ազգային փոքրամասնութիւնների խնդրում եւս դրութիւնը եւ պէս նոյնն է մնում, ինչ որ առաջ: Թիֆլիսում այսօր էլ հայերը ազգաբնակութեան համեմատական մեծամասնութիւն են կազմում: Յաշուեցէք թէ քանի՞ հայկական դպրոց կայ այնտեղ եւ քանի վրացական, քանի՞ հայերէն պարբերական է լոյս տեսնում եւ քանի վրացերէն, ի՞նչ վիճակի մէջ է հայոց թատրոնը եւ ինչ՞ վրաց թատրոնը: Էլ չենք խօսում այն վայրերի մասին, որտեղ հայերը մեծամասնութիւն չեն կազմում:

Պատկերն ամբողջացնելու համար կարող ենք յիշատակել եւ այն, որ Խորհրդային Վրաստանն էլ իր ազգային շահերը եւ հեգեմոնիայի ձգտումները առաջ մղելու համար Խորհրդային Միութեան կառավարութեան մէջ եւ մօտ ունի ազդեցիկ մարդիկ, ինչպէս եւ ունէր հանրապետական Վրաստանը: Չխէիծէների եւ Ծերեթելիների տեղն այնտեղ ներկայիս բռնում են Ստալինները<sup>133</sup>, Օրժնիկիծէները<sup>134</sup> եւ ուրիշներ:

\* \* \*

Այսպիսով տեսնում ենք, որ Վրաստանը ինչ ձեւով էլ ներկայացուած լինի՝ լինի նա սոցիալ-դեմոկրատական թէ կոմունիստական, դեմոկրատական թէ Խորհրդային, միեւնոյն է, ազգային հեգեմոնիայի խնդրում աւել կամ պակաս զարտուղութեամբ նոյն ձգտումն է դրսեւորում: Եւ քանի որ այս ձգտումները կան, անհնարին պիտի լինի վերացնել անդրկովկասեան ժողովուրդների եւ մասնաւորապէս հայերի եւ վրացիների միջեւ փոխադարձ պաղութիւն ու անվսահութիւնը, ներհակութիւնն ու գժտութիւնը: Գեղեցիկ խօսքեր միշտ կարելի է գրել ազգերի համերաշխութեան եւ եղբայրութեան մասին, ինչպէս որ այդ տրւում է ներկայումս Խորհրդային աշխարհում, բայց նրանց արժեքը սպառնաւթ թանաքի արժեքից մեծ չէ: Ազգերի մէջ իրական համերաշխութիւն եւ եղբայրութիւն հաստատելու համար, պէտք է անհամերաշխութիւն եւ ատելութիւն առաջացնող պատճառները վերացնել եւ ոչ թէ լեզուի կամ գրչի մարզանքներ կատարել:

Ի՞նչ սկզբունքով պէտք է ղեկավարուել ակնարկուած պատճառները վերացնելու համար: Այս հարցի պատասխանը եւս մենք գտնում ենք ժողովանիայի «Մեր տարածայնութիւնները» գրքում: Խօսելով ԽՍՀՄ սահմաններում ապրող ժողովուրդների ցանկալի փոխարաբերութեանց մասին՝ ժողովանիան ընկերվարական խղճի եւ գործի խնդիր է դարձնում «հաստատել ներկայումս Խորհրդային Միութեան մէջ ապրող ժողովուրդների միջեւ խաղաղ, բարի-դրացիական յարաբերութիւններ՝ ազգային ուժերի այնպիսի հաւասարակշռութիւն հաստատելով, որ ոչ մէկ ժողովուրդ չկարողանայ իր տիրապետութեան տակ ձգել ուրիշ ժողովուրդի»:

Մենք այս բանաձեւի տակ երկու ձեռքով ստորագրում ենք եւ առաջարկում, որ նա գործադրուի ամենից առաջ Անդրկովկասում եւ մասնաւորապէս հայ-վրացական յարաբերութիւնները կարգաւորելու խնդրում, եւ ապա, որ «տիրապետութիւն» խօսքին բանաձեւի ոգուն պատշաճ իմաստ տրուի: Առաջին պայմանի դէմ առարկութիւն չպիտի ունենայ ժողովանիան, հետեւաբար ինձ կը մնայ երկրորդ պայմանի իմաստը բացատրել:

Վերոյիշեալ բանաձեւը «Մեր տարածայնութիւնները» գրքում հանդէս է գալիս այնպիսի մի կապակցութեամբ, որ ենթադրել է տալիս, թէ մեր հեղինակը «տիրապետութիւն» խօսքի տակ հասկանում է միայն քաղաքական լծի տակ ձգելը: Սակայն ժողովանիան չի կարող չգիտենալ, որ կարելի է մի ազգի վրայ քաղաքականապէս չիշխել, բայց նրան մշտապէս կախեալ կամ տիրապետեալ վիճակի մէջ պահել: Հին Սերբիան քաղաքականապէս անկախ մի երկիր էր, բայց փաստօրէն գտնւում էր Աւստրո-Յունգարիայի տիրապետութեան տակ: Ալբանիան եւս այսօր իբրեւ մի ինքնիշխան պետութիւն բազմում է Ազգերի Լիկայի մէջ, բայց ոչ ոքի համար զաղտնիք չէ, որ նրա տէրը Իտալիան է: Էլ չենք խոսում Չինաստանի, Աւղանիստանի, Թիւրքիայի եւ Պարսկաստանի մասին, որոնք, մօտիկ անցեալում, քաղաքականապէս անկախ լինելով՝ ամէն ինչ էին, բացի անկախ լինելուց:

Այս ոչ քաղաքական տիրապետութեան միջոցները ժողովուրդների կեանքում ահագին դառնութիւններ են առաջ բերում եւ նրանց յարաբերութիւնները փչացնում: Եւ որովհետեւ ժողովանիան իր բանաձեւն առաջարկելիս ամենից առաջ աչքի առաջ ունի ժողովուրդների միջեւ «խաղաղ, բարի դրացիական յարաբերութիւններ» հաստատելը, ապա ուրեմն նա չպէտք է բաւականանայ պահանջելով, որ «ոչ մի ժողովուրդ չկարողանայ իր տիրապետութեան տակ ձգել ուրիշ ժողովուրդի» քաղաքական իմաստով, այլ եւ պիտի պահանջի, որ ոչ մի ժողովուրդ չհամարձակուի՝ օգտուելով իր աշխարհագրական դիրքից, կամ իր ուժից կամ ուրիշ ժողովուրդների թուլութիւնից՝ հողեր բռնագրաւել, տնտեսական ճնշումներ բանեցնել կամ որեւէ այլ իրաւագրկութիւն կատարել:

Եթէ ժողովանիան այս իմաստով է ըմբռնում իր առաջարկը, ապա կը նշանակի, որ հայ-վրացական իրարհասկացողութիւնը այս կէտում բարի ցանկութեան խնդիր է միայն, ուրիշ ոչինչ:

## ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ազգային փոքրամասնությունների հարցը, որ Համաշխարհային պատերազմից առաջ էլ յաճախ մտահոգություն էր պատճառում դիւանագետներին, դարձել է, այդ պատերազմից ի վեր, պետական փոխարաբերությունների ամենաբարդ հանգույցներից մեկը:

Վերսայլի, Սեն ժերմենի, Տրիանոնի եւ Լոզանի դաշնագրերը<sup>135</sup> սկզբունքորէն լուծել են այդ հարցը՝ միջազգային պաշտպանութեան տակ դնելով ազգային փոքրամասնությունների լեզուն, մշակոյթը եւ կրօնական ազատութիւնները: Ազգերի Դաշնակցութիւնը առել է իր հովանու տակ ազգային փոքրամասնությունները եւ, իրաւապէս կատարում է գերագոյն հսկողի դեր՝ նրանց շահերի պաշտպանութեան գործում: Բայց եւ այնպէս, ազգային փոքրամասնությունները, այսօր իսկ, մատնուած են ողբալի կացութեան շատ երկրներում: Գերմանիան յաճախ լարում է այս խնդրով Լեհաստանի, Իտալիայի եւ, մինչեւ վերջերս զոնէ, Չեխոսլովակիայի հետ: Հունգարիան եւ Բուլգարիան նոյնպէս անհատնում վէճեր ունին ազգային փոքրամասնությունների պաշտպանութեան շուրջը. առաջինը՝ Ռումանիայի, Չեխոսլովակիայի եւ Սերբիայի հետ, իսկ վերջինը՝ Սերբիայի, Յունաստանի եւ Ռումանիայի հետ: Էլ չենք խօսում այն տարածայնությունների մասին, որոնք երեւան են գալիս ազգային փոքրամասնութիւն ունեցող պետութիւնների մէջ՝ առանց միջազգային բարդութիւնների խնդիր դառնալու:

Այս անմխիթար կացութեան պատճառն այն է, որ յիշեալ դաշնագրերի տրամադրութիւնները չեն գործադրում ազգային փոքրամասնությունների պաշտպանութեան գործում, իսկ Ազգերի Դաշնակցութիւնն էլ յաճախ անյարմար է նկատում, կամ իրական դժուարութիւնների մատնուում, հսկողի իր դերը կատարելու համար, պետութիւնների ներքին կեանքին միջամուխ լինելու: Վերջիններս զանազան միջոցներ միշտ գտնում են՝ իրենց յանձնառութիւններից խոյս տալու համար: Նրանցից ոմանք ինքնահաճ բացատրութիւններ են տալիս դաշնագրի համապատասխան կետերին, ոմանք հակազդում են նրա տրամադրութիւններին ներքեւ ինտրիզներով, իսկ ուրիշները, ինչպէս օրինակ Թիւրքիան, հարկադրում են, ուղղակի կամ անուղղակի միջոցներով, ազգային փոքրամասնութիւններին, որ «ինքնակամօրէն» հրաժարուին իրենց համար նախատեսուած արտօնութիւններից:

Այնպէս որ, ովքեր ծանօթ են այս հարցի ներկայ վիճակին, քաջ գիտեն, որ այլ բան են ազգային փոքրամասնությունների պաշտպանութեան համար գրուած օրէնքներն ու որոշումները, եւ այլ բան՝ իրականութիւնը:

Ազգային փոքրամասնութիւնների հարցը, Հայաստանի եւ Վրաստանի անկախութիւնից ի վեր, կարելու տեղ է բռնում հայ-վրացական յարաբերութիւնների մէջ, իսկ ապագայում, երբ մեր սահմանային եւ այլ կարելու խնդիրները վերջնականապէս կարգադրուած կը լինին, նրա կարելուութիւնը աւելի եւ պէտք է շեշտուի: Որովհետեւ անգամ եթէ մենք ստանանք մեր հողային բոլոր պահանջները Վրաստանից, վերջինիս մէջ դարձեալ պիտի ունենանք աւելի քան 250 000 հայութիւն՝ ազգային փոքրամասնութեան վիճակով: Բնականաբար, մենք չենք կարող անտարբեր մնալ դէպի այս խոշոր ազգային հաւաքականութիւնը, որ հաւասար է ներկայ Հայաստանում գտնուող հայերի մօտ մի երրորդին, կամ համայն հայութեան 10-12 տոկոսին:

Սոյն տարուայ սկզբին, ինձ հետ ունեցած մի վէճի առթիւ, ժորդանիան պարծանքով յայտարարեց, թէ Վրաստանի անկախութեան շրջանին ազգային փոքրամասնութիւնները մշակոյթային լայն ինքնավարութիւն ունէին<sup>136</sup>: Դժբախտաբար ժորդանիան շօշափելի փաստեր չի բերում այս ինքնավարութեան գոյութիւնը ցոյց տալու համար, այլ բաւականաճում է յիշատակելով Վրաստանի Սահմանադրութեան համապատասխան յօդուածը, որի մէջ իրօք որ ձեւակերպուած է մշակոյթային ինքնավարութեան սկզբունքը<sup>137</sup>:

Սակայն, ի՞նչ նշանակութիւն ունին օրինական ձեւակերպութիւններն այս հարցում: Մենք տեսանք, որ անգամ Վերսայլի եւ միւս դաշնագրերի գեղեցիկ տրամադրութիւնները, անգամ Ազգերի Դաշնակցութեան Կանոնագիրը, չնայած իրենց բոլոր հեղինակաւորութեանը, չեն կարողացել գոհացուցիչ դրութիւն ստեղծել ազգային փոքրամասնութիւնների համար, ուր մնաց Վրաստանի Սահմանադրութիւնը, որ բուլշեւիկեան թնդանօթների որոտի տակ հապճեպով քուէարկուեց եւ հազիւ մի քանի ժամուայ կամ օրուայ կեանք ունեցաւ...

Ոչ, Վրաստանի ազգային փոքրամասնութիւնների վիճակի մասին գաղափար կազմելու համար մենք օրէնքներին չէ որ պէտք է դիմենք, այլ այն *գործնական քաղաքականութեանը*, որին հետեւում էր վրաց կառավարութիւնը այս հարցում: Եւ բաւական է թէկուզ մի հարեւանցի ակնարկ նետել այդ քաղաքականութեան վրայ համոզուելու համար, որ ժորդանիան եւ իր կառավարութիւնը շատ քիչ բան ունին պարծենալու զոնէ հայկական փոքրամասնութեան իրաւունքների հարցում:



\* \* \*

Ազգային փոքրամասնությունների գլխավոր իրաւական պահանջն է, որ պետութիւնը, համեմատական հաւասարութեան հիմունքով, բաշխէ մշակոյթային կարիքների համար որոշուած վարկերը իր սահմաններում ազգային հաւաքական կեանքով ապրող բոլոր ժողովուրդների մէջ անխտիր: Վրաստանի անկախութեան շրջանին, վիրահայ քաղաքացիները կազմում էին ընդհանուր ազգաբնակչութեան առնուազն 20%-ը: Հետեւաբար նրանք պէտք է ստանային, իրենց դպրոցների, եկեղեցիների եւ այլ մշակոյթային հաստատութիւնների պահպանման եւ զարգացման համար, համապատասխան վարկերի մի հիմնգրորդ մասը: Սակայն ժողովրդային կառավարութիւնը ողորմելի միջոցներ էր յատկացնում վիրահայ ժողովրդի մշակոյթային կարիքների, եւ այդ միջոցներն էլ չէր տալիս Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդին, որ վիրահայ ժողովրդի օրինական կազմակերպութիւնն էր եւ մշակոյթային գործերի անմիջական իրաւատէրը, այլ գործադրում էր վրացական տեսչութիւնների եւ վարչութիւնների ձեռքով:

Շնորհիւ այս քաղաքականութեան, վիրահայական գիւղերից շատերը, որոնք սեփական միջոցներ չունէին դպրոցներ պահելու համար, զրկուած էին երեխաներին ուսում տալու հնարաւորութիւնից: Աւելի լաւ վիճակի մէջ չէին հայաբնակ փոքրիկ քաղաքները՝ Ախալքալաք, Ախալցխա, Գորի, Թելաւ եւ այլն: Սրանց մէջ ընդամենը մի քանի փոքրիկ պետական դպրոցներ կային, եւ, առանց եկեղեցական կամ այլ տեղական միջոցներով պահուող մեր հին ծխական դպրոցների, սրանք էլ չափտի կարողանային, գէթ նուազագոյն չափով, ընդամաջել մատաղ սերնդի կրթական կարիքներին: Վերջապէս, անմասնաձեւի էր մեր ազգային-մշակոյթային գործի վիճակը նաեւ Թիֆլիսում: Չմայած, որ հայերն այնտեղ համեմատական մեծամասնութիւն ունէին՝ նրանց տրամադրուած պետական դպրոցները եւ այլ մշակոյթային հաստատութիւնները քանակով եւ որակով մի քանի անգամ վար էին մնում վրացական փոքրամասնութեան յատկացուած համապատասխան հիմնարկութիւններից:

Այս անարդարութիւնը խիստ ծանր էր գալիս վիրահայոց սրտին, որովհետեւ նրանք մի կողմից տեսնում էին, որ վրաց կառավարութիւնը արտակարգ շռայլութեամբ դրամներ էր բաց թողնում կրթական-մշակոյթային հաստատութիւնների ցանցով գուտ վրացաբնակ շրջանները ծածկելու համար, իսկ միւս կողմից գիտակցում էին, որ պետական եւ համայնական հասոյթների շատ խոշոր մասը հայերից էր գանձում:

Սակայն, վրաց կառավարութիւնը սրանով չէր գոհանում վիրահայոց ազգային-մշակոյթային պահանջները յետ մղելու համար:

Նա արգելում էր նաեւ, որ հայերը առանձին ազգային դպրոցներ ունենան վրացախիսոս շրջաններում: Պատրուակ բռնելով թէ, մակավարժական կանոնների համաձայն, մանուկների նախնական ուսուցումը պէտք է մայրենի լեզուով կատարուի՝ վրաց դպրոցական տեսչութիւնները պահանջում էին, որ վիրախիսոս հայերը իրենց գաւակներին վրացական դպրոցներ ուղարկեն: Եւ որպէսզի նրանք հարկադրուէին այս պահանջին ենթարկուելու՝ բացայայտօրէն զրկում էին նրանց ոչ միայն կրթական վարկերից, այլ եւ ամէն մի օժանդակութիւնից:

Հին ռուսացման քաղաքականութեան հետքերով ընթացող այս վրացիացման ակնյայտ ձգտումը ժամանակին շատ կրքեր յարուցեց մեր մամուլի եւ հասարակական շրջանների մէջ: Սակայն, նա ունեցաւ նաեւ խիստ բարերար ազդեցութիւն: Վրացախիսոս հայերը, որ մինչ այդ բաւական հեռացել էին ազգային տրամադրութիւններից՝ տեսնելով հարեւանների այս վերաբերմունքը՝ վերստին յառեցին իրենց աչքերը դէպի մայր ժողովուրդը եւ նրա ազգային արժէքներն ու ավանդութիւնները...

Ազգային փոքրամասնութիւնների իրաւունքները, ժամանակակից դեմոկրատական հասկացութեամբ, չեն արժէքաւորուում մի այն մշակոյթային հարցերի շրջանակում, այլ եւ ընդգրկում են համայնական կեանքի շատ կողմերը: Չգիտեմ, թէ Վերսայլի եւ միւս դաշնագրերի տրամադրութիւններն ինչ են այս մասին, բայց գիտեմ, որ, ըստ մեր ընկերվարական հասկացողութեան, ամէն մի ազգային համայնք որոշ իրաւունքներ պէտք է ունենայ դատական, վարչական եւ մանաւանդ լեզուական խնդիրներում: Վերջինիս էութիւնն այն է, որ համայնքը իր ազգային լեզուով է վարում իր գործերը եւ պետութիւնը նոյն այդ ազգային լեզուով է յարաբերութիւններ պահպանում ամէն մի համայնքի հետ, եթէ, ի հարկէ, նա պետութեան մէջ որոշ համարանք է ներկայացնում:

Ձուիցերիայում ազգային լեզու են համարում գերմաներէնը, ֆրանսերէնը եւ իտալերէնը, թէւ այնտեղ ֆրանսախիսոս քաղաքացիները հազիւ 20% են կազմում ընդհանուր ազգաբնակչութեան, իսկ իտալախիսոսները՝ հազիւ 5%-ը: Այդ բուրժուական երկրում, քաղաքացիական իրաւունք ունի նաեւ այսպէս կոչուած ռոմանական բարբառը, որ թէւ ազգային լեզու չէ համարում, սակայն, որոշ համայնքներ իրաւունք ունին գործածելու այն՝ ոչ միայն տեղական գործերում, այլեւ Կանտոնային, կարծեմ նաեւ պետական իշխանութիւնների հետ յարաբերելիս:

Արդ, հետաքրքրական է իմանալ, արդեօք Վրաստանի Սահմանադրութիւնը, որի հեղինակը, քննողը եւ վաւերացնողը վրաց սոցիալ-դեմոկրատիան էր, եւ որը իբրեւ աշխարհիս ամենադեմոկրատ

տիկ սահմանդրութիւնն է դրուատուում, որեւէ իրաւունք նախատես-  
նում է պետական եւ համայնական գործերում հայոց լեզուի հա-  
մար, որով խօսում էր երկրի ազգաբնակչութեան մօտ 20%-ը:

Այս հարցին թող ժողովանի պատասխանի: Մենք այս գիտենք  
միայն, որ Վրաստանի անկախութեան վերջին շրջանին, անգամ  
այն հայկական գիւղական համայնքները, որոնց մէջ մի հատիկ  
վրացագետ չկար, իշխանութիւնները պահանջում էին, որ բոլոր  
պաշտօնական յարաբերութիւնները պահուին վրացական լեզուով:  
Այն գիտենք նաեւ, որ նոյն այդ շրջանին, Թիֆլիս քաղաքում, ուր  
վրացիք հազիւ ազգաբնակչութեան 17-20 տոկոսն էին կազմում՝ իշ-  
խանութիւնները հարկադրում էին ոչ միայն փողոցների անուններն  
ու խանութների ցուցանակները մեծամասնութեան անհասկանալի  
վրացերէն լեզուով գրել, այլ եւ սրա մեծատիրութիւնն էին հաստա-  
տել քաղաքային ինքնավարութեան մէջ... Էլ ի՞նչ խօսինք հայկա-  
կան փոքրամասնութեան դատաստանական կամ վարչական իրա-  
ւունքների մասին:

Այնպէս որ, այն, ինչ որ ազգային փոքրամասնութեան իրաւունք  
է կոչուում, վիրահայ ժողովրդի համար, Վրաստանի անկախութեան  
շրջանին, փաստօրէն այլ բան չէր նշանակում, բայց եթէ *սեփական  
միջոցներով ազգային-մշակութային հաստատութիւններ ունենալու  
արտօնութիւն*, մի արտօնութիւն, որ նրանք ունէին նաեւ Վորոնցով-  
Ղաչկովի<sup>138</sup> փոխարքայական օրով, այն տարբերութեամբ, որ Վո-  
րոնցով-Ղաչկովի ժամանակ որեւէ արգելք չկար վիրախօս հայերին  
սեփական միջոցներով ազգային կրթութիւն տալու համար, մինչ-  
դեռ ժողովանիայի կառավարութեան ժամանակ նման արգելքներ  
յարուցուում էին... երեւի ի փոխարինութիւն այն երկու տասնեակ ժո-  
ղովրդական եւ երկու թէ երեք միջնակարգ դպրոցների, որոնք շնոր-  
հուած էին հայերին նախկին ռուսական հարիւրաւոր դպրոցնե-  
րից...

\* \* \*

Որքան էլ մշակութային, լեզուական եւ ինքնավարական խնդիր-  
ների մէջ մեծ լինէր վիրահայ ազգային փոքրամասնութեան զրկան-  
քը, այնուամենայնիւ սա փոքրիկ չարիք էր համեմատութեամբ այն  
*բացայայտ եւ զաղտնի հալածանքների*, որոնց նրանք ենթարկուում  
էին զանազան շրջաններում եւ զանազան ասպարէզներում:

Այս հալածանքների մոյշները մեզ ծանօթ են արդէն Հայկական  
Բորչալուի եւ Ախալքալաքի պատմութիւններից: Մենք գիտենք, որ  
վրացիք՝ այդ գաւառները իրենց երկրի մասը համարելով՝ նախ  
գրաւեցին առաջինը, օգտուելով հայ ժողովրդի նեղ կացութիւնից

եւ ապա, թիւրքերի հեռանալուց յետոյ, իրենց թաքը դրեցին երկ-  
րորդի վրայ: Այս աշխարհակալական ուղղութիւնը բռնելուց յետոյ՝  
նրանք գէթ երեւոյթները փրկելու համար, պէտք է իշխալ գաւառնե-  
րի բնակիչներին նկատին իբրեւ Վրաստանի քաղաքացիներ եւ  
պետական օրենքների պաշտպանութեան տակ առնէին: Սրա փո-  
խարէն մենք գիտենք, ինչ վրաց պաշտօնական աղբիւրներից, ո-  
րոնց մասին խօսել ենք իր տեղը, թէ վրացական իշխանութիւնները  
որպիսի անողոք հալածանքների ենթարկեցին այս գաւառների հա-  
յութիւնը, հալածանքներ, որոնք Հայկական Բորչալուում առաջ բե-  
րին ժողովրդական շարժումներ հայ-վրացական պատերազմի վեր-  
ջաբանով, իսկ ախալքալաքիցիների շրջանում պատճառ դարձան  
տասնեակ հազարաւոր տարտղուած մարդկանց կորստեան:

Այս ծանօթ պատմութեան վրայ կարող ենք անելացնել, որ նոյն  
կարգի հալածանքներ, երբեմն անելի կոշտ ձեւերով, տեղի ունէին  
նաեւ Վրաստանի միւս շրջաններում, ուր փոքր ի շատէ խտացած  
հայութիւն կար: Սրանց ընդհանուր պատճառը այն էր, որ վրաց ազ-  
գայնականները յամառօրէն պահանջում էին նօսրացնել Վրաստա-  
նի հայ ազգաբնակչութիւնը:

Որքան էլ վրաց ղեկավարներից շատերի սրտին մօտ լինէին  
«Միատարր Վրաստան», «Վրաստանը վրացիների համար» նշանա-  
բանները, այնուամենայնիւ նրանք «իբրեւ ընկերաբարականներ, ան-  
յարմար էին նկատում առանց «օրինաւոր հիմունքների» նօսրաց-  
ման ծրագիրները առաջ մղել: Եւ ահա այս «օրինական հիմունքնե-  
րը» նախապատրաստելու համար, մամուլի եւ հանրային կարծիքի  
կողմից սկսեցին վերագրուել հայերին «բուլշեւիկեան յեղաշրջման»  
ծրագիրներ, «Վրաստանը ներսից պայթեցնելու» դաւեր, «տեռօ-  
րիստական գործողութիւնների» մտադրութիւններ եւ այլն: Այսպիսի  
նախապատրաստական աշխատանքներից յետոյ անգամ ընկերա-  
բարականները կարող էին ձեռնամուխ լինել նօսրացման ծրագիրնե-  
րի: Զէ՞ որ սրանց գործադրութեան համար անհրաժեշտ հակահայ-  
կական հալածանքները միշտ կարելի էր ներկայացնել արտաքին  
աշխարհին իբրեւ «պետական ինքնապաշտպանութիւն»<sup>139</sup>...

Ահա այս պիտակի տակ էր, որ 1918թ. ամռան վերջերին տեղի  
ունեցան Բէլի-Կլիւշի պոգրոմները, Սոչիի Հայոց Ազգային Խորհուր-  
դի ցրումը եւ այլն:

Նօսրացման ծրագրերի կամ հակահայկական հալածանքների  
համար կային ուրիշ «օրինական հիմունքներ» էլ: Վրաց կառավա-  
րութիւնը հանել էր, այդ ժամանակները, հպատականութեան խնդրի  
վերաբերեալ մի օրէնք, որին չենթարկուողը պէտք է դիտուէր իբրեւ  
եկուոր կամ դրսեցի եւ կարող էր, առանց այլեւայլութեան, վտարու-  
ել Վրաստանից, անգամ եթէ նա տնտեսական եւ այլ կապերով կա-

պուած լինէր նրա հետ: Եւ որովհետեւ մի կողմից վիրահայ ժողովուրդը դիրաւ չէր ընտելանում այս օրէնքներին, իսկ միւս կողմից՝ վերջինս գործադիր իշխանութեան առածգական մեկնութիւնների ենթակա էր՝ այդ պատճառով էլ ստեղծուել էր, հպատակութեան հարցի շուրջը, մի շփոթ կացութիւն, որ բաւական դիրացնում էր նօսրացման քաղաքականութիւնը «օրինական ձեւերի մէջ դնելու գործը»:

Սակայն, կային եւ շատ վիրահայեր, որոնց դէմ ոչինչ չէր կարելի անել ոչ յանուն «պետական ինքնապաշտպանութեան» եւ ոչ էլ յանուն հպատակութեան օրէնքի: Քաղաքականութիւնից իսպառ հեռու, բոլոր ռեժիմների եւ իշխանութիւնների հանդէպ միանգամայն անտարբեր այս խաւերը բողոք իսկ չէին բարձրացնում նրանց իշխանութեան թերութիւնների դէմ, որպէսզի առիթ լինէր նրանց մեղադրելու «հակապետական արարքների» մէջ, իսկ հպատակութեան օրէնքի պահանջներն էլ լրացնում էին լիովին: Սրանք էլ հակահայկական հալածանքների դառնութիւնը ճաշակում էին հայերի դէմ սկսուած տնտեսական ճնշումների երեսից:

Արտաքնապէս այս ճնշումները հանդէս էին գալիս ապագային դիմակով, իբրեւ հանրապարտադիր օրէնքներ կամ կանոններ առեւտրա-արդիւնաբերական գործերով պարապող բոլոր քաղաքացիների համար: Բայց ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ նրանց գլխաւոր զոհերը հայերը պէտք է լինեն, որովհետեւ այդ գործերը գլխաւորապէս նրանց ձեռքին են գտնուում: Բացի սրանից, այդ օրէնքները հայերի վերաբերմամբ գործադրում էին անհամեմատ աւելի խստութիւնով, քան ուրիշների վերաբերմամբ:

Իշխանութեան տնտեսական քաղաքականութեան ընդհանուր պատկերը այս մարզի մէջ հետեւեալն էր. մի կողմից՝ ծանր տուրքերի էին ենթարկում հայերի առեւտրա-արդիւնաբերական ձեռնարկները, նոր ձեռնարկների արտօնութիւնը դժուարացնում, նրանց համար չարաշահութեան մեղադրանքով մեծամեծ տուգանքներ դնում նրանց վրա, իսկ միւս կողմից՝ ամէն դիրութիւն ու աջակցութիւն տալիս էին տնտեսագործական հակումներ ունեցող վրացիներին, որպէսզի նրանք մրցունակ դառնան հայերի դէմ:

Տնտեսական այս ճնշումների հարուածը մեծ էր մանաւանդ այն պատճառով, որ գործատու իշխանութեան պաշտօնները, ըստ կամս բացատրելով օրէնքներն ու պարտադիր որոշումները՝ կաշառակերութեան լայն հնարաւորութիւններ էին ստեղծում: Դեռ ռուսական տիրապետութեան հռչակ ստացած վրացի պաշտօնեաները, անկախութեան շրջանին, առասպելական չափերի էին հասցրել այս արատը, որի ծաւալման համար ամէն կարգի հալածանքները, եւ մանաւանդ տնտեսական հալածանքները միշտ նպաստաւոր հող

էին ներկայացնում: Վիրահայ Ազգային Խորհուրդը մի ժամանակ հեղեղուած էր այս հալածանքների հետ կապուած կամայականութեամբ եւ կաշառակերութեան վերաբերեալ բողոքներով...

Բայց տոսկալին դեռ յետոյ պիտի գար:

\* \* \*

1918թ. ձմռան սկզբին բռնկեց Լոռուայ ապստամբութիւնը, որ, ինչպէս ասացինք, յանգաւ հայ-վրացական պատերազմի: Պաշտօնապէս Վրաստանը պատերազմի մէջ էր ոչ թէ հայ ժողովրդի կամ Հայաստանի հետ, այլ միայն հայկական կառավարութեան հետ: Ունանք այս ձեւակերպութիւն էլ խիստ կամ անյարմար նկատելով՝ դարձնում էին պատերազմը Դաշնակցութեան դեկավարութեան դէմ եւ որպէսզի Դաշնակցութիւն խօսքը չխրտչեցնի Հայաստանում եւ դուրսը գտնուող հայկական հոծ զանգուածներին, Հայաստանի «անպատասխանատու մարտական խմբակցութիւնների» տապալման մէջ էին տեսնում պատերազմի նպատակը:

Պատերազմի յայտարարութեան առթիւ Պառլամենտում արտասանած իր ճառի մէջ ժողովանիան այդ մտքով էլ արտայայտում է.

*«Մենք կոչ ենք անում վրաց դեմոկրատիային կռուելու ոչ թէ հայ ժողովրդի դէմ, այլ՝ ընդհակառակը, հայ ժողովուրդը պէտք է հանդուրած լինի, որ վրացիների ու հայերի միջեւ, Վրաստանի եւ Հայաստանի հանրապետութիւնների միջեւ պէտք է առյաւէտ հաստատուին իրաւական եւ խաղաղ յարաբերութիւններ: Մենք կոչ ենք անում կռուելու այն կառավարութեան եւ այն ռազմական կուսակցութեան դէմ, որոնք նախաձեռնեցին այդ սարսափելի ոճիրը»<sup>140</sup>:*

Էլ աւելի յստակ ձեւով, նոյն միտքն է արտայայտում եւ կառավարութիւնը՝ Վրաստանի ազգաբնակչութեանն ուղղած կոչի մէջ, ուր ասուած է.

*«Քաղաքացիներ, վրաց ժողովուրդը միշտ աչքի է ընկել իր հերոսութեամբ եւ քաղաքացիական պարտաճանաչութեամբ: Մեր քաղաքացիների այդ զգացումներին էլ մենք կոչ ենք անում յուսալով, որ պատերազմական գործողութիւնների սկսուելուց յետոյ էլ ուժեղ կերպով կը պաշտպանուեն ամբողջ ազգաբնակչութեան իրաւունքները, առանց ազգային եւ դաւանական խտրութիւնների...Թող ամէն մի քաղաքացի իմանայ, որ վրաց կառավարութիւնը պատերազմում է ոչ թէ հայ ժողովրդի դէմ, այլ այն զինուորական խմբակների դէմ, որոնք պատճառ դարձան եղբայրասպան արիւնհեղութեան»<sup>141</sup>:*

Սակայն, ժողովրդի եւ կառավարութեան այս հանդիսաւոր յայտարարութիւններն ու խոստումները մնացին թղթի վրայ... որպէսզի «գունաւոր գրքում» լույս տեսնեն եւ ապագայ պատմագրի ձեռ-

քին իբրեւ «վաւերագրեր եւ նիւթեր» ծառայեն նրանց «հերոսութեան ու քաղաքացիական պարտաճանաչութիւնը» գովելու համար: Պատերազմի առաջին օրերից իսկ պարզուեց, որ վրացիք կռուի էին դուրս եկել ոչ այնքան հայկական կառավարութեան կամ Յայաստանի «գինուորական խմբակների» դէմ, որոնց հասնելը, պատերազմական գործողութիւններին նայելով, կարծածի չափ դիւրին գործերից չէր, այլ կռուի էին դուրս եկել Վրաստանում գտնուած անպաշտպան հայ ժողովրդի դէմ...

Վրաց զօրքերը հազիւ էին շփման մէջ մտել հայկական կռուող ուժերի հետ, երբ Վրաստանում սկսուեցին անօրինակ զանգուածային հալածանքներ հայերի դէմ: Այս մասին հետեւեալն ենք կարդում Վրաստանի մեր դեսպանութեան Տեղեկատու բիւրոյի հաղորդութեան մէջ, որի պատճենը գտնուում է Հ.Հ Պատուիրակութեան արշիւի մէջ (Փարիզ):

«Բոլոր հայերի դէմ ուղղուած ճնշումների ազդանշանը տուեց ներքին գործերի մինիստր Ռամիշվիլին գաղտնի շրջաբերականով, եւ, հայ-վրացական ընդհարման առաջին իսկ օրերից կազմակերպուած արշաւանք սկսուեց հայերի դէմ վայրենի միլիցիոներների եւ Յատուկ զօրաբաժնի<sup>142</sup> պաշտօնեաների կողմից: «Սոցիալիստական» կառավարութեան այս անարգ վիժուածքը (խօսքը «Յատուկ զօրաբաժնի» մասին է), մարդկային իրաւունքների ոտնահարման եւ սիստեմատիկ թալանների կազմակերպման մէջ, գերազանցում է մինչեւ անգամ ցարական տիրահռչակ «Պահնորդական բաժանմունքին»<sup>143</sup>: Յայաստանի հպատակներին ցուցակագրելու պատրուակով, միլիցիոներները եւ Յատուկ զօրաբաժնի պաշտօնեաները կատարում էին գիշերային արշաւներ հայերի տների վրայ, խուզարկութիւններ էին անում առանց որեւէ հրամանագրի իբր թէ զենք գտնելու համար, բայց փաստօրէն ամենամանաձօք կերպով կողոպտում էին բոլոր թանկարժէք իրերը սարսափահար տանտիրոջ աչքի առաջ: Սրանից յետոյ նրանք դուրս էին հանում տանտիրոջը պահակի հսկողութեան տակ եւ ապա կամ վերստին տուն դարձնում կամ առաջնորդում բանտ եւ կամ ուղարկում Յայոց Ներսիսեան դպրոցի նոր շէնքը՝ Քութայիս նահանգը արքայապետի համար: Ընտրութիւնը այս որոշումների մէջ կատարում էր նայած այն հանգամանքին, թէ ձերբակալուածը ինչ չափով էր բաւարարում դրամաշորթական փրկանքի պահանջը:

Հանրային բողոքի որեւէ արտայայտութիւն կանխելու համար, կառավարութիւնը անյապաղ փակեց Դաշնակցական մամուլի օրգանները՝ «Աշխատաւոր» եւ «Նոր Հորիզոն», Սոցիալիստ Յեղափոխականների թերթը՝ «Տրուդօվօյէ զնամեա» եւ «Կաւկասկօյէ սլօվօ» լրագիրը: Ոչ միայն կնիքի տակ դրուեցին սրանց խմբագրատ-

ներն ու տպարանները, այլ եւ բռնագրուեցին թղթապահեստները: Ազատ են միայն «Մշակ»ը, «Ժողովրդի ձայնը» եւ «Տիֆլիսսկի լիստօկը», որոնք, գոնէ մինչեւ վերջին օրերը, չէին կարող արձանագրել ոճրագործութեան հասարակ փաստերն իսկ...

Այն ժամանակ, երբ (վրաց) ազգայնական թերթը, ամենակատաղի արշաւանք սկսելով ամբողջ հայութեան դէմ պահանջում էին գրաւել (հայկական) բոլոր հողերը մինչեւ Երեւան, եւ վտարել հայերին (Վրաստանից) խլելով նրանց ստացուածքը՝ այս միեւնոյն ժամանակ (սոցիալ-դեմոկրատական) «Էրթօբա»ն եւ «Բորբա»ն լռութեան սիստեմն էին որդեգրել յանցագործ ճնշումների հանդէպ...

Լրագրերը փակելու հետ միասին, խուզարկութիւն կատարուեց Արամեանցի տանը, ուր զետեղուած է Վիրահայոց Ազգային Խորհուրդը... որից յետոյ կնքուեցին նրա թղթերը եւ բռնագրուեցին դրամներն ու դեղորայքը եւ ձերբակալուեցին պաշտօնեաները: Հետեւանք այն եղաւ, որ Խորհուրդը եւ մանաւանդ նրա գաղթակական բաժանմունքը փաստօրէն դադարեցրին իրենց գործունեութիւնը: Վրաց դեմոկրատիկ հանրապետութեան կառավարութեան ուզածն էլ հէնց այդ է: Դժուար չէ գուշակել, որ նա իւրացնելով համիտեան ռէժիմի քաղաքականութիւնը, հետամտում է «հայ ազգաբնակչութեան համրանքի նուազեցումը»՝ գաղթականներին յարմարութիւն տալով... ազատ մեռնելու:

Դեկտեմբերի 24-ին հրատարակուեց Վրաստանի Պառլամենտի օրէնքը, որ սահմանում է, դաւաճանութեան համար, մահուան պատիժ եւ ստացուածքի բռնագրաւում... Այս օրէնքի հրատարակութիւնից երկու օր անց, լոյս տեսան ընդհանուր նահանգապետ Մագլակելիձէի նշանաւոր Պարտադիր կանոնները, որոնց համաձայն Յայաստանի բոլոր հպատակները համարուում են ռազմագերի: Ռազմագերիներ են նկատուում նաեւ Բորչալու գաւառի այն բնակիչները, որոնց գիւղերը գրաւուած են հայկական զօրքերով: Այս ռազմագերիները 24 ժամում պէտք է ներկայանան միլիցիային, եթէ չեն ուզում ենթարկուել դաւաճանութեան համար պառլամենտի կողմից սահմանուած պատժին:

Յիշեալ Պարտադիր կանոնների երեւան գալու պէս, խուզարկութիւնները, ձերբակալութիւնները, շուրջկալները եւ, մասնաւորապէս, Յատուկ զօրաբաժնի դրամաշորթութիւնները օրինական հիմք ստացան եւ ժամէ ժամ, սարսափելի արագութեամբ ծաւալուելով՝ դարձան մի համատարած մղձաւանջ Թիֆլիսի բոլոր հայերի համար: Մի ամբողջ շաբաթ հնար չկար փողոցները ելլելու: Սարսափահար հայերը փակուում էին խանութներն ու վաճառանոցները: Նրանց սարսափը կրկնապատկուած էր այն պատճառով, որ ընտանեկան յարկը, ուր առաջինները նրանք պատսպարուում էին (փողո-

ցի վտանգներից ազատուելու համար) դարձել էր միլիցիոներների արշավին ենթակայ մի դաւաճանական ծուղակ...

Օրէնքի պաշտպանութիւնից դուրս մնացած հայերը խուռնե-րան դիմում էին դէպի Ռուսաց ազգային խորհուրդը՝ ռուսահա-տակութեան վկայագիր ստանալու համար: Սակայն միլիցիան ներս խուժեց եւ Ռուսաց ազգային խորհուրդը դուրս հանեց այնտեղից բազմաթիւ հայեր եւ, չնայած այդ խորհրդի բողոքներին, աքսորեց Քութայիս նրանց, ովքեր ի վիճակի չէին ձերբազատման համար պահանջուած փրկանքը վճարելու: Վարչական այս ապօրէն գործո-ղութիւնների դէմ Ռուսաց Ազգային խորհրդի յարուցած գանգաւ-ներն այն հետեւանքը միայն ունեցան, որ ընդհանուր նահանգապե-տը որոշեց խստագոյն պատասխանատուութեան ենթարկել այն հայերին, որոնք ռուսահպատակութեան վկայագիր կը ստանան Ռուսաց ազգային արհրդից<sup>144</sup>:

Մնացել էին (այս հալածանքներից զերծ) մի խումբ անհատներ, որոնք, յաջողել էին ստանալ այդ նահանգապետից մի-մի ապահո-վագրեր, որի վրայ գրուած էր, թէ այն ներկայացնողը «ՂԱՅ ԼԻՆԵ-ԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ՉՊԵՏՔ Է ԲԱՆՏԱՐԿՈՒԻ ԿԱՄ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԻ»: Պաշ-տօնական վաւերաթղթի այս արտայայտութիւնից դուր կարող էր ե-րեւակայել սարսափը այն հայերի, որոնք ապահովագիր<sup>145</sup> չունէին:

Տարական եւ համիտեան ռեժիմների ամենադժնդակ օրերը վե-րադարձել էին: Փողոց դուրս գալ յանդգնողներին որսում էին եւ տանում Յատուկ զօրաբաժինը քննութեան ենթարկելու համար: Նրանց մեղադրում էին Վրաստանի դեմոկրատիկ հանրապետու-թեան դէմ պրոպագանդ մղելու մէջ՝ հիմնուելով Յատուկ զօրաբաժ-նի լրտեսների վկայութեանց վրայ: Ուրիշների թոււմ Յովհաննէս Թումանեանը (*բանաստեղծ*) եւ Յովսէփ Ամիրխանեանը (*յետագա-յին արդարադատութեան միմիստրի օգնական Յայաստանում*) նոյնպէս առաջնորդուեցին փողոցից ուղղակի Ջօրաբաժին, որով-հետեւ նրանց հետեւող լրտեսը մատնել էր, թէ նրանք պատերազմի մասին էին խօսում: Ջօրաբաժնում նրանց նախազգուշացրին, թէ ինչ ծանր պատիժներ էին սահմանած այսօրինակ պրոպագանդի համար եւ բաց թողին: Սակայն Յովսէփ Ամիրխանեանը մի քանի օր անց նորից ձերբակալուեց:

Ամէն օր հարիւրաւոր ձերբակալութիւններ էին լինում: Ամբողջ թաղեր ենթարկւում էին շուրջկալի: Եւ այս զանգուածային շուրջ-կալները պայթում էին առաւելապէս բանուոր դասակարգի եւ միջին մտաւորականութեան վրայ, որոնցից միլիցիոներն աշխատում էին ստանալ, հենց տեղն ու տեղը, փողոցում, օրը կեսօրին, մի քանի տասնեակ, լաւագոյն դէպքում մի քանի հարիւր ռուբլու հասնող համեմատաբար փոքրիկ փրկանքներ:

Ինչ վերաբերում է ունեւոր հայերին, մասնաւորապէս գրաւիչ Սուլուակի<sup>146</sup> բնակիչներին, նրանց համար ցանկ էր կազմուած: Այդ ցանկը ձեռներին, միլիցիոներներն այցելում էին տները, սովորա-բար ցերեկով, եւ պահանջում, որ երեկոյեան համար պատրաստ լի-նի իւրաքանչիւրի համար նախապէս որոշած գումարը՝ սպառնա-լով ունեւորներին, որ հակառակ դէպքում նրանց կը ձերբակալեն իբրեւ ռազմագերիներ, Մետեխի բանուր կ'առաջնորդեն եւ ճանա-պարհին, իբրեւ «փախչել փորձանքների» կը սպանեն... Ինչ խօսք, որ միլիցիոներների պահանջած գումարները վճարվում էին առանց առարկութեան: Սարսափահար զոհերը մինչեւ անգամ չէին խօսում իրենց դէմ գործադրուած բռնութեան մասին, որովհետեւ վստահու-թիւն չունէին կառավարութեան վրայ եւ վախենում են բռնաւորնե-րից: Յայտնի են մի շարք անձինք, որոնցից միլիցիոներները խոշոր գումարներ են կորզել 12-15 հազար ռուբլի իւրաքանչիւրից: Օրի-նակ, այսպիսի դրամաշորթութեան են ենթարկուել Բաղդասարեա-նը, Արամեանցը, Խրիստեանցը, «Արդօ» գործարանի կառավարիչը, Չիլինգարեանը եւ ուրիշ շատերը:

Մի յանդուգն վաճառական, պատրուակ բռնելով, թէ չէ կարողա-նում դրամատնից հանել միլիցիոներների պահանջած 12000 ռուբ-լին, որպէսզի, օգտուելով այս ժամանակամիջոցից, լուր տալ իշ-խանութիւններին: Սակայն, դատաստանական երկու քննիչներ, ո-րոնց նա յայտնում է այս մասին, բարեկամաբար խորհուրդ են տա-լիս նրան, որ աւելի լաւ է կատարի դրամաշորթների պահանջը եւ զուր յոյս չդնի, թէ իշխանութիւնները կը մտահոգուին նրա անձի ա-պահովութեամբ: Իրենց կարծիքը հաստատելու համար, նրանք յի-շատակում են այդ օրերում տեղի ունեցած մի քանի դէպքեր, երբ դատական քննիչների հրամանով ձերբակալուած դրամաշորթներ ձերբազատուել են ներքին գործերի միմիստրի պահանջով:

\* \* \*

Տեղեկատու բիւրոյի այս հաղորդագրութեան մէջ մի քանի ան-գամ ակնարկուած է «իբրեւ հայ» ձերբակալուածների աքսորի մա-սին: Գաղափար տալու համար, թէ ինչ է նշանակում այս աքսորը, ստորեւ գետեղում ենք մի գրութիւն, որ թիֆլիսաբնակ 56 հայ քա-ղաքացիների ստորագրութեամբ 1919թ. սկզբներին լոյս տեսաւ Թիֆլիսի թերթերում: Այս գրութեան իսկականը ձեռքի տակ չունե-նալով՝ նրա ընդօրինակութիւնը կատարում ենք լեզուական փոք-րիկ շտկումներով Ս.Վրացեանի «Յայաստանի Յանրապետութիւն»ը գրքից, ուր այն լոյս է տեսել ըստ երեւոյթին որոշ կրճատումներով: Թիֆլիսաբնակ քաղաքացիները գրում են.

«Մենք շարունակ լռյեալ եւ անպայման հանդուրժող ենք եղել տեղական նոր իշխանութեան վերաբերեալ, բայց չնայած դրան՝ Հայաստանի եւ Վրաստանի ընդհարման սկզբին, վերջինս մեզ փաստօրէն օրէնքից դուրս եւ ազատութիւնից զրկուած յայտարարեց... Մենք չէինք կարող ռազմագերի լինել այն պարզ պատճառով, որ զինուորականներ չենք: Բացի այդ՝ մենք Հայաստանի հպատակների չենք: Մեզանից շատերը ընկնում են վրաց պառլամենտի հրատարակած հպատակութեան օրէնքի տակ եւ, հետեւաբար, հանդիսանում են Վրաստանի հպատակներ: Ուրիշները ռուսահպատակ էին եւ շարունակում էին իրենց ռուսահպատակ համարել: Վերջապէս, ձերբակալուածների մէջ կային Պարսկաստանի, Թուրքիայի եւ այլ երկրների հպատակներ: Մեր մէջ կային մտաւորականներ, հիւանդներ, թեւազուրկներ, ոտազուրկներ, կույրեր, կային մինչեւ 75 տարեկան ծերունիներ եւ 15-16 տարեկան երեխաներ:

Ոչ մի մեղադրանք մեզ չներկայացրին ձերբակալելիս եւ ձերբակալութիւնից յետոյ: Հարցրին միայն «Դուք հա՞յ եք», եւ այդ բաւական էր: Մեզ, առաջին հանդիպող պատահական անձերիս, որ մտել էինք կոմիսարիատ այլեայլ գործերով, տուրքեր վճարելու, զանազան տեղեկութիւններ ու թոյլատրութիւններ ստանալու համար, խլեցին մեր ընտանիքից ու պարապմունքներից եւ, թոյլ չտալով հրաժեշտ տալ մեր մերձաւորներին, թոյլ չտալով վերցնել անենամիտեղ իրերը կամ որեւէ կարգադրութիւն անել՝ ուղարկեցին յայտնի չէ ինչ պատճառով, յայտնի չէ ուր, յատնի չէ ինչ պայմանաժամով...

Երբ մեզ տանում էին վագոնների շուրջը, կայարաններում բազմութիւն էր հաւաքւում: Նրանք ասում էին, թէ ճակատից հայ ռազմագերիներ էին բերում: Մեզ ստիպեցին զինուորական քայլուածքով անցնել Քութայիսի փողոցները՝ շրջապատուած պահակախմբով եւ ժողովրդի բազմութեամբ: Մեզ դարձրին ծաղրի եւ վիրաւորանքների առարկայ: Մեզ քաղցած պահեցին: Ձերբակալութիւնից միայն երեք օր յետոյ մեզ տուին եգիպտացորենի հաց եւ մի զգուելի կերակուր: Մեզ դատապարտեցին երկու շաբաթ ապրել բանտերում, ամենահակառողջապահական պայմանների մէջ, կեղտոտ յատակի վրայ, առանց անկողնի, առանց ջրի...

Մեզ հետ վարում էին որպէս ոճրագործների հետ: Մեզանից ոչ նուազ քան երեք չորրորդը այժմ հիւանդ է: Մի քանիսը հիւանդացան բժաւոր տիֆով եւ մեռան: Քութայիսի հիւանդները զուրկ էին մնում բժշկական օգնութիւնից: Թախանձագին խնդրանքից յետոյ, մի քանիսը գետեղուեցին բանտի հիւանդանոցում բժաւոր տիֆով հիւանդների եւ ոճրագործների կողքին, որոնցից մի քանի հոգի

մեռնում էին ամէն օր խնամքի բացակայութեան պատճառով: Բանտի հիւանդանոցում ընդունուած հայերից մեռան մօտ 10 հոգի, որոնց անունները յայտնի են Քութայիսի հայ քահանային: Բոլոր այդ օրերի ընթացքին մեզանից ամէն մէկը չէր դադարում կախում ունենալ այս կամ այն պաշտօնեայի, այս կամ այն զինուորի քմահաճոյքից ու կամայականութիւնից: Մեզ տանում էին՝ ատրճանակների փողերը մեր դէմ ուղղած՝ մեզանից շատերին ենթարկեցին պահակապետերի եւ զինւորների ծեծին: Շատերին կողոպտեցին խլելով վրայի դրամը, շատերի վրայից հանեցին քիչ թէ շատ լաւ հագուստը (ուսանող Շամոյեան, Վատման Ալեքսանեան, Սարգիս Մուրադեան, Գ. Խաչատրեան եւ ուրիշներ): Ձերբակալուած եւ Քութայիս քստրուածների թիւը որոշ յայտնի չէ: Յամենայն դէպս այդ թիւը երկու հազարից պակաս չէ:

Սրանց մէջ ռազմաճակատից բերուած իսկական գերիների թիւը 3-4 տասնեակից անէլի չէ: Առանձնապէս վայրագ վերաբերմունք կար այս իսկական գերիների հանդէպ: Չինուորները զրկուած էին տաք հագուստից ու կօշիկներից. սպաներից խլում էին լաւ կօշիկները ու փոխարինում տրեխներով (շտաբս կապիտան Տէր Ղազարեան): Պահակ զինուորը դաշոյնով վիրաւորեց գերի ընկած զինուորներից մէկին, եւ նա մեռաւ առանց բժշկական օգնութեան: Թիֆլիսում այդ ռազմագերիներից մի քանիսը մտրակով ծեծուեցին Բորչալուի թաթարներից կազմուած հեծեալ պահակների կողմից:

Մեր յայտարարութիւնները, խնդրանքները որ մեզ հարցաքննեն, պաշտօնեաների դէմ յարուցած զանգատները եւ ներկայացրած փաստաթղթերը ոչ մի արդիւնք չէին ունենում:

Մեզանից ոմանք, որ դեկտեմբերի 23-ին ձերբակալուելով քստրուել էին Քութայիս եւ ապա զանազան պատճառներով յետ ուղարկուել՝ Թիֆլիսի ճանապարհին ու հազիւ Թիֆլիս հասած նորէն ձերբակալուեցին եւ մինչեւ անգամ վերստին Քութայիս ճամբուեցին: Եղան դէպքեր, երբ միեւնոյն անձը ձերբակալուեց 4 անգամ»:

Յայտնի է՝ էին արոյժք ազգային հալածանքների եւ քստմնելի փաստերը ժողովանիայի կառավարութեանը: Անկասկած յայտնի էին: Այդ կառավարութիւնը, որ շնորհիւ ներքին գործերի մինիստրական կազմակերպած լրտեսական ցանցի միջոց լաւատեղեակ էր երկրի ամենախուլ անկիւնների իրադարձութիւններին, իսկ, չէր կարող չիմանալ, թէ ինչ է անցնում-դառնում իր մայրաքաղաքում, Թիֆլիսում կամ Քութայիսի պէս կարեւոր կենդրոնում: Չէր կարող չիմանալ նաեւ այն պատճառով, որ Վիրահայոց Ազգային խորհուրդը, ինչպէս այդ երեւում է 1919թ. յունուարի 8-ին վրաց կառավարութեան նախագահ ժողովանիային ուղղուած յուշագրից, հալածանքների տեւողութեան ընթացքին մի քանի անգամ կառավարու-

թեան ուշադրութիւնն է հրաւիրել վիրահայ ժողովրդի իրաւագուրկ վիճակի եւ վարչական իշխանութեան կամայականութիւնների ու լրբութիւնների վրայ: Բայց ի՞նչ վերաբերմունք էր ցոյց տալիս կառավարութիւնը այս ամենի հանդէպ: Ահա թէ ինչ:

Յունուարի (1919թ.) սկզբներին Վրաստանի Պառլամենտի բոլոր հայ պատգամաւորները, առանց կուսակցական խտրութիւնների, հարցապնդում են ներկայացնում կառավարութեանը հակահայկական հալածանքների մասին: Երբ հայ պատգամաւորները, հարցապնդումը հիմնաւորելու համար սկսում են թուել վարչական եւ զինուորական իշխանութիւնների վայրագութիւնները՝ սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի մէջ մի հատիկ հռետոր չէր գտնուում, որ վեր կենար, եւ, ընկերաբար կանխագուշակելով ու խղճով, անարգանքի սիւնին գամէր այդ վայրագութիւնների հեղինակներին, իսկ պառլամենտի աջակողմեան կուսակցութիւններն ու խմբակցութիւնները այնպիսի ոռնոց էին բարձրացնում հայ պատգամաւորների դէմ, որ նրանք ստիպուած են լինում իրենց խօսքը կիսատ ձգել...

Երբ պառլամենտն էլ իր այս վարմունքով բարոյական պատասխանատուութիւն է ստանձնում մի ամբողջ ազգային փոքրամասնութեան հանդէպ կատարուող քստմնելի բռնութիւնների համար՝ կառավարութեան ներկայացուցչին, որ այս դէպքում ներքին գործերի մինիստրը պէտք է լինէր, այլ բան չէր մնում անել, բայց եթէ բացատրել այդ բռնութիւնները իբրեւ մանր պաշտօնեաների փոքրիկ թերացումներ... Նա այդպէս էլ կատարում է իր դերը, չնոռանալով, ի հարկէ, ինչպէս ընդունուած է նման պարզաբանումներում, առիթից օգտուել իր յարգանաց հաւաստիքը յայտարարելու հայ ժողովրդին, որի դէմ վրաց կառավարութիւնը ոչինչ չուներ, որին նա միշտ բարեկամ է համարում Վրաստանին եւ այլն...

Այդպէս է եղել միշտ ժողովրդային կառավարութեան ընթացքում հայ ժողովրդի հանդէպ. խօսքով՝ բարեացական, իսկ գործով՝ գործն ինքն է խօսում իր մասին...

\* \* \*

Բարեմիտ լինենք բացատրելու վիրահայ ազգային փոքրամասնութեան դէմ ուղղված անազորոյն հալածանքները «պատերազմական անհրաժեշտութեամբ», ինչպէս այդ սիրում էին անել Վրաստանի ղեկավարները մի ժամանակ: Այսինքն՝ ընդունենք, թէ արդար էին նրանք, երբ ասում էին, թէ հայ-վրացական պատերազմի օրերին Վրաստանի հայ ժողովուրդը կամ նրա որոշ հատուածները թշնամական դիրք էին բռնել վրաց գործի եւ կառավարութեան հան-

դէպ՝ հարկադրելով վերջինիս զսպիչ միջոցներ ձեռք առնել այս «դաւաճանական» ընթացքի դէմ՝ պետութիւնը պաշտպանելու եւ պատերազմական գործողութիւնների յաջողութիւնը ապահովելու համար: Կրկնում ենք, ընդունենք մի րոպէ այս մեղադրանքի ճշմարտութիւնը, թէ, ինչպէս կատեսնենք յետոյ, քարերն իսկ աղաղակում են սրա դէմ:

Արդ, եթէ «պատերազմական անհրաժեշտութիւնն» էր կազմում հակահայկական հալածանքների հիմքն ու պատճառը, հասկանալի է, որ պատերազմի վերջանալուն պէս, Վրաստանի հայութեան դէմ ուղղուած խստութիւններն էլ պէտք է դադարէին: Բայց իրականի մէջ ի՞նչ ենք տեսնում. այն, որ այդ խստութիւնները իրենց զագաթնակէտին են հասնում հէնց այն ժամանակ, երբ թշնամական գործողութիւններն իսպառ դադարել էին, եւ նրանց վերաժարածման համար որեւէ նշան չկար:

Չայ-վրացական պատերազմը, ինչպէս գիտենք, վերջացաւ 1918թ. դեկտեմբերի 31-ի գիշերը՝ նախօրօք մշակուած զինադադարի պայմանի համաձայն՝ եւ այդ վայրկեանից սկսած, մի հատիկ զնդակ չէ արծակուել ոչ այս, ոչ այն կողմից: Նոր տարուայ առթիւ ոչ մի պարզեւ չէր կարող այնքան մեծ արժէք ունենալ հայ եւ վրացի ժողովուրդների համար, որքան այս զինադադարը:

Առանձնապէս մեծ էր ուրախութիւնը Վրաստանում ապրող հայութեան, որին այդ չարաշուք պատերազմը կռահի եւ սալի արանքում էր դրել: Եւ ահա զինադադարից հինգ օր անց, երբ կրքերը երկուստեք զգալի կերպով մեղմացել էին, եւ ամէնքը կարծում էին, թէ շատ հեռու չեն այն օրերը, երբ որ, համաձայն ժողովրդային գուշակութեան կամ ցանկութեան, «վրացիների ու հայերի միջեւ, Վրաստանի եւ Չայաստանի հանրապետութիւնների միջեւ պէտք է առյաւելտ հաստատուեն իրաւական եւ խաղաղ յարաբերութիւններ», Թիֆլիսում բռնկում են հակահայկական հալածանքներն այնպիսի ուժգին թափով, որ մոռցնել են տալիս նախորդ շաբաթների բոլոր սարսափները...

Վիրահայոց Ազգային Խորհուրդը, վերեւ յիշուած յուշագրի մէջ (8 յունուար, 1928թ.), հետեւեալն է գրում Թիֆլիսում այդ օրը տեղի ունեցած դէպքերի մասին.

«Կիրակի, յունուար 5-ին, ... միլիցիայի պաշտօնեաները, իբրեւ զինուած վայրենիներ, բառի բուն նշանակութեամբ որս էին կազմակերպել հայերի դէմ: Մի քանի ժամուայ ընթացքում, նրանք ձերբակալեցին մօտ 6000 մարդ: Սրանցից ազատ ձգուեցին մի քանի հարիւր բախտաւորներ միայն, որոնք ի վիճակի էին, հէնց տեղն ու տեղը, ամէնքի աչքի առաջ, հրապարակային նուազուրդ կատարելով, վճարել պահանջուած փրկագինը կամ որոնց հնարաւորութիւն

տրուեց միլիցիոներների ուղեկցութեամբ գնալ տուն եւ այնտեղ, աւելի եւս մեծ գումար վճարելով, ազատուել բռնաւորներից»:

Նոյն դէպքերի, ինչպէս եւ յետագայ իրադարձութիւնների մասին Վրաստանի մեր դեսպանութեան տեղեկատու բիւրօն հաղորդագրում է.

«Յունուարի 5-ին, երբ միլիցիոներները որսում էին հայերին, Թիֆլիսի փողոցները մղձաւանջային պատկեր էին ներկայացնում բառիս բուն իմաստով: Ամբողջ շրջաններ պարփակուում էին, եւ միլիցիոներները, ասորճանակները ձեռքերին, ընկնում էին ամէն մէկի յետեւից, ով արտաքուստ հայի էր նմանում: Հայերին հարկւրներով հաւաքում էին, խմբերի բաժանում, եւ տեղն ու տեղը, հէնց փողոցում հարց ու փորձ անում, թէ ձերբակալուածներից ով ինչքան կարող է վճարել: Ունեւորներից խլում էին վրայի ամբողջ դրամը եւ արձակում, իսկ մնացածներին ծաղրանքով ու փողոցային հայիտ-յանքներով ուղարկում Մետեխի բերդը (ուր գտնուում է Թիֆլիսի գլխաւոր բանտը): Այդ օրը ձերբակալեցին մօտ 6000 հայ... Ձերբակալածների թում էր եւ ճարտարապետ Լեւոն Խատիսեանը՝ Ալեքսանդր Խատիսեանի եղբայրը, որին ուղարկել էին Ներսիսեան դպրոց: Նա եւ ուրիշ 9 հոգի ազատուեցին վճարելով Լ. Խատիսեանի միջոցով 50-ական ռուբլի իւրաքանչիւրի համար, ընդամենը 500 ռուբլի: Ձերբակալուած են (Թիֆլիսի) քաղաքային խորհրդի Դաշնակցական ֆրակցիայի բոլոր անդամները: Ձերբակալուած են շատ հասարակական գործիչներ, որոնց թում եւ Յովսէփ Խունուցը (Ներսիսեան դպրոցի տեսուչ), որին յաջորդ օրը բաց թողին:

Սրա հետ միասին ձեռնարկուած են հայկական ստացուածքի բռնագրամանը... Կառավարութիւնը արգելք է դրել հայերին պատկանող գրեթէ բոլոր առեւտրաարդիւնաբերական ձեռնարկների, ընթացիկ հաշիւների եւ սէյֆերի վրայ: Այժմ պատրաստում է մի օրինագիծ՝ հայերի ստացուածքը բռնագրաւելու համար, որ, ինչպէս յայտնի է, թէ ազգայնական եւ թէ սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնների վաղուցուայ երազն է հանդիսանում: Այդ նկատումով պառլամենտը շտապողական կարգով օրէնք հանեց, որով արգելում է անշարժ կալուածքների առուծախը քաղաքներում...

Կանանց Բարձրագոյն դպրոցը, որ դեռ ազգայնացուած (վրացիացուած) չէ, հրաման ստացաւ այս օրերս ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրութիւնից, որ իր քիմիական լաբորատուարի ամբողջ գոյքը անյապաղ յանձնէ վրացի պրոֆեսոր Մելիքովին: Լաբորատուարի ղեկավարներն են մի ռուս պրոֆեսոր եւ երկու հայ պրեվատ-դոցենտներ՝ Պ. Ղամբարեան եւ Պ. Քալանթարեան: Վերջիներս, նկատելով այդ պահանջը ապօրէն եւ վիրաւորական իրենց համար՝ մերժում են յանձնել գոյքերը Մելիքովին, որովհետեւ

իրենք, իբրեւ գիտութեան մարդիկ, միշտ անձնապէս հեռու են եղել ամէն մի քաղաքականութիւնից: Մելիքովը հաղորդում է այս մասին իր իշխանութեանը: Հետեւանքը եղավ այն, որ յիշեալ երկու հայ դոցենտներին՝ Ղամբարեանին եւ Քալանթարեանին՝ ձերբակալեցին իբրեւ ռազմագերիներ եւ ուղարկեցին ներքին Օրթաճալայի բանտը: Բանտում տեղաւորում են նրանց ոճրագործ թիապարտների նկուղի մէջ: Թիապարտներն իմանալով, որ նորեկները «դաւաճան հայեր են», յարձակուում են նրանց վրայ, կողոպտում վրայի ունեցած-չունեցածը, ինչպէս հարկն է, եւ ապա ստիպում, որ «դաւաճանները» հանուին եւ աղամային մերկութեամբ, բանտարկեալների երգ ու սուլոցով, պարեն նախ նկուղում, ապա նաեւ միջանցքում... Յիշեալ դոցենտների բանտարկութեան ընթացքին, թիապարտները նոյն ծեսին ենթարկում էին բոլոր հայերին, որոնց թում եւ հայ քահանայի՝ մէկը 70-ամեայ մի ծերունի, իսկ միւսը Քամոյեան եկեղեցու ծխատէր Յովսէփ քահ. Տէր Պետրոսեանը, որոնց նոյնպէս ստիպում էին մերկանդամ պարել թիապարտների երգ ու սուլոցով»...

Այս ամէնը տեղի է ունենում Թիֆլիսում, հայ-վրացական պատերազմից յետոյ: Թէ ինչ էր կատարուում այդ օրերին դուրսը, գաւառներում, դեռ եւս չգիտեին ոչ Վիրահայոց Ազգային խորհուրդը եւ ոչ էլ մեր տեղեկատու բիւրօն, որովհետեւ, ինչպէս վերջինս ակնարկում է իր հաղորդագրութեան մէջ՝ Թիֆլիսի հայերը կտրուած էին գաւառներից եւ «հայերին խստիւ արգիւլուած էր երկաթուղով երթելութիւն կատարել»:

Սակայն, այն, ինչ որ այդ օրերին յայտնի չէր, յայտնի դարձաւ մի քանի շաբաթ անց, երբ երթելեկելը վերսկսուեց, եւ Թիֆլիսի մամուլը հնարաւորութիւն ստացաւ արձագանգ տալու մթութեան մէջ կատարուած դէպքերին: Իսկ դէպքերը ուղղակի զարհուրեցիկ էին: Թիֆլիսի շրջակայ գիւղերը՝ Դաղէթ-Խաչէն, Սամտրէդ, Վայխուն, Շամշուղա, Բէլի Կլիւչ, Շուլավէր եւ այլն յանձնուած էին վրաց զօրամասերի եւ «Կարմիր գարդիա» կոչուած բաշիբոզուկների կամայականութիւններից: Կազմակերպուած բռնագրաւումը, աւազակային թալանը, ծեծը, բռնութիւնը, բանտարկութիւնը եւ կանանց բռնաբարութիւնը համատարած երեւոյթներ էին այդ գիւղերում: Գազանացած եւ զինարբու սրիկաների լրբութիւնները հասան մինչեւ որբանոցները, մինչեւ 10-12 տարեկան դեռատի աղջիկները (Բէլի Կլիւչ)...

Այս ամէնի մասին այնքան շատ է գրուած ժամանակին մամուլի էջերում, որ մենք հարկ չենք տեսնում մտնել մանրամասնութիւնների մէջ: Մեր նպատակն է վեր հանել միայն, որ վիրահայ փոքրամասնութեան դէմ սկսուած հալածանքները շարունակուում էին նաեւ



հայ-վրացական զինադադարից յետոյ, երբ այդ հալածանքները որեւէ «պատերազմական անհրաժեշտութեամբ» արդարացնել չէր կարելի:

\* \* \*

Թէ այս անօրինակ (հայ վրացական աւանդական յարաբերութիւնների տեսակետից գոնէ անօրինակ) հալածանքներն ու ճնշումները ինչ դառն զգացմունքներ ու խոհեր պետք է առաջ բերէին հանդէպ մի կառավարութեան, որի երեք խօսքից մէկն անպատճառ ընկերարութիւնն է եղել միշտ, միւսը ժողովրդավարութիւնը, իսկ երրորդը ազգերի համերաշխութիւնը՝ այդ մասին մենք ունինք երկու պերճախօս վկայութիւն, երկուսն էլ հայկական շրջանակների հետ կապ չունեցող: Սրանցից առաջինը սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան անդրկովկասեան օրգանն է՝ «Նաչէ գնամիան», որ 1919թ. յունուար 9-ի համարում, ժողդանիայի կառավարութեան հասցէին ուղղուած գրութեան մէջ, այսպէս է արտայայտուում յունուար 5-ի դէպքերի առթիւ.

«Առաւօտից սկսած, ժողովրդաշատ գլխաւոր կենտրոններում, շուկաներում եւ քառուղիների առաջ, հանրային հրապարակներում, Քռի կամուրջների վրայ, ամենուրեք, զինուորներն ու միլիցիոներները կատարում էին զանգուածային ձերբակալութիւններ հայազգի քաղաքացիների մէջ: Ձերբակալում էին, ինչպէս հայ-վրացական պատերազմի առաջին օրերին, ծերերին եւ երիտասարդներին, բանուորներին եւ բուրժուաներին, արհեստաւորներին եւ առեւտրականներին: Ձերբակալուածների մէջ կարելի էր տեսնել փաստաբաններ, բժիշկներ, ճարտարապետներ, սոցիալ-դեմոկրատիայի եւ սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան ականաւոր անդամներ, այլ հոսանքների պատկանողներ, դպրոցականներ, գիմնազիստներ եւ մինչեւ անգամ ժողովրդական ուսումնարանների սաներ: Բացի սրանից՝ եռանդի եկած միլիցիոներները արշաւներ էին կատարում հայերի տների վրայ եւ դուրս քաշելով տանում արական սեռի գրեթէ բոլոր հայերին:

Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ Թիֆլիսի վարչական իշխանութիւնը եւ վրաց կառավարութիւնը բռնուել էին իրաւատուկ սադիզմով: Այս ամենը կատարուում էր մի տեսակ յափշտակութեամբ եւ ոգելորութեամբ... Եւ ոչ մի տեղից չէր լսուում «սա խայտառակութիւն է» խօսքը:

Սա խայտառակութիւն է սոցիալիստներից կազմուած մի կառավարութեան համար, որ իր շարքերում ունի անհատի ազատութեան եւ անձեռնմխելիութեան համար պայքարած վաստակաւոր մար-

դիկ... Խայտառակութիւն է այսպէս ընդառաջ գնալ կենդանաբանական ազգայնականութեան պահանջներին եւ այդ ազգայնականութիւնը սնուցանել ու պատսպարել ժողովրդավարութեան եւ սոցիալիզմի դրօշակի տակ: Խայտառակութիւն է, որ օգտագործելով Վրաստանի եւ Հայաստանի միջեւ ծագած զինուորական բարդութիւնը՝ հաշիւներ են մաքրում մի ամբողջ ազգի հետ եւ այդպիսով էլ աւելի հրահրում վրէժի գծում եւ գռեհիկ բնագոյները:

Դուք միացնում էք գաղափարի վսեմութիւնը գործերի ստորութեան հետ: Դուք աւելի վատ էք վարում քան Գոլիցինը<sup>147</sup>, Նակաշիձէն<sup>148</sup> եւ Տոլմաչովը:

Եթէ ամէն տեսակի հին ընթացքները՝ յենուելով մեծ մասամբ հասարակութեան բարձր խաւերի վրայ՝ միայն այս խաւերն են կարողացել անառակացնել, դուք վատասերում էք բանուորական զանգուածը, գիւղացիներին, մտաւորականներին եւ քաղքենի մանր բուրժուաներին՝ նրանց ձեր յետեւից քաշելով: Եւ ձեր գործը, որ սոցիալիզմի եւ ժողովրդավարութեան տեսակետից ոճիր է, քաղաքական անառակութիւնը դէպի ժողովրդական խօրքերն է տանում...

Ամօթը պատում է մեզ: Ամօթ ոչ թէ ձեզ համար, ձեր սոցիալիստական կառավարութեան համար, այլ՝ մեզ համար: Մենք ամօթ ենք զգում, որ ստիպուած ենք գրել այս ամենը, որ ստիպուած ենք յիշեցնել այսքան տարրական ճշմարտութիւնները...»

Երկրորդ վկայութիւնը մեզ տալիս է յայտնի սոցիալ-դեմոկրատ Արշակ Չոհրաբեանը: Սա այն Արշակ Չոհրաբեանն է, որ միշտ բացասական, եթէ չասենք թշնամական, վերաբերմունք է ունեցել դէպի մեր ազգային ձգտումները: Համոզմունքով միջազգայնական՝ նա միշտ վրացական կամ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի առաջին շարքերումն է կանգնել՝ մեր դէմ պայքար մղելու համար: Երկրորդ Պետական Դումայի<sup>149</sup> ընտրութիւններին, վրաց սոցիալ-դեմոկրատները նրա թեկնածութիւնն առաջ քշեցին՝ Դաշնակցական թեկնածուն տապալելու համար: Հայկական հալածանքների ժամանակ, երկիւղ կրելով թէ Արշակ Չոհրաբեանն էլ «իբրեւ հայ» կարող է հետապնդումների ենթարկուել՝ վրաց կառավարութիւնը շտապել էր նրան եւս ուղարկել մի ապահովագիր (sauf conduct), որի վրայ գրուած էր, որ նա հայ լինելու պատճառով չպետք է ձերբակալուի կամ բանտարկուի:

Ահա այս Արշակ Չոհրաբեանը, Թիֆլիսի թերթերի միջոցով, հետեւեալ «Բաց նամակն» է ուղղում իր վաղեմի գաղափարակից ընկերոջը եւ անձնական բարեկամին՝ Նոյ Նիկոլայեւիչ ժողդանիային:

«Նոյ Նիկոլայեւիչ,

Կիրակի, յունուար 5-ին, Թիֆլիսի փողոցները վկայ եղան այնպիսի խայտառակ փաստերի, որ ես ինձ թոյլ եմ տալիս ուղղել ձեզ

այս բաց նամակը: Տեղի ունեցած դեպքերին նայելով՝ կասկած չկայ, որ Վրաստանի ներսը պատերազմ է յայտարարուած ամբողջ հայ ազգաբնակութեանը:

Բոլոր թաղերուն կատարուեցին խուզարկութիւններ եւ ձերբակալութիւններ, որոնք ոչնչով չեն տարբերուում այն մեթոդներից, որ ցարիզը կիրառում էր ձեր դէմ, իմ դէմ եւ հրեական ամբողջ ժողովրդի դէմ:

Ձերբակալուած հայերը բանտարկուած են: Ոստիկանները, ատրճանակները ձեռներին, հարցնում էին անցորդներին բոլոր փողոցներում. «Դուք հա՞յ էք»: Եւ բոլոր դժբախտ զոհերը, որոնք չէին կարող ապացուցանել, թէ այլ ազգի են պատկանում, առաջնորդուում էին բանտ: Այս հայերից շատերին էլ... ձեռները շղթայակապ, տանում էին Հայոց Թեմական դպրոցը, որտեղ շղթաները հանելուց յետոյ, ստիպում էին , որ նրանք, ձեռները վեր ցցած, մնան անորոշ ժամանակով:

Ձերբակալութիւնները, անարգանքները եւ հալածանքները իշխում էին ամբողջ քաղաքում հենց այն միջոցին, երբ դուք, Նոյ Նիկոլայեիչ, «Ապիտակ Սրահում» մասնակցում էիք ժողովրդապետական պարլամենտի նիստին:

Ես ինձ թոյլ եմ տալիս առանձնապէս շեշտելու, որ այն պրովակասիոններն ու տանջանքները, որոնց ենթարկուեցին մայրաքաղաքում... աւելի ինտենսիւ էին, քան ռուսական միապետութեան ամենադժբախտ շրջանների հալածանքները:

Առաւօտեան սկսուած այս իրադարձութիւնները տեւեցին մինչեւ ժամը երկուսը եւ կեսը, այսինքն՝ մինչեւ այն ժամը, երբ «հանրային կարգի պաշտպանների աշխատանքի օրը» ըստ երեւոյթին վերջացած է նկատուում:

Յունուար 5-ի խայտառակ դեպքերը ապացուցանում էին նաեւ, որ Վրաստանի եւ մասնաւորապէս Թիֆլիսի հայերը օրէնքից դուրս են յայտարարուած: Եւ մի ամբողջ ժողովուրդ հալածանքի ենթարկողը սոցիալիստական կառավարութիւն է կոչուում: Կարո՞ղ էինք մենք երեւակայել, թէ մի օր հանդիսատես կը լինենք այս աղէտին: Մենք, (երկուսս) որ այնքան սերտօրէն գործակցել ենք մեր ընդհանուր իդէալը կերտելու համար՝ որպէսզի ազգային հակամարտութիւնները նուազագույն չափերի հասնին, մենք կարո՞ղ էինք երեւակայել, որ մեզնից մէկը կը դառնայ մի կառավարութեան ներկայացուցիչ, իսկ միւսը, ապրելով նոյն երկրում, ազատութիւն կը վայելէ շնորհիւ մի քուրջի կտորի, որի մէջ գրուած է, թէ Արշակ Չոհրաբեանը հայ լինելու պատճառով չպէտք է ձերբակալուի:

Ինչ խայտառակութիւն: Կիրակի օրուանից ի վեր, այս անարգ վաւերագիրը այրում է մատներս:

Ես այլեւս չեմ կարող պահել այն ինձ մօտ. չեմ կարող այն վայրկեանից, երբ գիտեմ, որ ոճրագործ համարուող հայկական զանգուածի դէմ որսի են դուրս եկել ձեր անպատիւ վարձկանները: Սա անկարելի է ինձ համար, որովհետեւ, ով ինչ կարծիքի էլ լինի իմ մասին եւ ով ինչ ազդեցութիւններ էլ բանեցնի ջնջելու իմ անցեալը՝ կատարածս դերը դրդում է ինձ (ժողովրդական) զանգուածների հետ լինել: Եւ եթէ այս զանգուածները իբրեւ յանցապարտ պէտք է զնդանները նետուին՝ ես չեմ կարող եւ ոչ էլ կամենում եմ որեւէ ձեւով բացառութիւն կազմել: Իմ պարտականութիւնս է դիմել այնտեղ, ուր գտնուում են (ժողովրդական) զանգուածները՝ նրանց տանջանքներին եւ նրանց թշուառութեանը մասնակից լինելու համար:

Յետեւաբար, Ձեզ մնաք բարով ասելով, ես, առանց ժամանակ կորցնելու, վերադարձնում եմ Ձեզ այս ապահովագիրը, վճռապէս խնդրելով ինձ եւս ձերբակալել, կամ, հակառակ պարագային, վերջ տալ այս հալածանքներին»<sup>150</sup>:

\* \* \*

Այս գնահատութիւններն ինքնին այնքան պերճախօս են, որ աւելորդ ենք համարում նրանց վրայ մի բառ իսկ աւելացնել:

Սակայն, հայկական հալածանքների նկարագրութեան էջը փակելուց առաջ՝ կը յանձնարարենք ընթերցողին, որը այժմ որոշ չափով ծանօթ է նրանց մանրամասնութիւններին, վերյիշել հայ-վրացական պատերազմի սկզբին ժողովրդային եւ նրա կառավարութեան կողմից արուած հանդիսաւոր յայտարարութիւններն ու խոստումները, թէ իրենք կռուի են դուրս գալու ոչ թէ հայ ժողովրդի դէմ, այլ հայկական կառավարութեան կամ, աւելի ճիշդ, նրա թիկունքին կանգնած զինուորական խմբակցութիւնների դէմ: Չուզադրելով այդ յայտարարութիւնները եւ հայկական հալածանքների պատմութիւնը՝ մենք կը ստանանք խօսքի եւ գործի հակասութեան կարկառուն օրինակներից մէկը, որոնք այնքան յատկանշական են ժողովրդային քաղաքականութեան եւ դիւանագիտութեան համար...

Անտեղ չենք համարում, այս առթիւ, մի փոքր շեղումն կատարելով մեր բուն նիւթից, երկու խօսք էլ ասել այն ընթացքի մասին, որ պատերազմի ժամանակ ունեցաւ Հայաստանի կառավարութիւնը հակառակորդ կողմի հանդէպ: Նա կարիք չզգաց հրապարակօրէն ցուցադրելու իր բարեացականացութիւնը հանդէպ Վրաստանի եւ վրաց ժողովրդի, որովհետեւ նա հաշիւ չուներ ոչ մէկի եւ միւսի հետ: Նա գործ ուներ մայն մի քանի վրացական զօրամասերի հետ, որոնք, նորելուկ սոցիալ-իմպերիալիստների հրամանով, գրաւել էին

Հայկական Բորչալուն եւ այնտեղ անկարգութիւններ էին անում: Պետք էր զինու զօրութեամբ պահանջել մաքրելու երկիրը անկոչ հիւրերից, որովհետեւ խնդրանքներն ու յորդորները ապարդիւն էին անցնում: Պարզ է, որ, եթէ Վրաստանի Հանրապետութիւնն ու վրաց ժողովուրդը, առանց նկատի առնելու այս պահանջի արդարութիւնը, թեւ ու թիկունք հանդիսանային տնաբոյս սոցիալ-իմպերիալիստներին՝ զենքերը պետք է խօսէին երկու երկրների միջեւ: Իսկ այնտեղ, ուր զենքերն են խօսում՝ բարեկամական հաւաստիացումները նողկանք ազդող կեղծիքներ են, ուրիշ՝ ոչինչ:

Այս մտածողութիւնն ունենալով հանդերձ՝ Հայաստանի կառավարութիւնը գիտակցում էր, որ ինքը ըստ ամենայնի խնայող վերաբերմունք պետք է ունենայ դէպի հարեւան երկիրն ու ժողովուրդը: Նա գիտէր, որ պատերազմից յետոյ էլ Հայաստանն ու Վրաստանը կողք-կողքի պետք է ապրեն, թերեւս նաեւ գործակցին ընդհանուր թշնամիների դէմ, ուստի ամնտութիւն էր համարում, մի վաղանցիկ ընդհարումից ամխուսափելիօրէն ստացուելիք դառնութիւնը արհեստականօրէն խորացնել եւ դարձնել թշնամութիւն երկու երկրների միջեւ:

Այս խնայող վերաբերմունքը երբեմն արտառոց արտայայտութիւն էր ստանում: Օրինակ, ակնյայտնի փաստ էր, որ վրացիք այս պատերազմի մէջ պարտութիւն կրեցին. նրանք ստիպուած եղան թողնել Լոռին, որով Հայաստանի պահանջը, այն պահանջը, որի համար վերջինս զենքի էր դիմել, իրագործուեց խոշոր մասով: Նրանք առնուազն 10 անգամ աւելի ռազմագերի տուին հայերին, քան վերցրին նրանցից: Նրանք մի քանի տասնեակ թնդանօթ ու զնդացի, ահագին քանակութեամբ փամփուշտ եւ ռազմամթերք, երեք զրահապատ գնացք, մոտ 200 վագոն, 5 շոգեքարժ, զանազան երկաթուղային պարագաներ, բազմաթիւ ձիեր, մօտ 150 վագոն կենսամթերք ու այլ պատերազմական աւար թողին հայերի ձեռքը՝ առանց նրանցից դրա տասներորդ մասը առնելու ռազմադաշտում: Վերջապէս, բացի մէկ թէ երկու կռուից՝ մնացած բոլոր պատերազմական գործողութիւնները վերջացան հայերի յաղթանակով:

Այս ամէնը վրաց կառավարութիւնը գիտէր նոյնքան, որքան մեր կառավարութիւնը: Սակայն, չնայած սրան, վրաց կառավարութիւնը թէ Վրաստանում եւ թէ արտասահմանում այնպիսի ռեկլամներ էր անում իր տարած «յաղթութեան» մասին, որ գործին անտեղեակ հայկական շրջանակների մէջ իսկ մի ժամանակ հանդուում էր գոյացել, թէ պատերազմը վերջացել է հայերի պարտութեամբ...

Շատ հեշտ էր այս ռեկլամների գլխին ջուր մաղել: Դրա համար հարկաւոր էր միայն պարզել պատերազմի առաջադրութիւնները. մեր կողմից՝ Հայկական Բորչալուից վրացիներին քշելը, վրացիներ

րի կողմից՝ Հայաստանի կառավարութիւնը պատժելը, որ բնականաբար Բորչալուում չպիտի կատարուէր, հարկաւոր էր ներկայացնել ռազմական գործողութիւնների ընթացքը եւ, վերջապէս՝ ձեռք բերուած արդիւքները:

Բայց Հայաստանի կառավարութիւնը այս չէր անում՝ ի մեծ ցաւ մեր որոշ զինուորական շրջանների եւ «հուռայի հայրենասիրութեամբ» տոգորուած տարրերի: Չէր անում, որովհետեւ չէր ուզում դատարկ տեղը վիրաւորել վրացիների ինքնասիրութիւնը եւ նոր ներհակութիւնների առիթ տալ: Նրա համար կառավարական վարկի եւ մինչեւ իսկ ազգային ինքնասիրութեան հարցերը շատ աւելի ստորադաս մշանակութիւն ունէին, քան Հայաստանի եւ Վրաստանի միջեւ բարեկամական յարաբերութիւններ հաստատելը:

Մեր նիւթի հետ աւելի մօտիկ առնչութիւն ունի այն հարցը, թէ ինչ վերաբերմունք կար Հայաստանում դէպի այն վրացիները, որոնք, պատերազմի ժամանակ, գտնուում էին նրա սահմաններում:

Հայաստանում քիչ թուով վրացիներ կային պատերազմից առաջ: Ընդամենը մի քանի հարիւր հոգի, որոնք մի մասը մնացել էր Հայկական Բորչալուում, իսկ մնացածները ցրուած ապրում էին Երեւան, Ալեքսանդրապոլ, Դիլիջան եւ այլ վայրերում: Հասկանալի պատճառով առաջիններին հրահանգուեց - ամենայն քաղաքավարութեամբ եւ նրբանկատութեամբ, որ հեռանան ռազմական գործողութիւնների շրջանից: Ինչ վերաբերում է միւսներին՝ նրանք մնացին իրենց տեղերում, առանց որեւէ կաշկանդումի կամ նեղութեան: Յամենայն դէպս, սրանցից ոչ մէկը հանդէս չէկաւ ուեւ առթիւ վկայելու, թէ ինքը զրկանքների կամ հետապնդումների է ենթարկուել հայերի կողմից:

Աւելի եւս ուշագրաւ է այն վերաբերմունքը, որ գտան Հայաստանում վրացի ռազմագերիները: Այդ վերաբերմունքը բառիս իսկական իմաստով եղբայրական էր թէ իշխանութիւնների եւ թէ ժողովրդի կողմից: Նոյնիսկ այն ռազմագերիները, որոնք Հայկական Բորչալուի զօրամասերից էին առնուած, նոյնիսկ սրանք չենթարկուեցին ուեւ թշնամանքի, թէեւ այդ զօրամասերի կատարած բռնութիւնների դէմ անհունօրէն կատաղած էին թէ հայ ժողովուրդը եւ թէ զինուորները:

Անձամբ շրջել են այն զօրանոցները, ուր կենդրոնացած էին վրացի ռազմագերիները: Դիլիջանում խօսել են գնդապետ Վաչնաձէի հետ, որը ազատ շրջում էր քաղաքում: Հիւրասիրուել են վրացի սպաների կողմից թէյով եւ մեղրով, որ նրանք նուէր էին ստացել տեղական մեղուաբոյծներից: Այցելել են վիրաւորներին Ալեքսանդրապոլի հիւանդանոցներում, եւ ամէն տեղ ակնատես եւ ականջաւոր են եղել, որ վրացի ռազմագերիները երբեք չէին զգում, թէ ի-

րենք «թշնամի» երկրում են գտնուում: Իսկ իմ տեսած սպաները, թուով մօտ 40 հոգի, ուղղակի խօսք չէին գտնում իրենց գոհունակութիւնը յայտնելու համար թէ իշխանութիւններից եւ թէ ժողովրդից: Միայն մի տեղ, կարծեմ Ղարաքիլիստում, վրացի զինուորները գանգատուեցին, թէ հացի պակասից նեղութիւն են կրում: Բայց այստեղ էլ նրանց առաջնորդն իսկոյն անելացրեց, որ պահակազօրի հայ զինուորներին անելի քիչ հաց էր տրուում, քան իրենց: Չպէտք է մոռանալ, որ սա այն ժամանակն էր, երբ հացը ոսկու կշիռ ուներ Յայաստանում...

Անգլիացի կապիտան Դազլէզ Վիցերսը, որ հայ-վրացական զինադադարի պայմանները կնքել տալու համար Յայաստան գալով՝ մօտիկից ծանօթացել էր Դիլիջանում եւ Ղարաքիլիստում գտնուած վրացի ռազմագերիների վիճակին՝ ասում էր մեզ. «Որ այս պատերազմը թիւրիմացութիւն է: Դրա պերճախօս ապացոյցն է այն փոխյարաբերութիւնը, որ գոյութիւն ունի վրացի ռազմագերիների եւ հայ ժողովրդի միջեւ: Այսպիսի մի բան անհնարին է երեւակայել եւրօպական ռազմաճակատներում»:

Յայաստանում գտնուած միջոցին, վրաց սպաներն ու զինուորները չգիտէին, որ հենց այն օրերին, երբ հայ ժողովուրդն ու իշխանութիւնները ամէն բան անում էին, որպէսզի նրանք հիւրերի վիճակում զգան իրենց եւ ոչ թէ ռազմագերիների, հենց նոյն այդ օրերին վրաց իշխանութիւնները, ռազմաճակատից գերած մի քանի տասնեակ հայ զինուորներին խառնելով Թիֆլիսի հրապարակներում «գերի վերցրած» հայերի հետ, պատսոնում էին Քութայիսի փողոցներում՝ ամբոխի հռիռոցին եւ ծաղրանքին ենթարկելով: Նրանք չգիտէին նաեւ, որ հայ ռազմագերիներին գրաստների պէս աշխատեցնում էին Չիատուրի հանքերում<sup>151</sup>, Բորչալուի թիւրքերի ծեծին ենթարկում, զրկում հագուստներից եւ մատնում այն անարգանքների, որոնց նկարագրութիւնը մենք տեսանք թիֆլիսաբնակ 56 հայերի գրութեան մէջ...

Յետագային, վրացի այս սպաներից երկուսը, որոնց ծանօթացել էի Դիլիջանում, հանդիպելով ինձ Թիֆլիսում, ասում էին.-

«Եթէ այն ժամանակ մենք իմանայինք, թէ հայ ռազմագերիները ինչ անարգ վիճակի էին մատնուած Վրաստանում, մենք յօժարական կը հրաժարուէինք մեզ տրուած յարմարութիւններից, որպէսզի հիմա ստիպուած չլինէինք այսքան կարմրելու»...

Նախկին ռազմագերիների այս տրամադրութիւնը հրապարակային արտայայտութիւններ էլ ունացաւ: Նրանցից ոմանք հանդէս եկան Թիֆլիսի թերթերում եւ անվերապահօրէն դրուատեցին այն վերաբերմունքը, որ իրենք գտել էին Յայաստանում թէ ժողովրդի եւ թէ իշխանութիւնների կողմից:

Ստորեւ գետեղում ենք այսօրինակ վկայութիւններից մէկը, որ վրացի ռազմագերիները ուղարկել էին սոցիալ-դեմոկրատական «Բորբա» թերթին հրատարակելու համար.

«Յարգելի խմբագիր,

Խնդրում ենք տպագրել մեր հետեւեալ յայտարարութիւնը.

«Ներքեւ ստորագրող վիրաւոր զինուորներս, որ 4-րդ եւ 5-րդ զնդերից ենք, գտանք ամենաջերմ եւ սրտազին վերաբերմունք հայերի կողմից, որոնց մօտ գերի ենք ընկած: Թէ ժողովուրդը եւ թէ զինուորական իշխանութիւնները ամէն միջոց գործ են դնում, որպէսզի դիւրացնեն մեր վիճակը: Մեզ գերի վերցնող հայ զինուորները այնպիսի եղբայրական վերաբերմունք ունեցան մեր հանդէպ, որ լաւագոյնը երեւակայել չի կարելի: Թէեւ համոզուած ենք, որ դուք էլ լաւ էք վերաբերուում դէպի հայ ռազմագերիները, այնուամենայնիւ մենք դիմում ենք վրացի զինուորներին եւ քաղաքացիներին, որպէսզի նրանք էլ նոյն ընդունելութիւնը ցոյց տան հայ ռազմագերիներին, ինչ որ մենք գտնում ենք այստեղ, եւ որպէսզի կրկնապատիկ ուշադրութեամբ վերաբերուին նրանց՝ թոյլ չտալով, որ նրանք ունէ բանի կարիք զգան: Սրանով նրանք ապացուցած կը լինին, որ վրացիները չեն մոռացել հիւրասիրութեան հին ավանդութիւնները»:

Յայտարարութեան հետ, որի տակ ստորագրել են 42 զինուոր եւ բժշկական մասի 5 պաշտօնեաներ, հետեւեալ նամակն էր ուղարկւած «Բորբա»ի խմբագիր Դ. Շարաշիձէին.

«Սիրելի Դաթիկօ,

Ուղարկում են քեզ մեր զինուորների այս յայտարարութիւնը, որպէսզի տպագրես «Բորբա»ի մէջ՝ խնդրելով բոլոր վրացական եւ ռուսական թերթերին, որ արտատպեն: Կարող ես յայտարարութեան անելացնել եւ քո մեկնութիւնները, որոնք կարող են շատ օգտակար լինել՝ նկատի ունենալով կրքերի այս գերագրգիռ վիճակը: Կանխօրէն յայտնում են զինուորների եւ իմ շնորհակալութիւնը քո այս ծառայութեան համար:

Ամուր սեղմում են ձեռքդ: Բարեւներ բարեկամներին: Ս. Չեղգեցիձէ:

20 Դեկտեմբեր, 1918»:

Այսպէս էր վերաբերում հայ ժողովուրդը դէպի հարեւան ժողովրդի զաւակները, թէեւ նրա «հերոսութիւնն ու քաղաքացիական պարտաճանաչութիւնը» ոչ ոքի կողմից չէր թմբկահարում: Այսպէս էր հասկանում իր դերը եւ Յայաստանի կառավարութիւնը վրաց ժողովրդի հանդէպ թէեւ նա ոչ պարլամենտի ամբիոնից եւ ոչ էլ հրապարակային կոչերով բարեկամական զգացմունքների հաւաստիքներ չէր շռայլել այդ ժողովրդի հասցէին...

\* \* \*

Մեր այս տեսութիւնը վերջացնելու համար, մնում է մի քանի խօսք էլ ասել վիրահայ ազգային փոքրամասնութեան դէմ հայ-վրացական պատերազմի առթիւ կատարուած հալածանքների պատճառների մասին:

Ասացինք, որ վրացական շրջանները այդ հալածանքները ներկայացնում էին իբրեւ «պատերազմական անհրաժեշտութիւն», պայմանաւորուած այն հանգամանքով, որ, պատերազմի ժամանակ, Վրաստանի հայերը թշնամական դիրք էին բռնել դէպի վրաց կառավարութիւնը եւ զօրքը:

Որ այս մեղադրանքը ըստ ձեւի անհիմն է, այդ մենք տեսանք այն փաստից, որ յիշեալ հալածանքները վերարժարժուեցին եւ իրենց գազաթնակէտին հասան այն օրերին, երբ զինադադարն արդէն կնքուած էր հայերի եւ վրացիների միջեւ, թշնամական գործողութիւններն իսպառ դադարած էին եւ երկու կողմից նշանակուած պատուիրակութիւնները հաշտութեան պայմաններ էին մշակում թիֆլիսում: Նման պարագաներում տեղի ունեցած հալածանքները բացատրել «պատերազմական անհրաժեշտութեամբ» տրամաբանական անհեթեթութիւն է, ուրիշ՝ ոչինչ:

Քննենք այժմ այս «պատերազմական անհրաժեշտութիւնը» ըստ էութեան:

Կասկած չկայ, որ հայ-վրացական կռիւների ժամանակ, Վրաստանում գտնուած հայերի համակրանքը Հայաստանի կողմն էր: Անգամ եթէ այս բոլոր հայերն էլ Վրաստանի քաղաքացիներ լինէին (որ չէին ի հարկէ) նրանք ներկայ դէպքում այլ վերաբերմունք ունենալ չէին կարող: Որովհետեւ վրացական պետութիւնը, եթէ նա նոյնիսկ այնքան անմախանձելի վիճակ չունենար ազգերի իրաւահաւասարութեան տեսակէտից, անկարող էր ընդամենը վեց ամսուայ ընթացքում պատուաստել իր հպատակ հայերի մէջ քաղաքացիութեան այնպիսի զօրեղ զգացմունք եւ գիտակցութիւն, որ, սրանց համեմատութեամբ, դարերի ընթացքում արմատացած ազգային-կրօնական զգացմունքներն ու տրամադրութիւնները ստորադաս նշանակութիւն ստանային:

Եւ ի՞նչ է, այդ ժամանակները Վրաստանի կառավարութիւնը եւ սոցիալ-դեմոկրատական «Էրթօբայի» եւ «Բորբայի» խմբագրութիւնները հեղեղուում էին հեռագրներով ու գրութիւններով, որոնցով վիրահայ զանազան համայնքներ ու շրջանակներ իրենց զայրօթն էին յայտնում Հայաստանի «հակայեղափոխական կառավարութեանը», որ «յարձակուել էր Վրաստանի դեմոկրատիկ Հանրապետութեան վրայ»: Սակայն այս «ցոյցերը» ոչ ոքի մոլորեցնել չէին կարող: Նախ՝ որ նրանք շատ էին յիշեցնում այն հանրագրութիւնները,

որ, որ համիդեան կոտորածների ժամանակ հայերն ուղարկոււմ էին Բարձր Դուռը՝ «բարեխնամ կառավարութեան հայրական հոգածութիւնը» դրուատելու համար եւ ապա՝ ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ պատերազմի անյաջողութիւնից զազանացած վրացական իշխանութիւնը կանգ չէր առնում մինչեւ անգամ մարդկանց լռելու իրաւունքը բռնաբարելու խայտառակութեան առաջ...:

Պէտք է աւելացնել նաեւ, որ այդ օրերին ոչ միայն Վրաստանի հայերի, այլ եւ օտարացեղ դեմոկրատ տարրերի համակրանքն էլ Հայաստանի կողմն էր: Որովհետեւ եթէ նրանք ամենքն էլ չգիտէին, թէ ժողովանիայի կառավարութիւնը ինչ պայմաններում եւ ինչ պայմաններով էր գրաւել Հայկական Բորչալուն, որի համար զենքեր էին ճօճուում, յամենայն դէպս ամենքն էլ գիտէին, որ այդ գաւառում վրացիներ չկային, եւ որ վրացական զօրքերի դիմաց, առաջին գծերի վրայ, հայ զիւղացիներն էին կանգնած: Այս հանգամանքը, ինչպէս հաւատացնում էր մեզ Ջուղելին Պոլսի բանակցութիւնների ժամանակ, չափազանց ճնշիչ տպաւորութիւն էր թողնում մինչեւ անգամ վրացական շրջանակների վրայ:

Արդ, այսքան բնական, այսքան հիմնաւորուած մի համակրանք, որ Վրաստանի հայերն ունէին դէպի Հայաստանը, կարո՞ղ էր պատճառ նկատուել նրանց դէմ հալածանքներ սկսելու: Իհարկէ, ոչ: Նա չէր կարող պատճառ նկատուել ոչ միայն ժողովանիայի կառավարութեան համար, որ դեմոկրատական եւ մինչեւ անգամ սոցիալիստական հովեր ունէր, այլ եւ մի սովորական բուրժուական կառավարութեան համար, որ մարդկայնօրէն ընդունակ է մարդկային տրամադրութիւնները ըմբռնելու:

Այլ բան է, եթէ այդ համակրանքը պատերազմի ժամանակ արտայայտուի գործնական ձեւով՝ վնասելով երկրի իշխանութեանը կամ նրա բանակին եւ, ընդհակառակը, օգնելով հակառակորդ կողմին: Այս դէպքում եթէ դեմոկրատիկ եւ սոցիալիստական կառավարութիւնը որոշ տատանումներ էլ ունենայ՝ բուրժուական կառավարութիւնը ոչ մի տատանում չի ունենայ իր լախտի հարուածը իջեցնելու, անգամ եթէ դիմացը մի ամբողջ ժողովուրդ կանգնած լինի: Բայց կարո՞ղ են «պատերազմական անհրաժեշտութեան» մասին խօսողները մատնանշել մի հատիկ փաստ, մի հատիկ ակտ, որ զար ապացուցանելու, թէ Վրաստանի հայկական զազուածը այնպիսի ընթացքի մէջ է եղել, այսինքն՝ գործնական աջակցութիւն է ցոյց տուել Հայաստանին կամ խանգարել վրաց կառավարութեան եւ նրա զօրքի առաջադրութիւնները:

Վճռականապէս պնդում ենք՝ չեն կարող:

Զենք ժխտում, որ Հայկական Բորչալուի հայ զիւղերը, որոնք պատերազմից յետոյ էլ մնացին վրացական իշխանութեան տակ՝

հենց սկզբից Լոռուայ ապստամբների հետ էին: Եւ քանի որ խօսքը պատերազմի մասին է, թէկուզ եւ անարդար պատերազմի, թերեւս կարելի լինէր աչք գոցել, որ վրաց կառավարութիւնը խիստ միջոցների դիմեց այդ գիւղերը հնազանդութեան մէջ պահելու համար՝ պայմանով, իհարկէ, որ այդ խստութիւնները չհասնէին մինչեւ անմեղ մարդկանց թալանելը եւ կանանց բռնաբարելը: Չենք ժխտում նմանապէս, որ բուն Վրաստանում էլ կարող են եղած լինել անհատ հայեր, որոնք թշնամական, մինչեւ իսկ դաւաճանական գործեր կատարած լինին վրաց կառավարութեան եւ գօրքի դէմ: Թէպէտեւ կարծում ենք, որ եթէ այսպիսի անհատներ լինէին՝ դաւաճանութեան դէմ հրատարակուած օրէնքը կը գործադրուէր նրանց վերաբերմամբ, եւ հանրութիւնը կ'իմանար դաւաճան հայերի եւ նրանց գործերի մասին: Բայց այս բոլորով հանդերձ նորից պնդում ենք, որ Վրաստանի հայկական զանգուածը, որ հարիւրներով ու հազարներով որսւում էր Թիֆլիսի փողոցներում, յօգուտ Չայաստանի եւ ի վնաս Վրաստանի ռեւէ ակտ ոչ յղացել է եւ ոչ էլ կատարել:

Վրաստանում գտնուած մեր քաղաքացիները խիստ հրահանգ էին ստացել՝ թէ Թիֆլիսում եւ թէ այլ վայրերում կատարելապէս չէզօք մնալ պատերազմի հետ կապուած գործերում եւ միանգամայն լռելալ դիրք պահել երկրի իշխանութեան հանդէպ: Այս հրահանգը տուել են ես, Թիֆլիսի մեր դիւանագիտական ներկայացուցչութեան միջոցով, Բաթումից, ուր գտնուում էի պատերազմի սկզբին, որովհետեւ՝ դեռ եւս անտեղեակ թէ իմ բացակայութեան միջոցին ի՞նչ է անցել-դարձել Լոռիում՝ ես այդ պատերազմը համարում էի անհեթեթ թիրիմացութիւն:

Թիֆլիս վերադառնալէս յետոյ իմացայ, որ մեր դիւանագիտական ներկայացուցչութիւնը, որը մինչեւ դեկտեմբերի 20-ը գործում էր, նոյն իմաստով հրահանգ ստացել էր եւ Չայաստանի կառավարութիւնից: Վերջինս այն կարծիքէն էր, որ Չայկական Բորչալուն առանց դրսի աջակցութիւնների էլ կարող է մաքրուել վրացիներից, իսկ Վրաստանում ներքին խլրտումներ առաջ բերելը եւ Անդրկովկասում նրա դրութիւնը խախտելը նկատում էր վնասակար իր քաղաքական հաշիւների համար:

Այս կրկնակի հրահանգները դեր կատարեցին թէ ոչ՝ փաստն այն է, որ ամբողջ պատերազմի ընթացքին հայահպատակ քաղաքացիները Վրաստանում որեւէ անթոյլատրելի արարքի մէջ չգտնուեցին:

Ինչ վերաբերում է վիրահպատակ հայերին՝ սրանք արտաքին հրահանգների չէին սպասում իրենց կառավարութեան հանդէպ օրինապահ մնալու համար: Դէպի Չայաստանն ունեցած իրենց բոլոր համակրանքով հանդերձ, նրանք լիովին կատարում էին իրենց

զինուորական եւ այլ քաղաքացիական պարտականութիւնները Վրաստանում: Սեզ մօտ գերի ընկած վրացիների թւում կային եւ վիրահայեր: Վիրահայ սպայ Արիստակէսեանը մեր դէմ, Լոռուայ ճակատում, աւելի մեծ եռանդ էր ցոյց տալիս, քան իր վրացի պաշտօնակիցները: Վիրահայ Ազգային խորհուրդը այնքան լոյեալ կեցուածք ուներ վրաց կառավարութեան հանդէպ, որ անգամ վրաց ներքին գործերի նախարար Ռամիշվիլին ստիպուած էր յայտարարել պառլամենտի ամբիոնից, որ նրա ընթացքը անառարկելի է: Այս խորհուրդը իր ազգային զգացմութեանը եւ պետական պարտականութիւնները իրար հետ հաշտեցնելու լաւագոյն միջոցն էր համարում պատերազմին օր առաջ վերջ տալը: Եւ վրաց կառավարութիւնը, որ մանաւանդ պատերազմի սկզբին խիստ նեղ դրութեան մէջ էր՝ թելադրեց այդ Ազգային խորհրդին, որ իր ներկայացուցիչներն ուղարկի Չայաստան՝ պատերազմական գործողութիւնները դադարեցնել տալու համար: Գիշո՞ր է, մի քանի օր անց, երբ վրացական զօրքերի դրութիւնը ռազմաճակատում փոքր ինչ շտկուեց, Ազգային խորհրդի ներկայացուցիչները յետ կանչուեցին սահմանագլխից: Սակայն, խնդիրն այս չէ, այլ այն, որ վրաց կառավարութիւնը չէր կարող կասկած ունենալ մի խորհրդի վրայ, որին նա թոյլ էր տալիս թշնամու հետ բանակցութիւնների մէջ մտնել:

\* \* \*

Սրանք մերկ իրողութիւններ են: Սրանց դէմ որո՞նք են հայկական հալածանքների «պատերազմական անհրաժեշտութիւնը» ստեղծող փաստերը: Այդպիսի փաստեր չեն եղել, չկան: Եթէ լինէին՝ հանդէս կը գային գոնէ մամուլի եւ հրապարակագրութեան մէջ, գէթ որոշ չափով մեղմելու համար այն սոսկալի տպաւորութիւնը, որ յիշեալ հալածանքները առաջացրել էին անդրկովկասեան ընկերաբանական եւ ռամկաւար շրջաններում, եւ որոնց արտացոլումները տեսանք «Լաշէ զնամիայ»-ի յօդուածում եւ Արշակ Զոհրաբեանի բաց նամակում: «Պատերազմական անհրաժեշտութիւնը անճարակ յերկրանք էր միայն, որ վրաց հրապարակախօսները հնարել էին՝ վիրահայ ազգային փոքրամասնութեան դէմ կատարուած ամօթալի հալածանքների իսկական պատճառները քողարկելու համար»:

Որո՞նք էին այդ պատճառները:  
Սրանցից առաջինը կապ ուներ հայ-վրացական ընդհարման հետ, սակայն, բոլորովին այլ իմաստով, քան այն, որ առաջ էր քշուում «պատերազմական անհրաժեշտութեան» մասին խօսողների կողմից:

Պատերազմը, ինչպես ասացինք, բոլոր տեսակետներից պարտութեամբ վերջացավ վրաց կառավարութեան համար: Սակայն, առանձնապես ցնցող էր նրա կրած պարտությունների տպաւորութիւնը կռիւների առաջին շրջանում, մինչեւ դեկտեմբերի 14-ը, երբ հայկական ուժերը գրեթէ ոչնչացնելով զօրավար Չուլուկիձէի զօրամասը եւ հրամանատարին էլ անփառունակ փախուստի մատնելով՝ յաջորդաբար գրաւեցին Վորոնցովկա, Պրիվոլնի, Սանահին, Միխայիլովկա, Ալլահվերտի, Յայրում, Բօլնիս-Խաչէն, Սաղախլու, Դամիա, Շուլավեր եւ այլ բնակավայրեր: Դեկտեմբերի 24-ից սկսած, վրացիք մեծ ուժեր կենտրոնացնելով Սաղախլուի եւ Շուլաւերի շրջանում, ճիշդ է, կանգնեցրին հայկական զօրքերի առաջխաղացութիւնը, սակայն, մինչեւ դեկտեմբերի 27-ը չկարողացան ռեւէ յաղթանակ տանել, որ թուլացնէր իրենց կրած պարտութիւնների տպաւորութիւնը: Դեկտեմբերի 27-ից մինչեւ 31-ը մեր զօրքերը ծախ թելի վրայ թուլանալով (շնորհիւ բժաւոր տիֆի, որով բռնուել էին հրամանատարական կազմի եւ զինուորների մեծ մասը) վրացիների եւ Բորչալուի թիւրքերի ճնշման տակ, յետ քաշուեցին մի քանի առաջաւոր դիրքերից՝ Շուլաւեր, Դամիա, Բօլնիս-Խաչէն եւն. բայց կռուի գլխաւոր թատերաբեմում՝ Սաղախլուի շրջանում՝ նրանք այնպիսի կատաղի դիմադրութիւն ցոյց տուին վրացիներին, որ վերջիններս հարկադրաբար պէտք է հրաժարուէին Լօռին վերագրաւելու մտքից:

Դեկտեմբեր 31-ի զինադադարը եկաւ վաւերացնելու վրաց կառավարութեան ռազմական անյաջողութիւնների փաստը: Այս անյաջողութիւնների տպաւորութիւնը վրաց հասարակութեան մէջ թուլացնելու եւ միաժամանակ նրա ռազմական տրամադրութիւնները հրահրելու համար՝ ժորդանիայի կառավարութիւնը այլ միջոց չգտաւ, քան թէ Վրաստանում «հայկական վտանգի» առասպել հնարելը եւ վրաց ժողովրդի մէջ ազգայնական բնագոյներ գրգռելը:

Վրաստանի հակահայկական հալածանքները, մանաւանդ պատերազմի առաջին շրջանին, այս պղտոր աղբիւրից էին առնում իրենց սնունդը: Եթէ կ'ուզէք, սա էլ մի տեսակ «պատերազմական անհրաժեշտութիւն» էր, յար եւ նման այս «անհրաժեշտութեանը», որ դրդեց երիտասարդ թիւրքերին, Սարիղամիշի խայտառակ պարտութեան պատճառով առաջացած ժողովրդական յուսալքութիւնը դարձանել հայկական տարագրութիւններով եւ կոտորածներով: Բայց մենք կարող ենք, նման անհրաժեշտութիւններ հասկանալու կամ ըմբռնելու համար, ժորդանիային եւ իր ընկերներին եմվերների եւ Թալէաթների շարքը դասել...

Թէւ նոյնպէս պատերազմի հետ կապուած, բայց փոքր ինչ տարբեր բացատրութիւն ունին այն հակահայկական հալածանքները, որոնք տեղի ունեցան զինադադարից յետոյ: Վրաց կառավարութիւնը գիտէր, որ պատերազմի հաշուեկշիռը նպաստաւոր չէ իր համար: Լօռին գնացել էր ձեռքից: Դա ոչինչ, որովհետեւ վրաց ժողովուրդը երբեք էլ Լօռին իրենը չէն համարել: Բայց կար եւ պատերազմական միւս կորուստների հարցը: Շուտով պիտի գերիների փոխանակութիւն կատարուէր, եւ վրաց հասարակութիւնը պիտի տեսնէր, որ իրենց զօրքերը մի քանի տասնեակ հայ ռազմագերիների փոխարէն հարիւրներով գերի են ընկել հայերի ձեռքը: Նա պէտք է վերահասու լինէր նաեւ, որ այդ զօրքերը ահագին քանակութեամբ պատերազմական աւար են թողել հայերի ձեռքը՝ առանց ռեւէ շօշափելի բան խլելու նրանցից: Նման հաշուեկշիռով հանրային կարծիքին ներկայանալ՝ նշանակում էր փորձութեան ենթարկել կառավարութեան վարկը:

Եւ ահա, այս փորձութիւնից գերծ մնալու նպատակով, վրաց իշխանութիւնները ձեռնարկում են ռազմագերիների թիւը մեծացնելու եւ պատերազմական աւարը շատացնելու: Սրա համար առանձին ծանր աշխատանք չէր պահանջուում. հարկաւոր էր միայն Թիֆլիսն ու Վրաստանի միւս հայաշատ վայրերը պատերազմի դաշտ դարձնել, փողոցներում ու տներում հայ «ռազմագերիներ» որսալ եւ Վրաստանի հայութեան ստացուածքը այս կամ այն ձեւով թալանի ենթարկել...

Յայ-վրացական պատերազմի կապակցութեամբ կատարուած հակահայկական հալածանքների երկրորդ բացատրութիւնը պէտք է որոնել Վրաստանի հայութիւնը նօսրացնելու եւ տնտեսապէս թուլացնելու այն քաղաքականութեան մէջ, ինչպէս վերեւ տեսանք, որին հետեւում էր ժորդանիա-Ռամիշվիլի կառավարութիւնը իր գոյութեան առաջին օրերից սկսած՝ վրաց շովինիստներին բաւարարութիւն տալու համար: Պատերազմը հարթել էր այս քաղաքակաճութեան ճանապարհը: Նրա իրականացման համար այլեւս կարիք չկար օրինական ձեւակերպութիւնների յետեւից ընկնել, որովհետեւ «հարկ լուծանէ զօրէնս», իսկ պատերազմը, ինչպէս յայտնի է, կարող է արդարացնել ամեն տեսակի «հարկադրանքներ»:

Վերջապէս, կար մի երրորդ պատճառ էլ մասնաւորապէս Թիֆլիսի հայութիւնը հալածանքների ենթարկելու համար: Շուտով պիտի կատարուէին Թիֆլիսի քաղաքային Խորհրդարանի (Դումա) ընտրութիւնները: Եթէ իրերն իրենց բնական ընթացքին մնային՝ վրացիք ոչ միայն չպիտի կարողանային մեծամասնութիւն կազմել այդ Խորհրդարանում, այլ եւ պիտի կորցնէին այն աթոռներից շատերը, որ նրանք գրաւել էին 1917թ. գարնան ընտրութիւններին: Այն

ժամանակ թիֆլիսում հարիւր հազարից ավելի ռուս զինուորներ եւ քաղաքացիներ կային, որոնք գերադասօրէն ձայն տուին վրաց սոցիալ-դեմոկրատիային՝ համարելով նրան՝ համառուսաստանեան կուսակցութիւն: Նոյն նկատումներով, թիֆլիսում ապրող այլ օտարազգիներից շատերն էլ 1917թ. ընտրութիւններին նեցուկ հանդիսացան վրաց սոցիալ-դեմոկրատիային: Այժմ այս օտարազգիների մեծ մասը հեռացել էր Վրաստանից, իսկ մնացածները բացայայտ անբարեացակամութեամբ էին վերաբերում դէպի ամէն գոյնի վրացիները՝ համարելով նրանց բոլորին էլ շովինիստ եւ օտարատեսաց: Ջրկուելով այս ձայներից՝ վրացիք, որ, ինչպէս գիտենք, թիֆլիսի ընդհանուր ազգաբնակչութեան մի քառորդ մասն էլ չէին կազմում, պիտի չնչին փոքրամասնութիւն ունենային քաղաքային խորհրդարանում, որ ասել է, թէ վերջինս նորից հայերի ձեռքն էր անցնելու, քանի որ նրանք ազգաբնակչութեան ամենամեծ հատուծն էին ներկայացնում:

Այս «անպատեհութեան» դէմ Վրաստանի հպատակութեան օրէնքը թոյլ զէնք էր, որովհետեւ այդ օրէնքի սահմանում էլ հայերը թուվ գերակշռում էին վրացիներին: Միակ ելքն էր՝ հայերին արհեստականօրէն հեռու պահել ընտրական տուփերից, որ կարող էր տեղի ունենայ նրանց ահաբեկելու ճանապարհով: Եւ որովհետեւ պատերազմը յայտնի ահաբեկման համար շատ «պատեհ» առիթ էր հանդիսանում՝ վրաց կառավարութիւնը չուզէր փախցնել այդ առիթը իր ձեռքից: Գլխաւորապէս սրանով պէտք է բացատրել, այն զանգուածային հալածանքները, որոնք առանձին խստութեամբ տեղի ունեցան թիֆլիսում, զինադադարի կնքումից յետոյ:

Վրաց կառավարութիւնը չսխալուեց իր հաշիւների մէջ: 1919-ի ընտրութիւններին թիֆլիսիցի հայերը, ահաբեկուած կառավարական հալածանքներից, բնաւ չմտնեցան քուէատուփերին: Թիֆլիսաբնակ ռուսներն ու միւս օտարազգիներն էլ, զգուած օրուայ իշխանութեան ազգայնական քաղաքականութիւնից, լռելեայն բոյկոտի ենթարկեցին ընտրութիւնները: Ասպարէզը մնաց վրացիներին, որոնք «յաղթանակօրէն» ներս խուժեցին քաղաքային խորհրդարանը եւ ամբողջովին իրենց ձեռքն առան համայնական բոլոր գործերը: Այսպիսով, բոլշեւիկեան ընտրական մեքենայութիւններն այսպանող վրաց դեկավարները, իսկական բոլշեւիկեան մեքոդներով վրացական ազգային մենատիրութիւն հաստատեցին մի քաղաքում, ուր վրացիք քանակով երրորդ տեղն էին բռնում, իսկ տնտեսական արժեքով եւ գործունակութեամբ երրորդական դերն իսկ արդարացնել չէին կարող...

Սրանք են ահա, հայ-վրացական պատերազմի առթիւ Վրաստանում տեղի ունեցած հակահայկական հալածանքների էական պատճառները:

Ասում ենք էական, որովհետեւ կան եւ երկրորդական, իշխանութեան քաղաքական նկատումների հետ կապ չունեցող պատճառներ, որոնց վրայ ավելորդ ենք համարում կանգ առնել, որովհետեւ նրանք պայմանաւորում են երեւոյթների արտաքին ձեւը, բայց ոչ թէ էութիւնը:

Այսպէս օրինակ, երբ մենք մեղադրում ենք ժողովանիայի կառավարութիւնը հակահայկական հալածանքների մէջ՝ բնաւ չենք ուզում ասել, թէ այդ հալածանքների այս կամ այն արտայայտութիւնը անպատճառ համապատասխանում էր նրա մտադրութիւններին կամ նկատումներին: Որքան էլ մենք բացասական կարծիք ունենանք ժողովանիայի կառավարութեան որոշ անդամների մասին, այնուամենայնիւ չենք կարող հաւատալ, թէ նա, in corpore<sup>152</sup> հրահանգում կամ քաջալերում էր դրամաշորթութիւնը, անմեղ մարդկանց ծեծը, բանտարկեալներին մերկանդամ պարել տալը, կանանց բռնաբարելը, որոնք կատարւում էին հասարակ պաշտօնեաների եւ զինուորների կողմից:

Ի հարկէ, սրանց համար եւս պատասխանատու են ժողովանիան եւ իր կառավարութիւնը. որովհետեւ թէկուզ եւ նրանք համոզուած էլ լինէին, թէ իսկապէս «վրաց ժողովուրդը միշտ աչքի է ընկել իր հերոսութեամբ եւ քաղաքացիական պարտաճանաչութեամբ», չպէտք է անգիտանային, որ հերոսական եւ պարտաճանաչ ժողովուրդն էլ կարող է զազանային բնազդներ յայտնաբերել, եթէ համապատասխան մթնոլորտ եւ պայմաններ ստեղծուեն դրա համար: Իսկ ամէնքին յայտնի է, որ ազգայնական մթնոլորտը եւ ազգային հալածանքները, մանաւանդ երբ սրանք ուղղուած են մի միւսապէս բարեկեցիկ ժողովուրդի դէմ, միշտ հրահանգում են հասարակ մարդկանց ընչաքաղցութիւնը, կամայականութեան տենչը եւ այլ ստորագոյն բնազդները:

Այնուամենայնիւ, մենք կանգ չենք առնում այս բնազդների շղթայազերծման եւ նմանօրինակ պատճառների վրայ, որովհետեւ, ինչպէս ասացինք, դրանցով պայմանաւորւում են վրաց կառավարութեան կողմից պատերազմի առթիւ ձեռնարկուած հակահայկական հալածանքների արտաքին ձեւերը կամ արտայայտութիւնները, բայց ոչ թէ այն քաղաքականութիւնը, որոնք այդ հալածանքների հիմքն էին կազմում:

Այդ քաղաքականութիւնը էապէս բացատրւում է այն երեք պատճառներով, որ մենք մատնանշեցինք վերեւ՝ «պատերազմական անհրաժեշտութեան» առասպելը հերքելուց յետոյ: Ընթերցո-



դին է մնում դատել, թե նման պատճառներով մի ամբողջ ազգային փոքրամասնություն ամենակատաղի եւ ամենավայրագ ճնշումների ենթարկելը որքան է համապատասխանում այն ընկերվարական եւ ժողովրդավարական սկզբունքներին, որոնց անունից շարունակ խօսում են հանրապետական Վրաստանի վարիչները...

\* \* \*

Դժբախտաբար, հայ-վրացական պատերազմի հաշուեյարդարից յետոյ եւս ժողդանհայի կառավարութեան քաղաքականութիւնը վիրահայ ազգային փոքրամասնութեան խնդրում չփոխուեց:

Եւ ի՞նչ է, պատերազմական շրջանի հալածանքները դադարեցին: Այլեւս փողոցներում եւ տներում «ռազմագերիներ» չէին որսում եւ ոչ էլ զանգուածային բանտարկութիւններ կամ հրապարակային դրամաշորթութիւններ կատարում: Ընդհակառակը, Թիֆլիսում եւ այլ ուրեք «զերուած» եւ Քութայիս աքտորուած հայերին թոյլ տուին վերադառնալ իրենց տեղերը, բանտարկեալներին արծակեցին եւ ընդհանրապէս նախապատերազմեան օրինական վիճակը վերահաստատեցին: Սակայն, այս օրինական վիճակը կրկնութիւն էր միայն, եւ վատ ձեւի կրկնութիւնը, այն իրաւագուրկ կացութեան, որին մատնուած էր Վրաստանի հայութիւնը ազգային փոքրամասնութեան իրաւունքների տեսակէտից:

Եթէ մինչեւ պատերազմը խօսք չկար վիրահայ ազգային փոքրամասնութեանը վարչական, դատաստանական կամ լեզուական առանձին իրաւունքներ տալու մասին՝ այժմ առաւել եւս: Եթէ այն ժամանակ պետական ընդհանուր բիւրջէից միայն փշրանքներ էին նետուում վիրահայերի ազգային-մշակութային կարիքների համար՝ այժմ այդ փշրանքներն էլ զլացուում էին: Ձլացուում էին այն աստիճան, որ վերահաստատուած Վիրահայ Ազգային խորհուրդը հարկադրուած էր Յայաստանի կառավարութեան նիւթական օգնութեանը դիմել՝ Վրաստանի հայկական դպրոցների ամխուսափելի փակումը կանխելու համար...

Պատերազմի օրերին պետական պաշտօններից հեռացուած հայերը հեռացուած էլ մնացին, եւ երեք հարիւր հազարից աւելի համրանք ներկայացնող վիրահայ ժողովուրդը, հազուահգիտ բացառութիւններով, մեկուսացուած էր պետական կեանքից: Նոյն մեկուսացման քաղաքականութիւնը առաջ էր տարուում եւ հանրային գործերում: Ամբողջ երկու տարի, ժողդանհայի կառավարութեան աչքի առաջ, վրացիք մենատիրօրէն եւ կամայականօրէն վարում էին Թիֆլիսի քաղաքային գործերը, եւ այդ կառավարութիւնը մտքովն իսկ չէր անցնում վերջ տալու 1919թ. խայտառակ ընտրու-

թիւններով ստեղծուած այս դրութեանը, որպէսզի Թիֆլիսի ազգաբնակչութիւնը, եւ առաջին հերթին թիֆլիսաբնակ հայերը, որոնց շահերը սերտօրէն կապուած էին քաղաքային ինքնավարութեան հետ, հնարաւորութիւն ստանան խօսք ասելու գէթ իրենց վերաբերող հարցերում...

Տնտեսական ճնշումների մասին չենք խօսում, որովհետեւ նրանք ընդհանուր առմամբ նոյն բնոյթն ունէին եւ նոյն ձեւերով էին շարունակուում, ինչ որ պատերազմից առաջ: Ինչպէս այն ժամանակ, նոյնպէս եւ հիմա, կենդրոնական եւ տեղական իշխանութիւնները ծանր տուրքերով եւ զանազան խոչընդոտներով արգելք էին հանդիսանում վիրահայ ժողովրդի տնտեսական վերականգման գործին:

Այս ամէնի հետեւանքով, վիրահայ ազգային փոքրամասնութիւնը պատերազմից յետոյ աւելի իրաւագուրկ եւ ճնշուած էր զգում իրեն, քան պատերազմից առաջ: Նրան շարունակ զգալ էին տալիս, որ ինքը կանդուրժուում է միայն Վրաստանում եւ ոչ թէ նկատուում իբրեւ մի ազգային փոքրամասնութիւն, որ, քաղաքացիական ընդհանուր իրաւունքների հետ միասին, կարող է յաւակնութիւն ունենալ ազգային-մշակութային իրաւունքներ եւս ստանալու տիրող ցեղից եւ կառավարութիւնից:

Եթէ ժողդանհան եւ իր ընկերները չէին զգում կամ չէին ուզում նկատել վիրահայ ժողովրդի այս հոգեկան վիճակը, մենք այդ շատ լաւ զգում եւ նկատում էինք Յայաստանում, ուր, սկսած 1919թ. կէսերից, ամէն օր խուճ-խուճ հայեր էին գալիս Վրաստանի այլեւայլ կողմերից հաստատուելու համար, որովհետեւ, ինչպէս նրանք էին ասում, Վրաստանում ապրելն այլեւս անկարելի էր դարձել:

Արդար լինելու համար պէտք է ասենք, որ Յայաստանի ղեկավար շրջանները շատ էլ դժգոհ չէին վիրահայ ժողովրդի համար ստեղծուած այս կացութիւնից եւ ոչ էլ շահագրգռուած, որ վրաց կառավարութիւնը աւելի բարեացակամ վերաբերմունք ունենայ դէպի այդ ժողովուրդը: Յայաստանն այդ ժամանակ՝ իր սահմանների ընդարձակման հեռանկարի առաջ կանգնած՝ ազգահաւաքման քաղաքականութիւն էր հետապնդում, եւ նրա համար ձեռնտու էր, որ ինչպէս դրսի հայութեան միւս հատուածները, նոյնպէս եւ վիրահայկական հատուածը վերադառնային դէպի մայր երկրի ծոցը: Դրա համար էլ, վրաց կառավարութեան ըստ ինքեան անհանդուրժելի ընթացքը, որ այլ պարագաներում անպատճառ դիտողութեան կ'ենթարկուէր Յայաստանի կառավարութեան կողմից, այս ժամանակաշրջանում անտես էր առնուում, որովհետեւ նա նպաստում էր յիշեալ ազգահաւաքման գործին: Սակայն, խնդիրն այն չէ, թէ Վրաստանի վարիչների քաղաքականութիւնը՝ վիրահայ ժողովրդի հան-

դէպ՝ ինչքան էր համապատասխանում կամ հակասում Հայաստանի շահերին, այլ այն, որ այդ քաղաքականութիւնը, հայկական ազգային փոքրամասնութեան խնդրում, շարունակում էր ընթանալ նախապատերազմեան շրջանի հին ուղիներով, որոնց մէջ մխրճուել էր ժողովանիայի սոցիալիստական կառավարութիւնը ինքնաբերաբար կամ վրաց ազգայնական հոսանքների ճնշման տակ:

Ճակատագրի քնահաճոյքով, այս քաղաքականութիւնը պէտք է մի անգամ եւս հանդէս գար իր այլանդակ մերկութեամբ, ինչպէս այդ եղաւ 1918թ. վերջին օրերին, հնի ընդօրինակութիւնը կատարեալ դարձնելու համար:

1920թ. նոյեմբերին բոլշեւիկները գրաւեցին թուրքական արշաւանքից ուժասպառ Հայաստանը եւ խորհրդային կարգեր հաստատեցին այնտեղ: Իրերի տրամադրութեամբ, բռնագրաւման եւ խորհրդայնացման հերթը շուտով պիտի հասներ Վրաստանին: Ուրիշ խօսքով՝ պիտի իրականանար այն նախագուշացումը, որ մենք, թուրքական վերջին արշաւանքի օրերին, արել էինք Վրաստանի վարիչներին եւ որը ինչպէս գիտենք, մեզնից առաջ ձեւակերպել էր Ծերեթեւին, Ինտերնասիոնալի Լիւցերնի Խորհրդաժողովում՝ ասելով. «Եթէ Հայաստանը խեղդուեց, Վրաստանի անկախութիւնը վերջացած է»: Եւ իրօք, Հայաստանի նուաճումից հազիւ երկու ամիս անց՝ բոլշեւիկները շարունակեցին իրենց առաջխաղացութիւնը դէպի Վրաստան:

Վրաց կառավարութիւնը հակամէտ չէր յանձնուելու բոլշեւիկներին առանց դիմադրութեան: Նա ոտքի հանեց պետական եւ հանրային կազմակերպութիւնները, շարժման մէջ դրեց զօրքն ու ժողովրդական գւարդիան, արտաքին գործերի միմիստրութեան անթելի միջոցով հաւար ձգեց ամենուրեք Վրաստանի անկախութեանն սպառնացող վտանգի մասին եւ այլն: Ամէն ինչ ցոյց էր տալիս, որ հանրապետական Վրաստանը որոշել էր մինչեւ վերջին հնարաւորութիւնը դիմադրել ներխուժող թշնամուն:

Կարելի է ասել ամբողջ հայ ժողովրդի համակրանքը այս պատերազմում Վրաստանի կողմն էր: Ընդամենը երկու ամսուայ ժամանակամիջոցում բոլշեւիկները թալանելով ու վայրագ բռնութիւններով այնպէս զգուեցրին Հայաստանի ժողովուրդը, որ վերջինս, նոյնիսկ արհամարհելով թրքական վտանգը՝ պատրաստ էր ապստամբելու բոլշեւիկեան անարգ լուծը թօթափելու համար:

Պարզ է, որ այս տրամադրութիւն ունեցող մի ժողովուրդ, բացի բարեկամականից, այլ վերաբերմունք չէր կարող ունենալ դէպի բոլշեւիկների դէմ կռուող ամէն մի ոյժ, եւ մանաւանդ դէպի վրացական ուժը, որի յաջողութիւնը կարող էր մեծապէս խթանել եւ Հայաստանի ազատագրութեան գործը: Նոյնիսկ Լօռուայ հայութիւնը, որ երկու տարի

առաջ, ծանր նեղութիւնների ենթարկուելով վրացիների կողմից, ապստամբել էր նրանց դէմ եւ դուրս քշել իր գիւղերից՝ նոյնիսկ այս հայութիւնը, ահաբեկուած բոլշեւիկեան վտանգից, սիրով պատսպարում էր վրաց զօրքերին, որոնք նորից մտել էին Լօռի՝ Թիֆլիսի ճանապարհը թշնամու առաջ փակելու համար: Հարկ եմ համարում այս առթիւ վկայելու, որ վրաց զինուորական իշխանութիւններն էլ վերին աստիճանի նրբանկատ վերաբերմունք էին ցոյց տալիս այս անգամ դէպի Լօռուայ հայ գիւղացիները, աշխատելով ըստ ամենայնի մոռացնել տալ անցեալը եւ շահիլ նրանց համակրանքը:

Ինչ վերաբերում է Վրաստանի եւ մասնաւորապէս Թիֆլիսի հայերին՝ սրանք փրկութիւն էին համարում Վրաստանի յաղթանակը: Որքան էլ նրանք դառնացած էին վրացական իշխանութիւններից, այնուամենայնիւ քաջ գիտէին, որ բոլշեւիկների յաղթութեան դէպքում նրանց ընչաքաղցութեան եւ անմարդկային հալածանքների առաջին զոհերն իրենք պէտք է լինէին շնորհիւ իրենց համեմատական բարեկեցութեան: Սրա համար էլ նրանք, առանց ոեւէ առարկութեան, ընդառաջ էին գնում այն բոլոր պահանջներին, որ վրաց զինուորական եւ քաղաքացիական իշխանութիւնները ներկայացնում էին նրանց՝ պատերազմը յաջողութեամբ վարելու համար:

Պատերազմի նախօրեակին, առիթ ունենալով Լօռիում գտնուած վրացական զօրքերին ծանօթանալու՝ ես զարմացած մնացի, որ թէ հրամանատարական կազմի, թէ զինորների եւ թէ մանաւանդ ժողովրդական գւարդիանների մէջ բաւական թուով հայեր կային: Որ Վրաստանում հայերը ենթակայ էին զինուորական ծառայութեան՝ այդ եւս գիտէի: Նորութիւնն ինձ համար այն էր, որ վրաց իշխանութիւնները այս հայ զօրականներին ուղարկել էին «հայկական ճակատը»: Սակայն, Թիֆլիս գալուց յետոյ, երբ տեղեկացայ, թէ ինչ վերաբերմունք ունեն Վրաստանի հայերը դէպի այս պատերազմը՝ իմ զարմանքն ինքն իրեն փարատուեց:

Փետրուարի առաջին օրերին բոլշեւիկներն արշաւեցին Վրաստանի վրայ նախ Հայաստանի, ապա նաեւ Սուխումի եւ Ադրբեջանի (Փոյլի) կողմից: Առանձնապէս վտանգաւոր էր վրացիների համար առաջին կամ «հայկական ճակատը», քանի որ նրա հեռաւորութիւնը պետութեան մայրաքաղաքից երկու քայլ էր միայն: Վրաց հրամանատարութեան գլխաւոր ուշադրութիւնը բնականաբար այս ճակատի վրայ պէտք է կենդրոնանար, որովհետեւ Թիֆլիսը թշնամուն տալը հաւասարազօր էր ընդհանուր պարտութեան: Սակայն, չնայած նրա ջանքերին՝ անկարելի եղաւ ուժեղ պատուար կանգնեցնել բոլշեւիկների առաջ: Պատերազմական գործողութիւնները հէնց սկզբից եւեթ ձախող ընթացք ստացան վրաց զօրքերի համար, որոնք սկսեցին առաջաւոր դիրքերից նահանջել դէպի Թիֆլիս:

Ստեղծուած ծանր կացութիւնը վրաց հասարակութեան պարզելու համար, ժորդանիան հանդէս եկաւ Սահմանադիր ժողովուն մի ճառով, որ հայ-վրացական յարաբերութիւնների պատմութեան մէջ պէտք է արձանագրուի «*հակահայկական պոգրոմային ճառ*» անունով: Այդ ճառի մէջ բոլշեւիկների կողմից Վրաստանի դէմ ձեռնարկուած անիրաւ պատերազմը ներկայացուած է իբրեւ ստոր դաւ, որ... դեկը կորցրած «թշուառական հայ ժողովուրդը», մարդկային եւ հարեւանական բոլոր սրբութիւնները ոտքի տակ տալով, նիւթել էր Վրաստանի Հանրապետութեան դէմ՝ նրան կործանելու նպատակով...

Պատերազմական թոհուրոհի մէջ այս ճառը վայրկեանապէս պոգրոմային մթնոլորտ ստեղծեց Թիֆլիսում եւ Վրաստանի միւս հայաբնակ վայրերում: Թշնամու յաղթական առաջխաղացութիւնից զազազած վրաց ամբոխը, իր հեղինակաւոր առաջնորդի բերնից լսելով, թէ Վրաստանի դէմ արշաւողները ռուս բոլշեւիկները եւ նրանց հայ ու վրացի մանկաւիկները չեն, այլ «թշուառական հայ ժողովուրդն» է՝ անսահման ցասումով էր լցուել դէպի վերջինս: Բնականաբար այս ցասման անմիջական զոհը պիտի լինէր Վրաստանի հայութիւնը, որի սարսափահար աչքերի առաջ նորից ցցուեց 1918-1919թթ. ծննան հալածանքների մղձաւանջը: Սարսափը մեծ էր մանաւանդ այն պատճառով, որ հայ-վրացական պատերազմի ժամանակ ժորդանիան գէթ խօսքով անմեղ էր յայտարարում հայ ժողովուրդը եւ իր պաշտպանութեան տակ առնում, իսկ այժմ նրա թունաւոր նետերը հէնց այդ հայ ժողովրդի դէմ էին ուղղուած...

Մինչդեռ վիրահայ ժողովուրդը ահ ու դողով սպասում էր իր շուրջը խտացած մթնոլորտի պոռթկմանը, առանց նոյնիսկ ինքնապաշտպանութեան միջոցների մասին խորհել կարենալու՝ Թիֆլիս հասան Հայաստանի Փետրուարեան ապստամբութեան լուրերը եւ ամէն ոք տեսաւ, որ «թշուառական հայ ժողովուրդը» ոչ միայն ռեւէ դաւ չի նիւթել Վրաստանի Հանրապետութեան դէմ, այլ եւ սրա վրայ արշաւող բոլշեւիկեան ուժերի թիկունքում ապստամբութիւն կազմակերպելով՝ ինքնաբերաբար ձեռք է մեկնում նոյն բռնապետութեան դէմ պայքարող վրաց ժողովրդին...

Այսպիսով, Փետրուարեան ապստամբութիւնը ոչ միայն փրկեց Հայաստանի բանտերում բոլշեւիկեան դահիճների կացիւններին սպասող հարիւրաւոր հայ բանտարկեալների կեանքը, այլ եւ ազատեց Վրաստանի հայութիւնը անխուսափելի պոգրոմներից:

Սակայն, ի՞նչն էր դրդում ժորդանիային այսպիսի մի ահաւոր ճառ արտասանելու Վրաստանի Սահմանադիր ժողովուն: Մի՞թէ նա չգիտէր, թէ հայ ժողովուրդը ինչ վերաբերմունք ունէր դէպի այն ոճրագործ վոհմակները, որոնք Վրաստանի Հանրապետութեան դէմ

դուրս գալուց առաջ, թիրքերի գործակցութեամբ յօշոտել էին Հայաստանի Հանրապետութիւնը: Մի՞թէ նա անտեղեակ էր, թէ այդ վոհմակների տիրապետութեան տակ ինչ սոսկումներ էին կատարուում Հայաստանի բանտերում եւ բանտերից դուրս, - սոսկումներ, որոնք ստիպում էին հայ ժողովրդին մինչեւ իսկ թիրքերի «մեծասրտութեանը» ապաւինել՝ բոլշեւիկեան կարմիր դահիճների երեսը չտեսնելու համար: Վերջապէս, մի՞թէ ժորդանիան չգիտէր, թէ իր ճառը ինչ օրհասական նշանակութիւն կարող էր ունենալ վիրահայ ժողովրդի համար, որ այնքան պատրաստակամութեամբ ընդառաջ էր գնում վրաց կառավարութեան բոլոր պահանջներին՝ ի սրտէ ցանկանալով, որ վերջինս կարողանայ ազատել Վրաստանը բոլշեւիկեան տիրապետութեան պատուհասից:

Ժորդանիան գիտէր այս ամէնը: Բայց եւ այնպէս նրան այդ ճառն անհրաժեշտ էր թուում ռազմաքաղաքական նկատումներով: Նա տեսնում էր, որ վրացիք դժկամակում էին կռուել ռուս բոլշեւիկների դէմ: Դժկամակում էին ոչ թէ այն պատճառով, որ նրանց սիրում էին, այլ որովհետեւ նրանց վրայ նայում էին իբրեւ Ռուսաստանի վրայ, որի դէմ պատերազմելը իրենց ուժերից վեր էին համարում: Եւ ահա այս մտայնութիւնից առաջացած յուսալքութիւնը փարատելու համար, ժորդանիան թեթեւ սրտով շանթեր էր արձակում «թշուառական հայ ժողովրդի» դէմ: Հոգ չէր, թէ սրանից ինչ փորձանքներ կը ծագէին վիրահայ զանգուածների համար:

Ժորդանիան փորձով գիտէր, որ այսօրինակ «անպատեհութիւնները» ժամանակի ընթացքում մոռացուում են: Գլխաւորն այն էր, որ վրացիք համոզուէին, թէ իրենց դէմ ամեհի Ռուսաստանը չէ կանգնած, այլ «խղճուկ Հայաստանը, որին մի անգամ արդէն նրանք «յաղթել էին» եւ այժմ էլ կարող էին յաղթել...

Դուրս է գալիս, որ վիրահայ ժողովուրդը անմեղ տեղը քաւութեան նոխազ պէտք է դառնար, որպէսզի վրացիների ռազմական կորովը բարձրանար եւ նրանց զօրքերը, պարտութեան մատնելով ռուս բոլշեւիկներին, յաւերժացնէին ժորդանիայի եւ իր ընկերների տիրապետութիւնը նախկին փոխարքայի ապարանքում...

Այս տխուր էջով էլ փակուում է վիրահայ ազգային փոքրամասնութեան հանդէպ ժորդանիայի կառավարութեան որդեգրած քաղաքականութեան պատմութիւնը:

\* \* \*

Մեր աչքի առաջն է այժմ այս քաղաքականութիւնը, որ սկսուում է Վրաստանի անկախութեան սկզբի օրերից եւ որոշ ելելէջներով

շարունակվում է մինչև նրա վերջին ժամերը: Մեր ձեռքի տակ են նաև Վրաստանի Հանրապետության Սահմանադրության 129-137-րդ յօդուածները, որոնց մէջ շատ զեղեցիկ գաղափարներ կան ձեւակերպուած ազգային փոքրամասնութիւնների պաշտպանութեան մասին:

Երբ ժողովանիան այդ յօդուածներից է խօսում, մեր մտքի մէջ իսկոյն ուրուագծուում է նրա հետապնդած գործնական քաղաքականութիւնը մասնաւորապէս վիրահայ ազգային փոքրամասնութեան հարցում: Եւ, առանց խիստ դատաւոր լինելու, պէտք է ասենք, որ եթէ ժողովանիան կարող է պարծենալ Վրաստանի Սահմանադրութեան յիշեալ յօդուածներով, նա երբեք չի կարող պարծենալ, թէ ինքը այդ յօդուածների ոգով է ղեկավարուել վիրահայ ազգային փոքրամասնութեան գործերը կարգադրելիս...

\* \* \*

Բոլշեւիկները ռուսական սուլիների միջոցով նուաճելով Վրաստանը՝ յանձնեցին վրաց բոլշեւիկների իշխանութեանը: Վերջիններս հիմն ի վեր շրջեցին ժողովանիայի եւ իր ընկերների հաստատած քաղաքական, ընկերային եւ տնտեսական կարգերը, սակայն, գրեթէ առանց փոփոխութեան որդեգրեցին նրանց հետապնդած քաղաքականութիւնը վիրահայ ազգային փոքրամասնութեան իրաւունքների կամ, աւելի ճիշդն ասած, իրաւագրկութեան խնդրում: Ներկայիս էլ Վրաստանի խորհրդային վարիչները քայլ առ քայլ վրաց մենշեւիկների եւ ազգայնականների գծած ուղիով ընթանում են այս խնդրում, որքան եւ հրապարակօրէն խարանում են նրանց շովինիստական միտումները:

Փաստերի համար երկար ու բարակ պրպտումներ կատարելու կարիք չկայ:

Ամենքին յայտնի է, որ բոլշեւիկները ազգային հարցերի արմատական լուծումը դարձրին իրենց քաղաքական ծրագրի գլխաւոր կէտերից մէկը եւ, ինչպէս հոկտեմբերեան յեղաշրջման ժամանակ, նոյնպէս եւ այսօր, թմբկահարում են ամենուրեք, որ այդ հարցը միմիայն խորհրդային երկրներում է հետեւողականօրէն լուծուած: Չենք ուրանում, որ նրանք այս մարզի մէջ հսկայական նշանակութիւն ունեցող գործերի ձեռնարկեցին նախկին ռուսական կայսրութեան զանազան մասերում: Նրանք ոչ միայն սկզբից եւ եթ առանց այլեւայլութեան ճանաչեցին Լեհաստանի եւ Ֆինլանդիայի կատարեալ անկախութիւնը, այլ եւ, որոշ տատանումներից յետոյ, թոյլ տուին, որ Էստոնիան, Լատուիան եւ Լիտուանիան էլ իրենց անկախ

հռչակեն Ռուսաստանից: Դեռ աւելին. բոլշեւիկները կիսանկախ պետական կեանքի կոչեցին այնպիսի ժողովուրդների, որոնք հոկտեմբերեան յեղաշրջումից առաջ ինքնուրոյն պետականութեան կամ պետական ինքնուրոյնութեան մասին գաղափար իսկ չունէին, ինչպէս օրինակ՝ բելոռուսները, թուրքմէնները, տաճիկները, դրոզները, բաշկիրները եւ այլն, որոնք կազմակերպուեցին իբրեւ առանձին հանրապետութիւններ կամ ինքնավար շրջաններ Ռուսաստանի Ֆեդերատիւ Հանրապետութեան ծոցում: Բացի սրանից՝ բոլշեւիկներն սկսեցին ազգային գիտակցութիւն հրահրել եւ ազգային ուրոյն մշակոյթի պահանջներ ստեղծել մի շարք յետամնաց ցեղերի մէջ, որոնք նոյնիսկ գիր ու գրականութիւն չունեն: Նրանց համար այբբենարաններ են հնարուում, դպրոցներ բացուում եւ ազգային ինքնուրոյն կեանքի միւս նախադրեալները կազմուում:

Այս ամէնի դիմաց, ճիշդ է, յանցանքներ եւս կան արձանագրուած բոլշեւիկների հաշուին, ինչպէս օրինակ Ուկրաինայի, Ադրբէջանի, Հայաստանի եւ Վրաստանի ազգային անկախութիւնների ոչնչացնելը: Սակայն, այստեղ էլ պէտք է ասել, որ նրանք իրենց յանցագործութիւնը չտարան մինչեւ այդ պետութիւնները աշխարհագրական քարտէսից իսպառ ջնջելը: Ոչ, ընդհանուր Միութեան սահմաններում էլ սրանք մնացին իբրեւ առանձին-առանձին հանրապետութիւններ՝ ինքնավարութեան որոշ իրաւունքներով եւ բաւական լայն ազատութիւններով ազգային-մշակոյթային գործերում:

Բոլշեւիկեան այս ընդհանուր տրամադրութիւնները իրենց անդրադարձումն ունեցան եւ անդրկովկասեան հանրապետութիւնների մէջ ապրող ազգային փոքրամասնութիւնների վրայ: Վրաստանում ինքնավարութիւն ստացան օսերը, արդէն ինքնավար Աջարիստանը դարձաւ հանրապետութիւն, հանրապետութեան իրաւունք տրուեց մինչեւ իսկ արխազներին: Ադրբէջանում, ճիշդ է, որոշ պայքարներից յետոյ, ինքնավարութիւն տրուեց Լեռնային Ղարաբաղին: Հայաստանի քթի տակ կազմեց Նախկրայի Հանրապետութիւնը, որը փոքրիկ փոփոխութիւններով ընդգրկում է նախկին երեւանեան նահանգի Շարուր եւ Նախիջեան գաւառները՝ գերազանցօրէն թաթար ազգաբնակութեամբ: Եւ ով զարմանք, անգամ Չանգեզուրի եւ Ջիւանշիրի քսան հազարանոց քրդութիւնը «Քուրդկրայ» անունով առանձին ինքնավար շրջան կազմելու իրաւունք ստացաւ:

Այս բոլոր մանր ժողովուրդների մէջ միայն վիրահայութիւնն է զրկուած մնացել, ազգային փոքրամասնութիւնների համար նախատեսուած իրաւունքների տեսակէտից, թէւ նրա խոշոր հատուածները ապրում են Ախալցխա, Ախալքալաք, Բորչալու, Թիֆլիս եւ Գորի գաւառներում այնպիսի հոծ զանգուածներով, որ հեշտու-

թեամբ կարող էին մի կամ երկու ինքնավար շրջան կազմել հայկական ջախջախիչ մեծամասնութեամբ:

Մենք գիտենք, թե ինչ արժեք է ստանում վրաց բոլշևիկների աչքում ազգերի ինքնորոշման իրաւունքը, որի համար նրանք երկնքի աստղերն իսկ վար բերելու պատրաստ են, երբ խնդիրը վերաբերում է Ախալքալաք կամ Բորչալու գաւառներում ապրող հայկական զանգուածներին: Մեզ ծանօթ է նաեւ Անդրկովկասեան Կոմկուսի 1926թ. խորհրդաժողովում Օրջոնիկիձէի արտասանած ճառը, որի մէջ ժողովանիայի այս մոնթը դատապարտում էր ախալքալաքցիներին, որոնք ցանկութիւն էին յայտնել անջատուել Վրաստանից և միանալ Հայաստանին՝ ասելով.

«Գայթակղեցուցիչ է, երբ Խորհրդային Հանրապետութեան քաղաքացիները ուզում են հեռանալ այդ Հանրապետութիւնից (իմա՝ Վրաստանից) լոկ այն պատճառով, որ հայեր են եւ ոչ թէ վրացիներ»:

Սակայն, եթէ մի րոպէ ընդունենք իսկ, թէ ազգային ինքնորոշման պահանջը, որ ճանաչուած է իբրեւ անկապտելի իրաւունք ամէն մի ժողովրդի համար, կարող է նկատուել գայթակղութիւն, երբ ախալքալաքաբնակ հայ ժողովրդի կողմից է առաջադրուում՝ մեր առաջ դարձեալ բաց կը մնայ այն հարցը, թէ ինչո՞ւ վերոյիշեալ գաւառների հայ ժողովուրդը պահուում է վրացական վարչութեան տակ: Ինչո՞ւ իրար կպած այդ գաւառներում չեն կազմուում մի կամ երկու ինքնավար շրջաններ, որպէսզի նրանց մէջ ամփոփուած հայ ժողովուրդը ինքը վարի իր առանձին գործերը: Թերեւս տեղական ինքնավարութեան այս անմեղ պահանջն էլ է գայթակղութիւն նկատուում Օրջոնիկիձէների կողմից: Բայց այն ժամանակ ինչո՞ւ են նրանք հանդուրժում աջարացիների, արխազների եւ օսերի ինքնավարութիւնը: Հօ նրանք չեն կարող ունեւիցէ հաւատացնել, թէ այս ժողովուրդը, ազգային գիտակցութեան, մշակոյթային առանձնա-յատկութիւնների եւ վարչական կարողութիւնների տեսակետից աւելի բարձր մակարդակի վրայ են կանգնած, քան թէ խնդրոյ առարկայ հայ ժողովուրդը:

Ջուր է այս հարցերին պատասխան սպասել Վրաստանի ներկայ վարիչներից: Նրանք անհրաժեշտաբար խուլ պէտք է մնան սրանց հանդէպ, որովհետեւ կոմունիստական կամ Խորհրդային դրօշակի տակ էլ նրանք վրաց մենշևիկների քաղաքականութիւնն են հետապնդում վիրահայ ազգային փոքրամասնութեան հանդէպ:

Թէ այս քաղաքականութեան ոգին որքան զօրեղ է այսօրուայ Վրաստանում, այդ մասին կարելի է գաղափար մը կազմել եւ հետեւեալ փաստերից, որ անցողակի յիշատակում ենք:

Վերջին ժամանակներս Վրաստանի կառավարութիւնը ծրագրել էր ախալքալաքցիների հետ հայերէն լեզուով յարաբերութիւններ պահել: Չգիտենք, թէ այս մտադրութեան մէջ ի՞նչն է գերակշռում. արդէօք ռուսաց լեզուն, որով մինչեւ վերջերս յարաբերութիւն էր պահուում, շրջաբերութիւնից հանելու ցանկութիւնը, թէ ախալքալաքցիների հայրենաձիգ տրամադրութիւնները մեղմացնելու միտումը: Սակայն, գիտենք, որ վրաց կոմունիստներն այնպիսի վայնասուն բարձրացրին այս նորամուծութեան դէմ, որ կառավարութիւնը, շշմած, խօսք չէր գտնում իր ծրագիրը պաշտպանելու համար:

Մի ուրիշ նմոյշ է հանդիսանում Թիֆլիսի պարագան:

Ընթերցողը գիտէ արդէն, որ ժողովանիայի կառավարութեան օրինութեամբ, վրացիք, 1919թ. բռնի եւ արհեստական ընտրութիւններով, ասպարեզից քշեցին հայերին եւ «ազգայնացրին» Թիֆլիսի ինքնավարութիւնը, թէեւ նրանց այդ քաղաքի ազգաբնակչութեան հազիւ մի քառորդն էին կազմում: Այսօր էլ վրաց բոլշևիկները արգոսեան աչքերով հետեւում են, որ ոչ մի «աւելորդ» հայ ներս չքափանցի քաղաքային գործերի մէջ: Դժբախտաբար, չեն կարող ասել, թէ այժմն Թիֆլիս ազգային հատուածները ինչ համեմատութեամբ են ներկայացուած քաղաքային ինքնավարութեան մէջ: Սակայն, 1926թ. պատկերը հետեւեալն էր. Գործադիր խորհրդում վրացիք կազմում էին 43%, հայերը՝ 17%, մնացած ազգութիւնները՝ 40%: Գալով Գործադիր կոմիտէին՝ նրա 36 անդամից 27-ը վրացի էին, 4-ը հայ, 3-ը ռուս, 1-ը թաթար եւ 1-ը հրեայ: Աւելի եւս յատկանշական էր Գործադիր կոմիտէի նախագահութեան պատկերը. նրա 11 անդամից 10-ը վրացի էին եւ մի հատը՝ կարմիր բանակի ներկայացուցիչը՝ ռուս... Չնայած այս պերճախօս թուերին՝ Բօդու Մդիվանին եւ իր համախոհներն այն ժամանակ այնպիսի հաւար էին բարձրացրել «հայկական ներխուժման» դէմ, որ անգամ Օրջոնիկիձէն հարկ համարեց, Կոմկուսի 12-րդ Համագումարում նրանց սանձը քաշել<sup>153</sup>...

Եթէ այս մասնակի դէպքերից անցնենք վիրահայ ժողովրդի ընդհանուր տրամադրութեանը՝ այնտեղ էլ կը տեսնենք նոյն ճնշուածութիւնը, ինչ որ կար առաջ, Վրաստանի անկախութեան օրերին: Մի կողմ թողած վրաց բոլշևիկների կազմակերպած թալանը, որին ենթարկուեցին եւ ենթարկուում են շարունակ հայերը աւելի մեծ չափերով, քան վրացիները, նրանց մէջ բովանդակ ծաւալով մնում է այն ծանր զգացումն, որ իրենց հանդուրժուում են միայն Վրաստանում եւ ոչ թէ նկառուում իբրեւ իրաւատէր քաղաքացիներ:

Անկախ իր կամքից՝ այս զգացման արդարացիութիւնն էր ապացուցանում անցեալ թէ նախանցեալ տարի վրաց կոմունիստները:

րից մէկը՝ պաշտօնական մի ժողովում բացականչելով. «Մարքսն ասել է. պրոլետարներ բոլոր երկրների միացէք: Բայց նա չէ ասել, որ հայերը բոլոր երկրներից հաւաքուեն Վրաստան»:

Ի հարկէ, վրացի կոմունիստը շատ լաւ գիտէր, որ բարեբախտաբար հայերն այլեւս չեն հաւաքուում Վրաստան: Նրա խօսքը վերաբերում էր արդէն Վրաստանում գտնուող վիրահայ ժողովրդին եւ խօսքն այն իմաստն ուներ, որ այդ ժողովուրդը պէտք է հեռանայ այնտեղից: Այսինքն՝ նա սրախօսութեան ձեւով արտայայտում էր նոյն պահանջը, ինչ որ մի ժամանակ բացայայտ կամ քողարկուած ձեւով առաջադրուում էր վրաց ազգայնականների եւ մենչելիկների կողմից:

Չարմանալի կը լինէր, եթէ Վրաստանի հին եւ նոր վարիչների կողմից մօտ տասը տարի հրահրուող հակահայկական տրամադրութիւնները համապատասխան անդրադարձում չունենային վրաց ժողովրդական զանգուածների վրայ: Այս զանգուածները, որ երկար ու ձիգ դարերի ընթացքին միշտ եղբայրական վերաբերմունք են ունեցել դէպի հայ ժողովուրդը եւ մանաւանդ Վրաստան ապաստանած հայկական հատուածները, այժմս ըստ երեւոյթին շատ էլ չեն կառչում վաղեմի բարեկամութեան ականդներին:

Վրաստանի ապստամբութիւնը ճնշելու գործում, իր սխրագործութիւններով աչքի էր ընկել այսպէս կոչուած «չեկիստական գունարտակը», որ ինչպէս մեզ հաղորդուում էին վրացական աղբիւրներից, գերազանցօրէն բաղկացած էր հայերից: Ապստամբութիւնից առաջ եւ յետոյ էլ Վրաստանի չեկաներում գլխաւոր դերակատարները հայերն են եղել, համաձայն նոյն աղբիւրներից ստացուած տեղեկութիւնների: Եթէ այս տեղեկութիւնները ճիշդ են, կասկած չկայ, որ ոճրագործ բոլշեւիկները դիւային յղացումն են ունեցել ոչ միայն ճնշել վրացիներին, այլ եւ ճնշումը կատարել հայերի ձեռքով, որպէսզի նրանց միջեւ արեան թշնամութիւն ստեղծուի, եւ նրանք չկարողանան, յարմար թոպէին, միացեալ ճակատով դուրս գալ ընդհանուր թշնամու՝ բոլշեւիկեան բռնապետութեան դէմ:

Սա այնքան պարզ, այնքան հասկանալի մի խաղ էր, որ վրաց ժողովուրդը, իր առողջ բնազդով եւ դատողութեամբ, իսկոյն պէտք է ըմբռնէր. ճիշդ այնպէս, ինչպէս որ ժամանակին հայ ժողովուրդն էր ըմբռնում ցարական սատրապների դիւային խաղը, երբ նրանք Նալկաշիձէներին, Թաղայշվիլիներին, Լօլաձէներին եւ վրացական անուններ կրող ուրիշ մանր ու խոշոր դահիճներն էին առաջ քաշում՝ հայկական ջարդեր կազմակերպելու կամ հայ յեղափոխական շարժումները խեղդելու համար: Բայց որովհետեւ վրաց ժողովրդի միտքը բաւական թունաւորուած էր իր հին եւ նոր վարիչների մշակած հակահայկական տրամադրութիւններով՝ նա հայ չեկիստների վայ-

րագութեանց համար պատասխանատու էր նկատում հայ ժողովուրդը՝ առանց նոյնիսկ հաշուի առնելու, թէ նոյն այդ չեկիստների ձեռքից ինքը հայ ժողովուրդը ինչքան էր տառապել եւ արիւնոտուել <sup>154</sup>...

Թէ այսօրինակ տրամադրութիւնները ինչքան անախորժ շփումներ կարող են առաջ բերել տիրող վրաց ժողովրդի եւ վիրահայ ազգային փոքրամասնութեան միջեւ՝ դառնացնելով վերջինիս կեանքը, այդ հասկանալի պէտք է լինի անէնքի համար: Մենք խօսում ենք միայն անախորժ շփումների մասին. սակայն, վրացական շրջանակներից, աւելի ծանրակշիռ հաւանականութիւնների ակնարկներ եւս լսում ենք յաճախ...

\* \* \*

Ահա այս է վիրահայ ժողովրդի վիճակը ներկայիս: Եթէ հանրապետական վարչութեան օրօք նա իրաւագրկուած էր իբրեւ ազգային փոքրամասնութիւն իր մշակոյթային եւ ինքնավարական պահանջների մէջ եւ մինչեւ իսկ բացայայտ հալածանքների էր ենթարկուում «յարմար» առթիւ, այժմ, խորհրդային վարչութեան տակ, նա կատարելապէս անտեսուում է իբրեւ ազգային փոքրամասնութիւն եւ, հետեւողական քաղաքականութեամբ, յետ մղուում պետական եւ հանրային կեանքի բոլոր մարզերից:

Ի՞նչ պէտք է անել այս վիճակը դարմանելու համար: Ի՞նչ պէտք է անել, որ վիրահայ ազգային փոքրամասնութիւնը փոխանակ կնճռոտելու Չայաստանի եւ Վրաստանի յարաբերութիւնները՝ շաղկապող օղակ դառնայ նրանց միջեւ՝ մնալով միաժամանակ կատարելապէս օրինապահ, կատարելապէս պարտաճանաչ հանդէպ Վրաստանի եւ նրա իշխանութեան:

Այս հարցերի գոհացուցիչ պատասխանը եւս մենք գտնում ենք ժողովանիայի մօտ: Ի՞նչ դէմ ունեցած բանաւեճի մէջ, ժողովանիան հետեւեալ տեսակէտներն է արտայայտում ազգային փոքրամասնութիւնների հարցի վերաբերեալ:

«Ազգերի ինքնորոշումը նշանակում է, որ մի հողամասի վրայ մեծամասնութիւն կազմող անէն մի ազգութիւն իրաւունք ունի ինքնուրոյն պետութիւն կազմելու»: Իսկ սրա սահմաններում գտնուող (ազգային) փոքրամասնութիւնները, եթէ չեն ուզում, կամ աշխարհագրական պայմանների շնորհիվ չեն կարող միանալ իրենց ազգային պետութեանց՝ պէտք է հովանաւորուին ազգային-մշակոյթային տեսակէտից նոյն իրաւունքներով, որ ունի այդ ասպարէզում ազգային մեծամասնութիւնը: Ահա այս նկատումներով, Վրաստանի

Սահմանադիր ժողովը, ազգային փոքրամասնությունների համար, ընտրել է Սահմանադրության մեջ ազգային-մշակութային ինքնավարությունը եւ թէ (ցրուած ազգային) անհատների համախմբումը՝ ի հաշիւ պետական եւ տեղական բիւջէների<sup>155</sup>:

Մեր խնդրից դուրս է Վրաստանի Սահմանադրութեան յօդուածների վերլուծութիւնը: Դրա համար էլ բաւականանում ենք վերհանելով այս տողերի մէջ արտայայտուած սկզբունքային կէտերը, որոնք հինգ հատ են:

1. Ամէն մի ազգային փոքրամասնութիւն, որ աշխարհագրորէն կպած է իր ազգային պետութեանը՝ իրաւունք ունի այդ պետութեանը միանալու, եթէ միայն ցանկանում է միանալ:

2. Ամէն մի ազգային փոքրամասնութիւն, որ աշխարհագրորէն կպած չէ իր ազգային պետութեանը, բայց համախմբուած ապրում է որոշ հողամասի վրայ՝ իրաւունք ունի ոչ միայն ազգային-մշակութային ինքնավարութիւն, այլեւ տերրիտորեալ ինքնավարութիւն ստանալու:

3. Այս երկու կարգից դուրս գտնուած ազգային փոքրամասնութիւնը, որ ցրուած ապրում է պետութեան այլեւայլ մասերում, իրաւունք ունի արտահողային ազգային միութիւն կազմելու եւ, որպէս այդպիսին, ազգային-մշակութային ինքնավարութիւն ստանալու:

4. Ազգային փոքրամասնութեան թէ հողային ինքնավարութիւնը եւ թէ ազգային-մշակութային ինքնավարութիւնը նոյն իրաւունքներով պէտք է օժտուած լինեն, որոնցով օգտուում է մեծամասնութիւն կազմող ժողովուրդը այդ երկու մարզերի մէջ:

5. Ազգային փոքրամասնութեան հողային ինքնավարութեան եւ ազգային-մշակութային ինքնավարութեան ծախսերը պէտք է հոգացուեն պետական եւ տեղական բիւջէներից ընդհանուր կարգով, առանց մասնաւոր տուրքերի ենթարկելու ազգային փոքրամասնութիւնը այն կարիքների բաւարարման համար, որոնց համար մեծամասնութիւն կազմող ժողովուրդի վրայ մասնաւոր տուրքեր չեն դրուում:

Եթէ ճիշտ ենք ձեւակերպում վերոյիշեալ ցիտատում արտայայտուած մտքերը, իսկ մենք կարծում ենք, որ տառացիորէն ճիշդ ենք ձեւակերպում, կը նշանակէ մազաչափ տարակարծութիւն անգամ չկայ մեր եւ ժողովուրդի միջեւ ազգային փոքրամասնութիւնների հարցում:

Տեսնենք այժմ, թէ գործնական ի՞նչ լուծումն կը ստանայ վիրահայ ազգային փոքրամասնութեան հարցը, եթէ այդ լուծումը կատարուի համաձայն ժողովանիայի սկզբունքային տեսակէտների:

Առաջին՝ Ախալքալաքի եւ Յայկական Բորչալուի հայութիւնը, որ աշխարհագրորէն կպած է Յայաստանին, որովհետեւ նա քահիցս արտայայտել է, որ ցանկանում է միանալ: Եթէ վրացիք պա-

հանջեն՝ կարելի է նորից ստուգել այս ցանկութիւնը ժողովրդական հանրաքուէով (ռեֆերենդում):

Երկրորդ՝ Թիֆլիս գաւառի, վրացական Բորչալուի եւ յարակից շրջանների հայութիւնը, որ ազգային հոծ մեծամասնութիւն է կազմում որոշ հողամասի վրայ՝ կը ստանայ հողային ինքնավարութիւն:

Երրորդ՝ Վրաստանի քաղաքներում ապրող վիրահայ քաղաքացիները ունէ կաշկանդումի չեն ենթարկուի համայնական գործերում: Նրանք ազդեցութիւն կ'ունենան այդ գործերի վրայ համաձայն իրենց քանակի եւ որակի:

Չորրորդ՝ Վրաստանի զանազան մասերում ցրուած հայերը ազգային միութիւն կը կազմեն ազգային-մշակութային ինքնավարութեան իրաւունքներով: Ի պահանջել հարկին այդ միութեանը կարող են յարիլ Վրաստանի սահմաններում ապրող բոլոր վիրահայերը ընդհանուր ղեկավարութեամբ եւ ընդհանուր տնտեսութեամբ իրենց ազգային-մշակութային կարիքները հոգալու համար:

Հինգերորդ՝ հողային ինքնավարութեան եւ ազգային մշակութային ինքնավարութեան համար, վարկեր կը յատկացուեն Վրաստանի պետական եւ տեղական բիւջէներից՝ համեմատական հաւասարութեան սկզբունքով:

Վեցերորդ՝ Վրաստանի հայ քաղաքացիները ընդհանուր պետական գործերում կը վայելեն նոյն իրաւունքները եւ կը կրեն նոյն պարտականութիւնները, ինչ որ վայելում եւ կրում են վիրազգի քաղաքացիները:

Ահա սա կը լինի վիրահայ ազգային փոքրամասնութեան հարցի արդար եւ արմատական լուծումը: Եւ այս լուծումը համապատասխանում է ոչ միայն ժողովանիայի արտայայտած մտքերին, այլեւ ժամանակակից ժողովրդավարութեան եւ մանաւանդ ընկերավարութեան հրամայական պահանջներին:

Սակայն, կը համաձայնի՝ ժողովանիան այս գործնական լուծումները: Կը համաձայնի՞ նա այս ձեւով ստեղծելու մէկն այն նախադրեալներից, որոնք անհրաժեշտ են, որպէսզի «վրացիների եւ հայերի միջեւ, Վրաստանի եւ Յայաստանի հանրապետութիւնների միջեւ առյաւելտ հաստատուեն իրաւական եւ խաղաղ յարաբերութիւններ»:

Դժբախտաբար չենք կարող այս հարցերին վճռականորէն դրական պատասխան տալ: Չենք կարող այն պատճառով, որ ժողովանիան, ազգային փոքրամասնութիւնների հարցի լուծման համար այսքան գեղեցիկ տեսակէտներ եւ սկզբունքներ առաջադրելու ժամանակ իսկ բարոյական ոյժ է զգում իր մէջ պաշտպանելու այն ընդվզեցուցիչ քաղաքականութիւնը, որ նա, իր իշխանութեան օրերին, վարում էր հանդէպ վիրահայ ազգային փոքրամասնութեան...

Մենք հանգամանորեն վերլուծեցինք հայ-վրացական կնճռի գլխավոր հանգոյցները՝ ցոյց տալով թե սրանից ամեն մեկը ինչպես սկսուեց, ինչպես զարգացաւ եւ ինչ վիճակի մէջ է գտնուում ներկայիս:

Ինչպէս սոյն ուսումնասիրութեան նախաբանի մէջ էլ ասել ենք, մենք ուրախութեամբ մոռացութեան կը տայինք այս հանգոյցների շուրջը տեղի ունեցած անախորժութիւններն ու դառնութիւնները, եթէ նրանք լուծուած, վերացած լինէին մէջտեղից: Բայց ցաւն այն է, որ, ինչպէս ընթերցողն ինքն էլ տեսաւ, մեր քննած հարցերն այսօր իսկ բացուած վերքերի պէս մխում են հայ-վրացական փոխարարութիւնների վրայ, թէւ բոլշեւիկները կաշուից դուրս են գալիս հակառակը փաստելու համար: Իրականութեան այլանդակութիւնը կեղծ ու պատրի խօսքերով քողարկելու բոլշեւիկեան արհեստի արժեք մենք շատ լաւ գիտենք, եւ բնաւ կարիք չենք զգում հաճոյալից ժպիտներ խաղացնել մեր դէմքին այն ժամանակ, երբ մեր սրտից արիւն է կաթում:

Սիրում ենք յուսաւ, որ հայ-վրացական անկեղծ եւ գործօն բարեկամութեանը նախանձախնդիր մեր հարեւանները ըստ արժանոյն կը զնահատեն այս շիտակ կեցուածքը, անգամ եթէ մեր զանազան արտայայտութիւնները անախորժ հնչեն նրանց ականջներին:

Հայ-վրացական վերջին շրջանի կնճիռների մասին մինչեւ օրս գրուել է այս կամ այն առթիւ, այս կամ այն հրատապ խնդրի կապակցութեամբ: Հրապարակի վրայ չկար մի աշխատութիւն, որի մէջ ամփոփուած լինէր այդ կնճիռների ամբողջութիւնը: Մենք աշխատեցինք լրացնել այդ պակասը, որպէսզի մեր հարեւանները դիւրութիւն ունենան տեսնելու, թէ որոնք են մեր դժգոհութիւնների պատճառները, ինչ պահանջներ ունինք մենք նրանցից եւ ինչպէս ենք հասկանում այդ պահանջների բաւարարումը: Այսպիսի առաջադրութիւն ունենալով՝ մենք պէտք է խօսէինք բաց սրտով եւ լեզուով, առանց դիւանագիտական մանուածապատութիւնների եւ առանց ախորժաւոր քողարկաւորումների:

Ուրախ կը լինէինք, եթէ մեր հարեւաններն էլ նոյն ձեւով մօտենային հայ-վրացական տարածայնութիւններին: Դրանով նրանք աջակցած կը լինէին առաջ բերելու հայերի եւ վրացիների միջեւ այն իրարհասակացողութիւնը, որ անհրաժեշտ նախադրեալն է հանդիսանում ոչ միայն նրանց յարաբերութիւններն արող կնճիռների վերացման, այլեւ հայ-վրացական քաղաքական գործակցութեան համար:

<sup>1</sup> Խօսքը 1918-1921թթ. Վրաստանի Դեմոկրատական Հանրապետութեան իշխանութեան գլուխ կանգնած վրացական սոցիալ դեմոկրատական կուսակցութեան մասին է:

<sup>2</sup> Ժորդանիա Նոյ (1870-1953) - Վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան ղեկավար գործիչ, ծագումով ազնուական: Եղել է Ռուսական I Պետական դումայի (1906թ. ապրիլ-հուլիս) պատգամաւոր, սոցիալ-դեմոկրատական խմբակցութեան նախագահ, Վրաստանի դեմոկրատական հանրապետութեան կառավարութեան նախագահը: 1921 թուականից վտարանդի: Մահացել է Ֆրանսիայում:

<sup>3</sup> Այս եւ տեքստում հանդիպող միւս ընդգծումները հեղինակինն են:

<sup>4</sup> Մախարաձէ Ֆիլիպ (1868-1941) - Վրաց պետական գործիչ: 1921 թ. եղել է Վրաստանի Հեղկոմի նախագահը, 1922թ.-ից Վրաստանի Կենտրոնական կոմիտեի նախագահ (վարչապետ), ապա՝ Ժողկոմխորհի նախագահ, Անդրֆեդերացիայի Կենտրոնական կոմիտեի նախագահ, Վրաստանի Գերագոյն խորհրդի նախագահութեան նախագահ:

<sup>5</sup> Քաղկեդոնի ժողով - Եկեղեցական ժողով, որը գումարուել է 451թ. Փոքր Ասիայի Քաղկեդոն քաղաքում բիւզանդական կայսր Մարկիանոսի նախաձեռնութեամբ: Ժողովը ճանաչել է Յիսուս Քրիստոսի երկաբնակութեան դաւանական ուսմունքը: Հայոց եկեղեցին չի մասնակցել Քաղկեդոնի ժողովին եւ մնացել է միաբնակ:

<sup>6</sup> Այս մասին ակտի մանրամասն տես՝ Պավել Չոբանեանի «Հայ-ռուս-վրացական փոխարարութիւնները ժԸ դարի երկրորդ կեսին» աշխատութեան մէջ, (Էջմիածին, 2006):

<sup>7</sup> Գուգարաց լեռներ - Լեռնաշղթա Հայկական լեռնաշխարհում: Հանդիսանում է Աղստեւ և Դեբեդ գետերի ջրբաժանը: Երկարութիւնը՝ մօտ 80 կմ է: Ամենաբարձր գագաթը՝ Չաթին (2244 մ):

<sup>8</sup> Ընդհանուր առմամբ Նուխի և Արեւ գաւառներում 1918-1920 թթ. կողոպտուեց և ավերուեց 53 հայկական գիւղ, 50.000-ից ակտի հայերից գոհ գնացին շուրջ 40.000-ը: Նիւթական կորուստները հասնում էին հարյուրաւոր միլիոնների: Նուխի և Արեւ գաւառներում հայերի կոտորածների և ինքնապաշտպանական մարտերի պատմութեան հանգամանակից քննութիւնը տես՝ Գեորգ Ստեփանեանի՝ «Նուխի և Արեւ գաւառների հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանութիւնը 1918-1920 թթ.», պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման ատենախոսութեան սեղմագիր, Երևան, 1996, տես նաև նոյնի՝ «Նուխի և Արեւ գաւառների հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանութիւնը (1917 թ. դեկտեմբեր-1918 թ. ապրիլ)», «Էջմիածին», 1996, յունուար, էջ 105-124, տես նաև նոյնի՝ «Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեւ գաւառներում 1918-1920 թթ.», «Հայոց ցեղասպանութեան պատմութեան և պատմագրութեան հարցեր», պր. 5, էջ 23-28:

<sup>9</sup> Ումիշլիլի Նոյ - Վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան ղեկաւար գործիչ: Եղել է Վրաստանի Դեմոկրատական Հանրապետութեան առաջին վարչապետը:



<sup>10</sup> Ալազան - Գետ Արեւելյան Կրաստանում: Սկիզբ է առնում Մեծ Կովկաս լեռնաշղթայից, թափվում է Մինգեչաուրի ջրամբարը եւ միանում Քուռին:

<sup>11</sup> Հաւլարար - Հայաբնակ թաղամաս Թիֆլիսում:

<sup>12</sup> Սաբուրթալօ - Թաղամաս Թիֆլիսում:

<sup>13</sup> Թիֆլիսում հրատարակվող (մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը) ռուսալեզու եւ վրացերէն ազդեցիկ թերթեր:

<sup>14</sup> Չաքաթալա - Քաղաք եւ վարչական օգրուկ Անդրկովկասում, Թիֆլիսի եւ Ելիզավետպոլի (Գանձակ) նահանգների հարեւանութեամբ: 1918 թ.-ից Ադրբեջանի կազմում է: Բնակեցուած է աւարներով, ծախուրներով, թաթարներով, հայերով, վրացիներով: Մինչեւ հիմա էլ վրացիները վիճելի են համարում Չաքաթալայի պատկանելութեան հարցը:

<sup>15</sup> Սղնախ - Քաղաք Թիֆլիսի նահանգում: Սղնախի գաւառի կենտրոնը: Հիմնադրել են Արցախից 18-րդ դ. երկրորդ կեսին գաղթած հայերը: Մինչեւ 1930-ական թթ. եղել է հիմնականում հայաբնակ:

<sup>16</sup> Բորչալու - Գաւառ Թիֆլիսի նահանգում: Ընդգրկում էր պատմական Գուգարքի Թռեղք, Տաշիր, Չորափոր, Ծորփոր, Բողփոր, Դմանիս գաւառների տարածքը: Որպէս վարչական միաւոր կազմաւորուել է 1880 թ.: Կենտրոնը հայաբնակ Շուլաւեր գիւղն էր: 1918 թ. գաւառի հարաւային եւ հիւսիս-արեւմտեան մասը բնակեցուած էր հայերով, հիւսիսային մասը՝ հիմնականում թաթարներով:

<sup>17</sup> Աւետիք Շահխաթունիին Գեորգ Խատիսեանի (Ալեքսանր Խատիսեանի եղբայրը) հետ 1917թ. ամռանը Պետերբուրգում ժամանակաւոր կառավարութեանն է ներկայացնում 1916թ. ՀՀԴ Հայաստանի Շրջանային ժողովում առաջարկուած Անդրկովկասեան նոր բաժանումների նախագիծը, ըստ որի Արեւելեան Անդրկովկասը բաժանուում էր հայկական եւ թաթարական մասերի. հայկական մասն ընդգրկում էր Ղազախ, Գանձակ, Ջիվանշիր եւ Շուշի գաւառների լեռնային մասերը, որ հայաբնակ էին, եւ համարեայ ամբողջ Ջանգեզուրը: Գանձակ քաղաքը բաժանուում էր հայկական եւ թաթարական մասերի: Կազմուում էր Ալեքսանդրապոլի նոր նահանգը, որի մէջ մտնում էին Ախալքալաքը, Լոռին եւ Ծալկայի հայկական մասը: Այսպիսով՝ Անդրկովկասի հայկական բաժինը, ըստ այդ նախագծի, բաղկացած էր 4 նահանգներից՝ Երեւան, Գանձակ, Ալեքսանդրապոլ եւ Կարս: (Առաւել մանրամասն տես Шахатунян Аветис. «Административный перделель Закавказкага края», Тифлис, 1918.)

<sup>18</sup> Արշակունիներ - Հայաստանում գահակալած հայկական արքայատոհմ (52-428 թթ.): Անկախութեան պահպանման համար համառ պայքար են մղել Հռոմի եւ Պարսկաստանի դէմ: Տրդատ Գ Արշակունու օրոք 301 թ. Հայաստանում քրիստոնէութիւնը հռչակուել է պետական կրօն: Վռամշապուհ Արշակունու օրոք 405-406 թթ. Մեսրոպ Մաշտոցը ստեղծում է հայոց գրերը:

<sup>19</sup> Մովսես Խորենացի - 5-րդ դարի պատմիչ, միջնադարեան հայ պատմագրութեան խոշորագոյն ներկայացուցիչը: Նրա «Պատմութիւն հայոց»-ը, առաջինն է, ուր ներկայացուում է հայ ժողովրդի պատմութիւնը հնագոյն ժամանակներից մինչեւ հեղինակի ապրած տարիները: Հայ պատմագրութեան մէջ ներմուծել է ժամանակագրութեան գաղափարը: Մ.

Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը երկար դարեր հանդիսացել է դասագիրք, որով կրթուել եւ դաստիարակուել են բազմաթիւ հայ սերունդներ:

<sup>20</sup> Փազտոս Բիւզանդ - 5-րդ դարի պատմիչ, մատենագիր: Նրա «Պատմութիւն Հայոցում» ներկայացուած է Հայաստանի պատմութիւնը Խոսրով Բ Կոտակից (330-338թթ.) մինչեւ Հայաստանի առաջին բաժանումը Պարսկաստանի եւ Բիւզանդիայի միջեւ (387թ.):

<sup>21</sup> Ստրաբոն (թ. ա. 64-թ. հ. 24) - Հին հույն աշխարհագրագետ, պատմագիր: Նրա հեղինակած «Աշխարհագրութիւն» երկի մէջ բազմաթիւ տեղեկութիւններ կան Հայաստանի, հայոց թագավորների վերաբերեալ:

<sup>22</sup> Արագուի - Գետ Արեւելյան Կրաստանում: Քուռի եւ Արագուիի խառնարանը գտնուում է Թիֆլիսից 10 կմ հիւսիս:

<sup>23</sup> Յուրտաւ - Քաղաք Գուգարքի Բողմփոր գաւառում: Եղել է Գուգարքի բղէշների աթոռանիստը: Աւերուել է արաբական արշաւանքների ժամանակ:

<sup>24</sup> Բագրատունիներ - Հայկական հնագոյն նախարարական, հետագայում՝ նաեւ արքայական տոհմ (885-1045 թթ.): Արշակունիների գահակալման տարիներին Հայոց Գահնամակում Բագրատունիները եղել են երկրորդը: Նրանց է վերապահուել թագադիր ասպետութիւն գործակալութիւնը: Բագրատունիների գահակալման տարիներին Հայաստանը հասել է քաղաքական, տնտեսական, մշակութային բարձր զարգացման: Հայ Բագրատունիների մի ճիւղն են կազմում վրաց Բագրատունիները, որոնք զրեթե մեկ հազարամեակ գահակալել են Կրաստանում:

<sup>25</sup> Կիւրիկեան թագավորութիւն - Կոչուել է նաեւ Լոռու կամ Տաշիր-Չորագետի թագաւորութիւն: Կիւրիկեանները, Անիի Բագրատունիներից առանձնանալով, ընդունել են նրանց գերիշխանութիւնը: Թագաւորութիւնը գոյատեւել է 972-1113թթ.: Հիմնականում ընդգրկել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր եւ Չորոփոր գաւառները:

<sup>26</sup> Օրբէլեաններ - Իշխանական տոհմ: Օրբէլ անունն առաջացել է Օրբէթ ամրոցում նրանց հաստատումից հետո: Օրբէլեանները իշխել են Սիւնիքում: 13-րդ դարում Սմբատ եւ Տարասայիճ Օրբէլեանների օրոք նրանց իշխանութիւնը հասել է հզորութեան գագաթնակետին: Օրբէլեանների տոհմից է 13-րդ դ. հայ պատմիչ Ստեփանոս Օրբէլեանը: Օրբէլեանները մինչեւ 12-րդ դարը բարձր դիրք են ունեցել վրաց արքունիքում, ուր վարել են թագադիր ասպետի, ամիրսպասալարի (սպարապետի) պաշտոններ:

<sup>27</sup> Արղութեաններ, Արղութեան-Երկայնաբազուկներ - Հայկական իշխանական տոհմ: Սերել են Չաքարեան իշխանական տոհմից: 1187 թ. ամիրսպասալար (զորքերի գերագույն հրամանատար) Սարգիս Չաքարեան վրաց Գեորգի Գ Բագրատունի թագաւորից ստացել է Երկայնաբազուկ պատանուներ: Մոնղոլների Արղուն խանը 13-րդ դ. վերջին Չաքարեաններին տուել է Արղուն կամ Արղութ պատանուներ, որը համապատասխանում է Երկայնաբազուկ անվանը: Արղութեանները ժառանգել են Լոռու թագաւորութեան տարածքը, որը ժամանակի ընթացքում կրճատուել է:

<sup>28</sup> Ջաքարիա (ծն. թ. անյայտ - 1212) - Հայագգի իշխան, զորավար, պետական-քաղաքական գործիչ վրաց Բագրատունիների արքունիքում: Սարգիս Մեծ երկայնաբազուկի որդին: Թամար թագուհու կողմից ստացել է ամիրսպասալարի պաշտոն: Ղեկավարելով հայ-վրացական միացեալ զորքերը՝ սելջուկների ձեռքից ազատագրել է Ամբերդը, Անին, Բջնին, Դուինը, Սուրմալուն, Բագրեւանդը, Նախճաւանը, Սանազկերտը եւ այլն: Ազատագրուած տարածքներում կազմաւորուել է Ջաքարեանների իշխանապետութիւնը:

<sup>29</sup> Թամար թագուհի - Վրաստանի թագուհի, գահակալել է 1184-1207 թթ.: Նրա օրօք վրաց պետութիւնը հասել է իր հզօրութեան գագաթնակետին: Թամարի գահակալութեան տարիներին նրան մեծապէս նեցուկ են եղել Սարգիս Մեծը, նրա որդիներ Ջաքարէն եւ Իվանէն:

<sup>30</sup> Սանահին - Վանական համալիր ՀՀ Լօռու մարզի տարածքում: Հիմնադրուել է 10-րդ դ. երկրորդ կեսին Աշոտ Գ Ողորմած Բագրատունի թագաւորի կնոջ՝ Խոսրովանոյշի կողմից: Համալիրում ընդգրկուած են երեք եկեղեցի, երկու գաւիթ, գրատուն, զանգակատուն, ճեմարան, դամբարան: Եղել է Կիւրիկեանների վարչական կենտրոնը եւ հոգեւոր առաջնորդանիստը: 10-11-րդ դարերում եղել է կրթամշակութային խոշոր կենտրոն, ունեցել է բարձրագոյն դպրոց՝ Սանահինի համալսարանը: 2001թ.-ից համալիրը ընդգրկուել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային «արժէքների ցուցակում»:

<sup>31</sup> Հաղբատ - Վանական համալիր ՀՀ Լօռու մարզի Հաղբատ գիւղում: Հիմնադրուել է 10-րդ դարում Աշոտ Գ Ողորմած Բագրատունի թագաւորի կնոջ՝ Խոսրովանոյշի կողմից: 10-13-րդ դդ. եղել է խոշոր կրթամշակութային կենտրոն: Յայտնի է եղել Հաղբատի վանքի դպրոցը: 1996թ.-ից համալիրը ընդգրկուել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային «արժէքների ցուցակում»:

<sup>32</sup> Քոբայրի վանք - 12-13 դդ. վանական համալիր ՀՀ Լօռու մարզի հիւսիսային մասում: Վանքը հիմնադրել են Կիւրիկեանները: Հետագայում այն անցել է Ջաքարեանների վրացադաւան ներկայացուցիչներին՝ վերածուելով քաղկեդոնիկ վանքի:

<sup>33</sup> Բարձրաքաշ Ս. Գրիգորի վանք - 10-13-րդ դ. վանական համալիր Լօռու մարզի Դսեղ գիւղից 2 կմ հիւսիս-արեւելք: Կառուցուել է Դսեղի Սամիկոնեանների իշխանական տան ներկայացուցիչների կողմից:

<sup>34</sup> Օձունի եկեղեցի - Օձունի Ս. Աստվածածին եկեղեցի, Խաչզունդ եկեղեցի, կառուցուել է 8-րդ դարում Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսի կողմից:

<sup>35</sup> Խօսքը վերաբերում է Լօռու Դսեղ գիւղում պահպանուող Սամիկոնեանների տոհմական գերեզմանատանը (10-13-րդ դդ.)

<sup>36</sup> Վարդան Մամիկոնեան - Արշակունեաց Հայաստանի, ապա՝ Սարգսյանական Հայաստանի սպարապետ (422-451): Ղեկավարել է 450-451թթ. ազատագրական պատերազմը (Վարդանանց պատերազմը) Պարսկաստանի դէմ: Ձոհուել է 451թ. մայիսի 26-ին Աւարայրի ճակատամարտի ժամանակ:

<sup>37</sup> Դավիթ Անհողին (ծ. թ. անյայտ - 1048) - Տաշիր-Ձորագետի (Լօռու) թագաւոր 996 թ.-ից: Կառուցել է Լօռու նշանաւոր բերդը: 1001 թ. ըմբոստացել է գերագահ Գագիկ Ա Բագրատունի թագաւորի դէմ, պարտութիւն է կրել եւ կորցրել բոլոր տիրոջները, որի պատճառով կոչուել է Անհողին: Կրկին ընդունելով Գագիկ Ա-ի գերագահութիւնը՝ վերստացել է իր իշխանութիւնը: Երկար ժամանակ պայքար է մղել Հայաստանի հիւսիսին սպառնացող ամիրայութիւնների դէմ:

<sup>38</sup> Յովհաննէս Օձնեցի, Հովհան Իմաստասէր (ծ. թ. անյայտ - 728) - Անենայն Հայոց կաթողիկոս 717թ.ից, փիլիսոփա: Հայ առաքելական եկեղեցու սրբերից է:

<sup>39</sup> Գրիգոր Մագիստրոս Պահլաւունի (998-1058) - Հայ գիտնական, բանաստեղծ, փիլիսոփա, պետական եւ ռազմական գործիչ: Իր հորեղբոր՝ սպարապետ Վահրամ Պահլաւունու հետ պայքարել է Բագրատունիների գահի ամրապնդման համար: Անիի անկումից յետոյ (1045թ.) Բիւզանդական կայսեր կողմից ստացել է մագիստրոսի տիտղոս եւ նշանակուել Հարավային Հայաստանի եւ Միջագետքի կուսակալ: Ճնշել է Թոնդրակեան շարժումը: Գրիգոր Մագիստրոսը Միջնադարեան Հայաստանի միակ աշխարհական փիլիսոփան է: Հիմնադրել է ճեմարան, որն իր հետ շրջագայել է Հայաստանի գաւառներով:

<sup>40</sup> Բակրածէ Դմիտրի (1826-1890)- վրացի պատմաբան, ազգագրագետ, հնագէտ: Համալքել է Վրաստանի պատմութեան վերաբերեալ աղբիւրներ, գրաւոր յուշարձաններ: Գրել է Վրաստանի պատմութեանը եւ հնագիտութեանը նուիրուած ուսումնասիրութիւններ:

<sup>41</sup> Բրոսէ Սարի (1802-1880) - Ֆրանսիացի արեւելագետ, աղբիւրագետ: 1847-1847 թթ. ճանապարհորդել է Հայաստանում եւ Վրաստանում, հաւաքել եւ հրատարակել է վիճաբանական եւ վավերագրական նիւթեր: Ֆրանսերէն թարգմանել եւ ծանոթագրութիւններով հրատարակել է Թովմա Արծրունու, Ստեփանոս Օրբէլեանի, Կիրակոս Գանձակեցու, Առաքել Դավրիժեցու, Եսայի Հասան-Ջալալեանի եւ այլոց երկերը: Ուսումնասիրութիւնները վերաբերում են հայկական եւ վրացական հնագիտական հուշարձաններին, արձանագրութիւններին, դրամներին եւ մատենագրութեանը:

<sup>42</sup> Տես՝ «Կովկասեան Տարեցոյց», 1912, 1913 թթ: (*Ծանոթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>43</sup> «Բորբա», 21 Յունիսի, 1917թ., թ. 39: (*Ծանոթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>44</sup> Ուսաստանի աշխարհագրութեան մէջ Ջաքաթալա, Բաթում եւ Սուխում նահանգները կոչուում են շրջաններ (օբլաստ): Սենք շրջանի փոխարէն նահանգ բառն ենք դնում մեր աշխարհագրական բաժանումների մէջ անհարկի բարդութիւն չստեղծելու համար: (*Ծանոթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>45</sup> Այստեղ, անշուշտ, խօսքը վերաբերում է Բորչալու գաւառի եւ Ջաքաթալա նահանգի այն մասերին, որոնց բնակիչները վրացիներ չեն: (*Ծանոթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>46</sup> Աւալով Ջուրաբ - Վրաց յայտնի հասարակական եւ քաղաքական գործիչ, պատմաբան: 1918թ. եղել է Բաթումի բանակցությունների մասնակցող վրացական պատվիրակության խորհրդական: Վրաստանի խորհրդայնացումից հետո անցել է արտասահման: Փարիզում 1924թ. հրատարակել է «Վրաստանի անկախությունը միջազգային քաղաքականության մեջ 1918-1921թթ. յիշողություններ, ակնարկներ» գիրքը:

<sup>47</sup> Անդրկովկասեան յատուկ (առանձին) կոմիտեն (ռուսերեն հապաւումով՝ ՕԶԱԿՈՍ), ստեղծուել է 1917 թ. մարտի 9-ին, որի ձեռքն է անցել Անդրկովկասի իշխանությունը՝ լուծարուած Կովկասի փոխարքայութեան փոխարեն: Կոմիտեի նախագահը կաղետ Վ. Խառլամովն էր: Հայերից կոմիտեի կազմում ընդգրկուել էր կաղետ Միքայէլ Պապաջանովը: Կոմիտեի մէջ էին նտնում նաեւ կաղետներ Մ. Ջաֆարովը, Պ. Փերեւերզեւը, սոցիալ-ֆեդերալիստ Կ. Աբաշիձեն, յետագայում վրաց մենշևիկների դժգոհութիւնից յետոյ ժամանակաւոր կառավարութիւնը Պ. Փերեւերզեւի փոխարեն կոմիտեի կազմում ընդգրկեց սոցիալ-դեմոկրատ Ա. Հիւսեյնեւուն: 1917թ. նոյեմբերի 15-ին Անդրկովկասեան կոմիտեի արտաքին ստեղծումով Անդրկովկասեան հատուկ կոմիտեն դադարեց գոյութիւն ունենալ:

<sup>48</sup> Նաւթուղ - երկաթուղային կայարան Թիֆլիսից հարավ: Այժմ՝ ծայրամասային թաղամաս Թբիլիսիում:

<sup>49</sup> 1918թ. յունիսից մինչեւ 1919թ. գարուն ընկած ժամանակամիջոցում Բակուրիանիի անտառներում, Ծալկայի եւ Մանգիլիսիի շրջաններում ապաստանած հայ գաղթականներից մահանում է շուրջ 40000-ը (85000-ից):

<sup>50</sup> 1918թ. մայիսի 28-ին Վրաստանի անխախտացումից երկու օր անց Փոթիում Գերմանական կայսերական կառավարութիւնը ի դէմս թագաւորական-բաւարական զենեւալ-մայոր ֆոն Լոսովի եւ Վրաստանի կառավարութիւնը՝ ի դէմս արտաքին գործոց նախարար Ակակի Չիւենկեւու, կնքեցին վրաց-գերմանական ժամանակաւոր համաձայնութիւն, ըստ որի Գերմանիան ճանաչում էր Վրաստանի անկախութիւնը եւ իրաւունք ստանում մինչեւ պատերազմի աւարտը վերահսկելու Վրաստանի երկաթուղիներն ու նավահանգիստները (տես՝ Զ. Աւալով, «Վրաստանի անկախութիւնը միջազգային քաղաքականութեան մէջ 1918-1921թթ. յիշողություններ, ակնարկներ», Փարիզ, 1924, էջ 65-69):

<sup>51</sup> Ահարոնեան Աւետիս (1866-1948) - Պետական, հասարակական-քաղաքական ակամաւոր գործիչ, գրող, ՀՀԳ անդամ: Ծնուել է Իզդրիում: Սովորել է Էջմիածնի Գեորգեան ճեմարանում, Լոզանի եւ Սորբոնի համալսարաններում: Չբաղուել է ուսուցչութեամբ, 1907-1909թթ. եղել է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի տնօրենը: 1907թ. Հասագայի խորհրդաժողովում ներկայացրել է Հայկական հարցի լուծման խնդրագիրը: 1909-1911թթ. բանտարկուել է «Դաշնակցութեան գործով»: 1917թ. ընտրուել է Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նախագահ, 1919-1920 թ. եղել է Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի նախագահը: Ղեկավարել է ՀՀ պատուիրակութիւնը Փարիզի հաշտութեան խորհրդաժողովում (1919-1920): ՀՀ անունից

ստորագրել է 1920 թ. Սեւրի հաշտութեան պայմանագիրը: Մասնակցել է 1921թ. Լոնդոնի եւ 1922-1923թթ. Լոզանի խորհրդաժողովներին, ջանքեր գործադրել Հայդատի լուծմանը նպաստելու ուղղութեամբ: Թողել է հարուստ գրական ժառանգութիւն: Մահացել է Ֆրանսիայում:

<sup>52</sup> Խատիսեան Ալեքսանդր (1876-1945) - Պետական, հասարակական-քաղաքական գործիչ, բժիշկ, ՀՀԳ անդամ: Ծնուել է Թիֆլիսում: Ավարտել է Թիֆլիսի պետական գիմնազիան, սովորել է Մոսկուայի եւ Խարկովի համալսարաններում: 1909-1917թթ. եղել է Թիֆլիսի քաղաքապետը, 1915-1917թթ. Հայոց ազգային բիւրոյի փոխնախագահ, 1917-1918թթ. Հայոց ազգային խորհրդի անդամ, Անդրկովկասի Դաշնային ժողովրդավարական Հանրապետութեան ֆինանսների նախարար (1918թ. ապրիլ-մայիսին): Մասնակցել է 1918թ. Թուրքիայի հետ վարուող Տրապիզոնի եւ Բաթումի բանակցութիւններին: 1918թ. նոյեմբերից եղել է ՀՀ արտաքին գործերի նախարար, 1919թ. յունիսից մինչեւ 1920թ. մայիսը՝ վարչապետ, 1920թ.-ից՝ վտարանդի: Գրել է «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» արժէքաւոր յուշագրութիւնը: Մահացել է Փարիզում:

<sup>53</sup> Քաջազնունի Յովհաննէս (Իզիթխանեան, Տեր-Յովհաննիսեանց) (1868-1938) - Պետական, հասարակական-քաղաքական ակամաւոր գործիչ, ճարտարապետ: Ծնուել է Ջաւախքի Գանձա գիւղում: Աւարտել է Սանկտ-Պետերբուրգի ճարտարագետների ինստիտուտը, Մոսկուայի համալսարանը: Չբաղուել է ճարտարապետական-նախագծային աշխատանքներով: 1917թ. ընտրուել է Հայոց ազգային խորհրդի պատգամաւոր: Եղել է Անդրկովկասեան Սէյմի պատգամաւոր, Անդրկովկասի Դաշնային ժողովրդավարական Հանրապետութեան խնամատարութեան նախարար (1918թ. ապրիլ-մայիսին), Հայաստանի առաջին Հանրապետութեան առաջին վարչապետ: Հայաստանում խորհրդային իշխանութեան հայտատումից յետոյ ձերբակալուել է: Փետրուարեան ապստամբութեան շնորհիւ ազատուել է բանտից: 1921-1924թթ. ապրել է Բուխարեստում: 1925 թ. վերադարձել է Հայաստան: 1937թ. բռնադատուել է եւ բանտում մահացել:

<sup>54</sup> Կարճիկեան Խաչատուր (1882-1918) - Պետական, քաղաքական ակամաւոր գործիչ, ՀՀԳ անդամ: Ծնուել է Վաղարշապատում: Սովորել է Էջմիածնի Գեորգեան ճեմարանում, Ս. Պետերբուրգի համալսարանում: Առաջին աշխարհամարտի տարիներին եղել է հայկական կամաւորական շարժման կազմակերպիչներից մէկը: 1917թ. նոյեմբերին եղել է Անդրկովկասեան կոմիտեի արտաքին ֆինանսների նախարար, 1918թ. փետրուարին՝ Անդրկովկասեան Սէյմի պատգամաւոր: Դէմ է եղել Բրեստ-Լիտովսկի պայմանագրին եւ Տրապիզոնի բանակցութիւնների ժամանակ պնդել է չընդունել թուրքերի պահանջները: 1918թ. յունիսից Հայաստանի առաջին Հանրապետութեան ֆինանսների նախարար: Անտէղի մեղադրուել է վրացամէտ քաղաքականութիւն վարելու եւ Կարսը թուրքերին հանձնելու քաղաքականութեան մէջ, սպանուել է իր աշխատասենեակում:

<sup>55</sup> Խատիսեան Գեորգ (1879-1935) - Պետական հասարակական գործիչ, իրավաբան, ՀՀԳ անդամ: Ծնուել է Թիֆլիսում: Աւարտել է Մոսկուայի համալսարանը: 1911 թ. Պետերբուրգում նշանակուել է Յովհաննէս

Թումանյանի դատապաշտպանը (նրա դստեր՝ Աշխենի ամուսինն էր), 1912թ.-ին եղել է «Ռաշնակցութեան գործի» դատապաշտպաններից: 1919թ. նշանակուել է Հայաստանի առաջին Հանրապետութեան կառավարութեան գործերի կառավարիչ, ընտրուել է Խորհրդարանի անդամ: Հայաստանի Խորհրդայնացումից յետոյ եղել է Թիֆլիսի համալսարանի դոցենտ: Զոհուել է վթարից:

<sup>56</sup> Ղորղանեան Գաբրիել (1880-1954) - Ռուսական բանակի զենեղալ-մայոր: Գործուն մասնակցութիւն է ունեցել Առաջին աշխարհամարտի Կովկասեան ռազմաճակատի գործողութիւններին: 1919թ. եղել է ՀՀ զինուորական կցորդը Փարիզի հաշտութեան կոնֆերանսում (1919-1920): Հայաստանի առաջին Հանրապետութեան անկումից յետոյ հաստատուել է Փարիզում, որտեղ հրատարակել է «Հայերի մասնակցութիւնը առաջին համաշխարհային պատերազմին Անդրկովկասեան ռազմաճակատում (1914-1918թթ.)» արժէքաւոր յուշագրութիւնը: Թաղուած է Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը:

<sup>57</sup> Ծերեթելի Իրակլի (1882-1959) - Վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան ղեկավար գործիչ: Եղել է Ռուսական II Պետական դումայի պատգամաւոր, Ժամանակաւոր կառավարութեան կազմում փոստ-հեռագրի նախարար, Վրաստանի դեմոկրատական հանրապետութեան կառավարութեան անդամ:

<sup>58</sup> Nec plus ultra - Այլ ոչ աւելի (լատ.):

<sup>59</sup> Այժմ պարզուած է, որ Գերմանիան այդպիսի յանձնառութիւն չէ ստանձնել Վրաստանի վերաբերմամբ, այլ զերմանական ներկայացուցիչ զորավար Ֆոն Լոսովը Չիւենկելիի խնդրանքով եւ թելադրութեամբ 1918 թ. Մայիս 28-ին վրաց կառավարութեանը գաղտնի մի նամակ էր գրել, որի մէջ նա, ի միջի այլոց, յանձն է առնում ամեն ջանք ի գործ դնել, որպէսզի Գերմանիան օգնի Վրաստանին նրա սահմանների ապահովութեան գործուն եւ աջակցի նրան հարեւան պետութիւնների հետ յարաբերութիւններ ճշտելիս: Այդ նամակում Վրաստանի սահմանների մասին ընդհանուր յիշատակութիւն կայ, որից երեւում է, որ Թիֆլիսի նահանգը նրա մասն է կազմում: (Տես՝ Զ. Աւալով, «Վրաստանի անկախութիւնը միջազգային քաղաքականութեան մէջ, էջ 68):

(*Ծանօթագրութիւնը հեղինակին է - Խ. Ս.*):

<sup>60</sup> Sic - Այսպէս է (լատ.):

<sup>61</sup> Տիգրանեան Սիրական (1875-1938) - Պետական գործիչ, իրաւաբան, հոգեբան: Ծնուել է Ալեքսանդրապոլում: Սովորել է Թիֆլիսի գիմնազիայում, աւարտել է Մոսկուայի համալսարանը: Գերգեան ճեմարանում դասաւանդել է իրաւունքի պատմութիւն, հոգեբանութիւն, տրամաբանութիւն: Ռուսական Պետական դումայի պատգամաւոր (որպէս ՀՀԴ թեկնածու): 1918-1919թթ. ՀՀ արտաքին գործերի նախարար: Եղել է ԵՊՀ հիմնադիրներից մեկը: Հրատարակել է «Հին հայկական կանոնագիրք» աշխատութեան 1-ին հատորը (2-րդ հատորը անտիպ է): 1921-1923թթ. եղել է ԵՊՀ հասարակագիտութեան ֆակուլտետի ղեկան: Մահացել է Երեւանում:

<sup>62</sup> Ղարաքիլիսէ - Քաղաք Երեւանի նահանգի Երեւանի գաւառում: Այժմ՝ Վանաձոր, ՀՀ Լոռու մարզկենտրոնը:

<sup>63</sup> Ռեկվիզիտիոն - Քաղաքացիների անձնական գույքը բռնագրաւող պետական պաշտոնայ:

<sup>64</sup> Էքսցես - Հասարակական կարգի խանգարում, միջադէպ:

<sup>65</sup> Գեգեչկորի Եվգենի (1881-1954) - Վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան ղեկավար գործիչ: Եղել է Ռուսական III Պետական դումայի պատգամաւոր (1907-1912) , 1917թ. փետրուարից մինչեւ նոյեմբեր Անդրկովկասեան յատուկ կոմիտէի անդամ, 1917թ. նոյեմբերից՝ Անդրկովկասեան կոմիսարիատի նախագահ, 1918թ. մայիսից Վրաստանի դեմոկրատական Հանրապետութեան արտաքին գործերի նախարար: 1921 թուականից վտարանդի: Մահացել է Ֆրանսիայում:

<sup>66</sup> Չիւենկելի Ակակի (1881-1954) - Վրաց սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան ղեկավար գործիչ: Եղել է Ռուսական IV Պետական դումայի պատգամաւոր (1912-1917), 1917թ. փետրուարից Ժամանակաւոր կառավարութեան կոմիսար Անդրկովկասում, Անդրկովկասեան յատուկ կոմիտէի անդամ: 1918թ. ապրիլին հաստատուել է Անդրկովկասի Ժամանակաւոր կառավարութեան նախագահ, գլխաւորել է անդրկովկասեան պատուիրակութիւնները Տրապիզոնի եւ Բաթումի բանակցութիւններում: Եղել է Վրաստանի դեմոկրատական Հանրապետութեան արտաքին գործերի նախարար, Վրաստանի դեսպանորդը Փարիզում: 1921 թուականից վտարանդի: Մահացել է Ֆրանսիայում:

<sup>67</sup> Consultation en bonne forme – Լաւ ձևով խորհրդատուութիւն (լատ.):

<sup>68</sup> Հեղինակը, հաւանաբար, նկատի ունի հայ-վրացական պատերազմից յետոյ երկկողմ պատուիրակութիւնների կողմից Թիֆլիսում 1919 թ. յունուարի 9-17-ը գումարած խորհրդաժողովը, որը նախագահում էր բրիտանական բանակի գնդապետ Ստիւարտը: Խորհրդաժողովին հայկական կողմից մասնակցում էին Ս. Յարութիւնեանը, Ս. Մամիկոնեանը, զենեղալ Ն. Ղորղանեանը, Ս. Խաչատրեանը, Գ. Տեր Խաչատրեանը եւ Ա. Խոնդկարեանը: Խորհրդաժողովի վրացական պատուիրակութեան մէջ էին մտնում Ե. Գեգեչկորին, Ն. Ռամիշվիլին, Ե. Ժուրուլին, զենեղալ Գեղեւանովը, Կ. Սաբախբարիշվիլին, Կ. Կանդելակին, Ա. Մոլիվանին եւ զնդապետ Ջափարիձէն: Խորհրդաժողովում քննարկում է միայն սահմանային հարցը: Յունուարի 17-ին կնքուած համաձայնագրով Ժամանակաւորապէս յստակեցում են միջպետական սահմանները, ստեղծում է Լոռու «չէզոք գօտին»: Կողմերի պատուիրակութիւնները հետագայում եւս՝ մինչեւ 1919թ. մարտամիսը հանդիպում եւ քննարկում էին միջպետական փոխյարաբերութիւնների այլ հարցեր:

<sup>69</sup> Վարանդեան Միքայիլ (Յովհաննիսեան) (1870-1934) - Հայ ազգային ազատագրական շարժման ականաւոր գործիչ-գաղափարախօս, հրապարակախօս, պատմաբան, փիլիսոփայ, ՀՀԴ անդամ: Ծնուել է Շուշիի գաւառում: Աւարտել է Շուշիի ռեալական դպրոցը, Ժնեւի համալսարանը: Հիմնականում գործել է Երոպայում: Աջակցել է ֆրանսերէն լեզուով հրատարակուող «Պրո Արմենիա» երկշաբաթաթերթի հրատարակմանը:

1907թ.-ից եղել է ՀՀԴ ներկայացուցիչը Բ Ինտերնացիոնալում, Հայաստանի առաջին Հանրապետության Խորհրդարանի պատգամաւոր, ՀՀ դիւանագիտական ներկայացուցիչը Հռոմում: Հեղինակել է «Հայաստանը և Հայկական հարցը» (Ֆրանսերէն), «Հայ-վրացական կոնֆլիկտը և Կովկասեան պատերազմը» (Ֆրանսերէն), «ՀՀԴաշնակցութեան պատմութիւն», աշխատութիւնները: Մահացել է Ֆրանսիայում:

<sup>70</sup> Կոնիւնկտուրա - իրավիճակ, իրադրութիւն:

<sup>71</sup> Հեղինակը, հավանաբար, նկատի է ունեցել այն հանգամանքը, որ Վրաստանի նշալ ու որոշ այլ շրջաններում հայերը բացարձակ մեծամասնութիւն են կազմել, սակայն Սղնախում կան թիֆլիսում ինքնավարութիւն պահանջելը անիրական է համարում:

<sup>72</sup> Տիրոլ - Պատմական մարզ Եւրոպայում, Ալպերում: Տարբեր ժամանակաշրջաններում գտնվել է Հաբսբուրգների, Բավարիայի, Իտալական թագավորութեան, Աւստրիայի կազմում: 1919թ. Սէն-ժերմենի պայմանագրով բաժանուել է Իտալիայի եւ Աւստրիայի միջեւ: Այժմ Տիրոլի իտալական մասում գերմանացիները թեւ փոքրամասնութիւն են կազմում, սակայն ունեն ինքնավար կարգավիճակ:

<sup>73</sup> Անդրկովկասեան Կոմիսարիատ - Անդրկովկասի Դաշնային Հանրապետութեան կառավարութիւնը, կազմաւորուել է 1917թ. նոյեմբերին՝ փոխարինելով Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութեան կողմից կեանքի կոչուած Անդրկովկասեան յատուկ կոմիտէին: Անդրկովկասեան կոմիսարիատի նախագային էր վրացի սոցիալ-դեմոկրատ Եվգենի Գեգեչկորին: Հայերից կոմիսարիատի կազմում եղել են ՀՀԴ ներկայացուցիչներ Համօ Օհանջանեանը (հանրային խնամատարութեան նախարար) և Խաչատուր Կարճիկեանը (ֆինանսների նախարար): Անդրկովկասեան կոմիսարիատը գումարել է Անդրկովկասյան սէյմը՝ Անդրկովկասի խորհրդարանը: 1918թ. մարտի 26-ին Անդրկովկասեան ժամանակաւոր կառավարութեան ստեղծումով դադարել է գոյութիւն ունենալ:

<sup>74</sup> Խօսքը 1918 թ. մարտի 3-ի Բրեստ Լիտովսկի պայմանագրի մասին է: Պայմանագիրը ստորագրուել է Խորհրդային Ռուսաստանի եւ Քառեակ միութեան (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա, Թուրքիա) միջեւ: Պայմանագրի 4-րդ յօդուածի համաձայն Ռուսաստանը պարտաւորուել էր իր զորքերն անյապաղ դուրս բերել Կարսից, Արտահանից, Բաթումից:

<sup>75</sup> Խոսքը Տրապիզոնում 1918թ. ապրիլին տեղի ունեցած բանակցութիւնների մասին է: Անդրկովկասեան կոմիսարեատը, մերժելով մասնակցել Բրեստ-Լիտովսկի բանակցութիւններին եւ չընդունելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի Անդրկովկասի վերաբերեալ կէտերը, որոշեց առանձին բանակցել Թուրքիայի հետ: Բանակցութիւնների ընթացքում ակնկալուել էր լուծել Թուրքիայի եւ Անդրկովկասի յարաբերութիւնները (առաջին հերթին սահմանային հարցերը): Թուրքական կողմի առաջադրած ծայրահեղ պահանջների, ինչպէս նաեւ անդրկովկասեան կողմի ոչ միասնական դարեւորման պատճառով

Տրապիզոնի բանակցութիւնները ընդհատուել եւ յետոյ շարունակուել են Բաթումում:

<sup>76</sup> Տե՛ս «Անդրկովկասի եւ Վրաստանի Անկախութեան Քաղաքականութեան Վերաբերեալ Վաւերագրեր եւ Նիւթեր», էջ 164: (*Ծանոթագրութիւնը հեղինակիցն է - Խ. Ս.*):

<sup>77</sup> Անդրկովկասեան սէյմ - Իշխանութեան օրենսդիր մարմին Անդրկովկասում: Գումարուել է 1918թ. փետրուարի 23-ին Անդրկովկասեան կոմիսարիատի կողմից: Վարել է Անդրկովկասի դաշնային հանրապետութեան ներքին եւ արտաքին քաղաքականութիւնը: 1918թ. ապրիլի 22-ին Անդրկովկասը հայտարարել է անկախ պետութիւն (թուրքերի պահանջով): 1918թ. մայիսի վերջին Անդրկովկասեան հանրապետութիւնների անկախացումով Սէյմը ինքնալուծարուել է: Սէյմի նախագահն էր վրացի սոցիալ-դեմոկրատ Ա. Չխենկելին:

<sup>78</sup> Սէյմում Անդրկովկասի անկախութեան հարցի քննարման ժամանակ Դաշնակցութեան անունից խօսք ասողը եղել է Յովհաննէս Քաջագունին, ով Սէյմի ամբիոնից բառացիորեն հնչեցրել է հետեւեալը. «Պարոնայք Սէյմի անդամներ: Դաշնակցութեան ֆրակցիան՝ գիտակցելով շատ պարզ այն մեծ պատասխանատուութիւնը, որ առնում է իր վրայ այս պատմական վայրկեանին, միանում է ինքնուրոյն Անդրկովկասեան պետութեան վայտարարութեանը» (տե՛ս Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Երեւան 1993, էջ 109):

<sup>79</sup> Խալիլ Բէյ - Երիտթուրք գործիչ, 1918 թ. Բաթումի թուրք-անդրկովկասեան բանակցութիւններում թուրքական պատուիրակութեան ղեկավար: Եղել է Թուրքիայի արդարադատութեան նախարար, ժամանակաւորապէս նաեւ՝ արտօթօճնախարար:

<sup>80</sup> Կարաբուրում - Գիւղ էջմիածնի գաւառում: Այժմ՝ Քարակերտ, ՀՀ Արագածոտնի մարզում, նախկին Թալինի շրջանում:

<sup>81</sup> Ջալալօղլի - Գիւղ Թիֆլիսի նահանգի Բորչալու գաւառում: Այժմ՝ Ստեփանաւան, քաղաք ՀՀ Լոռու մարզում, նախկին Ստեփանաւանի շրջանի կենտրոնը:

<sup>82</sup> Գէօրջիտուշ - Գիւղ Ալեքսանդրապոլի գաւառում: Այժմ՝ Սարալանջ, ՀՀ Լոռու մարզում, նախկին Սպիտակի շրջանում

<sup>83</sup> Աւդիբէկ - Գիւղ Ալեքսանդրապոլի գաւառում: Այժմ՝ Ծաղկաբէր, ՀՀ Լոռու մարզում, նախկին Սպիտակի շրջանում:

<sup>84</sup> Ալագեօզ - Գիւղ էջմիածնի գաւառում: Այժմ՝ Արագած, ՀՀ Արագածոտնի մարզում, նախկին Թալինի շրջանում:

<sup>85</sup> Դրօ (Դրաստամատ Կանայեան) (1883-1956) - Դաշնակցական ռազմական յայտնի գործիչ: Ծնուել է Իգդիրում: Առաջին աշխարհամարտի տարիներին եղել է հայկական կամուրակայն երկրորդ գնդի հրամանատարը: 1918թ. մայիսին ղեկավարել է Բաշ-Ապարանի հերոսամարտը: Հայաստանի առաջին Հանրապետութեան վերջին կառավարութեան կազմում եղել է զինուորական նախարար: Մահացել է Բոստոնում:

<sup>86</sup> Դուքբեանդ - Այժմ լքուած գիւղ ՀՀ Արագածոտնի մարզում, նախկին Ծաղկահովտի շրջանում: Ապարան քաղաքից 15կմ հիւսիս-արեւմուտք: Լքուել է 1949-1950թթ.:

<sup>87</sup> Թովմաս Նազարբեգեան (1855-1931) - Ռազմական գործիչ, գեներալ լեյտենանտ: Ծնունդ է թիֆլիսում: Աւարտել է Մոսկուայի Ալեքսանդրովեան զինուորական վարժարանը: Առաջին աշխարհամարտի տարիներին կռուել է կովկասեան ռազմաճակատում: 1917թ. նշանակուել է Հայկական առանձին բանակային կորպուսի հրամանատար: Ելել է 1918թ. մայիսեան հերոսամարտերի ընդհանուր հրամանատարը: Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներին եղել է ռազմական խորհրդի նախագահ: Հայաստանում խորհրդային իշխանութիւն հաստատուելուց յետոյ արտրուել է Ռուսաստան: Ազատուելուց յետոյ բնակուել է Թիֆլիսում, ուր եւ մահացել է:

<sup>88</sup> Համանլու - Գիւղ Երեւանի նահանգում: Այժմ՝ Սպիտակ, քաղաք ՀՀ Լոռու մարզում, նախկին Սպիտակի շրջանի վարչական կենտրոնը:

<sup>89</sup> Բզովդալ - Լեռնամայր Բազումի լեռնաշղթայի արեւելեան մասում, այժմ՝ Պուշկինի լեռնանցք: Նաեւ գիւղ Ալեքսանդրապոլի գաւառում: Այժմ՝ Բազում, ՀՀ Լոռու մարզում, նախկին Գուգարքի շրջանում:

<sup>90</sup> Մայմեխ - Լեռ Հայկական լեռնաշխարհում, Փամբակի լեռնաշղթայի միջնամասում, ՀՀ Լոռու եւ Կոտայքի մարզերի սահմանազխիսն: Բարձրութիւնը՝ 3081 մ:

<sup>91</sup> Խան Խոյսկի - Մուսաֆաթական Ադրբեջանի վարչապետը, 1918թ. Շուշիի հայութեան ջարդերի կազմակերպիչը: 1920 թ. Թիֆլիսում ահաբեկուել է հայ վրիժառու Ա. Երկանեանի կողմից:

<sup>92</sup> General Korganoff: La participation des Armenien a la Mondiale, 1927, էջ 78: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>93</sup> Օդեշլիձէ Իլյա - Վրացի գեներալ: Անդրկովկասեան Սէյմի օրերին եղել է Անդրկովկասի ռազմական նախարար: Աչքի է ընկել հակահայ կեցուածքով:

<sup>94</sup> Աւալով Չ. «Վրաստանի անկախութիւնը ...», էջ 57-62: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*): է

<sup>95</sup> Այս խոստումները մասամբ ձեւակերպուած են այն համաձայնագրերի մէջ, որոնք կազմուեցին Փոթիում Մայիս 28-ին: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>96</sup> Խաթունարխ - Խաթունարխ Վերին, Խաթունարխ Ներքին: Գիւղեր Էջմիածնի գաւառում: Այժմ՝ համապատասխանաբար Ակնաշէն, Գայ, ՀՀ Արմավիրի մարզում, նախկին Էջմիածնի շրջանում:

<sup>97</sup> Չոբանքեարա - Գիւղ Երեւանի նահանգի Երեւանի գաւառում: Հետագայում ապաբնակեցուել է: Գիւղատեղին գտնուում է ՀՀ Արարատի մարզի Հովտաշատ գիւղի մոտակայքում, նախկին Մասիսի շրջանում:

<sup>98</sup> Նէչիլու, Նէջիլու - Գիւղ Երեւանի նահանգի Երեւանի գաւառում: Այժմ Սայաթ-Նովա, ՀՀ Արմավիրի մարզում, նախկին Մասիսի շրջանում:

<sup>99</sup> Թազաքեանդ - Գիւղ Երեւանի նահանգի Էջմիածնի գաւառում: Խորհրդային տարիներին լքուել է: Գյուղատեղին գտնուում է այժմեան ՀՀ Արարատի մարզի Հայանիստ գիւղի մոտակայքում, նախկին Մասիսի շրջանում:

<sup>100</sup> Աղամազու - Գիւղ Երեւանի նահանգի Երեւանի գաւառում: Այժմ՝ Մարմարաշէն, ՀՀ Արարատի մարզում, նախկին Մասիսի շրջանում:

<sup>101</sup> Das ist Gemein, das ist Schweinerei - Գերմաներեն բառացի քարգմանաբար՝ սա ստորություն է, սա խոզութիւն է:

<sup>102</sup> Չենսկի սբոր - Տեղական հարկի տեսակ Յարական Ռուսաստանում:

<sup>103</sup> Մամիկոնեան Ստեփան - Հայ ազգային պետական-քաղաքական գործիչ, անկուսակցական: 1916 թ. եղել է Մոսկուայի Հայկական կոմիտէի նախագահ, 1917թ. Հայոց Ազգային խորհրդի անդամ, 1918-1919թթ. հայկական պատուիրակութեան կազմում մասնակցել է հայ-վրացական բանակցութիւններին, 1919 թ. եղել է պատուիրակութեան նախագահը: Մահացել է Թիֆլիսում, ծայր աստիճան առքատութեան մէջ: Հրաժարուել է բոլշեւիկների աջակցութիւնից:

<sup>104</sup> «Արձանագրութիւն յատուկ խորհրդակցութեան 1919 թ. սեպտեմբեր 17-ի նիստի»: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>105</sup> Վերսկիե Սպուսկի - Վերայի Ջառիթափ՝ փողոց Թիֆլիսում:

<sup>106</sup> Անդրկովկասեան թղթադրամ:

<sup>107</sup> Աբասթունան - Բնակավայր Թիֆլիսի նահանգի Ախալցխայի գաւառում: Այժմ՝ Վրաստանի Սամցխե-Ջավախք տարածաշրջանի Ադիգենի շրջանում: Շրջապատուած է խիտ անտառներով, ունի տաք հանքային աղբիւրներ և առողջարար կլիմա: Հայտնի են Աբասթունանի բուժիչ բաղնիքները:

<sup>108</sup> Կոջոր - Բնակավայր Թիֆլիսի նահանգի Թիֆլիսի գաւառում: Այժմ՝ Վրաստանի Քուէնո-Քարթլի տարածաշրջանի Գարդաբանի շրջանում, Թբիլիսիից արեւմուտք: Շրջապատուած է խիտ անտառներով, ունի առողջարար կլիմա:

<sup>109</sup> Բակուրեան - Բնակավայր Թիֆլիսի նահանգի Գորիի գաւառում: Այժմ՝ Վրաստանի Բորժոմի շրջանում: Շրջապատուած է խիտ անտառներով, ունի առողջարար կլիմա: 1918 թ. աշնանը Բակուրեանի անտառներում սովից եւ համաճարակից կտորովեցին թուրքական յաթաղանից մազապուրծ եղած հազարաւոր ջավախքահայեր, որոնց Վրաստանի իշխանութիւնները թոյլ չտուեցին շարժուել երկրի խորքը:

<sup>110</sup> Մարց - Գիւղ Թիֆլիսի նահանգի Բորչալու գաւառում: Այժմ՝ ՀՀ Լոռու մարզում, նախկին Թումանեանի շրջանում: Շրջապատուած է անտառներով: Գիւղի շրջակայքում կան բազմաթիվ պատմաճարտարապետական յուշարձաններ:

<sup>111</sup> «Արձանագրութիւն յատուկ խորհրդակցութեան 1919 թ. սեպտեմբեր 17-ի նիստի»: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>112</sup> Օհանջանեան Հանո (1874-1947) - Պետական եւ քաղաքական գործիչ, ՀՀԳ կուսակցութեան անդամ: Ծնունդ է Ախալքալաքում: Սովորել է Թիֆլիսի գիմնազիայում, Մոսկուայի համալսարանի բժշկական ֆակուլտետում, ժնեւի համալսարանում: 1908թ. ձերբակալուել է ցարական իշխանութիւնների կողմից եւ ասքորուել Սիբիր: Առաջին աշխարհամարտի տարիներին ներուժով ազատուել է ասքորից եւ վերադարձել Կովկաս: 1917թ. եղել է Համառուսաստանեան սահմանադիր ժողովի անդամ, Անդրկովկասեան կոմիսարիատի խնամատարութեան կոմիսար: 1918թ. եղել է Անդրկովկասեան Սէյմի պատգամաւոր, ապա Բեռլին ուղարկուած Հայոց ազգային խորհրդի պատուիրակութեան անդամ: Հայաստանի առաջին Հանրապետութեան արտաքին գործերի նախարար (Ա.

Խատիսեանի կառավարութեան կազմում ), վարչապետ: Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատումից յետոյ ձերբակալուել է: Բանտից ազատուել է 1921թ. փետրուարեան ապստամբութեան օրերին: Սփիւռքում եղել է Համազգային հայ կրթական մշակութային միութեան հիմնադիրներից: Մահացել է Կահիրեում:

<sup>113</sup> Տես, Ձ. Աւալով, «Վրաստանի անկախութիւնը միջազգային քաղաքականութեան մէջ 1918-1921 թուերին», էջ 214: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>114</sup> Տես, «Նիւթեր եւ վաւերագրեր ...», էջ 474: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>115</sup> Դենիկին Անատոլի (1872-1947) – Ռուս ռազմական, քաղաքական գործիչ: Առաջին աշխարհամարտի զօրահրամանատարներից: Եղել է Սպիտակավարդիական շարժման ղեկավարներից մէկը, 1919 թ. ղեկավարել է Ռուսաստանի հարավի զինուած ուժերը: 1920 թ.-ից տարագրուել է: Հեղինակել է «Ակնարկներ ռուսական խառնակութեան», «Ռուս սպայի ուղին» յուշագրութիւնները: Մահացել է Փարիզում:

<sup>116</sup> Սան Ռենոյի վեհաժողով - Անտանտի պետութիւնների Գերագոյն խորհրդի նիստը, որը տեղի է ունեցել 1920թ. ապրիլի 19-26 Իտալիայի Սան Ռենո քաղաքում: Խորհրդաժողովում մշակուել է Թուրքիայի հետ հաշտութեան պայմանագրի նախագիծը: Հայաստանին վերաբերող հարցերը քննելիս խորհրդաժողովին մասնակցել են նաեւ ՀՀ պատուիրակութեան ղեկավար Աւետիս Ահարոնեանը եւ Ազգային պատուիրակութեան ղեկավար Պօղոս Նուպարը: Սան Ռենոյի խորհրդաժողովի հաստատած նախագիծը հիմք է հանդիսացել 1920թ. Սեւրի պայմանագրի համար:

<sup>117</sup> Քելզոն Ջորջ Նաթանիել (1859-1925) - Անգլիացի պետական գործիչ, դիւանագետ, պահպանողական կուսակցութեան անդամ, 1919-1924թթ. եղել է Մեծ Բրիտանիայի արտգործնախարարը: Հայկական հարցում վարել է երկդիմի քաղաքականութիւն:

<sup>118</sup> Խոսքը դաշնակիցների կողմից 1920թ. յունուարին խոստացուած զինական օգնութեան մասին է: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>119</sup> Ձ. Աւալովն իր գրքի մէջ պատմում է, որ Չիւէիձեն սկզբում չէր համաձայնում, որ Հայաստանը առանձին երկաթուղով միանայ Բաթումին՝ ասելով, թէ հայերը պետք է կապուին այդ նաւահանգստի հետ գոյութիւն ունեցող Թիֆլիս- Բաթում երկաթուղիով իբրեւ տրանզիտի գծով: Յետագային Աւալովի եւ ուրիշների ճնշման տակ մի հաշտուեց Հայաստանի սեփական երկաթուղու մտքի հետ, բայց մինչեւ վերջը ընդդիմացաւ, որ համաձայնագրով Հայաստանի սեփականատիրական իրաւունքը Կարս-Բաթում երկաթուղու վրայ ճշտուի: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>120</sup> Mikael Varandian, "Le conflit Armeno-Georgien et la guerre du Caucase", էջ 147: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>121</sup> Թիւրք-հայկական պատերազմի դէպքում Վրաստանի դիրքը ճշտելու համար Մուստաֆա Քեմալի ձեռնարկած քայլերի մասին՝ ծածկագիր ռադիօհեռագիր Բագու, ուր գտնուում էր Իսուոֆ Քեմալը, սրա

տեսակցութիւնը Թիֆլիսում ժողովանիայի եւ Գեգեճկորիի հետ եւ այլն, հետաքրքրական մանրամասնութիւններ է հաղորդում Պօլսի «Ժուռնալ ԴՕրիան» թերթի 1920թ. հոկտեմբերի 19-ի համարում լոյս տեսած Անգորայի թղթակցութիւնը, որ առաջ է բերուած Ս. Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւնը» գրքի մէջ (տես, էջ 416): (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>122</sup> Կարծեք, այս կասկածամտութիւնն արդարացնելու համար հայ-թրքական պատերազմի միջոցին վրացիք նորից մտան Լօռի՝ յետին թուով միայն Հայաստանի կառավարութեան համաձայնութիւնն առնելով այնտեղ երեք ամիս մնալու համար: Նոյն ժամանակները վրացական մի զօրամաս էլ մտաւ Չլդրի շրջանը՝ հարկադրելով Սեպուհին թիւրքական ճակատում գործող իր ուժերի մի մասը դարձնել վրացիների դէմ՝ նրանց այդ շրջանից դուրս քշելու համար: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>123</sup> Տես, Անատոլիայի գործակալութեան 1921թ. փետրուարի 9-ի թիւ 6 հաղորդագրութիւնը: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>124</sup> Պրովոկասիոն - Հայերեն՝ սադրանք:

<sup>125</sup> Պոզորոն - Ռուսերէն բառ է, հայերեն՝ կոտորած:

<sup>126</sup> Միասնիկեան Ալեքսանդր (Մարտունի) (1886-1925) - Պետական եւ ռազմական գործիչ: ՌՄԴԿ անդամ: Սովորել է Մոսկուայի Լազարեան ճեմարանում, Մոսկուայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: 1917թ. հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ բարձրագոյն պետական եւ կուսակցական պաշտօններ է վարել Բելոռուսիայում, Մոսկուայում: 1921թ. յունուարից ՀԽՍՀ ժողովմխորի նախագահ եւ ռազմական գործերի ժողկոմ: 1922թ. մարտից ԱԽՖՍՀ գործկոմի նախագահներից մէկը, ապա՝ ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմի առաջին քարտուղարը: Հայաստանում աշխատելու տարիներին լուրջ գործունեութիւն է ծաւալել երկրի տնտեսութեան վերականգնման, կայունութեան հաստատման, հայ մտաւորականութեան համախմբման ուղղութեամբ:

<sup>127</sup> Վրաստանի անկախութեան հռչակումից առաջ այս կուսակցութիւնը գործում էր Ռուսաստանի Բանուորական Սոցիալ-Դեմոկրատական կուսակցութեան ընդհանուր դրօշի տակ՝ իբրեւ նրա անդրկովկասեան հատուածը: Սակայն այս հատուածի մէջ, ի բացառեալ Բագուի շրջանը, վրացիք իրենց քանակով, որակով եւ ազդեցութեամբ այնպիսի գերակշռող դեր էին կատարում, որ առանց մեծ սխալ գործելու անդրկովկասեան սոցիալ-դեմոկրատիան վրացական կարող ենք կոչել, մանավանդ որ մեզ զբաղեցնող հարցի տեսակէտից Բագուն կարեւորութիւն չէր ներկայացնում: (*Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.*):

<sup>128</sup> Խոսքը Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութեան զինուած ուժերի գերագոյն գլխաւոր հրամանատար գեներալ Լ. Կորնիլովի մասին է, ով 1917թ. ամռանը փորձեց երկրում ռազմական դիկտատուրա հաստատել, սակայն այդ նրան չյաջողուեց:

<sup>129</sup> Սոցիալիստ-յեղափոխականներ (եւէռներ) - Կուսակցութիւն Ռուսաստանում գործել է 1901-1923թթ.: 1917թ. փետրուարին ռուսաստանյան Սոցիալ-դեմոկրատական մենշեւիկեան կուսակցութեան հետ կազմել են ժամանակաւոր կառավարութիւն:

<sup>130</sup> Ռազմավիրական խճուղի (ճանապարհ) - Գլխավոր Կովկասյան լեռնաշղթան հատող եւ Վլադիկավկազ եւ Թբիլիսի քաղաքներն իրար միացնող ճանապարհի անուանումը: Կառուցուել է 18-րդ դարի վերջին ռուսական զորքերի կողմից:

<sup>131</sup> «Հայ-վրացական յարաբերութիւնների պատմութիւնից», էջ 50: *(Ծանօթագրութիւնը հեղինակին է - Խ. Ս.):*

<sup>132</sup> Պէտք է նկատել, որ այս խորհրդածողովին վրացիք, արտաքին քաղաքական նկրտումներով, շատ մեծ կարեւորութիւն էին տալիս: Այդ բանը երեւում է նրանց արտաքին գործերի նախարարի մի զաղտնի հեռագրից, ուր ասուած է. «խորհրդածողովի գումարման յետաձգումը բարդացնում է մեր հանրապետութեան առանց այն էլ բարդ դրութիւնը»: «Հայ-վրացական յարաբերութիւնների պատմութիւնից», էջ 55:

*(Ծանօթագրութիւնը հեղինակին է - Խ. Ս.):*

<sup>133</sup> Ստալին Իոսիֆ (1878-1953) - Խորհրդային քաղաքական, պետական գործիչ: Սովորել է Գորիի հոգեւոր ուսումնարանում, Թիֆլիսի հոգեւոր ճամարանում: 1903թ.-ից հարել է բոլշեւիկներին: Սինչեւ 1913թ. վեց անգամ դատապարտուել է կալանքի: 1907թ. եղել է ՌՍԴԲԿ Բագուի կոմիտէի կազմակերպիչներից եւ ղեկավարներից: 1917-1922թթ. եղել է Խորհրդային Ռուսաստանի ազգութիւնների հարցերով ժողկոմը: 1922-1953 թթ. ԽՍԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար: 1920-1930-ական թթ. կուսակցութեան եւ պետութեան մէջ մեծիշխանութեան հասնելու համար օգտագործել է կուսակցական ապարատը, քաղաքական ինտրիգներ միւթել և հաստատել բռնապետական ռեժիմ: Ասպարեզից հեռացրել է իրեն իրական եւ հավանական մրցակից համարուող բոլոր պետական եւ կուսակցական գործիչներին: 1930-ականներին վարել է ֆաշիստական Գերմանիայի հետ մերձեցման քաղաքականութիւն: Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945թթ.) նրա ղեկավարութեամբ խորհրդային ժողովուրդները հաղթել են ֆաշիստական Գերմանիային: Ստալինի մահից յետոյ ԽՍԿԿ 20-րդ համագումարում 1956թ. քննադատուել է անհատի պաշտամունքը:

<sup>134</sup> Օրջոնիկիձէ Գրիգորի (Սերգօ) (1886-1937) - Խորհրդային պետական եւ կուսակցական գործիչ: Կոմունիստական կուսակցութեան անդամ: Ռուսաստանում եւ Անդրկովկասում ակտիւորէն մասնակցել է կուսակցական աշխատանքների: Հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ բարձր պետական պաշտօններ է զբաղեցրել Ռուսաստանի տարբեր երկրամասերում: 1920թ.-ից եղել է ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասեան բիւրոյի նախագահ: 1922-1926թթ.՝ ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմի առաջին քարտուղարը: Այնուհետեւ զբաղեցրել է ԽՍՀՄ համապետական բարձրագոյն ղեկավար պաշտօններ: 1937 թ. ռեպրեսիայի տարիներին ինքնասպանութիւն է գործել:

<sup>135</sup> Այս պայմանագրերը կազմում են միջազգային յարաբերութիւնների վերսալեան համակարգի հիմնական մասը: Այս պայմանագրերով փաստօրէն պաշտօնական ձեւակերպում ստացավ առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, իրավականօրէն յստակեցուեցին հաղթող եւ պարտուող պետութիւնների փոխհարաբերութիւնները:

Վերսալի պայմանագիրը կնքուել է 1919թ. յունիսի 28-ին համաշխարհային պատերազմում յաղթող Անտանտի երկրների եւ պարտուած Գերմանիայի միջեւ: Սեն-ժերմենի պայմանագիրը ստորագրուել է 1919թ. սեպտեմբերի 10-ին՝ Անտանտի եւ Ավստրիայի միջեւ: Տրիանոնի պայմանագիրը կնքուել է 1920թ. յունիսի 4-ին՝ Անտանտի եւ Աւստրիայի միջեւ: Լոզանի պայմանագիրը կնքուել է 1923թ. յուլիսի 24-ին՝ մի կողմից Սեն Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Յունաստանի, Ռումինիայի, Սերբերի, հորվաթների և սլովենների թագավորութեան, միւս կողմից՝ Թուրքիայի միջեւ: Վերջինս, փաստօրէն, փոխարինելու էր նախապէս ստորագրուած Սելրի պայմանագրին:

<sup>136</sup> Տե՛ս «ԴՆԻ» թերթի 1918 թ. փետրուարի 9-ի համարում ժողդանիայի «Սկզբունքներ եւ փաստեր» յօդուածը: *(Ծանօթագրութիւնը հեղինակին է - Խ. Ս.):*

<sup>137</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Խ. Ստեփանյանի «Վրաստանի հայութեան ինքնավարութեան հարցը Վրաստանի դեմոկրատական հանրապետութեան տարիներին» յօդուածում:

<sup>138</sup> Վորոնցով-Ղաշկով Իլարիոն (1837-1916) - Ռուս պետական գործիչ, կոմս, գեներալ-լեյտենանտ: 1905-1915թթ. եղել է Կովկասի փոխարքայ:

<sup>139</sup> Տե՛ս՝ «Բորբա», 1918թ., թիվ 121: *(Ծանօթագրութիւնը հեղինակին է - Խ. Ս.):*

<sup>140</sup> Տե՛ս՝ «Վաւերագրեր եւ միւթեր Անդրկովկասի եւ Վրաստանի արտաքին քաղաքականութեան վերաբերեալ», էջ 476: *(Ծանօթագրութիւնը հեղինակին է - Խ. Ս.):*

<sup>141</sup> Նոյն տեղը, էջ 476:

<sup>142</sup> Այս զորաբաժինը, որ ծանօթ էր հասարակութեանը «Օտրի օտրեաղ» ռուսական անունով, սոցիալ-դեմոկրատներից եւ համակիրներից կազմուած եւ ներքին գործերի մինիստրին ենթակայ մի կազմակերպութիւն էր, որի կենտրոնը գտնուում էր Թիֆլիսում, իսկ բաժանմունքները՝ զաւառում: Այն կատարում էր քաղաքացիական ոստիկանութեան դեր, սակայն, նայած պարագաներին, նրա վրայ դրուում էին եւ զինուորական պարտականութիւններ: *(Ծանօթագրութիւնը հեղինակին է - Խ. Ս.):*

<sup>143</sup> Օխրանա- Տարական Ռուսաստանի ոստիկանութեան Պահնորդական բաժանմունքի անուանումը:

<sup>144</sup> Մեր տրամադրութեան տակ են գտնուում Անդրկովկասեան Ռուսաց Ազգային Խորհրդի կազմած երկու արձանագրութեան վաւերացուած պատճենները՝ մէկը 1918թ. դեկտեմբերի 26, իսկ միւսը՝ 1918թ. դեկտեմբերի 31 թւակիր, որոնց մէջ նկարագրուած է հայերի հետապնդումը Խորհրդի շէնքի մէջ, վրաց միլիցիոներների եւ Յատուկ զօրաբաժնի պաշտօնեաների կողմից, ճիշտ այնպէս, ինչպէս մեր Տեղեկատու բիւրօն է հաղորդում: Մեր ձեռքի տակ են նաեւ վաւերացուած պատճենները այն բողոքագրերի, որ այս արձանագրութիւնների հետ միասին ուղարկուած են նոյն Խորհրդի կողմից Վրաստանի Հանրապետութեան արտաքին գործերի մինիստրին: Բողոքագրերից առաջինը թուագրուած է 1918 թ. դեկտեմբերի 26, թիւ 8414, իսկ երկրորդը՝ 1918 թ. դեկտեմբերի 31, թիւ 8384:



<sup>145</sup> Այս ապահովագրերի մասին ստորեւ նորից խօսք կլինի: Նրանցից մէկի ֆակտիմիլին հրատարակուած է Ս. Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւն» գրքում, (տես էջ 210): Ապահովագիրը թուագրուած է 1919թ., յունուարի 30, թիւ 40 եւ ունի հետեւեալ բովանդակութիւնը. «Տրուած է այս Քեսօբաբեան Արտաշին առ այն, որ Թիֆլիսի նահանգապետը թոյլատրել է նրան ազատ ապրել Թիֆլիսում, եւ որ նա, հայ լինելով, ենթակայ չէ բանտարկութեան կամ ձերբակալման»:

*(Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.):*

<sup>146</sup> Թիֆլիսի թաղերից մէկը, ուր հարուստ հայերն էին ապրում:

*(Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.):*

<sup>147</sup> Գոլիցին Գրիգորի (1838-1907) - Ռուս պետական գործիչ, իշխան, զեներալ-ադիւտանտ: 1896-1904թթ. եղել է Կովկասի կառավարչապետ: Վարել է ընդգծուած հակահայ գործունեութիւն: Նրա պնդումներով ցարական կառավարութիւնը 1903թ. բռնագրաւել է հայ եկեղեցու ունեցուածքը: 1903թ. հոկտեմբերի 14-ին հնչակեան վրիժառուները մահափորձ կատարեցին եւ ծանր վիրաւորեցին Գոլիցինին, որից յետոյ ցարը ետ կանչեց նրան:

<sup>148</sup> 1905թ. Բաքուի հայ-թաթարական ընդհարումները նահանգապետ Նակաշիձէի հրահրմամբ էին տեղի ունեցել:

<sup>149</sup> Պետական Դումա - Օրենսդիր մարմին Ռուսական կայսրութիւնում: Առաջին Պետական Դուման գումարուել է 1906թ.ապրիլի 27-ից մինչեւ յուլիսի 8-ը, երկրորդը՝ 1907թ. փետրուարի 20-ից մինչեւ յունիսի 2-ը, երրորդը, 1907թ. նոյեմբերի 1-ից մինչեւ 1912 թ. յունիսի 9-ը, չորրորդը՝ 1912թ. նոյեմբերի 15-ից մինչեւ 1917թ. փետրուարի 25-ը:

<sup>150</sup> «Նաշե զնամիայ»-ի յօդուածի եւ Արշակ Զոհրաբեանի բաց նամակի բնագիրները ձեռքի տակ չունենալով՝ երկուսն էլ թարգմանում ենք Մ. Վարանդեանի "Le Conflit Arme'no-Georgien et laguerre du Caucase" գրքից, (տես էջ 92 եւ 95): *(Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.):*

<sup>151</sup> Չհատուրի հանքեր - Խոսքը ճիաթուրայի մանգանի հանքերի մասին է, որոնցով այդ ժամանակ լրջօրէն բարձրացոււմ էր Վրաստանի տնտեսական և քաղաքական նշանակութիւնը:

<sup>152</sup> In corpore - Ամբողջ կազմով (լատ.):

<sup>153</sup> Տես «Պրավդա», 1923թ., 26-ը ապրիլի, թիւ 91: *(Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.):*

<sup>154</sup> Վրաց ժողովրդի այս տրամադրութեան մասին մի կարելոր վաւերագիր ունինք մեր տրամադրութեան տակ, որ առայժմ անյարմար ենք նկատում հրապարակ հանել: *(Ծանօթագրութիւնը հեղինակինն է):*

<sup>155</sup> Տես, «Դնի», 1928թ. փետրուարի 9-ի համարում ժողդանիայի «Սկզբունքներ եւ փաստեր, պատասխան Ա. Ջամալեանին» յօդուածը: *(Ծանօթագրութիւնը հեղինակինն է - Խ. Ս.):*

- Ա**
- Աբաշիձէ Բ. – 144
- Աբաշիձէ Կ. - 213
- Աբեղեան Ա. – 5,
- Ալեքսանեան Վ. -172
- Ահարոնեան Ա. – 6, 32, 36, 45, 128, 213, 221
- Ամիրխանեան Յ. - 169
- Այգէնման - 101
- Անդրանիկ – 68
- Աշխէն (Թումանեան) - 215
- Աշոտ Գ Ողորմած – 211
- Առաքել Դավրիժեցի - 212
- Աստուածատրեան Ա. – 5,
- Արամեանց - 116, 170
- Արիստակէսեան - 188
- Արղութեաններ – 21, 210
- Արժրունի Վահան - 212
- Արղուն խան - 210
- Արշակունիներ – 23, 209-210
- Արտուր Լայստ - 93
- Աւալով Ջ. – 28, 81, 87, 90-91, 94-95, 130-131, 133, 140, 153, 213, 215, 219, 221

- Բ**
- Բագրատ Գ - 23
- Բագրատ Դ - 23
- Բագրատունիներ – 23, 210-212
- Բակրաձէ - 22, 212
- Բաղդասարեան - 170
- Բարկուլաշվիլի - 103
- Բերգեմով – 22
- Բերքողով – 72,
- Բիւզանդ - 21, 210
- Բրոսէ - 22, 212

- Գ**
- Գագիկ Ա Բագրատունի - 212
- Գեգեչկորի Ե. – 42, 154, 216, 222

---

Գեղեւանով - 216  
Գեորգի Գ Բագրատունի - 210  
Գիգիվանով - 35  
Գիւլխանդանեան Ա. – 5,  
Գոգվածէ - 35, 151  
Գուլիցին – 178, 225  
Գրիգոր Մագիստրոս (Պահլավունի) – 22, 212  
Գւազաւա - 72, 110

## Դ

Դավիթ Անհողին – 22, 212  
Դարեհ – 10,  
Դենիկին -129, 221  
Դիասամիձէ - 19,  
Դրօ (Դրաստամատ Կանայեան) – 69, 71, 217

## Ե

Եկատերինա - 24  
Երկանեան Ա. - 219

## Զ

Զաքարեաններ – 210-211  
Զաքարէ - 211  
Զաքարիա - 21-22, 211  
Զեդգենիձէ Ա. -184  
Զոհրաբեան Ա. – 178-179, 188, 225

## Է

Էնգելս Ֆ. – 51  
Էնվեր - 189

## Թ

Թալեաթ – 189  
Թաղայշվիլի - 203  
Թամազով - 151  
Թամար – 22, 211  
Թունանեան Յ. – 169, 214

## Ժ

Ժորդանիա Ն. - 7-8, 27, 29-30, 32-34, 36, 38-39, 41, 45, 50-61, 81,  
91, 93, 95-96, 106, 139, 146-148, 150-152, 154, 156-158, 160-161,

---

163, 173-174, 177-180, 186, 189-190, 192-193, 197-199, 202, 204-  
206, 208, 222  
Ժուրուլի Ե. - 216

## Ի

Իվանէ - 22, 211  
Իրակլի (Յերակլ) Բ - 19, 21, 22, 24  
Իւզբաշեան - 116

## Լ

Լօլածէ - 203  
Լօնթաթիձէ - 75

## Խ

Խալիլ – 67, 93, 217  
Խան Խոյսկի – 81, 219  
Խաչատրեան Գ. – 172  
Խաչատրեան Ա. - 216  
Խառլամով Վ. - 213  
Խասմամեդով - 81  
Խատիսեան Ա. – 5, 32, 36, 45, 65, 93, 110, 175, 209, 214, 221  
Խատիսեան Գ. – 32, 209, 214  
Խատիսեան Լ. - 175  
Խատիսեան Գ. – 32,  
Խոնդկարեան Ա. - 216  
Խոսրով Բ Կոտակ – 210  
Խոսրովանոյշ - 211  
Խրիստեանց – 170  
Խունունց Յ. - 175

## Օ

Օերեթելի Ի. -32-33, 35, 45, 66, 72-78, 81, 84-87, 134, 136, 144,  
150-151, 157, 215

## Կ

Կանդելակի Կ. – 108, 216  
Կարաբեքիր Ք. – 133, 135  
Կարճիկեան Խ. – 32, 214  
Կաուցկի – 116

---

Կիրակոս Գանձակեցի - 212

Կիւրիկեաններ - 211

Կիւրոս – 10,

Կորնիլով – 143, 222

Կվինտաձէ - 69, 92

Կրէս – 34, 148

### Ք

Քաբարուրդներ - 216

Քասան-Ջալալեան Եսայի - 212

Քասկեւ - 116

### Ձ

Ձուլուկիձէ - 40, 189

### Ղ

Ղամբարեան – 175-176

Ղորղանեան Գ. – 32, 91, 215

Ղորղանեան Ն. - 216

### Մ

Մախարաձէ - 8, 208

Մամիկոնեաններ – 22, 211

Մամիկոնեան Ստ. – 111, 216, 220

Մամիկոնեան Վ. - 211

Մանթաշեան – 115

Մարկիանոս - 208

Մարքս Կ. – 95, 139

Մդիվանի Բ. – 202,

Մդիվանի Ս. - 37, 108, 112, 216

Մելիքեան Յ. – 116

Մելիքով - 175

Մելիք-Ազարեան Ա. – 115-116

Մեսրոպ Մաշտոց - 209

Միասնիկեան – 138, 222

Մովսէս Խորենացի – 21, 23, 209-210

Մուրադեան Ս. - 172

### Յ

Յարութիւնեան Մ. - 216

---

Յովհան Օձնեցի - 22, 211-212

Յուլուջիձէ - 151

### Լ

Լազարբեկեան Թ. – 69-71, 219

Լակաշիձէ - 178, 203

Լերսիսեան - 137

Լիկուլաձէ - 91-93

### Շ

Շահ Աբաս – 10,

Շահխաթունի Ա. – 18, 209

Շամոյեան – 172

Շարաշիձէ Դ. - 184

Շէնէ - 35

Շիրոկորոզով - 103

Շուլէնբուրգ - 92

Շուստով – 13,

### Չ

Չիլինգարեան - 170

Չխեիձէ - 133, 144, 157, 221

Չխենկելի Ա. – 29, 42-43, 65-67, 70, 87, 89, 91-95, 144, 213, 215-217

Չոբանեան Պ. - 207

### Պ

Պահլավունի Վահրամ - 212

Պապաջանեան (Պապաջանով) Մ. – 110, 213

Պեպինով – 81

Պօղոս Նուպար - 221

### Ջ

Ջամալեան Ա. – 6, 36, 75, 105, 225

Ջափարիձէ - 216

Ջաֆարով Մ. – 81, 213

Ջուղելի – 75, 185

### Ռ

Ռամազով - 40

---

Ռամիշվիլի Ն. – 12, 29, 31-33, 35-36, 69, 93, 105, 108, 112, 115, 152, 167, 188, 190, 208, 216  
Ռուբեն (Տեր-Մինասեան Ռ.) – 5  
Ռուստամբէկով – 72-73, 81

## **Ս**

Սաբախտարիշվիլի Կ. – 108, 216  
Սաֆիկիրսկի – 81  
Սարգիս Մեծ Երկայնաբազուկ – 211  
Սեպուհ - 222  
Սիլիկեան – 71  
Սիմէօնով – 72  
Ստալին – 157, 223  
Ստեփանեան Գ. - 208  
Ստեփանեան Խ. – 6, 212, 215, 217-219, 221-225  
Ստրաբոն – 21, 210  
Ստիարտ - 216  
Սուլուկիձէ - 81  
Սուրբուլաձէ - 91

## **Վ**

Վանսիտարտ Ռ. – 130-132  
Վաչնաձէ - 182  
Վարանդեան (Յովհաննիսեան) Ս. – 6, 44, 128, 216, 221, 225  
Վեգենդով – 92  
Վէհիպ – 101  
Վիցերս Դազլէզ - 183  
Վորոնցով-Դաշկով – 163, 224  
Վռամշապուհ - 209  
Վրացեան Ա. – 5, 170, 217, 222, 225

## **Տ**

Տեր Խաչատրեան Գ. - 216  
Տեր Ղազարեան – 172  
Տեր Պետրոսեան Յ. քին - 176  
Տիգրանեան Ա. – 37, 215  
Տկելամաձէ - 105  
Տոլմաչով – 178  
Տրդատ Գ Արշակունի - 209

---

## **Ց**

Ցիցիանով – 35

## **Փ**

Փերեերզել Պ. - 213

## **Ք**

Քալանթարեան – 175-176  
Քաջազունի Յ. – 32, 36, 65, 68, 93, 100, 110, 151, 214, 217  
Քեմալ Ի. – 135, 222  
Քեմալ Ս. – 135, 221  
Քեսօբաբեան Ա. - 225  
Քերզն – 130, 132, 221

## **Օ**

Օդիշելիձէ - 91, 93, 110, 219  
Օհանջանեան Յ. – 128, 216, 220  
Օրբելեաններ (Ստեփանոս, Սմբատ, Տարասայիճ) – 21, 210, 212  
Օրէխաշվիլի – 8,  
Օրջոնկիձէ - 157, 201-202, 222

## **Ֆ**

Ֆոն Լոսով – 68, 87, 89-90, 92-94, 213, 215  
Ֆոն Կրէս - 101

---

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

### Ա

Աբասթունյան – 120, 220  
Ադիգեն - 220  
Ադրբեյջան – 31-32, 48, 77, 79-83, 97-99, 105, 109, 118, 120, 130, 135, 138, 146-148, 150, 152, 155, 196, 200, 219  
Ալագեօզ - 71, 218  
Ալազան – 12, 105, 208  
Ալբանիա - 158  
Ալեքսանդրապոլ (Ադեքսանդրապոլ) – 17, 19, 32, 37, 67-71, 79, 81, 88, 93, 96, 100, 110, 122, 151, 182, 209, 215, 218-219  
Ալլահվերտի – 189  
Ալպեր - 217  
Ախալցխա - 20, 23, 26-27, 67, 75, 78-79, 88, 112, 122, 161, 200, 220  
Ախալքալաք – 5, 17, 19-20, 23-24, 27, 29-33, 37-38, 42-49, 51-53, 56-59, 67, 78-79, 88, 96, 106, 122, 126, 137, 140, 149, 151, 154, 156, 161, 163, 200-201, 205, 209, 220  
Ախթալա - 22  
Ակնաշեն - 219  
Ակորի – 40-41  
Աղանգալու – 98, 219  
Աղստաֆա - 100-101  
Աղստեւ - 208  
Աղվի - 40-41  
Ամբերդ - 211  
Ամերիկա - 111, 149  
Ամստերդամ - 44  
Ամուչ – 40-41  
Այազմա - 103  
Այրում – 36  
Անատոլիա - 222  
Անգլիա - 130, 133  
Անգորա - 133, 136  
Անի – 10, 210-211  
Անկրկովկաս – 3, 5-7, 11-12, 16-20, 24-30, 37, 43, 47-49, 54-55, 64-67, 69-78, 81-83, 85-88, 90-91, 93-96, 102, 107, 109-110, 116-118, 120-124, 126, 129-130, 133, 136-138, 142-146, 149-150, 152, 155-157, 187, 201, 208-209, 213-214, 216-218, 220, 222-224

---

Աջարիա - 79

Արագած - 218  
Արագածոտն - 218  
Արագուի – 21, 210  
Արարատեան դաշտ – 120  
Արարատի մարզ - 219  
Արաքս – 68  
Արդւին - 136  
Արեշ – 105, 208  
Արմավիրի մարզ - 219  
Արտահան – 65-66, 75, 136, 217  
Արցախ – 11, 209  
Աւարայր - 211  
Ադիբեկ – 68, 218  
Աւղանիստան – 158  
Աւստրիա - 217, 223  
Աւստրո-Յունգարիա - 158

### Բ

Բագրեւանդ - 211  
Բագու – 12, 27, 68, 78-79, 107, 120, 127, 142, 147-148, 222-223, 225  
Բագում - 219  
Բաթում – 18, 20, 27, 32, 65-68, 70, 72-73, 76-77, 79, 81, 87-88, 90-91, 93, 95, 98-100, 120, 122, 130-133, 136, 140, 146, 150, 187, 212-214, 216-218, 221, 223  
Բակուրիան – 30, 37, 45, 103, 106, 120, 213, 220  
Բաշ-Աբարան – 69, 83, 218  
Բավարիա - 217  
Բելի Կլիւչ – 104, 164, 175  
Բելժոռուսիա - 57, 222  
Բեռլին - 220  
Բեռն – 43-45, 60  
Բզովդալ – 69, 71, 83, 219  
Բիթլիս – 117  
Բիւզանդիա - 210, 212  
Բողնոփոր – 209-210  
Բոստոն – 218  
Բորժոմ - 220

---

Բորչալու – 17, 19-24, 26-27, 29-36, 38-49, 51-53, 56-57, 75, 79, 96, 112, 126, 140, 147, 149, 151, 156, 163-164, 168, 172, 181-183, 186-187, 200-201, 205, 209, 212, 218, 220

Բջնի - 211

Բրեստ-Լիտովսկ – 65, 67-68, 87, 92, 214, 217

Բուլգարիա- 159, 217

Բուխարեստ - 214

Բօլնիս-Խաչէն - 189

## Գ

Գայ - 219

Գանձա - 214

Գանձակ (Ելիզավետպոլ) - 17, 19, 27, 75, 120, 209

Գարդաբան - 220

Գերմանիա - 68, 88, 91-94, 99, 159, 213, 215, 217, 223

Գէօրջոխուշ – 68, 218

Գորի – 26, 30, 161, 200, 220, 223

Գուգարաց լեռներ – 11, 208

Գուգարք – 20-21, 23, 209-210, 219

## Դ

Դաղէթ-Խաչէն - 176

Դաղստան – 109

Դամիա - 189

Դարա - 103

Դերբեր - 22, 208

Դիլիջան – 35-36, 99, 151, 182-183

Դմանիս - 209

Դսեղ – 22, 68, 211

Դուզքեանդ - 69, 71, 218

Դուին - 211

Դուշեթ – 26, 104

## Ե

Երեւան – 5, 17, 27, 33, 37, 68-70, 75, 75, 93, 98, 102, 106, 111, 113, 137, 140, 153-154, 168, 182, 208-209, 215-216, 219

Եւրոպա - 130, 133, 146, 149, 216-217

## Զ

Զանգեզուր – 17, 120, 209

---

Զաքարալա - 12, 17, 27, 79, 209, 212

## Է

Էջմիածին – 67-68, 79, 88, 98, 208, 213-214, 218-219

Էստոնիա - 199

Էրզրուն - 117

## Թ

Թագաքենդ - 98, 219

Թալին - 218

Թելալ – 26, 105, 161

Թիօնեթ – 26

Թիւրքիա - 24, 32-33, 37, 48, 62, 65-68, 73-75, 77, 80-81, 83, 88,

94, 97, 103, 122, 134, 136, 140, 158-159, 171, 217-218, 224

Թիֆլիս – 3, 6, 11-13, 17, 19-21, 26-28, 30-31, 34-36, 43, 45-46, 58,

65, 71, 75-76, 81, 85-86, 91-93, 98-101, 103, 107-108, 110-111,

114, 116-118, 120-122, 124, 126, 129, 137-138, 142, 144, 152, 154,

156, 161, 163, 168, 170, 172, 174-179, 183, 185, 187, 190-191, 193-

194, 196-197, 200, 202, 206, 209-210, 213-225

Թռեղք - 209

Թրիալէթ – 103

Թումանեանի շրջան - 220

## Ի

Իգդիր – 68, 213, 218

Իտալիա - 62-63, 158-159, 217, 224

## Լ

Լատուիա - 199

Լեխոււն - 104

Լեհաստան – 63, 159, 199

Լիտուանիա - 63, 199

Լիւցեռն – 46, 60, 195

Լոնդոն - 214

Լօզան – 159, 213-214, 223

Լօռի – 3-4, 36, 41-42, 47, 89, 122, 147, 151, 166, 181, 187-190,

195-196, 209-212, 222 216, 218-219

## Խ

Խաթունարիս – 98, 219

---

Խարկով - 214

Խորհրդային Միութիւն (ԽՍՀՄ) – 3, 54, 56-57, 61, 137, 157

Խրամ - 47

## Ծ

Ծալկա - 30, 34, 45, 103, 209, 213

Ծաղկաբեր - 218

Ծաղկահովիտ - 218

Ծոբոփոր - 209

## Կ

Կահիրէ - 221

Կաղանֆար - 71

Կարաբուրուն – 68, 71, 218

Կարս – 18, 20, 65-67, 79, 83, 93-94, 120, 122, 131-132, 136, 209, 214, 217, 221

Կողբ - 68

Կոջոր – 120, 220

Կովկաս – 5-6, 32, 82, 107, 152, 213, 217, 225

Կովկասեան լեղնաշղթայ – 17, 82

Կոտայք - 219

Կ.Պոլիս – 45, 185, 222

## Հ

Հաղպատ (Հաղբատ) – 22, 211

Համանլու – 69, 219

Հայանիստ - 219

Հայաստան – 3-6, 10, 12-14, 19-23, 29, 31-38, 41-52, 55-57, 59, 65, 68-70, 78-79, 89, 98-102, 105-106, 109-119, 122, 125-126, 128-139, 146-150, 152-156, 160, 166-171, 174, 178, 180-188, 193-198, 200, 204, 206, 209-215, 218-222, 225

Հայկական լեռնաշխարհ - 208

Հայրուն - 189

Հաջի Կալա - 71

Հաւլարար – 12, 209

Հովտաշատ - 219

Հռոմ – 209, 217

Հունգարիա - 63, 159

---

## Ձ

Ձորագետ – 22

Ձորափոր – 209-210

## Ղ

Ղազախ – 17, 32-33, 44, 96, 99, 209

Ղարաբաղ – 17, 120, 200

Ղարաքիլիսա (Ղարաքիլիսէ) - 3, 38, 40, 68-69, 71, 85, 110, 183, 216

## Ճ

Ճապոնիա - 224

Ճորոխ – 120, 132

## Մ

Մայնեխ – 69, 71, 219

Մանազկերտ - 211

Մանգլիս – 34, 213

Մասիսի շրջան – 219

Մարմարաշէն - 219

Մարսէլ – 55

Մարց – 120, 220

Մեծ Բրիտանիա - 221, 224

Մեծ Հայք - 210

Մետեխի – 170, 175

Մերձավոր Արեւելք – 7, 133

Միխայլովկա - 189

Միխայլովօ – 110-111

Մինգեչաուր - 209

Մոսկուա - 64, 214-215, 219-220, 222

Միջագետք - 212

Մցխեթ - 21

Մուղրոս – 3,

Մուղան – 17,

## Յ

Յունաստան – 159, 224

## Ն

Նախիջեւան (Նախճաւան)– 79, 89, 93, 200, 211

Նաւթլուղ – 30, 213

---

Նարդիվան - 103  
Նեչիլու – 98, 219  
Նուխի – 12, 105, 208

## Շ

Շահալի – 35-36  
Շամշուլտ – 21, 176  
Շարուր – 79, 89, 200  
Շիրաքի - 105  
Շնող – 36  
Շուլաւեր – 176, 189, 209  
Շուշի – 209, 216, 219

## Չ

Չաթին - 208  
Չեխուլովակիա - 63, 159  
Չիատուր (Ճիաթուրա) – 183, 225  
Չինաստան – 108, 158  
Չլդր - 222  
Չորանքեարա - 98, 219

## Պ

Պարսկաստան – 68, 120, 158, 171, 209-211  
Պետերբուրգ - 28, 209, 214  
Պէյրուք – 5,  
Պրիվոլնի - 189  
Պրուսիա - 60,  
Պուշկինի լեռնանցք - 219

## Ջ

Ջալալօղլի – 68, 218  
Ջաւախք – 23, 214  
Ջիվանշիր - 209  
Ջուլֆա - 67, 69-70, 93, 100, 110, 120

## Ռ

Ռումանիա - 63, 159, 223  
Ռուսաստան – 4-5, 12, 14, 16-17, 19, 21, 25-26, 28, 51, 54, 62, 64-66, 74, 82-83, 102, 107-110, 112-113, 116-118, 120-121, 123, 133-134, 143, 145-147, 152, 154-156, 198, 200, 212, 217, 219-221

## Ս

Սաբուրթալօ – 12, 209  
Սադախլու - 189  
Սամտրեդ - 175  
Սամցխե-Ջավախք - 220  
Սայաթ-Նովա (գիւղ) - 219  
Սանահին – 22, 35, 111, 191, 211  
Սան Ռէնօ - 130-133, 221  
Սարալանջ - 218  
Սարդարապատ – 68-69, 85, 98  
Սարիղամիշ – 110, 136, 189  
Սէն-ժերմեն – 159, 217, 224  
Սերբիա - 158-159  
Սել ծով - 147  
Սեւանայ լիճ - 10, 20, 96, 151  
Սելր – 214, 221, 223  
Սիլեզիա - 60,  
Սիւնիք – 11, 210  
Սղնախ – 17, 26, 30, 58, 79, 105, 209, 217  
Սուլուակ - 170  
Սոչի – 164  
Սորբոն – 213  
Սպիտակ – 218-219  
Ստեփանաւան - 218  
Սուրամ - 105  
Սուրմալու – 89, 211  
Սուխում – 27, 146, 196, 212

## Վ

Վաղարշապատ - 214  
Վայխուն - 176  
Վան – 117  
Վանաձոր - 215  
Վերսայլ – 159-160, 162  
Վլադիկավկազ - 223  
Վորոնցովկա - 35, 189  
Վրաստան – 3-14, 19-24, 26-27, 29-37, 39, 41-48, 50-51, 55-59, 61, 71-72, 79, 81-83, 85, 89-100, 102, 104-106, 108-115, 117-118, 120-131, 133-139, 145-157, 160-164, 166-169, 171, 173-175, 178-183, 185-206, 208-213, 215-221, 224-225



---

**S**

Տաճկաստան – 24, 120, 143  
Տաշիր – 5, 20-22, 209-210  
Տաշիր-Չորագետ – 210, 212  
Տիրուլ – 62, 217  
Տրապիզոն – 65, 68, 77, 216-218  
Տրիանոն – 159, 224  
Ցուրտաւ – 21,

**Ց**

Ցարսկիե Կոլոդցի – 103  
Ցվենդալբի – 120  
Ցուրտաւ – 21, 210

**Ու**

Ուզունլար – տես՝ Օձուն  
Ուկրաինա - 55, 57, 82, 200

**Փ**

Փամբակ – 32-33, 44, 89, 96, 122, 219  
Փարիզ - 6, 44, 128, 130, 132, 167, 213-216, 221  
Փոթի – 31, 34, 93, 146, 150, 213, 219  
Փոյլի – 196  
Փոքր Ասիա - 208

**Ք**

Քաղկեդոն – 11  
Քարակերտ - 218,  
Քորբայր – 22, 211  
Քուենո-Քարթլի - 220  
Քութայիս – 19, 27, 85-86, 167, 169, 171-172, 183, 193  
Քուռ – 20, 22, 177, 209-210

**Օ**

Օձուն (Ուզունլար) – 22, 40-41, 211  
Օսմանեան կայսրութիւն – 110  
Օրբէթ - 210  
Օրթաճալա - 176

---

**Ֆ**

Ֆինլանդիա - 199  
Ֆրանսիա - 208, 214, 216-217, 224

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ .....	3
ՆԱԽԱԲԱՆ .....	7
ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ	
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ .....	10
ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՎԷՃԸ .....	16
ԺՈՐԴԱՆԻԱՅԻ «ՍԿՋԲՈՒՆՔԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՅՑԸ» .....	50
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ	
ԻՐԱԲԱՆՈՐՈՇՈՒԹԻՒՆ .....	62
ՎՐԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ	
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ .....	98
ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ	
ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ .....	102
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՅՔԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ .....	107
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ .....	120
ՎՐԱՑԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՉԳՏՈՒՄՆԵՐԸ .....	142
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ .....	159
ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ .....	208
ԱՆՋՆԱՆՈՒՆՆԵՐ .....	226
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ .....	233

---

## ԱՐՇԱԿ ԶԱՄԱԼԵԱՆ

### ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԿՆԵՒՈՐԸ

*Հրատարակիչ տնօրեն՝* Ռուզան Սահակեան  
*Շապիկին ձեռաւորուհի՝* Նելլի Մարգարեանի  
*Համակարգչային ձեռաւորուհի՝* Արթուր Բոյախչեանի

Ստորագրված է տպագրութեան 25.02.2011: Չափսը՝ 60 x 84 1/32:  
Թուղթը՝ օֆսեթ- 1: Տառատեսակը՝ «Arial Armenian»:  
Տպագրութիւնը՝ օֆսեթ: Ծաւալը՝ 15,25 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 150 օրինակ:

---

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ



հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսատրչի 6:

Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:

Էլ. փոստ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)